Ц- 4

[illegible]

[illegible]

1817

12004

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

# ՆԱԽՆԵԱՑ

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ԱՂԵՔՍԱՆԴՐԻ

2258
1229-ԱՀ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ԱՂԵՔՍԱՆԴՐԻ

## ՄԱԿԵԴՈՆԱՑՒՈՑ

3608-57



Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1842 ՌՄՂԱ

9(38)

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ. ՍՍՌ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ընդ մեծամեծ արարս աշխարհակալացն վեհից հրաշացեալք մատենագիրքն ժամանակակիցք, փոյթ կալան այլատարազ ոճով և հրաշալեօք մանաւանդ հիացուցանել զընթերցանելիսն ապագայ ժամանակաց, քան ճշգրիտ պատմութեանցն լինել վիպագիր։ Քանզի յանաստուածութեան ժամանակս կացեալ նոցա և անման 'ի շնորհացս և յողջամիտ մտածութեանցն թերակատարք՝ 'ի մոլոխ անկան և զառածան յառասպելս. զկարևորօքն վեր 'ի վերոյ անցեալ, աղճատանօք կրօնից և բնականաց հակառակօքն թանձրացուցին զվէպսն։ Այլ զի մի և տաղտուկ լսելեաց գործիցեն ծաղրականօքն, զամենայն ձիգն հանճարոյ թափեցին ախորժելի զնոսին առնելոյ և մտաց գիւր։ Առ այս և առաւելութեան համբաւոյ քաջարութեանց դիւցազինն յորդորեալ զմատենագիրսն ընդ հակառակս միմեանց յառնել նմին վիպասանս, ել ևելս զմիմեանց առնէին 'ի պանծացուցանել զդիւցազինն։ Անց ընդ բնաւ շարս աշխարհակալացն հնոց, և ոչ ուրուք 'ի նոցանէ գտցես այնքան և այնպիսի վիպասանս, որպէս Աղեքսանդրի մեծագործութեանցն։ Զի 'ի Մակեդոնիայ ծագեալ նորա, ոչ զմեծահանճարն ևեթ և զոսկեգրիչ որեալն 'ի Յունաց և 'ի Լատինաց, այլ և 'ի խուժ ազգացն արաբացւոց, պարսկաց և հնդկաց եդ պանծացուցիչս արարոց իւրոց.

որոց մի քան զմի մրցեալ չքնաղագոյն յօրինել զվէպս նորա, հրաշալեօք 'ի զգալեացս վերառեալ և դասակարգեալ զնա յանմահից շարս, այլատարազ ոճով նոր վիպագիր Աղեքսանդրի Ճանաչելին։ Նմին իրի որ միանգամ զայսօրինակ եռանդիւ վառեալ զաշխարհակալին մեծի զվարսն գրեցին, միահաղոյն հաշուին հարիւր և քառասուն. ոմանց անկորուստ պահեալ բնագիրքն 'ի գրատունս իմաստունն Եւրոպայ, և այլոց յիշատակքն և եթ առ ոտուգաբան վիպագիրս։ Ոչ ոք 'ի նոցանէ թերակատար համարեցաւ, զի համառօտախօս էր. և ոչ տաղտուկ և հետևակ, որ տարածն էր. և ոչ առասպելախօսն այպանելի ոք, թէ զի քան զհաւատս ընծայել՝ առաւել ծաղր արձակիցէ յընթերցողսն. այլ ամենեքեան այլ և այլ տեսութեամբ գովեցան. և ազգ իւրաքանչիւր որ ինչ առ ձեռն եկն 'ի ժամուն, յեղեաց յիւր բարբառ։ Ա՝ի յայսպխեաց է ահա և հայեցի թարգմանութեանս օրինակ. զորմէ տեսցուք ո՛ նորին մատենագիր իցէ, ուստի և յորմ՛ց հաւաստի յիշատակութիւնք, և թէ կայցէ՞ նորա այլալեզու թարգմանութիւն. և ապա թէ զի՞նչ նկարագիր մատենին իցէ. թարգմանութիւն նորա երբ, և թէ անարատ մնացեա՞լ իցէ 'ի սկզբնագիր օրինակէն։

Ա. Փուէյնսեմիոս հնագէտ և բազմահմուտ այր զԱղեքսանդրի վարուցն զմատենագիրսն զամենայն 'ի մի ածեալ, տայ իւրաքանչիւր նոցա զկարևոր նկարագիրսն. ընդ որս շարեալ և զԿսովլոս ոմն յոյն մատենագիր 'ի Սիմաքոսէ առեալ, և զայլ ոմն Կալիսթենէս, ասէ գրեալ նոցա զվարս Աղեքսանդրի առասպելախառն պատմութե՟։ Իսկ 'ի լատինացւոց

զՎաղերիոս ասէ 'ի նոյն ոճ մատենագրեալ զԱղեքսանդրէ։ Զսմանէ թէպէտ ոմանք յԵզովբոսէ և այլք 'ի Կալլսթենեայ փոխագրեալ ասեն 'ի լատին բարբառ, բայց հաստատուն է կարծիք առաջնոյն․ ընդ որս և մեր ժամանակակից մեծահամբաւ հնագէտն Մ՛այ ծիրանաւոր Հռովմայ յԵզովբոսէ միայն ասէ, զնա վեր 'ի վայր յեղյեղեալ Վաղերեայ սկզբնագիր․ որպէս վկայէ և մակագիր գրչագրին ամբրոսեան գրատան 'ի Մեդիոլան քաղաքի գրեալ յիններորդ դարուն։ Արդ Վաղերեայ պատմութիւնն թէպէտ և առ հնութեան օրինակին փոքր մի թերի է 'ի սկզբանէ, այլ մնացեալ մասամբն բաղդատեալ ընդ հայումս՝ միաբան գտանի ընդ նմա, սակաւ ուրեք յետևառաջութեամբ հատածայն խոտորեալ, և անմիաբան բանիւքն կարի քաջ ներելի։ Իսկ զմիւս անանուն վիպագիրն զոր յիշէ Մ՛այ իբր առ 'ի լրումն թերի հատուածոյն Վաղերեայ յաջողեցաւ մեզ գտանել աստ 'ի գրատան սրբոյն Մարկոսի զիտալական թարգմանութիւնն զտպագրեալն 'ի 1477 ամին․ որ թէպէտ և պատմութեամբն կարգաւ երևի միաբան ընթանալ ընդ մերոյն և ընդ Վաղերեայ, այլ բառ այլ ևս ճշդութեամբ Վաղերիոս առաւել քան զնա միաձայն գտանի ընդ մերոյն։ Յորմէ թուի թէ անծանօթ իտալացի թարգմանիչդ 'ի փոխագրելն 'ի յունականէն կամ 'ի լատին թարգմանուէ 'ի ռամիկ բարբառ, ուրեք զեղչեալ և այլուր յաւելուած 'ի ներքս մուծեալ իցէ յայլուստ․ կամ թէ նորին բնագիրն զնոյն կարգ կալեալ՝ այնու և ինքն վարեցաւ․ և կամ լաւ ևս, որպէս և հմտից ոմանց թուեցաւ ասել, ամենեքեան գոքա 'ի միոյ աղբերէ յառաջ եկեալ, զի մեր-

ձաւորք ժամանակաւ աշխարհակալին էին և կամ ժամանակակիցք և նորին գործոյն ծանօթք, ոմն զայս ինչ և այլ ոք զայլ փոյթ կալաւ ճշգրիտ աւանդել այլոց զոր ինքն կարևոր դատեցաւ. և միւս այլանթերի զբուն աղբիւրն փոխադրել յայլ լեզու կամ զօրինակն յաճախել առաւել պատշաճ վարկաւ. և անտի ահա այլ և այլ օրինակագիրք 'ի վեր երևեցան: Սակայն մեզ առ այժմ շատ լիցի գիտել, թէ զի հայ թարգմանութեանս օրինակ Վաղերեայ առաւել նման գտանի քան այլոց որ ծանօթք են, և Վաղերիոս յԵսոպեայ թարգմանեալ է, երկոցուն ևս ժամանակքն անյայտ, որպէս ասէ Վոսիոս, ապա ինքնին աներկբայ զհետ գայ՝ Աղեքսանդրի հայ պատմութեանս օրինակագիր մատենագիր Եսոպոս լինել: Իսկ որ 'ի կէս անդր մատենին ասի վասն ծննդեան և գործոց Աղեքսանդրի գրեալ յԱրիստոտէլէ, որ 'ի հայ թարգմանութեան օրինակն միայն գտանի, որպէս տեսցի 'ի կատարած ճԼԴ համարոյ հատուածոյն, պատճառս տայ և այլ ինչ կարծել, թէ գուցէ ցայն վայր յԱրիստոտէլէ խմբագիր արարեալ իցէ Եսոպոս, և անտի յառաջ ցկատարած մատենին ինքն լրումն տուեալ՝ մատեանն ամբողջ յիւր անուն կոչեցաւ: Եւ ոչ է ինչ անդէպ զմի 'ի վիպասանիցն աշխարհակալին կարծել զԱրիստոտէլ, որպէս դաստիարակ ծանօթ ամենայն անցիցն մանաւանդ յանտիական հասակի նորա. թէպէտ և 'ի չորս վիպասանիցն Աղեքսանդրի յիշատակէ Փաւէյնուեմիոս զԱրիստոտէլ:

Բ. Յաղագս նկարագրի մատենին ճշգիւ խօսեցեալ, որ ոք մանր զննութեամբ ծայր 'ի ծայր քննաբանիցէ զմատեանն, յամենայն մասունս նորա տե-

սանէ զձեռն Ճարտար գրչի ։ Ընդ նկարագիր տարա-
զու մարտից և յօրինուած Ճակատու կռուոցն սի-
րելի է մատենագրիս կարճ՝ ի կարճոյ անցանել . սա-
կայն ուր արքայաշուք մեծափառութեան իրք կան և
վեհ քաջութեան , և արքայակերպ հրամանաց և
սպառնալեաց բանք , ընդ ճոխանայ որչափ և մար-
թէ . որով Ճարտար վիպագրութեամբն և քաջ Ճար-
տասանից հաւասարէ ։ Այս ձիրք էին յոյն մատե-
նագրացն զամենայն ձիգն թափելոյ անստերիւր եւեթ
զեղեալսն ճշգաբանելով , այլ և թէ զխորդ շունչ և
ոգի ասացելոցն տայցեն , որպիսի եռանդն 'ի դար-
ձուածս բանիցն մուծանիցեն , և որով ճշգրիտ բայ-
ւիք՝ բուռն և սաստիկ կրից յայտարարօքն՝ զընա-
նկարագիրսն ձևացուցանիցեն . որով զմիտս ընթեր-
ցողացն 'ի վսեմականսն ամբարձեալ և անայլայլակ
թողեալ 'ի բնականսն՝ իբր աստիճանաւ փոփոխ եղե-
էջ դարձուդարձիւ անձանձրոյթ և ախորժելի լսե-
լեացն գործիցեն ։ Զբուքս այսոքիւք և մատենագիրս
պերճանայ . չիք ինչ կրաշարժ 'ի բնէ և սրտառուչ որ
առ սմա մեղկ և թոյլ գտանիցի , ամենուստ փայլեալ
յեռանդուն նկարագրութիւնսն սկզբանց առաքի-
նութեան ըստ բնական օրինաց ։ Աղեքսանդր և Պա-
րեհ ոխերիմ թշնամիք իրերաց յառնեն 'ի Ճակատ .
Աղեքսանդր յաղթող 'ի մարտի դիմէ յարքունիս Պա-
րեհի . գտանէ զնա ընդ խարդաւանեալ 'ի ծառայիցն
և կիսամահ յարիւն թաթաւեալ ։ Այն աղետալի
տեսարան ամենայն ինչ կերպարանափոխ լինի . թշնա-
մութիւնն երկուստեք փոխի 'ի գորով և 'ի խանդա-
ղատանս բանից . թագաւոր զթագաւոր գտեալ ան-
օգնական 'ի մարդկանէ և 'ի շունչ յետին՝ իբրև զմա-

նուկսանդրիայ առնու 'ի գիրկս, փայլի զնովաւ, սքողէ ծիրանեաւն, յարտասուս հարեալ արգահատէ տառապելոյն, ցանկայ նմա զամենայն բարօրութի̃ն, միայն զի ողջ կայցէ. և որ այլ ևս երկուստեք սրտառուչ բանք կան անդէն, չմարթի ոք անկարեկիր սրտիւ ընթեռնուլ և կալ անայլայլելի. զի ոչ անշունչ մատեանն, այլ աղետալի տեսիլն երևութանայ նմա։ Ճարտարարուեստ են դարձեալ նկարագիրք համախմբութեանց յորոշումն ձախողակ ելից, և դէմ առ դէմ բանակռուութիւնքն 'ի նոսին։ Ձևք հրովարտակաց ասիական պերճութեամբ յօրինեալք առն դիւցազին արժանաւորք։ Արձանագիրք և հրամանք պատասխանւոյ սուղ և սուր ոճոյն ահաւորք և պատկառելիք։ Նուագն Ամենիայ քերթողի 'ի գութ ածել զաշխարհակալն վասն զԹեբաս անկործան պահելոյ՝ լիապատար է հնոյ վիպասանիցն հմտութ̃ք, և եռանդն և քերթողական արուեստ 'ի նմա բազում յոյժ։ Այսոքիւք և այլ ևս բազմապատիկ գեղեցկութեամբ ճոխացեալն մատենագիր երկրայեցի ոք ընդ մեծահանճար վիպագիրսն շարել։ Ոչ ապաքէն և երևելիքն 'ի նոցանէ Դիոդոր, Հերոդոտ և Թուկիտիդէս նմանօրինակ գեղեցկութեամբքդ վասն յամենայն դէպս գործոց և կրից սպառնականացն վսեմիցն և բնականացն պարտուպատշաճ բնականութե̃ն պատկառ կալոյ հռչակեցան մեծապէս մինչև իսպառ։ Թերութիւն մի մեծ մատենագրիս՝ են առասպելաց անչափութիւնք, է որ հակառակ մտաց և բնութեան, և է որ ըստ հեթանոսական կրօնից. ընդդէմքն բնութեան են չորքոտանեաց ոմանց և թռչնոց մարդկօրէն բարբառս յօդել և պատգամս տալ, և այլոց այ-

լաձեւ լինել մարմնով՝ հնգոտանիս վեցաչիս, և մարդիկս անգլուխս՝ աչս և բերանս 'ի կուրծսն. և այլ զի՞ գիտեմ, անձոռնի ծաղրական և անլուր բանք. այլ ամենայնն ոճով լինի պատմեալ: Եւ չէն ինչ զարմանք եթէ տարադէպ մտածութիւնք խուռն՝ տիրեն 'ի միջի, ուր չկան օրէնք շնորհաց. և ժամանակին որերոյն սովորութիւն կալեալ է այնպիսեօք զբօսնուլ, և զառաջիկայ դիպացն չափաւորութիւն անբնականօքն երկնիւք չափ թանձրացուցանել առ ահեղս գործելոյ յունկն լսողաց, և առ 'ի զգիւցազնն ամենայնի այդոցիկ յաղթական՝ անմահացուցանելոյ. որպէս խոստանային և նմին իսկ Աղեքսանդրի ոմանք 'ի քերթողաց ճարտար քան զՀոմերին վիպասանել զնմանէ, յորժամ նա առ շիրմօք որերոյն անցեալ հրաշանայր ընդ քերթածսն մեծի քերթողին, որ զնոսա առաւել քան զարժանն գովեաց. որպէս ազդ առնէ ուրեք մատենագիրս: Իսկ հեթանոսական առասպելքն, որպէս հմայք, դիւթք և հրամանք պատասխանւոյ, ճարտարութեան մատենագրին բնաւ ընդէ՞ր արատս ընծայիցեն. զի ո՞ զՊլինիոս, զԵրոդոտ և զայլսն անսատուած ժամանակաց պատմիչսն անարատս ասիցէ 'ի թերութեանցդ, և ոչ տասնպատիկ քան զմերս Եւսեբիոս զառածեալ 'ի պաշտելութիւն մնոտեաց:

Դ. Այսմ ժամանակի հայ թարգմանութեան մատենիս թէպէտ և չիք պատմական յիշատակ, բայց այլ հաւաստիք ոչ թեթև, որպէս ինձ թուի: Զի այլ և այլ հատուածք բանի և ոճք բառից և իմաստից յԱղեքսանդրի պատմութենէս ցրիւ տեսեալ 'ի պատմութեան Խորենացւոյն՝ աներկբայ երեւի առ երանելի Թարգմանչօք եղեալ թարգմանու-

թիւն մատենին․ զոր թէ ոչ առ ստէպ ընթերցմանութեան մատենին վարեալ իցէ զայնոսիկ՚ի գրութիւնս իւր քերթողահայրն, ապա նա ինքն իցէ և թարգմանիչն, թէ չսխալեմ․ որպէս և սովորեալ է այր գրաւոր զնոյն ոճ բանի վարել յայլ և այլ մատեանս ուր դէպքն տայցեն։ Նաև դարձեալ նմին Խորենացւոյ ախորժակացն և սաստիկ մատենայած հմտութեանն կարի պատկանաւոր՝ պատմականացն հայեցի թարգմանութիւնք․ ակն արկ միանգամ՚ի պատմութիւն նորա, և բիւրս իմն տեսցես ՚ի պատմականացն յիշատակս։

Դ․ Տեսցուք սուղ ինչ և յաղագս անարատութեան հայ գրչագրին։ Ի կատարած մատենին այլ և այլ բարառնութիւնս կցեալ՚ի մահն Աղեքսանդրի Կեչառուեցին Խաչատուր, ասէ․ «Զայս պատմութիւս․․ գրեցի իմով ձեռամբ․․ զի թէպէտ էր յընտիր և ՚ի հին օրինակէ, այլ անյարմար և շաղփաղփ․․ վասն որոյ զտեալ՝ և քերեալ քերողօրէն՝ արարի անխոտորնակ ճանապարհ»։ Թէպէտ և չառնի ինչ փոյթ ում առաւել անկ իցեն ծանրալուր մակդիրքդ, այլ այնու յայտ է՝ այժմեան օրինակացն ոչ անձեռնամերձ մնացեալ՚ի հնոյ թարգմանութեանն, այլ փոխեալ՚ի Խաչատրոյ։ Սակայն խնդիր այն է թէ զինչ զտեալքն իցեն և քերեալ փոփոխութիւնքն․ բառից կազմութիւն խանգարեալ արդեօք, եթէ ՚ի հատածացն զեղչեալ և ՚ի նորոյ այլ յաւելեալ։ Յաղագս շարագրածոյ բառիցն չմարթի որ հաւաստեաւ ասել ծայր ՚ի ծայր խանգարեալ զմատեանն, որ լի՛ն է հնոց բացատրութեամբ․ և որ եւս է, պատառիկ մի զոր ՚ի սմանէ յառաջ բերէ՚ի պատմութեան իւրում Թովմա Արծրունի, նման է ըստ շարագրածոյ բառիցն այժմու Աղեքսանդրի

քերեալ օրինակացն . և արծրունին երեց է ժամանակաւ իբր երկերիւր ամօք քան զկեչառուեցին . այլ զի սա զտեալ ասէ զմատեանն և քերեալ, հարկ է ասել ապա թէ դուցէ 'ի տեղիս տեղիս արարեալ նորա փոփոխութիւնս մանունս , և այս պատառիկ ըստ բախտի անարատ իցէ մնացեալ : Իսկ յաղագս երևելի փոփոխութեանց հատուածոց , թէ որք համեմատիցէ զմերն ընդ յունական բնագրին զոր գրչագիր ունիմք, անդէն հարկի ասել թէ յանդուգն ոք ձեռն մխեալ 'ի հնագիր օրինակն հայ, հինաբար կողոպտեալ իցէ 'ի կարևոր մասանցն և ըստ կամի նորա յանձնէ յերիւրեալ . զի ուր հայ թարգմանն թուղթ մի և երկու աւելի ունի, առ յոյնն չիք և տող մի . զնոյն իմա և առ հայոյն, ուր յոյնն առաւելու հինգ և տասն թղթովք և աւելի ևս : Այդ ստգիւտ մեծ և անջնջելի էր արդարեւ հայ օրինակին, եթէ չէր այսօր Վաղերեայ լատին թարգմանութեանն զհակառակն ցուցեալ . զիարդ իցէ զի բանակաւ հաւասարաչափ գտանիցի լատինն ընդ հայումս , և յոյնն բնագիր երկոցուն՝ մեծաւ խտրոցաւ հեռացեալ . ապա հարկ է ասել, ոչ թէ հայոյն զիւրն ընդ լատինականին 'ի չափ և 'ի քանակ ածեալ զեղծմամբ և յաւելուածով, զոր չկարծեմ թէ և ընդ միտ ոք ածիցէ, այլ թէ կրկին թարգմանութիւնքդ՝ հայն և լատինն՝ անարատ իցեն մնացեալ 'ի սկզբանէ և այսր ըստ քանակի հատուածոցն, և յոյնն խանգարեալ : Զի ոչ եթէ զօրինակ հաղաբամեայ մատենից մերազնեայ օրինակողքն ամենայն խանգարելոյ ախորժակօք հետզհետէ հատածս անհարազատ 'ի ներքս մուծեալ և այլանդակեալ իցեն, և յոյն օրինակողքն ամենայն մի քան զմի նախանձա-

յոյզք ամենայն մանր նշանախեցից նախնեացն իւրեանց՝ գաղափարեալ զնոսին իբր զՃշգրտահան ձուլեալ պատկեր, և հասուցին առ մեզ իբր զնոյն ինքն նախնոյ մատենագրին մատանցն գիր ։ Զի թէ առ մերսն երևի երբեք թերութիւնք այդ ձեռն մխելոյ ՚ի շարագրածս նախնեացն բանից, զոր և պարսաւեմքս իսկ, այլ ահա չպակասէ և առ նոսա որ բունքն իսկ են ։ Զայդ հարկ եղև մեզ ասել, զի մի զամենայն թարգմանեալ մատենից նախնեացն մերոց ուրեք ըստ հատածացն կամ իմաստից անմիաբան գտեալ ընդ յունական տպագրութեանց՝ զամենեցուն միօրինակ համարձակ դատաստան առնիցէ ոք՝ թէ զի չմիաբանի Ճշգիւ ընդ յոյն սկզբնագրին, ապա չէ հարազատ ։ Զի գուցէ որ թարգմանեացն զնոսա, զայլ ընագիր օրինակս ունէր առաջի քան զոր այժմս երևին. և այս եթէ ՚ի սրբազան տառսն տեսանեմք եղեալ և գտանեմք այնպէս, քանի առաւել յայլս ՚ի մատենից. որոց ՚ի միաբանութենէ այլ և այլ թարգմանութե̃ց ինքնին ՚ի յայտ գայ որ հարազատն իցէ ։

## ՆԿԱՐԱԳԻՐ ՕՐԻՆԱԿԱՑՆ

Անստգիւտ և ընտիր տպագրութիւն բազմաթիւ օրինակաց կարօտեալ, գտան և առ մեզ օրինակք տասն. սակայն ոչ միօրինակ վաւերականութիւն էր ՚ի նոսա ։ Սու են առ հասարակ երկաթեայ, ընդարձակ և համառօտ. յընդարձակացն որ եօթն են թուով, հնգիցն յայտնի կան թուականքն ՋՀԵ. ՌԿ. ՌԾԺԲ. ՌՄԼԷ. ՌՄԿԳ ։ Այլ յեօթանց անտի հնագոյնն բոլորագիր և անթուական՝ որ ՚ի հանգամանացն երեք

տասանեորդի դարու գրութեան տայր ցոյց, ըն-
տիր էր յոյժ, գործ ճարտար գրչի, և զգուշաւոր
հարազատութեամբն ընտրելագոյն քան զայլսն և
պատկառելի, և ոչ վասն գոյզն ուրուք 'ի մարդ-
կանէ կամ առ հեշտի ախորժանաց յանձն առեալ
գրչին զվաստակ գրութեանն՝ որպէս թուէր ինձ 'ի
բազմաթիւ նկարէն պատկերացն որ զպէսպէս մեծա-
մեծ արարս աշխարհականին և զամենայն անցսն որ
անցին ընդ նա յանդիման առնէր. որ թէպէտ և գոյզն
ուրեք հերձոտ և խանգարեալ էր յանզգոյշ ձեռաց,
այլ ոչ դժուարին յայլոց միաբանութենէ լրանալ. սմա
զոր ընագիր տպագրիս կոչեմք, անխիղճ հետևեցաք,
բաց յանխորշելի մարդկային վրիպակաց որպիսի ինչ
մեղթուեցան: Դարձեալ երկուցն յայլոց օրինակաց
կիսով չափ մատենին և աւելի ևս այլայլեալ էր շա-
րագրածն ռամկացի բանիւք և գեղջուկ ասացուա-
ծովք. ուրեք յապաւեալ 'ի կարևոր հատածացն և
այլուր օտարս 'ի ներքս ածեալ. նմին իրի և Երկբայ-
ական օրինակս կոչեցաք զնոսա 'ի ծանօթութիւնսն.
նա զի և 'ի միումն 'ի նոցանէ ինքնին խոստովա-
նի գրիչն փոփոխելով գաղափարեալ 'ի ընագրէն:
Այդ համարձակութիւն փոքր մի երևի և յայլ օ-
րինակ մի գրեալ 'ի Սիս. յորում թէպէտ ան-
խախտ կայ շարագրածոյն կարգ, այլ աւելորդ հա-
տուածք ուրեք ուրեք երևին 'ի նմա. յորոց ոմանք
զի ճարտար մտաց դարձուածք երևեցան, այլ տարա-
ձայն յամենայն օրինակաց, գուցէ և մտաց ծնունդք
իցեն գաղափարողին, ամփոփեցան զգուշեաւ 'ի ներ-
քոյ, որպէս և կարևորքն յանհարազատութենէ Երկ-
բայականին: Իսկ համառօտ երեք օրինակքն, յորոց

նորագունին կայ Թուականն ՌՃԺԴ, յընդարձակացն համառօտեալ են, և նոցին շարագրածովքն վարեալ 'ի կցուածս բանից, Թէպէտ և սակաւ ուրեք խոտորել երևեսցին. և չիք ասել Թէ յորում դարու լեալ իցէ համառօտութիւնդ:

Արդ զայլևայլութիւն ընթերցուածոց օրինակացն լաւ համարեցաք ոչ խառն 'ի խուռն ամփոփել 'ի ներքոյ, այլ զկարևորսն յանուանէ օրինակացն յայտ առնել առ հեշտի յընտիր առնելոյ հնասիրաց եԹէ նորալուրս ինչ տեսցեն 'ի նոսա: Իսկ նշանագիրք զոր 'ի ծանօԹուԹիւնսն վարեցաք յայտարարք օրինակացն, այսոքիկ են.

Բ. Բնագիրն տպագրիս:
Ա. Ասոյ օրինակն:
Ե. Երկրայեղի օրինակքն:
Հ. Համառօտ մի օրինակն:
ՀՀ. Համառօտքն երկոքին կամ երեքին:
Այլք. ընդարձակքն և համառօտքն միանգամայն բաց 'ի Բնագրէն:
Երկու օր. Երեք օր. և այլն. խմբ յընդարձակացն առանձին յորս անԹերի կամ և համառօտքն, կամ անխառն խառն ընդ համառօտսն:
ՕՕ. ընդարձակ օրինակքն ամենայն }
Այլ ՕՕ. ընդարձակքն բաց 'ի Բնագրէն } յորս պակասին համառօտքն:
Մի Օ. Երկու Օ. են. յընդարձակացն }

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՄԵԾԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼԻՆ

# Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ի

## ՄԱԿԵԴՈՆԱՑՒՈՅ

ԿԵԱՆՔ ՎԱՐՈՒՑ ՔԱՋՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՈՐԾՔ ԱՐԻԱԿԱՆՔ
ՆԱ ԵՒ ՎԱԽՃԱՆ ՆՇԱՆՕՔ

Ա. ԻՄԱՍՏՈՒՆՔ եգիպտացւոց երկրի և ծննդ- չափոյ հասեալ և զերկնի աստեղս թուեալ՝ աւան- դեցին ամենայն աշխարհի զօրութիւն, զկարգ և ըղ- ղիւտ բանից և զարհեստ գործոց։ Քանզի ասեն զՆեկտանեբոս վերջին թագաւոր Եգիպտոսի. ըղ- կնի որոյ՝ թագաւորութեանն պատուոյ անկաւ մի- գական կախարդութեամբ ամենեցուն յաղթել, մինչ զի աշխարհական տարերց հնազանդել նմա։ Զի ե- թէ երբեք 'ի վերայ նորա գունդ եւ ասպատակ, ոչ աշխատեաց 'ի մեքենայս պատերազմականս, ոչ պատ- րաստէր զինուց բազմութիւնս, ոչ կազմէր երկաթս սպառապանս, ոչ մատուցանէր գործիս հնարականս. այլ երթալով՝[2] յարքունիսն միայն, առնլով[3] զեկան,

1 ՀՀ. զՈՒՆ որոյ կամ որ զՈՒՆ Ե- գիպտոսի թագաւորութեանն տիրեաց թագաւորութիւն մակեդոնական խափանեաց. թեւանք, և յաղթեաց զամ թագաւորաց։ Զի

2 ՀՀ. Մնակեալ կամ Մնացեալ՝ ի սենեկին տնէր ըմբռնեալ ջուր։
3 Բ. խանդարեալ էր. այլ ՕՕ. առնելով զնէկան. յայնն էրեալ զնիւն։

զինքն միայն արգելոյր և առնէր զդեկանագիտութիւնս ։ Վասնզի արկանէր ջուր աղբերային 'ի լականն, և ձեռօքն ստեղծանէր 'ի մոմոյ նաւս և մարդիկունս մանեղէնս. և այսպէս դնէր զմարդիկն 'ի վերայ նաւացն և դնէր 'ի լականին, և շնչաւոր լինէին մարդիկքն ։ Նա և ինքն Նեկտանեբոս եբենոսեայ գաւազան ունելով 'ի ձեռինն կախարդելով կոչէր զերկրային չաստուածսն և զօդային դևսն. և այսպէս մկրտէր զնաւսն որ 'ի լականին. և 'ի սոցա մկրտելոյ՝ որք 'ի ծովու նաւք 'ի վերայ նոցա գային 'ի թշնամեացն, կորնչէին ։ Նա և 'վասն բազմահնար մոգական զօրութեանն[2] առնն 'ի խաղաղութեան լինէր թագաւորութիւն նորա ։

Բ. Նա և բազում ժամանակի գնացելոյ՝[3] որք առ հռովմայեցւոցն կոչին էքսփլորատորէս[4] և առ Հայս լրտեսք՝ եկեալ առ Նեկտանեբոս պատմէին՝ թէ գունդ զօրաց հասեալ է ։ Զի եկեալ առ նա զօրագլուխն ասէր. Մեծ թագաւոր, 'ի բաց արա զխաղաղութեան խնձոյս պարուց և 'ի պատերազմ դարձո զքեզ, քանզի մեծ գունդ հասեալ կայ. զի ոչ 'ի վերայ մեր մի ազգ գայ, այլ բազումք. քանզի են հնդիկք, կաւանացիք, կումէացիք, ոքսիդարկացիք, երերացիք[5], կոճնացիք,[6] լեղապացիք, բոմոխրացիք, արգիացիք, ազանացիք, լուքաղացիք, որք միանգամայն յարևելս[7] կան ազգ անթիւ զօրօք բազմօք՝ յԵգիպտոս հասեալ էին. անկցի 'ի սիրտ քո համերականն երկու տունքն. Այլ է պարտ և արժան զգիշերն ամենայն 'ի քուն կալ առն խորհրդարերի, որում ժողովուրդք յանձին են և այսքան հոգք ։

Գ. Նա զայս ասացեալ զօրավարին՝ 'ի բազում

1 Երկու ՕՕ. Նա բազմանար ։

2 ՕՕ. ուր խանդարեալ էր Բուառ. ան զօրութեանց լինէր առնն, 'ի խաղաղութեան լինէր կամ և 'ի խաղ․․ ։

3 Մի Օ. 'ի գնացելոյ ։

4 Բ. խանդարեալ էր. այլ ՕՕ. էքսփլորատորէս ։

5 Այգպէս մի Օ. և յոյնն. այլ ՕՕ. Երերացիք ։

6 Երկու ՕՕ. կոճնացիք ։

7 Այլ ՕՕ. յարևելս կամ յարևելս կոյս ։

ժամս ծիծաղեցաւ Նեկտանեբոս և ասէ. Դու ասացեր՝ բարիոք է, որպէս վայելէր. պահպանութիւն հաւատացեալ պահէս. բայց երկիւղածաբար և ոչ զինուորօրէն[1] բարբառեցար. զի ոչ է 'ի բազմութե զօրութիւն, այլ 'ի յօժարութեան յորդորմանէ. քանզի մի առիւծ զբազում եղջերուս կալաւ, և մի գայլ զբազում ջոկս հօտից հալածեաց. իսկ ապա դու գնացեալ հանդերձ համգունդ[2] զինուորօքդ՝ որ ընդ քև էն, 'ի քո յանձնեալ պահն պահ կալ. զի բանիւ միով զխուժադուժ անթիւ ազգացն զբազմութիւն ծովային ալեօքն ընկղմեցից։

Դ. Զայս ասացեալ 'ի բաց արձակեաց զզօրագլուխն. և ինքն յատն կացեալ մտանէր յարքունիսն, և հրաման տուեալ 'ի ներքուստ ամենեցուն արտաքս գնալ. և միայնացեալ զէկամնն 'ի մէջ բերեալ եդ՝ և դարձեալ նոյնպէս վարեցաւ. կառուցեալ զակնն 'ի լականին՝ տեսանէր զչաստուածսն եգիպտացւոցն զի վարէին զնաւսն 'ի վերայ եկելոց թշնամեացն խուժադուժ ազգացն. այր սովորեալ մոգութեամբ կախարդական արուեստիւն ընդ աստուածս լինել և խօսել։ Նա ուսեալ թէ 'ի վերջ[3] հասեալ է եգիպտացւոց թագաւորութիւնն, ընդգոգեալ[4] ոսկի և արծաթ բազում, և գերծեալ զհերս և զմօրուս, և այլակերպեալ զինքն աներևոյթ[5] յամենեցուն փախեաւ ընդ Պելուսիոն անդր. և ընդ բազում[6] տեղիս յածեալ եկեալ հասանէր 'ի Պելլէս Մակեդոնացւոց. և կտաւիս զգեցեալ նստէր անդ աստղագիտութիւնս առնելով իբր մարգարէ եգիպտացի, քանզի էր իսկ այսպիսի հմուտ։

Ե. Նա իբրև 'ի քաղաքին գտեալ ոչ լինէր, եգիպտացիքն աղաչէին զաստուածսն և խնդրէին զնա

1 Հին ՕՕ. զինուորականօրէն։
2 ԱՀ ՕՕ. համագունդ։
3 ՀՀ. Թէ վերջէ հասեալ է։
4 Հին օր. գոգեալ։
5 Ս. աներևութաբար ամենեցուն։
6 Զօրս օր. 'ի բազում։

թէ զի՞ արդեւք եղեւ թագաւորին ։ Իսկ որ 'ի սան-դարամետան Սինոպեայ աստուածոյն էր, հրամանս պատասխանւոյ առնէր ասելով այսպիսի օրինակաւ. Նա որ փախեաւ թագաւորն ձեր, դարձեալ եկեսցէ յԵգիպտոս ոչ ծերացեալ, այլ մանկացեալ. նա զթըշ-նամիս ձեր պարսիկս հնազանդեցուսցէ ։ Եւ այսպէս առեալ հրաման պատասխանւոյ յաստուածոցն իւ-րեանց՝ քննեալ խնդրէին թէ զի՞նչ արդեւք կամի լի-նել ճառեցեալս ։ Եւ գրեն զայս 'ի վերայ խարսխին՝ որ էր ընդ ոտիւք պատկերին Նեկտանեբայ ։

Զ. Եւ 'ի Մակեդոնիա ամենեցուն յայտնի եղեւ զընականսն հարցափորձելով Նեկտանեբոս. մինչ զի եւ դշխոյին Ողոմպիադայ գալ առ նա եւ բան ինչ հար-ցանել 'ի նմանէ ։ Քանզի դիպեցաւ 'ի ժամանակի յորում 'ի բաց խաղացեալ գնացեալ էր 'ի պատերազ-մունս Փիլիպպոս, եւ հրամայեաց ածել 'ի ներքս առ ինքն զայրն 'ի հարցումն քննութեան իւրոյ իրաց ։ Եւ նա մտեալ եւ տեսեալ զՈղոմպիադա՝ իւրոյ յօ-ժարութեամբ ցանկութեան առաջարկութեան, 'ի թագուհին մածուցեալ կառուցաւ առանց թարթե-լոյ. քանզի էր վաւաշ մոլի[1] 'ի կանայս ։ Եւ յառաջ կարկառեալ զձեռն ասաց. Խնդա ուրախութեամբ բերկրեալ, դշխոյդ Մակեդոնացւոց ։ Ոչ արար արժա-նի ասել տիկին, որ յառաջ տէրն էր ։ Եւ Ողոմպիա ասաց. Խնդա եւ դու եւ ուրախ լեր, քաջ, եւ անդ նիստ ։

Է. Եւ նա իբրեւ էանց նստաւ, ասէ ցնա. Դո՞ւ ես ուսումնական աստեղագէտ Նեկտանեբոսն հռչա-կաւորեալ յամենայն քաղաքի. թերեւս որք փոր-ձեալ քննեցին զքեզ, ուսան 'ի քէն զամենայն ճշմար-տութիւն. որո՞վ օրինակաւ քննութեամբ վարելով զճշմարիտ իրս պատմես ։ Եւ նա ասէ. Բազմօրինակ

1 Հհ. Ողոմպիադա 'ի գեղեցկու-թեանն, եւ խառնաշեալ հայէր 'ի նա. նի էր ։

2 Այլք վասաղամաւ կամ վաղվաղամաւ կամ վաղամաւ կամ վաղվաղուք ։

են, ով դշխոյ, խուզից քննութեան կամք. քանզի են երազագէտք, նշանալոյծք, երազադատք, ամմոնիագէտք՝ և լականագէտք, ծննդաբանք, բախտագիտք, Ճակատագիրք և որ կոչին մոգք. ընդ որովք ամենայն գիտական[2] հարցմունք անկեալ դնին։ Եւ զայս ասելով հայեցաւ թթուաբար յՈղոմպիադա տափանօք ցանկութեամբ հարեալ։ Ասաց դշխոյն Ողոմպիաս. Զի՞ մածար կառուցար տեսանելով զիս։ Նա պատասխանի տուեալ ասաց. Դշխոյ տիկին, յիշեցի զպատասխանիս հարցմանց յիմոց աստուածոցն երբեմն եղեալ. զի կայ ինձ ընդ դշխոյի խորհել և քննել իրս. և այս Ճշմարիտ է որպէս գիտացի 'ի պատասխանեացն։ Իսկ ապա ասա զոր կամիս։

Ը. Եւ հանեալ 'ի ներքուստ արտաքս զձեռն մատոյց[3] տախտակ զոր բան և փորձ մեկնել ոչ կարէ, զի ոսկւով և փղոսկերբ էր կազմեալ, և զեօթն աստեղսրն, և զժամագէտն[4] Արամազդ օդային և արեգակըն սառնային բիւրղեայ[5] և լուսին ամարինտինէ[6] և Արէս էմատիտէս[7] և Երմէս զմրխտեայ և Ափրոդիտէս շափիւղեայ և Կռոնոս ոփիտէս[8] և ժամագէտն լիկդինոս։

Թ. Զարմացեալ Ողոմպիայ ընդ բազմապատիկ օրինակն և ընդ աստեղացն սքանչելի տեսութիւնն և առ նմա մօտ անցեալ նստաւ, և հրաման ետ ամենեցուն 'ի ներքուստ արտաքս գնալ։ Ասէ ցնա. Քննեա և հարց զիմ և զՓիլիպպոսի ծնունդն. քանզի համբաւ է՝ թէ յորժամ գայ 'ի պատերազմէն, կամի զիս 'ի բաց ընկենուլ և այլ կին առնել։ Եւ նա

1 ՀՀ. [illegible]. կայ և 'ի յոյնըն [illegible]։
2 ՀՀ. [illegible] կամ [illegible]։
3 Ներքս ՕՕ. [illegible] կամ [illegible]։ ՀՀ. [illegible] [illegible] [illegible] Գ։
4 Ներքս ՕՕ. [illegible]։ Մ. [illegible]։ ՀՀ. [illegible] [illegible] և Արամազդ։
5 Վէց որ. [illegible]։ Մ. [illegible]։
6 ՀՀ. [illegible]. յոյն [illegible] այն է ադամանդեայ։
7 Ներքս ՕՕ. [illegible]։
8 ՕՕ. [illegible] կամ [illegible] կամ [illegible]. Եղպայ 'ի յունէն։

ասէ. Դիր զքո ծննդեան զիրն եւ զՓիլիպպոսին։ Եւ նա ասէ. Զի՞նչ առնես զայս։ Նեկտանեբոս դնէ եւ զիւր ծննդեանն զիր առ Ոլոմպիադայն եւ հարցաքննեալ ասաց. Ոչ է սուտ համբաւն զոր լուար. այդ այս ճշմարտապէս ճակատագրեալ է քեզ. բայց կարեմ ես քեզ իբրեւ մարգարէ եգիպտացի օգնել, զի մի 'ի բաց ընկեցեալ լիցիս 'ի նմանէ. եւ եթէ լիցիս, գտցես որ խնդրեսցէ զքո վրէժ։ Եւ Ոլոմպիադա ասէ. Զիա՞րդ է այդ։ Եւ նա ասէ. Ճակատագրեալ է քեզ, ըստ որում եդիր ինձ, ընդ երկրային աստուածոյ խառնակել եւ յայնմանէ յղանալ, եւ յղացեալ ծնանիլ եւ սնուցանել, եւ զնա վրէժխնդիր ունել քեզ մեղանչմանցն որ 'ի Փիլիպպոսէ անցցէ ընդ քեզ։ Ասէ Ոլոմպիաս. Ընդ որո՞ւմ աստուածոյ։ Եւ նա ասէ. Ընդ լիբէացւոցն Ամոնի։ Ոլոմպիաս ասէ. Որպիսի՞ ոք է հասակաւ, մանո՞ւկ թէ 'ի միջին տիս. եւ ձեւով կերպարանաւ որպիսի՞ ոք է։ Եւ նա ասէ. Ալեւոր հերով եւ եղջիւրս խոյի 'ի վերայ ծամելեացն ունելով. իսկ արդ պատրաստեա դու քեզոյն զանձն իբրեւ դշխոյ եւ կին, զի յաղագս այսր տեսցես երազս եւ զաստուածն ընդ քեզ խառնեալ։ Եւ Ոլոմպիաս ասէ. Եթէ տեսից զերազն, ոչ իբրեւ մարդոյ, այլ որպէս աստուածոյ երկիր պագից քեզ։

Ժ. Ելանէ Նեկտանեբոս յարքունեացն, եւ առնու բանջար կուտակեալ զոր գիտէր առ երազահործութիւն 'ի ճահ յառապարէն քաղեալ. եւ զայս քաջեփ արարեալ, ստեղծանէ էգ մարմին մոմեայ եւ գրէ 'ի վերայ պատկերին զանունն Ոլոմպիայ. եւ արարեալ մահճակս[1] մոմեայ դնէր 'ի վերայ ստեղծմանն Ոլոմպիադայ. եւ լուցեալ ճրագ եւ արկեալ անդ զբանջարոյն եփուկս, ասէր[2] 'ի վերայ դորա երդմունն՝

1 Երկք որ. մահճակս. մի որ. մարճակս. միւս եւս 'ի լուս. մաճարակս։

2 ՀՀ. եւ ասէր 'ի վերայ երդմունս առ այս, մինչեւ երեւեցաւ յերազին Ոլոմպիայ, որպէս ասաց ինքն. եւ յարուցեալ

առ այս 'ի դէպ արարեալս, մինչ երեւութանալ ո-գւոյն Ողոմպիադայ. քանզի ետես շաղկապեալ՝ զնո-վաւ 'ի նշանաց անտի զԱմմոն: Եւ յարուցեալ ասէ. Կին դու, յղացար յինէն արու մանուկ՝ որ վրէժխըն-դիր լինի քեզ:

ԺԱ. Եւ յարուցեալ 'ի քնոյն Ողոմպիաս եւ զարմա-ցեալ ընդ ուսումնական հարցուկն ասաց. Տեսի զե-րազն եւ զոր ասայեր ինձ զաստուածն. և արդ կա-միմ խառնիլ[2] ընդ նմա. այժմ քեզ հոգ լիցի. յոր-ժամ ընդ իս մերձաւորութիւն արասցէ, ազդ ա-նես ինձ, զի և ես պատրաստագոյն գտայց փեսային: Եւ նա ասէ. Նախ առաջին, տիկին, զոր տեսերն՝ երազ էր. իսկ նոյն ինքն որ յերազին տեսիլ՝ աս-տուածն էր, գայ մտանէ առ քեզ. տեղի տուր ինձ ննջել առ քեզ 'ի սենեկին, զի մի երկիցես ինչ յոր-ժամ 'ի վերայ քո եկեսցէ աստուածն:

ԺԲ. Եւ ասաց. Բարւոք ասացեր, ով մարգարէ, տաց քեզ մօտ[3] 'ի սենեկին իմում. և եթէ դիպե-ցայց մերձաւորութեան և յղացայց, մեծապէս պա-տուեցից զքեզ իբրև զանսխալ տեսանող և ընկալայց իբրև թէ հայր մանկանն իցես: Ասէ Նեկտանեբոս. Նախընթաց կարապետ առ քեզ գալոյ աստուածոյն այս է, եթէ յորժամ[4] անցեալ նստցիս 'ի ներքս 'ի սենեկին քում, տեսցես վիշապս սողս գալ առ քեզ. հրամայես որ անդր կան՝ արտաքս ելանեն. և դու մի շիջուցաներ զլոյս ճրագացն, այլ կանգնեցիր և նիստ 'ի գահոյս քո և ծածկեա զերեսդ. դարձեալ տե-սանես զաստուածն զոր տեսեր յանուրջս մտեալ առ քեզ: Զայս ասելով գնաց արտաքս:

ԺԳ. Եւ 'ի վաղիւ անդր տայր նմա մօտ առ սե-նեակն իւր այլ սենեակ. և նա պատրաստէր զգաթ-

1 Այլ ՕՕ. [illegible]:
2 Եղծն որ. խառնակիլ:
3 Այլ ՕՕ. մօտ 'ի ննջել 'ի սե-նեկին:
4 ՀՀ. յորժամ [illegible]:

խոյի կակղագոյն հանդերձ եղջիւրովքն խաղամոլլին , և ցուպ և հանդերձ սպիտակ . և առեալ վիշապ՝ առնէր զնա տկար և լոյծ , և 'ի ձեռաց անտի նորա սողել և յանկարծօրէն 'ի բաց արձակել զվիշապն . և նա եմուտ 'ի սենեակն Ողոմպիադայ : Եւ նորա տեսեալ ոչ զարհուրեցաւ 'ի նմանէ , քանզի և այնմ ակն ունէր . և ասէր որ անդր կային 'ի բաց գնալ յիւրաքանչիւր տեղիս : Եւ ընկողմնէր զինքն 'ի մահիճսն . և ծածկեալ զերեսն՝ լոկ միայն ծայրիւ ականն տեսանէր զնա 'ի մտանելն 'ի ձեւն որպէս և ետես յերազին : Եւ նորա 'ի բաց եդեալ զգաւազանն արմաւեայ՝ ելանէր 'ի մահիճսն և դարձուցանէր զՈղոմպիադա յինքն կոյս 'ի վեր և մերձենայր 'ի նա : Ապա եդեալ 'ի վերայ կշտի նորա զձեռն աջոյ և ասէր . Զաւակ անյաղթու և անհնազանդելի . արդ կաց մնա կին դու միշտ , զի յղի ես արու մանկամբ , որ վրէժխնդիր քո լինելով և ամենայն շինաւանի[2] աշխարհակալ դշխոյ : Եւ զայս ասելով առեալ զգաւազանն իւր 'ի դուրս ելանէր 'ի սենեկէն , և 'ի բաց թագուցանէր զոր ունէրն :

ԺԴ. Իսկ իբրև այգ եղև , յարեաւ Ողոմպիադա և եկն 'ի սենեակն Նեկտանեբայ : Եւ զարթուցեալ ասաց . Տիկին զի՞նչ , պատմեա ինձ . եղև՞ զոր տեսերն : Ողոմպիաս ասէ . Եղև զոր ասացերն : Եւ նա ասէ . Խնդացի ընդ քո , տիկին : Եւ Ողոմպիա ասէ . Արդ ո՞չ ևս այլ գայ առ իս . քանզի անսամ իբրև զկին գալստեան և մերձաւորութեան նորա առ իս , զի հեշտալի ցանկութեամբ ընկալայ զնա , ով մարգարէ . բայց եթէ քեզ զանխաւ եղև այս և ոչ գիտացեր՝ զարմանամ : Եւ նա խնդայր զի սիրեցաւ 'ի բամբշանէն[3] . և ասաց . Լուր , Ողոմպիաս . ես մար-

1 Այլ ՕՕ. [illegible] :

2 Երկու ՕՕ. շինուածոյ : Ա. շինուածոյ . մի Օ. շինողին [illegible] աշխարհակալու :

3 Այլք 'ի բամբշայէն կամ 'ի բամբշէն կամ 'ի բամբիշէն :

գարէ եմ աստուածոյս այսորիկ . եթէ կամիս տուր ինձ զտեղիս զայս 'ի քուն լինել աստ, զի մի ոք խուճապեսցէ նեղելով . զի սովորական մաքրութիւն արարից նմա, և եկեսցէ առ քեզ : Եւ Ոլոմպիաս ասէ . Կամք քո եղիցին յայսմ հետէ : Եւ ասէ ցդռնապանսն իւր . Տուք ցդա զփական սենեկիդ : Եւ նորա առեալ 'ի թագստեան առնէր . և խոկ և խոկ մտանէր, քանզի անգամ և կամէր Ոլոմպիաս թէ մտցէ առ նա . յառաջագոյն զեկուցանէր մարգարէին . և նա ըստ սովորութեանն մերձենայր յՈլոմպիադա, կարծիս առնելով Ամոնն գոլ :

ԺԵ . Համբառնայր որովայն նորա, և ասէր . Ո՛վ մարգարէ, զի՞նչ արարից եթէ եկեալ գտցէ զիս Փիլիպպոս յղի : Եւ նա ասէ . Մի՛ երկնչիր, տիկին . քանզի այսմ իրի օգնէ քեզ աստուածն Ամոն, և եկեալ առ նա յերազի զեկուցանէ որ ինչ լինելոցն էր, անխոշտանգ և անպատուհաս լինել քեզ 'ի նմանէ : Արդ այսպէս Ոլոմպիաս մոլորականս կրեաց, 'ի կախարդական զօրութէն զճշմարտութին իւր ցուցանելով :

ԺԶ . Եւ առեալ ծովային բազէ՝ զսա մոգեաց Նեկտանեբոս . և որքան միանգամ կամէր, յերազս տեսանէր զՓիլիպպոս : Նա բազէն գիւթութեամբք վարեցեալ խօսէր, և թռուցանէր զբազէն . և նորա ընդ երկիր և ընդ ծով թռուցեալ չոգաւ երկուս տիւս և երկուս գիշերս ուր էրն Փիլիպպոս և խօսեցաւ [1] ընդ նմա որպէս ուսաւ 'ի Նեկտանեբայ՝ ընդ երազ . Փիլիպպոս տեսեալ զերազն զարթեաւ խռովեալ : Եւ կոչեցեալ առ ինքն զերազոց մեկնիչն զԱբիլոնիոս և ասէ ցնա . Տեսի յերազի զոմն աստուած գեղեցկակերպ ալեօր հերով և 'ի մօրուարձական եղջերս խոյի ունելով առ ծամելեօքն . և 'ի գիշերի մտեալ առ

1 Նշանակեալ բառքդ զի խառգարեալ էր 'ի Բ. թարգմանութեանն լուացուցաք 'ի յունէն : Իսկ այլ ՕՕ. այսչափ ինչ ունին առ էրն Փիլիպպոս, ճանէր խօսեալ :

կնոջ իմ Ողոմպիադայ և ընկողմնեալ լինի ընդ նմա և յայտնեցեալ ասէ ցնա. յղացար յինէն արու մանուկ, որ զքեզ պաշտպանեսցէ և մահու հօրն վրէժս խնդրեսցէ ։ Եւ թուէր ես եթէ կարկատիցեմ զմնութիւն կնոջ իմոյ բիւրղոսաւ կնքել իմով կնքոցաւ. և էր մատանին ոսկի և դրոշմն արեգական և գլուխն առիւծոյ և նիզակ ։ Եւ զայս իմ արարեալ կարծիս առնուլ, բազէ հասեալ առ իս՝ թեւօք իւրովք զարթուցանէր զիս 'ի քնոյ, և ազդել ինչ ոչ ։

ԺԷ. Ասէ ցնա երազագէտն. Ճշմարիտ է զոր տեսերդ երազ. քանզի կնքելն քեզ բնութիւն կնոջն քո հաւատով լի է պատասխանիք հարցմանն. քանզի կնիքն հաւատ է, ազդելով զի և յղացաւ կինն ։ Քանզի ոչ ոք զունայն աման կնքէ, այլ զլի և զպատարուն. և զայս բիւրղոսաւ. քանզի ոչ ուրեք գտանի բիւրղոս, բայց միայն յԵգիպտոս ։ Որդ եգիպտացի է. և սերմն ոչ 'ի վայր, այլ նշանաւոր և փառաւոր նա և լուսաւոր ։ Այլ և վասն ոսկւոյն, զի զինչ քան զոսկին փառաւոր իցէ, 'ի ձեռն որոյ աստուածք երկրպագութիւն [1] կրեն ։ Եւ զի կնիքն էր արեգակն և ունելով գլուխ առիւծոյ և նիզակք, սա ծնեալ մինչև յարևելս հասցէ. զամենայն ինչ կամակար և ըստ իւր կամաց գործելով իբրև զառիւծ. և նիզակակուր զաշխարհքս և զքաղաքս արասցէ վասն նիզակին որ էր յերազին ։ Բայց տեսանել քեզ զաստուածն խոյեղջերը ալևոր՝ լիբէացւոց աստուածն է Ամոն ։

ԺԸ. Այսպէս մեկնեալ երազագիտին, ոչ հեշտեաւ լուաւ թագաւորն զյղանալ կնոջն իւրոյ, թէպէտ և յաստուածոյն գիտէր ։ Եւ յաղթեալ պատերազմին՝ փութով ճեպէր 'ի Մակեդոնիա մտանել ։ Իսկ երկնչէր Ողոմպիաս, և մխիթարէր զնա Նեկտանեբոս ։

1 Մի Օ. յերկրպագութիւն կրեն ։

ԺԹ. Եւ լինէր 'ի գալն փիլիպպոսի և 'ի մտանելն առ քամբիշն, եկեալ առ նա Ոլոմպիաս, բայց ոչ համարձակութեամբ 'ի վերայ եղելոց իրացն: Եւ իբրև ետես փիլիպպէ զնա խռովեալ՝ ասաց. Ո՜վ կին դու, այդմ իրաց ոչ ես դու պատճառ, զի այլոց եղեն յանցանք. և ինձ 'ի տեսլեան ազդեցաւ եղեալն, զի դու անպատճառ և անխոշտանգելի իցես. քանզի զամենայն ինչ կարեմք թագաւորքս, բայց առ աստուածս ոչ ինչ կարեմք. զի ոչ 'ի խառնաճաղանջ գուեհիկ յումեքէ մարդոյ հարար և ոչ գեղեցկավայելուչ ձեւիդ քում տափանայր ոք արժանապէս, այլ աստուածքն որ զամենայն կարեն: Նոյնպէս ասելով խնդամիտ արձակեաց զՈլոմպիա: Եւ նա գոհանայր զյառաջագդող մարգարէէն: Եւ էր այնուհետև ընդ Ոլոմպիադայ փիլիպպոս:

Ի. Իսկ Աղեկսանդրոս անդ էր յարքունիսն և ոչ ումեք երևէր, քանզի ոչ կամէր. բայց լսէր 'ի փիլիպպոսէ զի ասէր, եթէ ոչ յաստուածոց յղացար, այլ յայլմէ յումեմնէ հարար ճշմարտութեամբ. որ թէ անկցի 'ի ձեռս իմ, անողորմ տանջանօք բարձից զնա 'ի կենաց աստի: Լսէր զայն Աղեկսանդրոս զոր ասէինն:

ԻԱ. Եւ մինչդեռ 'ի խրախճանութեան էին սակս գալոյ թագաւորին, միայն արքայն տրտում էր վասն յղանալոյ կնոջն. իսկ մինչդեռ յուրախութեան էին բազմութիւնն, Աղեկսանդրոս շրջէր զինքն փոխեալ 'ի կերպ վիշապի կարի մեծ քան զառաջինն. եկն անց ընդ մէջ տաճարին և շնչեաց ահագին, մինչ զի՝ այն թէ հիմունքն շարժեցան: Իսկ որք տեսինն, 'ի վեր վաղեցին յահէն զարհուրեալ ընդոստմամբ: Եւ Ոլոմպիաս գիտացեալ զիւր փեսայն[2], կարկառեալ զձեռն աջոյ 'ի բաց յորոյ 'ի գոգն շանթեալ: Եւ

1 Ն. և Թաւէզայց Բէ: Ոլոմպիայ. և նա:
2 Ն. յաւելու և նա էին 'ի գոգն

նա ընդ ամենայն տեղիս տաճարին շրջեալ եկն 'ի ծունկսն Ողոմպիադայ, և [1] արկ զերկշուրթն [2] լեզուն և համբուրեաց զնա, հաստատուն [3] նշանակաւ զխաղապատելիս [4] սիրոյն ազդելով վիշապին տեսողացն ։ Իսկ Փիլիպպոսի երկուցեալ և միանգամ զարմացաւ և անգիտութիւն մատուցանէր գալոյն ։ Իսկ Նեկտանեբոս ոչ կամեցեալ յաճախատես լինել տեսարանին, այլափոխէ զինքն 'ի վիշապէն յարծուի, և անտուստ 'ի բաց թռչի. իսկ թէ ուր չոգաւ, աւելորդ է ինձ ասել ։

ԻԲ. Բայց Փիլիպպոս զահի հարեալ [5] յերկեղէն և յինքն եկեալ ասաց. Կին դու, հաստատուն նշանակ առ քեզ վտանգի տեսի զաստուածն քեզ յօգնութիւն մատուցեալ վասն վտանգիդ. բայց թէ ով էր աստուածն, ոչ գիտացի. քանզի եցոյց մեզ զԱրամազդայ և զԱմոնի կերպարանս [6] ։ Ասէ Ողոմպիաս. Որպէս զինքն ինձ յայտնեաց յորժամ մերձեցաւ 'ի յիս, Ամոն է՝ աստուածն ամենայն Լիբէացւոց ։ Լուեալ զայս թագաւորին, երանի տայր անձին իւրում. զի աստուածոյ զաւակի հանդերձեալ եմ, ասէր, հայր լինել ։

ԻԳ. Իսկ յետ սակաւ աւուրց մինչդեռ անցեալ նստէր Փիլիպպոս 'ի տնկախիտ ուրեմն տեղւոջ յարքունեաց, ուր էին հաւք բազումք ճարակաւորք, մինչդեռ պարապէր նա առ 'ի պիտանացու ինչ իրս, յանկարծակի վազեալ հաւ մի 'ի գոգ նորա ձու արկանէր, և ինքն 'ի բաց թռչէր. և կիթն հոլովեալ 'ի գոգոյ նորա յերկիր [7] 'ի բաց փլանիւր [8]. յորմէ ելանէր փոքր վիշապիկ

1 Ոմ. և օձաձևեալ բերանովն համբ... ։
2 ՀՀ. զերկշուրթն 'ի բերանն և ։
3 ՀՀ. Խաղապատէր 'ի տեսոյն վիշապ տեսողացն ։ Ոմ. և երևեցոյց իբրև խաղաղ ընդ նմա ։ Ոմ. Փիլիպ.. ։
4 Զօրա օր. զխաղապատելի. մի օր. զխաղապատելւ ։
5 Ոմ. հարեալ յերկիւղէն 'ի հոգի եկն և ասէ.. [illegible]
6 Ոմ. յաւելու [illegible] զԱրամազդայ պատկերն արծուի նմանեցուցանէին և զԱմոնայ Լիբեաց ։
7 ՀՀ. յերկիր, և ծփայր 'ի բաց ծփանայր ։
8 Հինգ օրին. 'ի բաց ծածկեալ, յորմէ.. Լիբեաց Գ ։

մի, և շուրջ եկեալ բաղում անգամ և 'ի ձուն կամեցեալ մտանել վերստին ուստի ելն, և յարկանել անդրէն 'ի ներքս զգլուխն՝ իսկոյն իսկ վախճանեցաւ ։

ԻԴ. Նա խռովեալ Փիլիպպոսի ոչ սակաւ՝ յղեալ կոչեաց զԱնտիփոնտա որ յայնմ ժամանակի հռչակաւոր նշանագէտ էր. և եկաց պատմեաց նմա զեղեալ նշանն, զհաւն, զձուն, զվիշապն, զշուրջ գալն, զմահն ։ Իսկ Անտիփոնտա, որ առանձին տեղեկութիւնք աստուծոյ կամօքն փչեցեալ եղև յանձն իւր, ասէ ցնա. Ո՛վ թագաւոր, եղիցի քեզ որդի որ շուրջ եկեալ ընդ բոլոր աշխարհ զամենայն ոք իւրով զօրութեամբ հնազանդեցուսցէ, և ինքն ոչ ումեք հնազանդեսցի. և դառնալով յիւր աշխարհ սակաւակեաց՝ ժամանակաւ վախճանեսցի. քանզի վիշապն արքունական պաճար է [2], և ձուն նման բոլոր աշխարհի ուստի վիշապն 'ի դուրս ել, և շուրջ եկեալ ընդ աշխարհ և կամեցեալ ուստի ելն անդրէն մտանել՝ և ոչ ժամանեաց, այլ վախճանեցաւ ։ Արդ այսպէս լուծեալ մեկնէր նմա զնշանն. և պարգևս ընկալեալ 'ի Փիլիպպոսէ, ելեալ գնաց ։

ԻԵ. Նա իբրև կատարեցաւ կարգեալ ժամանակ ծննդեանն ինն ամսոց ըստ կատարման յղութեն, Ողոմպիադա անցեալ նստէր 'ի վերայ յղեկլիր գահաւորակին երկնել. և մօտ անցեալ կայր Նեկտանեբոս և չափէր զերկնային ընթացս աստեղացն. և վրդովեալ զաշխարհական տարերս [3] ինքեան զօրութեն վարեցեալ, ուսաւ որ 'ի մէջ կայր ժամանակն և ասէր. Կալ զքեզ, կին դու, և յաղթեա բնութեանդ միջակայ ժամանակիդ, և նման լեր բնութեանն որ ծնաւ զքեզ. զի եթէ այժմ ծնցիս, ընդ ծառայութեամբ կամ գերի այլոց ծնցիս ։

1 Մի Օ. ամսականեայ ։ Ե. ամսաժամանակեայ ։

2 Ա. պատճառ է ։ Ե. նշան է ։

3 Ե. տարերս. և Գիրք Եր. արէգան 'ի մեկնութեան. և այլք.. բնաւորեանց 'ի ժամանս նմանեցուցիչ ծնողին ։

ԻԶ. Դարձեալ կնոջն շտապեալ երկամբքն և ոչ կարացեալ տանել բաղում ցաւոցն, Նեկտանեբոս ասէ. Ժուժկալեա սակաւիկ մի, ով դշխոյ. քանզի եթէ այժմ ծնցիս, գալլոս եղիցի՝ կամ բացակատուր ծնունդն։ Եւ էր ինչ որ սփոփէր Նեկտանեբոս մխիթարական բանիւք զկինն, և մատուցանէր զձեռնն 'ի բնական իւր ելոն գնացից ուսեալ 'ի Հարկէն։ Բայց Նեկտանիբէ իւրով զօրութեամբն արգելոյր զծնունդն. և դարձեալ հայեցաւ յերկնային աստեղացն ընթացս աշխարհական տարերց. ծանեաւ առ հասարակ զամենայն աշխարհ և զԿռոնոս 'ի մէջ երկնի եկեալ և փայլակն իմն յերկնէ ետես զօրէն արեգական 'ի միջօրէի, և ասէ ցՈղոմպիադա. Արձակեա զծննդական ձայն։ Եւ ինքն արձակեաց զնորա ծնունդն և ասաց. Դշխոյ, եթէ այժմ ծնցիս, աշխարհակալ է ծնունդդ։ Եւ Ողոմպիադա քան զցուլ մեծ գոչեաց և ծնաւ արու մանուկ։

ԻԷ. Իսկ մանուկն իբրև յերկիր անկաւ, շարժումն եղև և որոտումն և կայթմունք[1] ստէպ ստէպ և կայծականց լուսոյ ճայթմունք յերկրէ երևէին, մինչ դրեթէ աշխարհ ամենայն առ հասարակ տատանէր[2]։ Եւ ասաց Փիլիպպոս. Կամիմ զդա ոչ սնուցանել, ով կին, քանզի ոչ է իմ ծնունդ. բայց զի տեսանեմ զսերմդ զի յաստուածոց է և զծնունդդ նշանակաւ յաշխարհական տարերց եղելոց, սնցի առ 'ի յիշատակ մանկանն իմոյ վախճանեցելոյ՝ որ եղև ինձ յառաջին կնոջէն. և կոչեսցի Աղեքսանդրոս։ Այսպէս ասելով Փիլիպպոսի, և մանկանն զարժանաւոր խնամս ընկալեալ լինէր. և պսակազգեցութիւնք[3] ընդ բոլոր Մակեդոնիա ընդ Պելլէ և ընդ Թրակէ[4] և ընդ ազինս լինէին։

1 Այլք ձայթմանց։
2 Նոյն օր. տատանէր։
3 Ն. գաւառաշուրջքն 'ի ծննդեան նորա բոլոր Մակեդոնիա և Պելլէ. և այլ ամենայն ազինք։
4 ՀՀ. յաւելուն 'ի Մակեդոնաց։

ԺԲ. Իսկ զի մի կարի շատ յամեցից՝ ի բանս որ յաղագս մանկութեանն Աղեքսանդրի է, յառաջմէն սկսայց ասել զարմանոց որոց եհաս։ Քանզի 'ի սնանել հասուցեալ և զարգացեալ հասակաւ և ձևով ոչ ինչ նմանէր Փիլիպպոսի և Ոլոմպիադայ, այլ և ոչ իսկ սերմանողին. այլ[1] յատուկ տպօք օրինակի զարգացեալ կերպարանօք։ Զի զվարսն առիւծոյ ունէր. և աչքն[2] մինն խաժակն, աջն վայրաբեր և սեաւ, և ահեակն խաժակն. և սուր էին ատամունքն իբրև ժանիք. և զգիմադրութեան յարձակումն երևեցուցանէր յինքեան իբրև առիւծու. և քաջայայտ էր բնութիւնն թէ որպիսի լինելոց էր մանուկն. և 'ի ժամանակս աճեցեալ ապա յուսմունս թևակոխէր և 'ի թագաւորել։

ԺԳ. Իսկ էր նորա դայեակ կին Լակրինէ կեղտացին[3] քոյր Մելանոսի, և մանկավարժ[4] դաստիարակ և դայեակ այր Լեւոնիդէս լակոնացի, և վարդապետ երգոց Պաւղինիկոս, և երաժշտականութեանն Լեւկիպպոս[5] լեմնացի, երկրաչափութեանն Մենեքմոս[6] պեղոպոնեսացի, և հռետորական բանից Անաքսիմենոս Արիստոկլէս լամփսակենացի[7]. իսկ իմաստասիրութեանն Արիստոտէլէս Նիկոմիտաքայ ստագիրացի 'ի Մելիտեայ քաղաքէ։ Բայց յիշեաց և Պափոլբանոս յաղագս այսոցիկ 'ի չորրորդում գիրս՝ իւրում յամենազան հնարագէտ պատմութեանց։

Ի. Իսկ Աղեքսանդրոս ամենայն խրատու վարժեալ կրթէր զինքն, որպէս յառաջն ասացի, թագաւորել. մինչ զի յայտնի լինել՝ յայտ է թէ յաստուածոյ ումեմնէ ունեալ։ Քանզի 'ի բաց արձակեալ յուսում-

1 Ե. այլ այլայն կերպարանօքն։

2 Բ. այսպէս։ ՀՀ. աջին աչքն սեաւ և ձախն խաժ. սուր էին։ Հինգ. օր. աչքն մինն խաժաքն ահեակն, և աջն վայրաբեր. սուր էին։

3 ՀՀ այսպէս։ ՕՕ. կեղտացւոյ կամ կեղտացւոց։

4 Ե. մանկակալ։

5 Ամենայն օրինակք Դէակիպպոս լեմնացի. եդաք ըստ յունին։

6 ՀՀ. Մենեքմոս. յոյնն Մենելմնոս։

7 Ամենայն օր. ամփսակենացի. եդաք ըստ յունին։

նական խրատուց տայր զաշակերտս՝ իւր տակաւ տակաւ, և առնէր կռիւ յորժամ տեսանէր զկողմ մի պարտեալ, և դարձեալ անդ յաղթէր. մինչ զի յայտնի լինել թէ 'ի նմանէ է յաղթութիւնն ։

ԼԱ. Եւ յայնմ[2] ժամանակի եկեալ ածին Փիլիպպոսի մատակպանքն 'ի կուտիցն ձի կարի մեծ յոյժ[3], և ածին կացուցին առաջի այսպէս ասելով. Տէր արքայ, զայս 'ի կոյտոն քո գտաք ծնեալ գեղեցկութեամբ և արագութեամբ առաւել քան զՊեգասոս և քան զԲրիփիայն. զի և 'ի Դամմենտեայ բերեալ մատուցանեմք քեզ։ Նորա տեսեալ զայնքան գեղեցկութին և զմեծութին զարմացաւ յոյժ և ասէ. Գեղեցիկ է, երդուեալ յիմ փրկութիւն ։ Բայց, ասեն, տէր, մարդակեր է ։ Եւ[4] նա ասէ. Ճշմարիտ[5] է այս որ յեղլենացիքն իրք եղեն. զի 'ի մօտ 'ի բարիս և 'ի չարիս ընտանորեցաւ. արդ զի որովհետև անզգամի եղև, առէք զդա 'ի բաց և արգելեալ փակեցէք ընդ վանդակաւ, սանձս եդեալ և սրոյ բանտս. զի որ անկցի ընդ օրինօք պատուհասի՝ ըմբռնեալ վասն աւազակութեան կամ սպանութեան, զորա առաջի ընկեսցուք։ Երբև ասաց զայս թագաւորն, քան զբանն վաղվաղակի եղև գործն ։

ԼԲ. Իսկ Աղեքսանդրոս աճէր և զարգանայր հասակաւ, և երկոտասանամեայ եղեալ՝ ընդ հօրն 'ի գործ լինէր. զինեալ զանձն դիմէր ընդ զօրսն և[6] կամակար 'ի ձի աշտանակէր ։ Եւ տեսեալ զՓիլիպպոս

1 Հհ. [illegible] և առնէր [illegible]. և երբ տեսանէր [illegible] դարձեալ, [illegible] 'ի [illegible] նութիւն ։

2 Եւ. յայնժամ բերեին երամակս. [illegible] յերամակէն յի մի Փիլիպպոսի, որ էր կարի մեծ ։

3 Հհ. յաւելլուն և 'ի [illegible] գա- [illegible] ։

4 Հհ. Եւ հրամայեաց ածել 'ի տաճարն. և ընթանել [illegible] զի զմա- հապարտն ընկեցին առաջի նորա. և յերդնուածէն (կամ յերդնիւ տանն) [illegible] [illegible]. և [illegible] [illegible] ։ [illegible] ։

5 Եւ. Աղեքսանդր. և նոքա ասեն՝ այս. և ասէ Փիլիպպոս. այսպիսի էր և յետ [illegible] եղեւ. զի [illegible] նորա է և [illegible]. բայց զի եղեւ, ասէ ։

6 Եւ. և յիշխեր [illegible] ։

զի ոչ բարիոք էր ընդ Ողոմպիադայ. կոչեաց զՆեկտանեբոս Ողոմպիա առ ինքն և ասէ. Հարց և քննեա թէ զի՞նչ խորհի վասն իմ Փիլիպպոս: Իբրև հարցեալ քննեաց, և անցեալ նստաւ ընդ նմա: Եւ ասէ Աղեքսանդրոս. Հայր, ողքա այժմ զոր ասես աստեղս երկնի՝ երեւին: Եւ կարի քաջ ասես, որդեակ: Ասաց. Կարեմ և ես զնոսա տեսանել: Եւ ասէ. Կարես, որդեակ:

ԻԳ. Եւ երեկոյ եղեալ առեալ զմանուկն և հանէ արտաքոյ քաղաքին. և հայեցաւ 'ի վեր յերկինս, ցուցանէր Աղեքսանդրի զաստեղսն: Իսկ Աղեքսանդրոս բուռն հարեալ էած զնա և ընկէց 'ի խորխորատ մի 'ի վայր: Եւ յանկանելն առնու հարուածս սաստիկս 'ի պարանոցին 'ի շիշմն, և ասաց. Որդեակ Աղեքսանդրոս, զի՞նչ կամ եղև քեզ՝ զայդ առնես գործ: Եւ նա ասէ. Անձինդ մեղադրեա, ով աստեղագէտ: Եւ նա ասէ. Ընդէ՞ր: Ասէ. Զի զերկիր ոչ գիտելով, զերկնայինս խնդրել յօժարիս: Եւ նա ասէ. Մեռանիմ, ով Աղեքսանդրէ, զի սաստիկ վէր առի յանկանելս. այլ ոչ ինչ և ոչ ումեք մահկանացուաց յաղթել ճակատագրի: Եւ մանուկն ասէ. Ընդէ՞ր: Եւ նա ասէ. Որպէս բաժանեցին գիտացի զանձն իմ. զի գրեալ էր ինձ յիմոյ որդւոյ սատակումն կրել, և ոչ կարացի զերծանել 'ի բաժէն, այլ 'ի քէն սատակեցայ: Եւ Աղեքսանդրոս ասէ. Այժմ ես քո որդի եմ: Եւ նա ասէ. Կարի քաջ: Եւ Աղեքսանդր ասէ. Զիա՞րդ: Այդ ճշմարիտ է, Նեկտանեբոս ասաց. որպէս և պատմեաց նմա զԵգիպտոսէ զփախուստն, և զգալն առ Ողոմպիաս, և զհարցումն քննութեան յաստեղս և զցանկութիւնն, և զիարդ մտի առ նա իբրև զաստուածս և խառնակեցայ ընդ նմա: Զայս ասելով՝ Նեկտանեբոս 'ի բաց եթող զհոգին:

1 Այ. [illegible]

9608-57 2258



ՀՍՍՀ-ССР

ԼԴ. Իսկ ուսեալ Աղեքսանդրի եթէ հայր նորա է որ վախճանեցաւ, երկեաւ թողուլ զնա 'ի խորխորատին զի մի գազանակուր լիցի, վասն զի գիշեր էր և ամայի վայր. գութ խանդաղատանաց առեալ առ ծնողն իւր՝ բարձեալ բերէր զնա 'ի վերայ ուսոց իւրոց արխաբար մինչ 'ի ներքոյ դրացն. և մտեալ առաջի մօրն պատմեաց նմա զամենայն զոր ինչ միանգամ լուաւ 'ի մոգ աստեղագիտէն: Իսկ Ոլոմպիաս հիացեալ զարմանայր և ստգտանէր զանձն իւր զի մոլար խաբկանօք և հնարիւք մոգութեամբ չնութիւն կրեաց: Ապա թաղեաց զնա վայելչաբար զնոյն Նեկտանեբոս իբրև զհայր որդւոյ իւրոյ, և գերեզմանս արարեալ անդ եբարձ եդ զնա:

ԼԵ. Զարմանք են զնախխնամութեան փորձ առնուլ զՆեկտանեբայ. զի այր եգիպտացի 'ի Մակեդոնիա եկեալ ելլադական օրինօք պատմանաց և թաղմամբ թաղեցաւ. և Աղեքսանդրոս որ մակեդոնացին էր, յԵգիպտոս եկեալ մորական՝ թաղմամբ աստուածօրէն լինէր:

ԼԶ. Իսկ եկեալ յաշխարհս Փիլիպպէ և մտեալ յարքունիսն՝ առաքեաց 'ի Դելփիս հարցմունս պատասխանւոյ առնուլ թէ ո՛ արդեօք զկնի նորա թագաւորեսցէ: Իսկ սմա Դելփեայ հարցուկ դիւթն ճաշակեալ 'ի կաստեղեան վտակէն սանդարամետանոյն՝ այսպէս ասաց. Փիլիպպէ, նա բոլոր աշխարհի թագաւորեսցէ և նիզակաւ զամենայն ոք հնազանդեցուսցէ, այն որ 'ի ցլագլուխ ձին հեծեալ ընդ մէջ Ելլադայ անցցէ: Իսկ կոչեցեալ երիվարն այն ցլագլուխ, վասն զի ունէր 'ի բարձին իւրում պալար այլազոյն, զարջառի գլխոյ կերպարանս ունելով: Իսկ թագաւորին լուեալ զհրաման պատասխանւոյն՝ հանապազ ակն ունէր զնոր Հերակլես տեսանել:

1 Այդպէս այլ ՕՕ: Բ. խանդարեալ էր: Ն. աստուածօրէն թաղմամբ թաղեցաւ:

ԻԷ. Իսկ Աղեքսանդրոս Արիստոտելեաւ ուսուցեալ միայն վարժէր զանձն իւր։ Եւ զի բազում մանկունք էին առ Արիստոտելի յուսումն խրատու եւ բազում արքայորդիք, ասաց ցմի ոմն ի մանկանցն. Եթէ ժառանգեսցես զարքունիսն հօրն քո, զի՞նչ տացես վարդապետին քո։ Եւ նա ասաց. Եղիցիս ընդ իս միաբան բնակել, համիշխան եւ փառաւոր թագաւորութեան իմոյ արարեալ երեւեցուցից զքեզ։ Եւ ցմիւս ոմն եհարց. Եւ դու, որդեակ, զի՞նչ արասցես։ Եւ նա ասէր. Մատակարար զքեզ արարից եւ խրատտու յինէն դատելոց զքեզ կացուցից։ Հարցեալ զԱղեքսանդրէ՝ ասէ. Եթէ դու տիրես հայրենի մակեդոնացւոց, զի՞նչ արասցես։ Եւ նա լռեաց հարուստ ժամ մի, եւ ապա հայեցեալ ՚ի վարդապետն ասէ. Յաղագս հանդերձելոց ինչ իրաց զիա՞րդ հարցեալ ուսանիս[1], զվաղուեան գրաւականն ոչ[2] ունելով. յայնժամ տայց, որ ինչ փորձեալ ընտրեցից զինչ վերին նախախնամութիւն զժամանակն եւ զժամն եւ զխոստումն տալ հրամայեսցէ։ Եւ զայս լուեալ Արիստոտելի, ասէ ցԱղեքսանդրոս. Ողջ եւ ուրախ լեր, աշխարհակալ, զի դու մեծ կայսր լինելոց ես։

ԻԸ. Եւ արդ Աղեքսանդրոս յամենեցունց սիրեցեալ լինէր իբր կորովամիտ խորհրդական եւ հանճարեղ պատերազմող։ Իսկ Փիլիպպոս երկբայութիւն ունէր. քանզի խնդայր տեսանելով զայսպիսի պատերազմող ոգի որդւոյ իւրոյ, եւ տրտմէր ոչ նմանն տեսեալ զնա իւրոյ ձեւոյն պատկերի։ Եւ բազում ինչ Աղեքսանդրի պարգեւս բաշխեալ այլոց՝ որ ինչ ՚ի հօրէն նմա առաքիւր։

ԻԹ. Գրեաց եւ Զեւքսիս թուղթ այսպիսի օրինակաւ։ «Փիլիպպոսի եւ Ողոմպիադայ իմոց տերանց խնդալ։ Եւ գիտութիւն ՚ի Զեւքսեայ ծառայէ

1 Բ. ուսանի. այլ ՕՕ. ունի։
2 ՕՕ. չունին ոչ. յաւելուք ՚ի յունէն։

ձերումն թէ զինչ առնէ Աղեքսանդրոս․ զի զոր ինչ տայք բերել սմա, ոչ բաւական և շատ լինել վասն բազում պարգևս շնորհելոյն․ արդ դուք ընտրեալ դատեցարուք զոր բարիոք վարկանիք առաքել ինձ․ ողջ լինել ձեզ ըղձամ„։

Խ․ Փոխանակ գրեցին և նոքա Արիստոտէլիս վարդապետի նորա թուղթ զայս օրինակ․ "Փիլիպպոս և Ողոմպիաս Արիստոտէլի վարդապետի խնդալ։ Զեւքսիս որ 'ի վերայ կացուցաք խնամածութիւն պատանւոյդ, զմեր զոր ինչ տամք բերել առ ձեզ, ազդեաց ոչ բաւական լինել Աղեքսանդրի վասն բազում պարգևս կամեցեալ տալ։ Արդ հասեալ յայրդ վերայ՝ բարիոք կարգեա և նշանակեա մեզ„։

ԽԱ․ Փոխանակ գրեաց իմաստասէրն թուղթ որ ունէր այսպէս․ "Վարդապետ Արիստոտէլէս Փիլիպպոսի և Ողոմպիայ խնդալ։ Ես կարծեմ յիմոց ձեռաց խրատ առնել որդւոյ ձերոյ Աղեքսանդրի, ատար ինքեան և իմոյս և ձերոյ բարուցդ արտաքոյ իմն գործեալ․ քանզի լսեմ և զուսմունս սորա տեսանելով դատող քննութեամբ առնել, և ոչ իբրև զմանուկ, այլ իբրև զհին այր ընտրել և դատել կարէ։ Արդ զոր ինչ և ձեզ հաճոյ թուեսցի, զայն գործեցէք․ ողջ լերուք„։

ԽԲ․ Եւ զայս ընթերցեալ առաքեցին և նոքա թուղթ Զեւքսեայ, որ զայս ինչ ունէր․ "Փիլիպպոս և Ողոմպիաս Զեւքսիսի մերոյ խնդալ։ Առաքեցաք Արիստոտէլի վարդապետի զգրեալ թուղթսըն 'ի քէն առ մեզ․ որպէս զի զայս ընկալեալ ըզգրեալսն 'ի նմանէ ջանասցիր յուղղութիւն աճել․ ողջ լեր„։

ԽԳ․ Իսկ Արիստոտէլիս զայրացեալ գրեաց սպառնմամբ Աղեքսանդրի թուղթ զայս օրինակ․ "Արիս-

1 ԱՅԼՕՕ․ տրէք 'ի վերայ կամ տրէք 'ի վերայ։

տոտէլէս Աղեքսանդրի որդւոյ խնդալ։ Գրեցին առ իս ծնողքն քո զի զառաքեալ Թուղթն 'ի նոցանէ քեզ ոչ լինել բաւական․ զոր ոչ կարծեմ արտաքոյ ոչ քոյոց և ոչ իմոց և ոչ ծնողացն քոց կամաց այլ ազգ ինչ առնել․ ողջ լեր ինձ որդի քաղցուենի„։

ԽԴ․ Գրեաց նմա փոխանակ Աղեքսանդրոս այսպէս․ «Աղեքսանդրոս մեծահանճար վարդապետիդ իմոյ Արիստոտէլի խնդալ։ Գիտեա, հայր, անարժան գոլ զառաքեալ Թուղթն իմ'ի ծնողացն իմոց․ և[1] սակայն զայս լուեալ պարտ և արժան էր բարկանալ իբր յաղագս իւրեանց որդւոյ․ բայց արդ զընդդէմն գործեցին․ ողջ լինել քեզ աղաչեմ„։

ԽԵ․ Նման այսր և ծնողքն գրեցին Աղեքսանդրի Թուղթ, որ ազդէր զառ 'ի նոցանէ կամն` այսպիսի օրինակաւ․ «Փիլիպպոս և Ոլոմպիա Աղեքսանդրի որդւոյ խնդալ։ Զկարգեալսն քեզ Թղթակ զորս 'ի մէնջ առաքեմք, արժանիս Փիլիպպոսի և Ոլոմպիադայ վարկեալ, մի արհամարհեալ[2] 'ի բաց առաքեր և մի զԱրիստոտէլեայ Թուղթս․ այլ որպէս քեզ վայելէ, պահեա․ և զայլսն ես ինչ լաւս ընդ միտ ածեալ խորհեաց․ ողջ լեր մեզ, քաղցր և իմաստուն որդեակ„։

ԽԶ․ Փոխանակ գրեաց և Աղեքսանդրոս նոցա Թուղթ, որ ազդէր օրինակ զայս․ «Աղեքսանդրոս Փիլիպպոսի և Ոլոմպիադայ խնդալ։ Զկարգեալ Թղթակս զոր տայք ինձ 'ի ձեռն Զեւքսեայ, ոչ արժանիս Աղեքսանդրի և որպէս[3] վայելէ զայս մատակարարել Փիլիպպոսի և Ոլոմպիադայ․ այլ զԱրիստոտէլի զվարդապետին իմոյ զպատուիրանս ընդ միտ ածեմ և խորհիմ արժանիս ուսման ընձեռողին, և

1 Ի․ չէ գեան տառանելու Թուղթն այսպէս խօսից մի էջին․ և սակայն պարտ էր յորդորմանն զայն գեան իւրեանց որդւոյ կարախօսին զայրանալ։

2 Ի․ Գ վայրագոր և անպատուած ծանիր, և Գ արհամարհէր զԱրիստոտէլի Թուղթն։

3 Երկու ՕՕ․ ու։

զձեզ պախարակեմ՝ որ զխրատ զանձինդ 'ի վայր տայք այլոց երբեմն վատաբարոյից և չողմողաց, և զայլս՝ յաղագս որդւոց որ ըստ բնութեանն է պարտիք՝ լուռ լինել յաղագս նախախնամութիւն և հոգ մատուցանել որ ինձ օգուտ բերէ. ողջ լինել ձեզ ըղձիւք խնդրեմ,,:

խէ. Իսկ իբրև եղև Աղեքսանդրոսն այն ամաց չորեքտասանից[3], դէպ եղև նմա անցանել ընդ տեղին ուր էր ցլագլուխ ձին յարգելան արկեալ. լուաւ նա զաղաղին խրխնջիւն. դարձեալ 'ի Փիլիպպոսի մանկտոյն կոյս և ասէ. Ո՞ ինչ է ձայնս այս, խրխնջիւն ձիոյ է եթէ զոչիւն առիւծու: Ո՛ հետ երթայր նորա Պտղոմէոս որ յետոյ փրկիչն կոչեցաւ, և ասէ. Տէր, այս է ցլագլուխ ձին զոր հայրն քո արգելեալ փակեաց, վասն զի մարդակեր է: Լուեալ ձիոյն ըղխօսն Աղեքսանդրի, երկրորդ անգամ խրխնջեաց, ոչ որպէս յառն աճաղին և խոխող[4], այլ քաղցր, կամակ[5] և գողտրիկ: Ինձ թուի թէ յաստուծոյ հրամայեալ ցլագլուխն՝ Աղեքսանդրի այնպէս առնել. յառաջ կոյս[6] պարզեալ զերեան զամենեսին դրդուեցոյց, և քանիօն լինել մատակելի աղաչանաց ձև տեառն նմա մատուցանէր:

խը. Իսկ Աղեքսանդրի տեսեալ զնորա զնորոգ դէմքն և զնշխարս բազում բռնամահ մարդկան տեսեալ ողորմէր իբրև մարդ. և յայս կոյս և յայն արմկցի[7] հարեալ զպահապանն երաց զխաղխաղեայ դուռն վանդակին, յիւր սերմանուն յուսացեալ[8],

1 Ա. պախարակեմ:

2 Մի Օ. [illegible]

3 Բ. չորեքտասանից:

4 Զորս ՕՕ. խոխոջի:

5 ՀՀ. կամաւ:

6 Ե. [illegible]

7 ՀՀ. արմկին:

8 Զորս ՕՕ. [illegible]

բուռն հարեալ զպախուցքոյ[1] ձիոյն զայր ածէր հնազանդեալ զօրութեամբ քան զխոլուածով բախտի, և հեծաւ 'ի վերայ նորա առանց սանձուց ։ Եւ ընթացեալ անդ վաղվաղակի[2] պատմեաց զայս Փիլիպպոսի ։ Եւ նորա յիշեցեալ և 'ի միտ առեալ զվամն նորա եղեալ իրմն, պատահեաց ընդ առաջ եկեալ որդւոյ իւրում, ողջոյն տուեալ նմա և ասէ ․ Աշխարհակալ Աղեքսանդրէ, խնդա և ուրախ լեր ։ Խնդամիտ[3] և զուարթամիտ Փիլիպպոս յորդւոյն[4] յայս զանխուլ և գաղտուկ[5] կայր մնայր ։

ԽԹ․ Եւ Աղեքսանդրոս լեալ հնգետասան ամաց, որ մի յաւուր եգիտ պարապորդ զհայրն, համբուրեաց զնա և ասէ ․ Հայր, աղաչեմ զքեզ հրամայեա ինձ նաւել 'ի Պիսաս[6] ։ Ասէ Փիլիպպոս ․ Կամիս տեսանել

1 Այլ ՕՕ․ [illegible]

2 Զորս ՕՕ․ [illegible]

3 Ս․ [illegible]

4 Երկք ՕՕ․ [illegible] Օ․ [illegible]

5 Բ․ [illegible]

6 Ե․ յաւելու․ [illegible]

զհանդէս ոսկեղինացն ։ Նա՛ է մանուկն ։ Եւ, հայր ։ այլ ես ընդ հանդէս կամիմ անցանել ։ Նա՛ է ։ Եւ զո՞ր հանդէս վարժեալ կրթեցար, զի զայդ ջանաս առնել ։ քանզի զխաղս զքեզ իբրեւ որդի թագաւորի՝ ոչ այլ ինչ աւելի զխաղ քան զ'ի պատերազմական ձիս վարժից հանգիստանալ ։ զի ոչ կախ՝ եւ ոչ ըռնամարտիկ հանդէս[3] եւ ոչ այլ ինչ կրթութիւն վարժից զխաղս ։ Մեծամանգրոս ասէ ։ Կառավարել կամիմ, հայր ։ Եւ նա ասէ ։ Տեսից, պատրաստեցին քեզ ձիք յիմոց ասպատանաց, եւ սորա վաղվաղակի ածեալք լցին քեզ ։ բայց դու զքեզ'ի հող կրթութեան պահեա փառաւորապէս ։ Եւ նա ասէ ։ Դու միայն հրամայեա ինձ երթալ ։ քանզի ունիմ ես ձիս զոր 'ի մանկութենէ վարժեալս զայս ինձ բուծի ։ Եւ նորա համբուրեալ զնա եւ զարմացեալ ընդ յօժարութիւնն, ասէ ։ Որդեակ, եթէ կամիս, երթ ։

Ծ ։ Եւ նորա իբրեւ զերթալըն լուեալ հօր յանձն առեալ, հրամայեաց նորադոյն նաւս կազմել, եւ զձիս եւ զկառս մուծանել'ի նաւն ։ Եւ ինքն ելեալ հանդերձ Հեփեստիոնաւ բարեկամաւն իւրով նաւել, գնայր եհաս 'ի Պիսա[4] ։ Եւ 'ի դուրս ելեալ եւ ընկալեալ վանս՝ հրամայեաց սպասաւորացն զձիս ստէպ ստէպ մարզել եւ ջնջել ։ եւ ինքն[5] հանդերձ Հեփեստիոնաւ 'ի ձեռն զբօսանաց'ի դուրս ելանէր ։

ԾԱ ։ Եւ սմա պատահեալ օնն որում անուն էր Նիկողայոս, այր կատարեալ հասակաւ, թագաւոր ակառնանեաց, մեծութեամբ[6] ընչից եւ զխպուածով բազմից երկուց աստուածոց յաղթողաց փառընկա-

1 Ն· Թագաւորի [illegible]

2 ՀՀ· [illegible]

3 Ն· [illegible]

4 ՀՀ· [illegible] Բ· [illegible] ... էր· այլք 'ի Մէկի ։

5 ՀՀ· [illegible]

6 Ն· [illegible]

ցեալ, և 'ի մարմնոյ զօրութիւն յաւասցեալ. մատեաւ Աղեքսանդրոս, ողջոյն ետ միանգամայն և ասաց. Խնդա, բարի եկիր, պատանի դու։ Եւ նա ասէ. Խնդա և դու ո ոք և ես և ուսոյց իցես։ Եւ նա ասէ. Օ՛ ո՞ ոք արդեօք զիս կոչեսցես. քանզի ես եմ Նիկողայոս անուն թագաւոր ակառնանեաց։ Իսկ Աղեքսանդրոս ասէ. Մի՛ այդպէս խրոխտար, Նիկողայէ, թագաւորութեանդ[1] պատուով իբր բաւական ունելով զմաղթանս. դիպուած բախտի որ ոչ կայ հաստատուն անցեալ 'ի վերայ միոյ միումն. զի յեղյեղումն փոփոխէ միշտ, և զայլանդակս ընդունելն է։ Եւ նա ասաց նմա. Որես ահա բարւոք զայդ. բայց յինչ պէտս եկիր այսր. քանզի գիտացի թէ Փիլիպպոսի Մակեդոնացւոյն ես։ Եւ նա ասէ. Ես եկի այսր հանդիսել ոչ զձիավարականն զի տղայ եմ հասակաւ, և ոչ զերկձի կառսն և ոչ յայլ ինչ հանդէսս յայտախեաց։ Իսկ Նիկողն ասէ. Արդ զինչ կամիս։ Եւ նա ասէ. Կառավարել[2] կամիմ։ Եւ ջեռեալ 'ի մաղձոյն Նիկողայոս քամահեաց զհասակաւն, ոչ գիտացեալ զհոգւոյն աշխոյժութիւն. թքեալ 'ի նա ասաց. Մի բարի լիցի քեզ, պատանեակ աղաջուր։ Եւ նա խրատեալ և ուսեալ 'ի բնութենէն երկայնամտութեամբ ժուժկալէր և 'ի բաց ջնջէր յինքենէ զառ 'ի թշնամանացն[3] տողումն[4] 'ի նա ընկեցեալ. և ժմտեալ մահաբեր ձևով ասաց. Նիկողայէ, երդնում քեզ յանդէտ հայրն իմ և յորովայն մօրն 'ի սքանչելին որ կրեացն զիս, զի և աստ կառօք յաղթեցից քեզ և 'ի գաւառին ակառնանացւոց նիզակաւ առից յաւարի։ Եւ նոքա 'ի բաց անցեալ գնացին 'ի միմեանց զկծեալ կռուով։

1 Ի․ ձեռն [illegible]

2 Երկք օր․ [illegible]

3 Ի․ այդպէս․ այլ ՕՕ․ 'ի թշնամեացն։

4 Երկու ՕՕ․ թողունն։

ԽԲ. Եւ յետ սակաւ աւուրց եհաս ժամանակ կարգեալ հանդիսին. և մտին 'ի ներքս կառավարք ինն, յորոց չորքն որդիք էին թագաւորաց. նոյն ինքն ՝Նիկողայոս և Քսանթիաս բիւթանացի և Կիմոն կորընթացի և ինքն Աղեքսանդրոս. իսկ այլքն զօրագլըխաց և նախարարաց որդիքն էին: Եդաւ սափորն, վիճակեցան առընթեր անիւոցն, և եհաս նախ ՝Նիկողայոս, երկրորդ Քսանթիաս, երրորդն Կիմոն կորընթացի, չորրորդ Կլիտոմաքոս բաղկեցի, հինգերորդ Արիստիպպոս ոլինթացի, վեցերորդ Պիերոս փովկայեցի, եօթներորդ Կիմոն լակոնացի, ութերորդ Աղեքսանդր մակեդոնացի, իններորդ ՝Նիկոմաքոս ղոկրացի: Որք անցեալ կային 'ի ձիարձակարանին 'ի վերայ կառաց ամենեքին:

ԽԳ. Ձայն արար փողն՝ հանդիսարար նուագն. բացաւ փողարանն[1], վազեցին արտաքս ամենեքին, սաստիկ յարձակմամբ դիմեալք առաջին շրջանն և երկրորդն և երրորդն և չորրորդն: Եւ իբրև կազմեցան ձիանն և կացին պատրաստեալք, և չորրորդն էր Աղեքսանդրոս որ վարէր զկառսն, և զկնի նորա ՝Նիկողայոս ոչ այնպէս ունէր 'ի մտի զյաղթելն միայն, որպէս զսատակելն զԱղեքսանդրոս. քանզի էր լեալ հայրն ՝Նիկողայոսի 'ի պատերազմի սպանեալ 'ի Փիլիպպոսէ:

ԽԴ. Եւ զայս գիտացեալ կորովամիտն Աղեքսանդրոս, անկեալ 'ի վայր յերկիր որք վարէինն, նախ թօղ տայր Աղեքսանդրոս անցանել յառաջ ՝Նիկողայոսի. և նորա ոչ գիտացեալ զնենգաւոր դարանագործութիւնն անց կամաւ յառաջ, կարծիս ունելով զհանդերձեալն պսակել, և վարէր առաջոյ իբրև երկուս ասպարէզս, գթէ աջոյ կողմանն ձին ՝Նիկողայոսի, և անկեալ արգախին[2] բոլոր կառքն հանդերձ կառավարաւն. և Աղեքսանդրի սաստիկ 'ի վերայ

1 Յոյնն Բուղարան կամարջակարան:    2 Այդպէս ՕՕ:

անկանել՝ յարձակմամբ ձիոցն իւրոց, և փախճանի Նիկողայոս. անցանէ Աղեքսանդրոս։ Եւ լինի 'ի վերայ փախճանելոյն առակս այս որ ասէ. Մարդ որ այլում չար կամի, իւրում իսկ լերդին կամի. և չար խորհուրդ խորհեցելումն[2] յոյժ չար է։

ԾԵ. Եւ յաղթեալ Աղեքսանդրի ապա երթայ ելանէ պսակեալ վայրենի ձիթենւոյ[3] ոստոյ պսակաւ Ողոմպիայն Արամազդն։ Եւ ասէ ցնա Արամազդայ տաճարայարդարն. Աղեքսանդրէ, յառաջագոյն զեկուցանէ քեզ Ողոմպիայն Արամազդ զայս ինչ. զի որպէս զՆիկողայոսի յաղթեցեր, այդպէս դու բազմաց յաղթեսցես պատերազմելով։

ԾԶ. Եւ այսպէս ստացեալ Աղեքսանդրի զՆիկողայոս և ինքն ընկալեալ պսակ և զաստուածային համբաւս չքնաղս և հռչակաւորս՝ յաղթող անցանէ գնայ 'ի Մակեդոնիա, և գտանէ զմայրն 'ի բաց հանեալ ընկեցեալ 'ի Փիլիպպոսէ. զի նա արարեալ էր իւր կին զքոյրն[4] զԿղէոլպատրէ զդուստրն Ատտանայ հարսանեաց։

ԾԷ. Եւ մինչդեռ 'ի նմին աւուր լինէին հարսանիքն, զողոմպեան զպսակն 'ի գլուխն ունելով մտանէր 'ի ներս 'ի ճաշարանն, և ասաց. Հայր, առընկալ զիմ առաջին յաղթութեան պսակն. բայց յորժամ և ես տամ զիմ մայրն թագաւորի ումեմն հարսըն, կոչեցից զքեզ 'ի հարսանիսն Ողոմպիադայ։ Զայս ասացեալ անց բազմեցաւ առաջի թագաւորին։ Իսկ Փիլիպպոս 'ի վերայ ճառեցելոյ բանիցն

1 Բ. անխանի։

2 Բ. խորհեցելումն. այլ ՕՕ. խորհեցելոյն։

3 Ե. այդպէս։ Բ. պսակաւ ձիթենւոյ. գաւառաւ. այլ ՕՕ. ձիթենեաւ յոյս փառաց կամ ձիթենեաց յոստոյն։

4 Բ. յաւելու և խոր. բայց անշուշտ վրիպակ ազգարանութեանն Կղէոփլպատրայ է յամենայն օրինակս մեր. զի ըստ նախնի և արդի երևելի վիպագրացն Կղէոփլպատրայ էր, եթէ տոհմէն էր խոր ինն Կղէոփլպատրայ դուստր նորա Ատտաղեայ։ Իսկ լաւինն ասա 'ի Կղէոփլպատրայ ազգականացն չլինել զքոյր ընաւ. և յոյնն խանգարեալ է։

կասկածահար լինէր[1]. և Լիւսիաս ոմն անուն Փիլիպպոսի երկպապաշտեայ[2] հացկատակ ծաղրածու՝ նա բազմեալ ասէր ցՓիլիպպոս. Ամենայն քաղաքաց հզօր, այժմ մինչդեռ քեզ հարսանիքդ լինին և կնոջդ Կղէոպատրայ, յորմէ մանկունս հարազատս արասցես անշնացեալս, նման քոյոյ ձևոյ կերպարանացդ։

ԺԸ. Իսկ լուեալ զայս Աղեքսանդրի բարկացաւ. և որպէս ունէր զբաժակն, ձգեաց և եհար զգագաթ հացկատակին և սատակեաց զնա։ Զայս տեսեալ Փիլիպպոսի յոտն եկաց սուսերաւոր և 'ի վերայ յարձակեցաւ Աղեքսանդրի, և բախեալ ոտն 'ի գահոյսն գլորեցաւ. և Աղեքսանդրի զայս տեսեալ ասաց, թէ որ զԱսիա փութայր առնուլ և զԵւրոպէ 'ի հիմանց խլեաց, և ոչ կարաց վազել գեր 'ի վերոյ մահճացն։ Այսպէս ասացեալ 'ի բաց կորզեաց և եհան 'ի հօրէն զսուսերն, և զամենեսեան անդ բազմեալսն կիսախողխող արար։

ԺԹ. Իսկ էր դէմ յանդիման տեսանել զԼապիթեայցն[3] և զյուշկապարկացն կռիւս, և 'ի վերայ Պերիթեայ հարսանեացն եղեալսն. քանզի ոմանք 'ի նոցանէ ընդ գահոյանովն[4] մտանէին, և ոմանք սեղանօքն իբրև զինուք պարէին, և այլք 'ի խաւարին տեղիս դիմեալ անկանէին։ Իսկ անդ էր տեսանել նոր ոմն Ոդիսևս և զՊենելոպայ[5] սեղխան զի սատակելով եղանէր արտաքս. և ահէ մուծանէ զմայրն՝ վրէժխնդիր նորա հարսանեացն եղեալ։ Իսկ բարձեալ զՓիլիպպոս զօրականացն ընկողմեցուցին 'ի վերայ գահոյիցն զվերջինսն վարելով։

Ի. Իսկ յետ աւուրց եմուտ առ նա Աղեքսանդրոս, և նստեալ առ նմա ասէր. Փիլիպպէ, յանուանէդ

1 Մի Օ. կասկածահարի լինէր։
2 Չորս ՕՕ. երկպառակեալ։
3 ՕՕ. զԼապիթեայն կամ զԼապի-թեայն։
4 ՀՀ. ընդ գահոյսն։
5 Բ. խանդարեալ էր. այլ ՕՕ. զՊենեղոպայ։

կոչեցից զքեզ, զի մի գուցէ դժուար թուեսցի քեզ լինելն հայր կոչելն. քանզի մօր առ քեզ ոչ իբրև զորդի քո, այլ իբրև բարեկամ միջնորդելով իրացդ որ 'ի քէն գործեցան. արդ ասա ինձ զայս, թէ բարեո՞ք արար Աղեքսանդրէ որ եսպան զԼիւսիաս 'ի վերայ իւրոց անվայելուչ հառեցելոցն. և դու բարիո՞ք[1] արարեր զի յարձակեցար 'ի վերայ քոյոյ որդւոյն Աղեքսանդրի՝ սպանանել զնա կամեցեալ, և կին առնել կամեցեալ այլ՝ յառաջին կնոջէն ոչ ինչ զրկեալ յՈղոմպիադայ։ Արդ արի կաց և զանձամբ քով լեր. քանզի գիտեմ թէ առ ինչ այդպէս խօթութիւն բաղբաղես. ոչ 'ի մարմնոյ, այլ յոգւոյ իբր զամօթ կրես 'ի վերայ մեղանացն։ Արդ ես աղաչեմ զՈղոմպիադա հաշտել ընդ քեզ. քանզի գիտեմ թէ հաւանելոց է Աղեքսանդրի որդւոյ իւրոյ, թէպէտ և դու ոչ կամիս հայր նորա կոչել։ Զայս ասացեալ գնաց։

ԿԱ. Նա եկեալ առ մայրն իւր Ողոմպիադա ասաց. Մայր, մի անզգամեր 'ի վերայ եղելոց իրացդ ընդ քեզ յառնէն քումմէ. քանզի նմա անյայտ են յանցանքն քո. և ես եգիպտացւոյ հօր որդի եմ. բայց արդ մուտ առ նա և աղաչեա հաշտել ընդ քեզ. քանզի վայելուչ է՝ եթէ կին առն հնազանդեսցի։ Զայս ասացեալ յոտն յարոյց զմայրն և զձեռանէ ունելով տարաւ և եմուծ 'ի ներքս առ Փիլիպպոս և ասաց. Դարձիր աստ, այժմ հայր կոչեցից զքեզ, զի և դու որդւոյ քում Աղեքսանդրի հաւանեցար. արդ եկեալ եմ այսր. բազում յինէն մաղթանս ընկալար մտանել այսր առ քեզ և անյիշատակ լինել յանցանացն. այժմ գիրկս արկեալ պատեցարուք զմիմեանց պարանոցաւ, վասն զի ամօթալի ոչ ինչ է առաջի իմ, զի 'ի ձէնջ եմ ես բուսեալ։ Այսպէս ասացեալ հաշտեցուցանէր զծնողսն մինչև ամենայն մակեդոնացւոց զարմանային[2] 'ի վերայ նորա։

1 Ձոր ՕՕ. Բարի է։ 2 Մի Օ. զարմանալի լինէր նորա։

կբ. Բայց զանունն Լիւսիայ խնդրեն որ հարսա-
նիս կամին առնել. և ոչ յիշեն, զի մի գուցէ անզ-
անուանելով քակտումն կրեսցեն, որոց հարսանիքն
լինին վասն սատակմանն Լիւսիայ։

ՎԱՍՆ ՀՆԱԶԱՆԴԵՑՈՒՑԱՆԵԼՈՅ ԶՄՈԹՈՎՆԷ ՀՕՐ ԻՒՐՈՅ

կգ. Քաղաք մի էր որում անուն էր Մոթոնէ, որ
ապստամբեալ 'ի բաց եկաց 'ի Թագաւորէն Փիլիպ-
պոսէ։ Առաքեաց զԱղեքսանդրոս հայրն իւր զօրօք
իւրովք տալ մարտ պատերազմի։ Եւ նորա անդր 'ի
տեղին հասեալ իմաստութեամբ և բանիւ հաւանե-
ցուցանէր զնոսա նուաճել և լսել, քան թէ զինուց
զօրութեամբ գերի լինել։

կդ. Եւ մտեալ 'ի Մոթոնէ քաղաքէ առ հայրն
իւր և տեսեալ 'ի վերայ նորա արք խուժադուժ պատ-
մուճանօք, եհարց և ասէ. Ո՞յքեն սոքա։ Եւ նոքա ա-
սեն. Նախարարքն են Դարեհի։ Ասէ Աղեքսանդր.
Զի՞ եկեալ են այսր։ Եւ նոքա ասեն. Զսովորական
հարկսն պահանջեն 'ի հօրէն քումմէ։ Աղեքսանդր
ասէ. Յումմէ՞ առաքեցան այսր։ Ասեն. Յարքայէն
Պարսից 'ի Դարեհէ։ Ասէ Աղեքսանդրոս. Յաղագս
է՞ր զհարկսդ պահանջեն։ Ետուն պատասխանի և
ասեն. Զերկրիս Դարեհի։ Եւ Աղեքսանդրոս ա-
սէ. Եթէ զայս աստուածք ցուցին մարդկան պար-
գևս 'ի պաշտօնս' կերակրոյ, և նա զաստուածոց
պարգևս ընդ հարկաւ արկանէ, ոչ է իրաւացի եթէ
Փիլիպպոս խուժադուժ ազգաց հարկս տայ։

կե. Եւ ինքն զհեղլենացիսն ընդ ծառայութեամբ
հնազանդեցուցանել կամեցեալ կոչեաց զխուժա-
դուժն և ասէ ցնոսա. Երթայք պատմեցէք Դարե-
հի՝ եթէ Աղեքսանդրոս որդի Փիլիպպոսի զայս ա-
սէ, թէ հայրն իմ յորժամ էր անորդի, հարկս տայր

1 Ա. 'ի Իրախճարանս։

ձեզ. բայց յորժամ եղև նորա որդի Աղէքսանդր, հարկս այլ ոչ տայ ձեզ. բայց զոր առէք հարկս 'ի նմանէ՝ ոչ թողից ձեզ, այլ գամ այսրէն դարձուցանել և պահանջել 'ի ձէնջ։ Եւ զայս ասացեալ արձակեաց զհրեշտակսն՝. որ և գրոյ արժանի ոչ արար զնոսա, որ առաքեաց զնոսա։ Իսկ հայրն նորա խնդայր, տեսանելով այսպիսի համարձակութեամբ զԱղէքսանդրոս։

ԿԶ. Եւ դարձեալ միւս ևս քաղաք խռովեալ ապստամբեաց 'ի Թրակացւոցն. առաքեաց Փիլիպպէ զԱղէքսանդրոս զօրօք բազմաւ տալ պատերազմ ընդ նմա։

ԿԷ. Եւ էր ոմն Պաւսիանոս անուն այր պատուական, և զօրութիւն ունէր զիւրեաւ բազում և մեծութիւն կարի յոյժ, Թեսաղոնիկեցի։ Սա տրփացաւ յՈղոմպիադա և առաքեաց գաղտաբար զնոսա որք կարէին հաւանեցուցանել զնա, որպէս զի և նա փոխեսցէ զՈղոմպիադա, զի թողու զՓիլիպպոս և նորա լիցի կին։ Բայց զայս ոչ կամաւ յանձին Ողոմպիաս։ Եւ խորհեաց զնա Պաւսիանոս, գիտացեալ թէ 'ի պատերազմ երթայ Աղէքսանդրոս և հանդէս լինի խաղալկաց ամենայն երգոց արուեստականաց. և Փիլիպպոս էր հանդիսակից։ Մտանէ 'ի ներս Պաւսիանոս ունելով սուսեր մերկ 'ի ձեռինն 'ի թէատրոնն հանդերձ այլովք քաջ արամբք սպանանել կամեցեալ զՓիլիպպոս զի յափշտակեսցէ զՈղոմպիադա. և հարեալ սուսերամբն 'ի կողս Փիլիպպոսի՝ մեծապէս հարկանել, այլ ոչ մեռաւ։ Եւ լինի ամբոխ մեծ 'ի թէատրոնին, և Պաւսիանոս փութայր յարքունիսն, կամեցեալ յափշտակել զՈղոմպիադա։

1 Չորս ՕՕ և ՀՀ. առա և այլուր ԷՒԼԷ առեն փոխանակ ՀՐԷՇՏԱԿ բառնիդ. իսկ Բ. յորմէ թուղթ պակասի տառանօր, ըստ այլ անեղեալ նորա յորս միշտ ՀՐԷՇՏԱԿ առնէ կամ ԳԷՈՐԳ, ուր այլք զտառարձայն բառդ վարեն ԷՒԼԷ, ըստ նորին ուղղագրեցաք և առա։

ԿԸ. Իսկ 'ի նմին աւուր յաղթեալ պատերազմին Աղեքսանդրոս գայ մտանէ 'ի քաղաքն և տեսանէ մեծ խռովութիւն . և հարցեալ թէ ինչ է պատճառն , և պատմեցին նմա զեղեալ իրսն՝ եթէ Պաւսանիոս 'ի ներքս է յարքունիսն հանդերձ Ողոմպիաւն . Յայնժամ զդուրս[1] եա[2] ունել զօրականացն , և տեսանէ 'ի մէջ առեալ զՈղոմպիա . զՊաւսանիոս կալաւ և կամեցաւ զերկարգնեայ[3] գեղարդն ձգել 'ի նա . բայց երկեաւ , զի մի և զմայրն հարցէ . Եւ ասաց Ողոմպիա . Ձգեա , որդեակ , զաշտեգ զի ինձ Ամենօգնէ . Եւ Աղեքսանդրոս ձգեաց և պատահեցուցեալ[4] սպան զՊաւսանիոս . և ունեալ[5] եթէ տակաւին ևս հօրն ոգի կայ , ասաց . Զի՞նչ կամիս . Եւ նա ասէ . Ածէք զնա առ իս . Եւ առեալ զսուսերն դնէ 'ի ձեռին հօրն . և ունելով զսուրն սպանաւ Պաւսանիոս .

ԿԹ. Եւ ասաց Փիլիպպէ . Որդեակ , ոչ տրտմիմ թէ վախճանեցայ , զի խնդրեցաւ վրէժ իմ , և ես իսկ ինձէն սպանի զթշնամիս իմ . արդ բարիոք ասաց Ամոն առ մայրն քո , թէ ունիս յորովայնի արու մանուկ որ զքեզ պաղատորեսցէ և մահու հօրն վրէժս խնդրեսցէ . Եւ զայս ասացեալ Փիլիպպոսի արագ արձակեաց զոգին . Բայց զայլ թշնամիսն սոյնպէս սատակեաց . Եւ[6] թողեալ եղև Փիլիպպոս թագաւն , և զնա հանեալ թաղէ Ողոմպիաս . և ամենայն Մակեդոնիա վշտակից եղեալ աշխարէին զնա .

Հ. Իսկ յետ սպանմանն Պաւսանեայ իբրև խաղաղութիւն կալաւ քաղաքն , ելանէ Աղեքսանդրոս 'ի պատկեր հօրն իւրոյ Փիլիպպոսի , և գոչեալ մեծա-

1 Բ. Դիւր. որոյ նախընթաց բառքն խանգարեալ են։ Երկու OO. զդիւրս։

2 Այդպէս բառ մըս նոր O. զի յայլ OO. չէր էա. այլ գրի առնել զօրականացն։

3 Երկու OO. զերկարգնեայ։

4 Կէց OO. հարեալ։

5 Երկք OO. գնացեալ տեսեալ թէ տակաւին ևս դեռ հայրն կենդանի է և կայ հոգին 'ի մարմինն՝ ասաց։ Եւ իմացեալ թէ դեռ ևս յոգին կայ հայրն։

6 Զորս OO. Եւ թաղէ զնա Աղեքսանդրոս և Ողոմպիաս. և ամենայն։ Եւ. Եւ թաղեաց զհայր իւր թագաւորօրէն։

պէս առաջ. Ո՛վ մանկունք պէղղացւոց և Մակեդոնա-
ցւոց, Թեսաղացւոց և Թրակացւոց, Հելլենացւոց
և Ամփիկտիոնացւոց, Լակեդեմոնացւոց և Կորընթա-
ցւոց և այլոց Եղլադական ազգաց. եկայք ընդ իս,
հաւատացէք զանձինս ձեր Աղեքսանդրի. զօրախա-
ղաց լիցուք 'ի վերայ խուժադուժ ազգաց, և զանձինս
ազատեսցուք 'ի Պարսից ծառայութենէն, զի մի Հել-
լենացիքս Պարսից ծառայեմք: Նոյպէս խորհեցեալ
հրաման գրով 'ի քաղաքս առաքէր:

ՀԱ. Իսկ ժողովեալ ամենայն այր որ յարբունս մանու-
կութեան էր, և եկեալք հասանէին ամենեքին 'ի
Մակեդոնիա ինքնակամ կամօք իբրև յաստուածա-
ռաք ձայնէ հրաւիրեալք: Իսկ Աղեքսանդրէ զհօրն
զինուց տունս բացեալ ետ մանկտւոյն զպատաղի-
նութիւն, և եհան զհամհարզն Փիլիպպոսի 'ի պատե-
րազմ: Թէպէտ որ ծերունիք էին ասեն նոքա ցԱղեք-
սանդրոս, Թէ մեք զառամացեալ եմք՝ հասակաւ,
զինուորուն վարեալ ընդ հօրն քում՝ ոչ եւս տակաւին
ույժ կայ 'ի մարմնի մերում առ հակառակորդ Թըշ-
նամիսն. վասն որոյ հրաժարիմք առ քեզ [2] 'ի զօրուէ [3]:

ՀԲ. Առ այս ետ պատասխանի Աղեքսանդր և ասէ.
Տեսա և կարի քաջ առաւել եւս զձեզ զինուորեցու-
ցից, Թէպէտ և ծերունիք էք. քանզի կարի յոյժ
ծերութիւն հզօրագոյն քան զմանկութիւն ընտու-
րեցաւ գոլ: Քանզի բազում անգամ նորահասակ
յուսացեալ և պանծացեալ 'ի մարմնոյ զօրութիւն՝
խոտորի [4], յայն ինչ յոր կամի յարձակեալ, չարաչար 'ի
վտանգ մատնի: Իսկ ծերունին նախ յառաջագոյն խոր-
հուրդ 'ի մէջ առեալ յոր յարձակի, յաղթէու եղե-
խրատուն՝ ձողոպրեալ 'ի վտանգէն: Արդ դուք զի-
նուորեցէք զձեզ ընդ մեզ ոչ իբրև ընդդէմ կալով

1 Ձորս ՕՕ. ղատամայ ելք:
2 Յերկուս ՕՕ. չեր առ ժեղ:
3 Ձորս ՕՕ. 'ի ղինուորուԹենէ
կամ 'ի ղինուորէ: Նշ. յաւելու որք առ ժեխանոյ կր ղորդի կր:
4 Բ. խոտորեն:

թշնամեացն, այլ քաջալերելով զմանկունս քաջապէս մարտնչել. քանզի երկոցունց է քաջալերութիւն։ Բայց արդ առէք զօրացուցէք և ոյժ տուք խորհրդովք ձերովք զօրուդ. քանզի 'քաջայայտ է առ կուի՝ գիտելով զի ձեր է և փրկութիւնն որ յաղագս քաղաքին յաղթել ետուք. քանզ՝ 'ի պարտումն մատնելոց՝ թշնամիքն 'ի վերայ անպիտան հասակացն յարձակեալ հասցեն. իսկ յաղթողացն յաղթութիւն 'ի խրատտուացն 'ի բարս տացէ զակնարկութիւն։ Այսպէս ասացեալ Աղեքսանդրու հաւանեցոյց և զյոյժ զառամացեալսն զհետ երթալ։

ՀԳ․ Նա ժողովեալ Աղեքսանդրի զառաջին զօրսն Փիլիպպոսի, թուեաց և եգիտ 'ի մակեդոնացւոցն հետևակաց բիւրս երկու և հինգ հազար, և հեծեալս մակեդոնացիս երկուս հազարս և եօթն հարիւր, և այլ ևս զօրաւիգն օգնական ութ հարիւր. և թըւեալ 'ի միասին հանդերձ այնուք զոր ընդ իւրն առեալ էր, եգիտ միանգամայն բիւրս եօթն և չորս հազար և վեց հարիւր. և զսոսա երկուս բիւրս և հինգ հազար, և զօրաւիգն օգնական ութ հազարս և եօթն հարիւր. և թրակացիս և պղինթացիս և սկիւթացիս, որովք յառաջապահաց պէտս վարեցաւ, եօթն հազար և վեց հարիւր։ Զսոսա զինեալս միանգամայն զամենեսեան որ անդ էին, ընդ որս առեալ 'ի միասին ընկալաւ բիւրս եօթն և հազար և վեց հարիւր, զսոսա զինեալս ընդ այնոսիկ ընդ որս և ինքն ունէր 'ի հօրէն զինուորս, առնու՝ հասեալ 'ի Մակեդոնիա՝ դահեկան ոսկւոյ քանքարս բիւրս չորս, հազարս և ութ հարիւր և վաթսուն, և նաւս կազմեալս պատերազմիկս և լիբեռնեալս [2]։

1 Ել․ և զայս արարեալ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ Զայս [illegible]։

2 Զորս ՕՕ․ Լիբեռնայ։ ՀՀ․ վեհապահաւ խմայեալ զայն բառդ՝ ասէն բեռնաբարս։

ՀԴ. Եւ անցեալ ընդ Մակեդոնիա և ընդ Մա- գոն՝ գետ և ընդ այն որ 'ի վերոյ կողմանն կայր Թրակէ, որ էր նմա բուն հնազանդ վասն Փիլիպպո- սի հօրն իւրոյ զօրութեամբն, անտի էառ զընտիրսն և արծաթոյ քանքարս հինգ հարիւր. և անց գնաց 'ի Լիկաւոնիա. և անդ զոհս մատուցեալ հանդերձ այ- սոքիւք որ անդ զօրավարքն էին, և անց 'ի Կիլիկիա. և զոմանս որք անհաւանքն էին նմա, հնազանդե- ցոյց. և անց գնաց յիտալիական գաւառն։

ՀԵ. Եւ հռովմայեցւոց զօրավարքն առաքեն 'ի ձեռն Մարկոսի Էմիլեայ զօրավարի, որ ունէր զԱրամազդայ Կապետողեայ զպսակն ոսկւով և մար- գարտով կազմեալ, և ասէին. Քո այդու ես պսա- կեմք զքեզ ըստ [2] սովորութեան Աղեքսանդրի ոսկի պսակաւ իբրև լտերց հարիւր։ Եւ սորա ընկալեալ զնոցա շնորհակալութիւնն, խոստացաւ մեծ առնել զնոսա զօրութեամբ. և առնու 'ի նոցանէ զինուորս հազարս և քանքարս չորեքհարիւր. բայց ասէին աւե- լի ևս տալ նմա զինուորս, եթէ ոչ պատերազմ առ- նել առաջի կայր ընդ կարքեդոնացիսն [3]։

ՀԶ. Եւ անտի անցեալ ընդ ծովն որ 'ի միջին կայր, եկեալ հասանէր յԱփրիկէ։ Իսկ ափրիկեցւոց զօրա- վարքն ելին ընդ առաջ նորա և աղաչեցին զնա 'ի բաց առնել զիշխանութիւն հռովմայեցւոցն 'ի քաղաքէն։ Եւ նորա սաստեալ զանմտութիւն նոցա ասաց. Կամ վեհք եղերուք, կամ վեհից հարկատուք։

ՀԷ. Եւ ապա անդուստ անցեալ գնացեալ համ- դերձ սակաւ զինուորօք՝ զամենայն զԼիբիա 'ի վեր կոյս թողեալ, յԱմոնի մեհեանն երթեալ հասանէր. և զօրականին հրաման տայր նաւել, և կալ մնալ

1 Երկք օր. Մ... [illegible]

2 [illegible]

3 ՕՕ. [illegible] կամ [illegible] եղալ ըստ լատ։

յայնմ տեղւոջ՝ որ ասի Փարիտիս կղզի։ Եւ նորա երկրպագեալ Ամոնայ և զոհս մատուցեալ յիշեաց զմօրն բանսն, որ ասէր զնա Ամոնայ լինել որդի. և յաղօթս կացեալ ասաց. Հայր, եթէ ճշմարիտ խօսի մայրն իմ, զիս 'ի քէն լինել որդի, տուր ինձ հրաման պատասխանւոյ։ Եւ ետես յերազի Աղեքսանդրոս զԱմոն ընդ Ոլոմպիադայ գրկապատ ընդխառն շաղապատեալ։ Եւ ուսեալ արդեամբք զզօրութիւն չաստուածոյն՝ կազմեալ զարդարէ զմեհեանն յիւրմէ վերադրութենէ՝ Հօր աստուածոյ Ամոնի որդի Աղեքսանդրէ։ Եւ աղաչէր հրաման պատասխանւոյ առնուլ 'ի նմանէ ուր զանուան իւրոյ մշտայուշ քաղաք շինեսցէ։ Եւ դարձեալ ետես յերազի զԱմոն որ ասէր ցնա. Ով թագաւոր, քեզ ամբիծ անարատ եղջիւրս խոյոյ ասեմ. եթէ կամիս յաւիտենական անծերանալի անսպառ ժամանակաւ նոր կալ և մնալ, շինեա քաղաք նշանաւոր գեր 'ի վերոյ Պրոդիտայ[1] կղզւոյ, որոյ առաջոյ անցեալ նստի յաւիտեան Պղուտոնիոս ինքն թագաւորելով հինգակատար գագաթամբք զանսպառ աշխարհաւ պատեալ։

ԻԸ. Զայս ընկալեալ հրաման պատասխանւոյ Աղեքսանդրի և խնդրեալ հարցանէր թէ զո՞ր կղզի արդեւք ազդիցէ զՊրոդիտասն, և ո՞ր առաջի անցեալ նստի աստուածն։ Եւ իբրև խնդրեալ հարցանէր, զոհս մատուցեալ հայրենի աստուածոյն Ամոնայ, զուղևորութիւն առնէր 'ի գիւղ մի լիբէացւոց՝ յորում զզօրսն հանգոյց։ Եւ մինչդեռ գնայր շրջէր Աղեքսանդրոս, եղջերու մի մեծ յորջ մի զողեաց. և Աղեքսանդրոս ձայնեաց առ ինքն աղեղնաւոր մի և հրամայեաց ձգել նետս յեղջերուն. և լարեալ զա-

1 Այլ օր. Պրոտիդեայ. Պրոպայ. Պրոդ-դէայ. Պղտոտիէ. և զկնի ՕՕ. ... զՊրոտիտասն. զՊրոտիտեսն. եդաք հա- մաձայն բառ այլ տեղւոյ։ Յոյնն նմ ուրեք Պրոդոնտիս ասէ. իսկ լատինն Պրոտէին։

զեղն և ձգեալ նետս՝ ոչ դիպեցաւ 'յեղջերուն ։ Այլ Աղեքսանդրոս ասաց . Այր դու, տարապատկան եղև քեզ ։ Աստուստ տեղին այն կոչեցաւ Պարատոնիոն վասն գոչմանն Աղեքսանդրի ։

ՀԹ. Այլ անտի գնացեալ եկն 'ի Տապոսիրիս[2] . և հարցեալ ուսանի 'ի վայրացն մարդկանէ զգերեզմանն Ոսիրեայ լինել մեհեան . և զոհեալ չաստուածոյն խաղայր գնայր 'ի Ճանապարհ ։ Եկեալ հասանէր յայս յատակ և տեսանէր վայր մեծ անբաւ լեալ, տարածեալ յերկոտասան գեւղից կալուածս ըմբըռնեալ էր . և էին գիւղք Ստերամփիս, Փրոնէտեաք և Եգմիտոս, Ակոնիս, Եպիւրգոս, Տետրակովմիս, Եգիոս, Ապաւնիս, Սկամբեաք[3], Նեփելէտք, Մեմնէս, Տիատք, Պելասոս . քանզի Ռակոտիս նշանաւոր էր քան զայլսն, զի մայրաքաղաք էր ։ Երկոտասան քաղաքս ունէին և երկոտասան գետս, որ բխեալ 'ի ծով հոսէին, և մինչև ցայժմ եւս ընթացիցն խըցեալ կան . և խցան գետքն և նրբափողոցք քաղաքին և վարազափողոցք անցիցն . բայց միայն երկուս կան մնան որ հոսին 'ի ծով . և Ռակովտացին գետ որ այժմ ընթանայ, մեծին Սարապեայ աստուածոյ է . ապա ջրադարձն որ վաճառի 'ի վարազափողոցացն, և մեծ գետն որ անուանի Բուղերաս որ այժմ Ապեդիա է . ապա ջրադարձն նորա որ է բախտի տուն, և մեծ գետն որ Կաւպոնիայն է . և է ջրադարձն մեծ և գետն Նեփրուտայի որ այժմ արտաքս դիրքն են, որոյ և խսեան տաճարն Նեփրովտայ նախ չլինեալ քան զԱղեքսանդրիա . և մեծ քան զամենայն գետս որ կոչի Արգէոս, որոյ է Արգեայն . ապա ջրադարձն Արեայ[4] . սիւնքն և ջրադարձքն զԿանոպական գետովն որ հանէ 'ի Օեփիւրոս կոյս . և մեծ գետն Հերակ-

1 Երկք ՕՕ. ՏԻԳՐԻՍ ։
2 ՕՕ. Ի ՊՈՍԻՐԻՍ. եղեալ համաձայն յունին և լատինականին ։
3 Երկու ՕՕ. ԱՄՓՆԴԷՌՔ ։
4 Չորս ՕՕ. ԱՐԵԱՅԻՆ . . ՀԻՊՈԴ-ԵՆ ՓԷՓՈՒՆ ։

լեալ բերան . քանզի յայնմանէ տեղւոջէ որ կոչի Պանդիտա մինչև յայն տեղի որ կոչի Հերակլէովտական բերան, երկայնութիւն քաղաքին ։

Ձ. Արդ Աղեքսանդրոս զվայրն նկարեաց և զլայնութիւնն 'ի Մենդիդեայ մինչ 'ի փոքրն Հերմեայ քաղաք . բայց ոչ կոչէին Հերմուպօլիս, այլ Հերմապօլիս . քանզի ամենայն որ ելանէր յԵգիպտոսէ կամ իջանէր, անդր դիմէր . մինչև ցայն վայր տեղագրեաց զքաղաքն Աղեքսանդրոս, ուստի և Աղեքսանդրացւոց վայր կոչի ։ Բայց եւ նմա խրատ Կղէովմենէս նաւկրատացի և Դինոկրատէս Հռոդացի, Մի այդքան մեծ քաղաք շինէր, քանզի ոչ ուրեք գտցես զայն ըստ մարդկօք . և եթէ լցցես, ոչ կարասցեն ցամաքք զառ 'ի պէտս հարկաւոր կերակրոցն մատուցանել . քանզի պատերազմ տացեն ընդ ինքեանս որք 'ի քաղաքին բնակեալք լինին, իբր այնքան մեծ և անբաւք լցցին ։ Քանզի փոքր քաղաքի մարդիկ դիւրաւ առ 'ի խրատ և յօգուտ լինին . իսկ մեծամեծք ժողով մարդկան իբրև յայսքանումմեծի քաղաքին բնակեալք անդէպք և անծանօթք ընդ միմեանս լինելով, խեռեալ ստամբակեցեն ընդ միմեանս, թշնամեցեալք վասն անբաւ բազմութեանցն

ՁԱ. Իսկ հաւանեալ Աղեքսանդրոս հրաման ետ ճարտարապետացն որոնք կային չափով զքաղաքն շինել ։ Իսկ նոքա տեղագրեցին զերկայնութիւն քաղաքին 'ի Դրակոնտեայ ըստ տապօսիրական՝ գերեզմանին մինչ յԱգաթեմոնն որ առ Կանոպաւն է, և 'ի Մենդիդեայ մինչև յԵգիւրքեայ՝ և 'ի Մելանթեայ լայնութիւն ։ Իսկ հրաման ետ փորել բնակչացն . և 'ի գեօղ երթեալ 'ի բացեայ իբրև երեսուն

1 ՕՕ. Φοινίκων. Եղաք ըստ նախընթացս ուղղագրութեան Յոյն-ակերն համանմանն յունին և ըստ ։

2 ԱՃ ՕՕ. Ἡρακλεωτικῷ. Ἡρακλεωτικῷ. Ἡρακλειωτικῷ ։

մղմաւ 'ի քաղաքին արտաքոյ վայր նոցա շնորհեաց, կոչեցեալ զնոսա աղեքսանդրացիս։

ԶԲ. Եւ եդին նոցա սկզբունք փողոցք զնացից գլխ-զեյն Եւփիլոքոս՝ և Մէլանթիոս, ուստի և անուանակոչութիւնն եկաց նոցա։ Եւ խորհի այլ ևս Ճարտարապետս քաղաքին զտանել. յորս Կղէոմենէս Նաւկրատացի և Կրատերոն ողինթացի և Նրոմա անուն լիբէացի ազգաւ ծերունի։ Սա ունէր եղբայր, որոյ անուն էր Հիպոնեմոս. սա խրատ ետ Աղեքսանդրի նախ փոս հատանել՝ քաղաքին 'ի հիմանց և ջրամղահոս առնել, որ 'ի ծովակոյս հոսին։ Եւ հաւանեալ արքայն հրամայեաց առնել, զոր և ոչ մի այլ քաղաք ոչ ունի, և կոչին Հիպոնոսք վասն այնր որ եցոյց լիբէացին Հիպոնեմոս կոչիլ։

ԶԳ. Բայց սակայն մեծ քաղաք քան զԱղեքսանդրիա ոչ է. քանզի ամենեքեան տեղագրեալք չափեցան։ Իսկ մեծ քաղաքն որ յԱսորիս է Անտիոքա, որ է ութ ասպարիսաց և ոտից եօթանասուն և երկուց. իսկ յԱփրիկէ Կարթագինէ[3], ասպարիսաց քսան և միոյ, և ոտից երեք հարիւր և հնգից։

ԶԴ. Եւ հասեալ յԱղեքսանդրիա յառուկ 'ի յատակս յայս եգիտ զգետս ջրագարձս և զգեւղս հաստատեալ։ Եւ տեսեալ կղզի մի 'ի վերայ ծովուն ասաց. Ո՞ է կղզիս։ Եւ բնակիչք վայրին ասացին. Սա Փարոս կոչի. բայց Պրոտէս 'ի սմա բնակեցաւ[4], և շիրիմն Պրոտեայ է առ մեզ, պաշտաման արժանի եղեալ։ Ի վերայ լերին միոյ բարձու եկեալ բերին զնա, այդ[5] որ այժմ կոչի դիւցազգի գերեզման, և ցուցին նմա զտապանն։ Եւ մատուցեալ անդ զոհս դիւցազինն Պրոտեայ. տեսեալ 'ի բազում ժամանակաց և 'ի վայր անկեալ շիրմին, հրամայեաց վաղվաղակի կազմել վերստին։

1 Ա. յլ ՕՕ. Նաւրքոս։
2 Երկու ՕՕ. Խոսլ հոգամեն։
3 Բ. Թերթ Է. այլք Կարթագինէ կամ Կարթագնէ։
4 Բ. Թերթ Է. այլ ՕՕ. Բնակեցաւ։
5 Երկու ՕՕ. յայդ։

ԻԵ. Տեղագրել և շուրջ զնաւի քաղաքին հրամայեաց։ Եւ նոքա ալեւր առին շրջագրեցին զվայրն. և ընդ ամենայն տեղիս հաւք ազգի ազգիք բարձին զալեւրն և 'ի վեր թռեան։ Եւ աղէտս վարեալ Աղեքսանդրի թէ զինչ արդեւք իցէ նշանակս, յղեալ կոչեաց նշանագէտս և ասաց նոցա զեղեալսն։ Եւ նոքա ասեն. Քաղաքս այս որ շինեցաւ, զամենայն աշխարհ կերակրեսցէ. և ամենայն ուրեք եղիցին 'ի սմա ծնեալք մարդիկ քան զթռչունս, ընդ ամենայն աշխարհս շուրջ ածին։

ԻԶ. Եւ սկսան շինել զքաղաքն Աղեքսանդրիա 'ի միջոցէ դաշտին. և առ տեղին զանուանակոչութեան սկիզբն վասն անդուստ սկսանել զքաղաքն շինել։ Եւ այնոցիկ որ 'ի գործ պարապեալ էին, վիշապ մի սովորեաց' գալ և զարհուրեցուցանել զգործաւորսն և խափան առնել գործոյն։ Վասն զազանին 'ի վերայ արձակմանն եհաս Աղեքսանդրոս և ասաց, զի վաղիւն ուր գտանիցի, ըմբռնեսցի 'ի գործաւորացն։ Եւ առեալ զհրամանն, իբրև եկն զազանն յայն տեղին որ այժմ կոչի Յարկ, անդէն յաղթահարեալ ըսպանին զզազանն։ Եւ ասաց Աղեքսանդրոս անդ նմա մեհեան շինել։ Եւ թաղեալ եդին անդ զվիշապն։ Եւ ասաց պսակս ամենազանս կազմել առ 'ի յիշատակ երևեցելոյ լորտուին. և ասաց մի այլ ուրեք առնել զորումն փոսի հիմանցն բայց 'ի միում տեղւոջէ, որ է մինչև ցայժմ լեառն մեծ երևեալ, որ կոչի Աղբիւրք։

ԻԷ. Եւ հիմն արկեալ յոլով մասանց քաղաքին, և գրեաց 'ի վերայ գիրս հինգ, Ա, Բ, Գ, Դ, Ե. այբն, Աղեքսանդրոս. բենն, բարձրագոյն թագաւոր. գիմն, գերագոյն ազգաց. դայն, դեր Արամազդայ. եչն, էջ և շինեաց քաղաք անմահանելի։ Եւ էշք և ջորիք գործէին անդ։ Եւ հաստատեալ զդրան դիւցազինս

1 Հհ. առաջնոյն և զարհուրեցուցանէր։

այսօրիկ, կանգնեալ եդ զնա 'ի վերայ խոյակին․ և ելին 'ի նմանէ բազում օձք և սողելով մտին 'ի մուտս յաճախ եղելոց տանցն․ քանզի զքաղաքն դեռ ևս անդրր լինելով Աղեքսանդրոս շինէր 'ի տուրի քսան և հինգէն, և զնոյն ինքն զմեհեան օձին․ ուստի զօձս զայսոսիկ պաշտեն բարապանք իբրև զբարի դևս մըտեալ 'ի տունս․ զի ոչ են թունաւորք իբր զազանք, այլ զթունաւոր զազանս 'ի բաց հալածեն։ Այլ զոհք մատչին նմա իբրև վիշապազին․ և պսակեն և զգրաստըս ամենայն բեռնաբարձս, 'ի հանգիստ նոցա մատուցանելով յաւուրն յայնմիկ․ վասն զի գործակիցք' եղեն բեռնաբարձք լինելով 'ի շինութիւն մեծատեսիլ քաղաքին։ Այլ արքայն հրամայեաց պահապանացն ցորեանս տալ․ որ և նոցա աղացեալ զցորեանն և աթերայ արարեալ ետուն բնակչացն իբրև 'ի զուարճարար յուրախութիւն․ ուստի մինչև ցայժմ այս օրէնք պահին առ աղեքսանդրացիս 'ի տուրի քսան և հինգ, զբեռնաբարձ գրաստս ամենայն պսակել, և զոհս մատուցանել աստուածազինն, և պաշտօն կրել լորտուացն' որ խնամ տանին տանն, և բաշխումն առնել աթերայն։

ՁԸ․ Այլ գտեալ 'ի վեր հինգ բարձրագունից բարձրաւանդակաց զերկիրն, որ է արեգական և Ալիմփայ սիւնք, և զդիւցազինն տաճար, խնդրէր և զսարապեան տաճարն ըստ հրամանի պատասխանւոյն որ տուաւ նմա յԱմոնայ, և զայն որ քան զամենայն հզօրագոյն աստուածն է։ Քանզի ասաց այսպէս հրաման պատասխանւոյն յաստուածոց, եթէ ո՛վ թագաւոր, քեզ փիւդոս[1] խոյեղջիւր ասեմ․ զի թէ կամիս յաւիտեան անծերանալի կալ մնալ, շինեա քաղաք նշանաւոր Պրոգխոդայ կղզւոյ, որոյ առաջոյ անցեալ նստի Պղուտոնիոս հինգակատար գա-

1 Երկու ՕՕ․ [illegible]։
2 Չորս ՕՕ․ [illegible] յոյնն [illegible]։

գաւթամբք զանսպառ աշխարհ պատելով : Եւ խըն-
դրէր զաստուածն որ զամենայն ինչ տեսանէ :

ԶԹ. Եւ անդէն արարեալ դէմ յանդիման դիւցա-
զինն տաճարի բագինն մեծ, զոր ցարդ եւս ասեն բա-
գին Աղէքսանդրի : Եւ անդ բազմապատիկ զոհս
մատուցեալ եւ յաղօթս կացեալ ասաց. Ո՛վ որ երբէք
ուրեք ես աստուած, որ հոգեւոր խնամ տանիս այսմ
երկրի եւ զանսպառ աշխարհ տեսանես. առ ընկալ
զիմ զոհս եւ օգնական լեր ինձ 'ի պատերազմունս :
Եւ զայս ասացեալ եդ 'ի վերայ բագնին զզոհն :
Յանկարծօրէն մեծ արծուի մի խոյացեալ յափշտա-
կեաց զփորոտի զոհին եւ յօդս թռուցեալ շրջէր, եւ
'ի բաց թողեալ արձակեաց 'ի վերայ այլոյ բագնի. եւ
գիտող քննիչքն նշանակեցին զտեղին թագաւորին :
Եւ նորա հասեալ անդր վաղվաղակի ետես զփորոտին
զի կայր 'ի վերայ բագնին, եւ բագին մի որ 'ի հին ժա-
մանակացն էր հաստատեալ, եւ պատկեր պղնձի 'ի
ներքս 'ի նիստ, որոյ զընութիւնն մահկանացու ոչ ե-
գիտ պատմել : Եւ անցեալ կայր առ անապական
պատկերին աղջկան պատկեր մեծ :

Ի. Եւ հարցեալ ուսանէր ո՞ յանուն բնակչացն
աստուած է : Եւ նոքա ասեն ոչ գիտել. բայց 'ի
պատմութենէ նախահարցն ընդունել՝ Արամազդայ
եւ Անահտայ գոլ մեհեան աստցին : Յորում եւ զյո-
բելիկոն ետես, որք մինչեւ ցայժմ կան 'ի սարապեան
տաճարին արտաքոյ քաղաքորմին, որ այժմ եղեւ 'ի
սարապեան տաճարին. յորում էին դրօշեալք գիրք
նուիրականք աստուածայինք. եւ հրաշալի սորա քա-
ղաք : Եւ Աղէքսանդրէ հարցանէր, թէ զի՞նչ են յո-
բելիկքն : Նոքա ասեն. Թագաւորի աշխարհակալի
Սեսոնքուսայ : Եւ կայ ներքնագիրս այս նուիրական
մեհենային գրովք. եւ թարգմանեցաւ թագաւորին
այսպէս. Թագաւոր եգիպտացի Սեսոնքուսիս աշ-

խարհակալ նախ երևեցելումն աշխարհիս աստուածոյ Սարապեայ նուիրեալ կանգնեցի ։

ՂԱ. Եւ հայեցեալ յաստուածն ասաց Աղեքսանդրոս. Ո՛վ Սարապիս, թէ դու ես աշխարհիս աստուած, յայտնեա ինձ ։ Եւ երևեցաւ նմա 'ի քուն յայտնապէս Սարապիս և ասաց. Աղեքսանդրէ, մոռացմո՞ւնք եղեն քեզ մինչ առնելով զոհս կացեր յաղօթս. ո՞չ դու ասացեր ո՛ արդեւք ես հոգածու նախախնամող երկրիս այսորիկ և զանոլորտ աշխարհ յականելով, առ ընկալ զպատարագս զայս և օգնական ինձ լեր 'ի պատերազմունս. և յանկարծօրէն արծուի խոյացաւ 'ի վայր, և զփորոտիսն եդ 'ի վերայ բագնին. ո՞չ երբեք գիտելի զի ես եմ ամենեցուն հոգածու և նախախնամող աստուած ։

ՂԲ. Եւ սորա յերազին աղաչեալ զաստուածն և ասացեալ եթէ կացցէ մնացէ՞ քաղաքս այս հաստատուն յանունս յոր շինեցաւ՝ Աղեքսանդրէ, եթէ ոչ շրջեալ փոխեսցի անունս իմ յայլոյ թագաւորի յանուանակոչութիւն, զեկո ինձ ։ Եւ տեսանէ զաստուածն զի ունէր զձեռանէ նորա և ածէր առ լեառն մի մեծ և ասէր այսպէս. Աղեքսանդրէ, կարե՞ս փոխել զլեառնս զայս յայլ կողմն ։ Կարծեաց և ասէ. Ո՞ր կարեմ, տէր ։ Եւ ասաց նմա աստուածն. Նոյնպէս և ոչ քո անունդ կարէ երբէք յայլոյ թագաւորի յանուանակոչութիւն փոփոխումն կրել. այլ աճեցեալ զեղցի բարիոք Աղեքսանդրիա, օգնական և չարահալած լինելով յառաջագոյն քան զինքն եղելոց քաղաքաց ։

ՂԳ. Եւ այս ասաց Աղեքսանդր. Տէր, և զայս ևս յայտնեա ինձ, եթէ զի՞արդ հանդերձեալ եմ փոխել զկեանս ։ Եւ նա ասաց. Անորամելի է և գեղեցիկ և պատուական որ 'ի մահկանացուէ ոչ գիտել յառաջագոյն թէ ո՛ր արդեւք իցէ ոլորտ կատարածի կենաց նորա. քանզի մարդիկ ոչ իմանան 'ի միտս ին-

րեանց անմահ զօղ զկենցաղս, և զանազան յորժամ
ունիցի անգիտութիւն աղետիցն. և նոյն այս և քեզ
գեղեցիկ թուի՝ զհանդերձեալն 'ի քեզ ոչ գիտել,
սիրելի։ Բայց զի հարցանես ուսանել կամեցեալ
քեզ զհանդերձեալն 'ի քեզ, այսու հաւանեցուցից
զքեզ վաղվաղակի. զի դու իմով ձեռնարկութեամբ
մանուկ մօք տղայ՝ զազինս ամենայն հնազանդե-
ցուցես խուժադուժ ազգաց, և ապա եկեսցես առ
իս մեռանելով և ոչ մեռանելով։ Արդ զոր կանգնես
'ի միջոցի երկրի քաղաք զԱքանդարիա փափագելի
աշխարհի, աշխարհս աստուածաբնակ բազում ա-
ւուրց և ժամանակաց յառաջ անցելոց, և սա յա-
ռաջ անցցէ բարիոք զարդարեալ բազում տաճարօք
և զանազան մեհենօք և գեղեցկութեամբ և մեծու-
թեամբ և անհնարին բազմութեամբ մարդկամբք
զեղեալ. և ամենայն որ 'ի նա իջցէ կալ մնալ զա-
ռաջագոյն ծնողին մոռացեալ զյատակս։ Բայց ես
սորա վերակացու եղէց աստուած ամենայն յաւի-
տեամբք, առաջոյ անցեալ նստեալ, անթառամ և
անծերանալի՝ զերկիր հաստատելով։ Եւ քաղաք
կարգեալ զսա կալ մնալ միշտ հաստատուն, զան-
դունդս պարզեալ և զհուր լուսաւորեալ և զհարաւ
պակուցեալ, մինչ չնչել հողմն դժուարին որպէս զի
դժնդակ իրք չար դիւաց ոչ ինչ կարասցեն առնել
ընդ քաղաքս. քանզի շարժումն ունի առ սակաւ մի
և ժամդախտ միանգամայն և սով. նոյնպէս պատե-
րազմ, բայց ոչ ծանր սպառնմամբ, այլ իբրև երազ
վաղվաղակի անցցէ ընդ քաղաքս։ Եւ բազում թա-
գաւորք առ կենցաղով աշխարհիս զքեզ յամենայն
ժամ իբրև զաստուած եղեալ երկիր պագցեն. և
դու իբրև աստուածացեալ երկրպագեսցիս մեռեալ.
և լինի նոցա 'ի վերայ հրապարակին բազմութիւն
մարդկան, և օդոց քաջախառնութեամբ առաւե-
լեալ։ Բայց ես սորա վերակացու և պաշտպան եղէց,

որպէս զի մի դժուար լինի կատարելապէս կացցէ մնաս-ցէ՝ ժամդախտ լինի մահարեր կամ շարժումն, այլ որպէս զերագ լինի անցցէ զքաղաքաւս։ Եւ բազում Թագաւորք եկեսցեն 'ի սա ոչ պատերազմ տալ, այլ երկիր պագանել քեզ իբրև աստուածացելոյ և երկրպագեցելոյ. մեռեալ և ընծայս առցես 'ի Թագաւորաց յամենայն ժամ. բնակեսցես 'ի սմա մեռեալ և ոչ մեռեալ. զի քաղաքս այս զոր շինես, սա գերեզման լիցի քեզ. և հաւանեցուցից զքեզ վաղվաղակի ուր բնաւորեցար դու. երկիցս հարիւր, այսպէս և և զմի համարն խառնեա, ապա հարիւր և մի, և չորիցս քսան և տասն, և զառաջին գիրն առնլով առաջիր վերջին, և յամենայն ժամ իմասջիր ո բնաւորեցայ դու ես աստուած[1]։ Եւ չաստուածն հրաման արարեալ յինքեանց գնաց։

ԼԴ. Իսկ Աղեքսանդրոս զարթուցեալ և յիշեցեալ զհրաման պատասխանւոյն որ եղև նմա յաստուածոց, ծանեաւ տէր բոլորեցունց զմեծն Սարապիս։ Եւ բագին մեծ կազմեալ և զոհս արժանաւոր հրամայէր աստուածոցն բերել և փողոտել հանել դնել տայր 'ի վերայ բագնին, և[2] կնդրուկ սաստիկ ծխել, և յամենապատիկ խնկոց շեղջակոյտս առնել 'ի վերայ բագնին. հրամայեաց և խրախ լինել ամենեցուն։ Եւ Պարմենիոնայ Ճարտարապետի տայր պատկերս պղնձի կազմել և շինել մեհեանս որ բերէր յինքեան զհոմերական տաղիցն, որպէս ասաց սքանչելի երգիչն այն Հոմերոս.

Եւ կապուտակային յօնօքն ակնարկեաց
 զրուանեանն,
Եւ սքանչելի աստուածային վարսքն շարժեցան
 յանմահ գլխոյ Թագաւորին.
Եւ մեծապէս շարժեալ տատանեցաւ Ողիմպոս։

1 Այն է անուան Սարապիս ըստ Թուոց տառիցն յունական ձայնիւ։

2 Զորս ՕՕ. յաւելուածով հր-[illegible]

Սակայն Պարմենիոն կազմեաց զկոչեցեալ սարապեանն տաճար ։ Արդ կարգ յարմարուածոյ՝ քաղաքին այսպէս ունի զոր ասացաք ։

ԴԵ. Իսկ Աղեքսանդրոս առեալ զզօրսն ձեպէր յԵգիպտոս հասանել, և առաքեաց զպատերազմական նաւսն կալ մնալ նմա 'ի Տրիպօլիս. և ինքն վըստահայր վասն զօրուն, զի ուղին դժուարին լինէր ։ Եւ էին Աղեքսանդրի ըստ ամենայն քաղաքաց մարգարէք, զիւրաքանչիւր աստուածս 'ի դուրս բերելով և զոհս մատուցանելով անուանէին զնա նոր Սեսոնքուսիս աշխարհակալ. վասն զի 'ի Մեմփիս հասեալ նստուցանէին զնա յաթոռն Հեփեստեայ, և զգեցուցանէին զպատմուճանն իբրև եգիպտացւոց թագաւորի ։

ԴԶ. Իսկ Աղեքսանդրոս այնպիսի պատկեր տեսեալ 'ի սեաւ քարէ, և գիր ունէր 'ի վերայ խարսխին այսպէս. Սա որ փախուցեալ թագաւորս՝ եկեսցէ դարձեալ յԵգիպտոս ոչ ծերացեալ, այլ մանկացեալ, և զթշնամիսն ձեր զպարսիկս հնազանդեցուսցէ ձեզ ։ Իսկ նա հարցանէր. Ո՞յր է պատկերս այս ։ Եւ նոքա ասեն. Սա է վերջին եղեալ թագաւոր Նեկտանեբոս, որ 'ի գալ Պարսից և ընդ եգիպտացին տալ պատերազմ, ետես մոգական կախարդութեամբ զօրութեանն զաստուածոն եգիպտացւոց 'ի զօրս թըշնամեացն 'ի մտանելն յԵգիպտոս. և ուսեալ զառ 'ի նոցանէ եղեալ մատնութիւն փախեաւ գաղտաբար. և 'ի խնդրելն մեր զնա և յաղաչել զաստուածոն թէ ուր՝ արդեւք փախեաւ թագաւորն, նա ետ պատասխանի որ 'ի սանդարամետս 'ի սարապեան մեհենին աստուածն այսպէս. Փախուցեալ թագաւորն ձեր եկեսցէ դարձեալ յԵգիպտոս ոչ ծեր որպէս և էրն, այլ մանուկ մատաղ ։

1 Չորս ՕՕ. յարմարածոյ։    2 ՕՕ. այլ։

ԴԷ. Իսկ լուեալ զայս Աղեքսանդրի վաղէ ելանէ 'ի վեր 'ի պատկերն, և գիրկս արկեալ պատեցաւ ընդնովաւ և ասաց. Սա իմ հայր է, ես սորա որդի եմ. ոչ ստեաց ձեզ աստուածոյն ձերոյ հրաման պատասխանւոյ: Բայց սակայն զարմացեալ եմ թէ զիարդ իսկ ամենեքին ըմբռնեալք եղերուք 'ի խուժադուժ ազգէն, պարիսպս անձեռագործս ունելով՝ որ ոչ կարէր 'ի թշնամեաց առումն կրել. քանզի գետք են շուրջանակի որ պահէին զձեր քաղաքս և շաւիղք ծամածուռք դժուարաշուրջք և նեղք մինչ ոչ կարել բազմութեան զօրու 'ի վերայ գալ. քանզի և ես հանդերձ սակաւ զօրու առ ձեզ գալով աշխատեցայ վասն դժուարագնաց ճանապարհին: Այլ այս վերին նախախնամութեանն է և աստուածոյն արդարութե՛ն, զի դուք որ ունիք քաջարեր հող և գետս, էրում հնազանդէիք այնոցիկ որ ոչ ունէին զայս իշխանութիւն. քանզի թէ հանդերձ այսոքիւք, զոր ունէիք պարգևս, և թագաւորք մեռանին խուժադուժքն, որ զայս ոչ ունէին ստացեալք: Աստի որք ոչ ունին զօրութիւնս պատերազմական, և որք ունիք արհեստըս մշակական, զի ծառայեցէք այնոցիկ որք ոչ ունին. և որք չունին, յայնցանէ որք ունին՝ առնուցուն:

ԴԸ. Իսկ այսպէս ասացեալ Աղեքսանդրի խնդրեաց հարկս 'ի նոցանէ որպէս և Դարեհի տային, ասելով՝ թէ ոչ զի յիմ շտեմարանս համբարեցից, այլ զի ծախեցից 'ի քաղաքն ձեր յԱղեքսանդրիա, որ է յԵգիպտոս, և մայրաքաղաք է ամենայն աշխարհի: Այսպէս նորա ասացեալ, խնդութեամբ ետուն նմա և հանդերձ պատուով յուղարկեցին զթագաւորն ընդ Պելուսիոն: Իսկ առեալ զզօրսն Աղեքսանդրի զճանապարհն դէպ ուղիղ գնայր յԱսորիս. և ունէր հլուս և հնազանդեալս զմօտաւոր քաղաքսն:

ԴԹ. Իսկ անդուստ զօրաժողով արարեալ հզօր՝ գայ հասանէ 'ի Տիւրոս: Կան ընդդէմ նորա տիւրացիքն

ոչ տուեալ անցանել ընդ քաղաքն իւրեանց ըստ հին հրամանւոյ պատասխանւոյն յաստուածոյ ուրեմն որ տուաւ նոցա այսպիսի. Եթէ անցցէ ընդ յատակս քաղաքիդ ձերոյ թագաւոր, քաղաքս ընդ իշխանութեամբ անկանի։ Ուստի ընդդէմ կային ոչ տալ մտանել Աղեքսանդրի։ Եւ կան ընդդէմ նորա ծուրացիքն շուրջ փակեալ՝ զպարսպաւ զբոլոր քաղաքն։ Եւ հզօր կռուոյ եղելոյ զբազումս սպանին 'ի մակեդոնացւոցն. և 'ի պարտութիւն մատնի զօրն Աղեքսանդրու, և դառնայ թագաւորն անդրէն 'ի Գազա. և հանգիստ առեալ և արծարծեալ զիւր զօրսն յաշխատութենէն խնդրէր առնուլ զԾուր և աւար հարկանել։ Եւ տեսանէ յերազի զոմն որ ասէր ցնա. Մ՛ի լինիր հրեշտակ քեզէն 'ի Ծուր։

Ճ. Եւ առաքեաց դեսպանս անդր հանդերձ թըղթովք, որ ունէր օրինակ այսպիսի բանիւք. * Թագաւոր Աղեքսանդրոս մակեդոնացւոց որդի Ամոնայ և թագաւորի Փիլիպպոսի մանուկ, և մեծ ինքն՝ թագաւոր Եւրոպայ, Ասիայ և Լիբիայ, ծուրացւոց որք ոչ ես էն՝ ասէ։ Ես սկիզբն արարեալ յԱսորւոց յազգն կոյս հանդերձ խաղաղութեամբ և քաջօրէն ազատութե՛ կամէի զմուտն առնել։ Եւ եթէ դուք ծուրացիքդ որ քաջ առաջին էք, ոչ քաղաքավարութեամբ ասեմ, այլ խմոյ ուղղորութեամբս ընդդէմ կայք ինձ, 'ի ձէնջ ուսցին և այլք[3] զօրութեան որչափ կարէն մակեդոնացիք՝ առ ձեզ կրեալ[4] ընդվըզեալ ամբարտաւանութեանդ։ Բայց է ձեր և որւեալն յաստուածոյ հրաման անսխալ, քանզի անցից ընդ քաղաքս ձեր. ողջ լերուք բարի խորհրդով, եթէ ոչ՝ ապականեցարուք թշուառանօք։

1 Չորս ՕՕ. [illegible] [illegible]։ [illegible]
2 Ա. [illegible]։ [illegible]։
3 Բ. Թերի է. այլ ՕՕ. այս Ե. [illegible]
4 Բ. Թերի է. այլ ՕՕ. [illegible]

ճԱ. Եւ ընթերցեալ զթուղթն առաջի ամենայն ժողովրդեան նոցա՝ հրամայեաց զգեսպանսն տանջել ասելով. Ո՞ւր է այն ձեր Աղեքսանդրոսն։ Եւ նոցա ասացեալ ոչ զոք գիտել, խաչեցին զնոսա։ Իսկ արքայն խնդրէր թէ ընդ ո՛ր ճանապարհս մտցէ և առցէ զծուրացիսն. քանզի յիմարութիւն վարկանէր։ Եւ տեսանէր յանուրջս զմի 'ի Դիոնիսեայ մարգարէիցն Սատիրոս անուն, որ մատուցանէր նմա պանիր։ Եւ Աղեքսանդրի առեալ ընկենոյր 'ի վայր և ոտիւքն կոխէր. և յարուցեալ պատմեաց երազագիտի ումեմն։ Եւ նա մեկնեալ զտեսիլն և ասաց. Թագաւոր, քեզ Տիւրոս լիցի ընդ ձեռամբ. անկեալ վասն Սատիրոսին, և վեր 'ի վայր բերցես զնա վասն քո զպանիրն 'ի գետինն կոխել։ Այսպէս մեկնեալ երազագիտին։

ճԲ. Իսկ յետ աւուրց բախեալ զծուրացիսն պատերազմաւ, հանդերձ երիւք գեղջք որք մօտ 'ի նա էին, և զօրաւիգն եղեալ Աղեքսանդրու և օգնական և քաջապէս մարտեան. զոր 'ի գիշերի բացին զդրունըս նորա և փողոտեալ զպահապանսն աւերեցին զՏիւրոս և 'ի գետինն 'ի վայր արկանելով, մինչև զի ցայսօր ասի որ գործեցան։ Եւ զերիս գեօղսն զօրաւիգն եղեալ նմա և քաջապէս մարտուցեալս 'ի չափ քաղաքի գրեալ նկարեաց և Տրիպօլիս անուանեաց։ Եւ կացուցեալ 'ի Տիւրոս դարմանիչ խնամող զփիւնիկեցւոց նախարարն, և ինքն անցեալ գնաց ընդ ծուրաստանս երթեալ։

ճԳ. Այս պատահեցին նմա հրեշտակքն Դարեհի թուղթս բերելով նմա, և փոկ և գունդ՝ և արկղ ոսկւով. և պարզեալ զթուղթսն Աղեքսանդր ընթեռնոյր։ "Թագաւոր թագաւորաց և աստուածոց ազգակից, աթոռակից արեգականն աստուածոյ Միհ-

1 Ն. 'Ի դաշտի քաղաքի հրամայեաց շինել։

2 Ս. յաւելու ասա և զինի երկցս և չորքսն։

րեայ, և ծագողի ընդ արեգական. ես ինքն աստուած Դարեհ, Աղեքսանդրի իմում ծառայի զայս ինչ հրամայեմ. Ակնարկեմ՝ քեզ դառնալ և ամփոփել զքեզ առ ծնողս քո որք ինձ 'ի ծառայութեան կան, և հանգչել 'ի գոգ մօր քո Ողոմպիադայ. քանզի տակաւին ես հասակդ քո խրատել պարտի և ստնդիել[2] և 'ի գիրկ սնանել. Վասն որոյ առաքեցի քեզ ընդ դրոյդ փոկ և գունդ և արկղ ոսկւոյ, զի ընտրեսցես որ զինչ և կամիս. թէ զփոկն, որ զեկուցանէ քեզ զի տակաւին խրատել պարտիս. և կամ զգունդդ, զի ընդ հասակակիցսն քո խաղասցես. և[3] մի յեղուզակ զամենհի հասակդ զայդչափ մանկունս հաւանեցուցաներ լինել զաւազակապետ ընդ քեզ առեալ զքաղաքս խռովելով. Քանզի նոյն իսկ առ հասարակ թէ ամենայն աշխարհ 'ի մի վայր[4] եկեալ ոչ կարասցեն քակտել[5] զՊարսից զօրութիւն. զի այնքան է ինձ բազմութիւն զօրականայ, որքան և ոչ զաւազ թուել ոք կարէ. Իսկ ոսկի և արծաթ բազում, մինչ զամենայն դաշտս և զբոլոր երկիրս լնուլ. Վասն որոյ և առաքեցի զարկղդ ոսկւոյն. զի եթէ ոչ ունիս ընդ որս 'ի ժողովս գումարեսցիս, տուր դոցա աւազակացդ քոց որպէս զվարձ որք իւրաքանչիւր 'ի դոցանէ ապրել կարիցէ և յիւր գաւառն հասանել. Ապա թէ ոչ հաւանիս հրամայեցելոյս քեզ յինէն, առաքեցից քեզ դահիճս առ 'ի յըմբռնել զքեզ. քանզի ոչ եթէ այնպէս բարեբախտիկ ինչ լիցիս, զի յիմոց զօրականաց ըմբռնումն ոչ կրեսցես. և ըմբռնեալ ոչ իբր զՓիլիպպոսի մանուկ խրատեսցիս, այլ իբրև ստամբակ և ապիրատ ապստամբ և աւազակապետ խաչեսցիս»:

1 Չորս ՕՕ. Ըմբ աստիմ։
2 Բ. գրեալ էր ստնդիել. չորս ՕՕ. ստընդիել։
3 Ե. և մի յերև զաւազակապետ լինել զայդչափ մանկունս և հաւանեցուցանել և խռովել դորօք զքաղաքս։ ՀՀ. զայդ մանկունս հաւաքեալ առեալ լինել աւազակ զքաղաքս խռովել.
4 Չորս օր. ընդ մի վայր։
5 ՀՀ. դիմանալ զօրաց իմոց։

ԾԴ. Այսպէս ընթերցեալ Աղեքսանդրի՝ երկուցեալ զարհուրեցան զօրքն. զոր իմացեալ Աղեքսանդրի զերկիւղն, ասաց այսպէս. Արք մակեդոնացիք, զի խռովեցայք 'ի գրելոյս թէ ճշմարիտ իցեն կամ զօրութիւն ինչ ունիցին իրաց. քանզի Դարեհ մեծարանելով զայս գրէ. բայց ինքն անման է գրեցելոյս: Քանզի և ոմանք 'ի շանց ոչ կարացեալ զօրութեամբ մարմնոյ կռուել, մեծամեծ և ծանունս հաջեն, իբր այն թէ 'ի ձեռն հաջմանն երևեցուցանեն զկարեն: Այսպէս պետն Դարեհ գործովք ոչ կարացեալ, 'ի գրեալս թուի գոլ ոք որպէս շունք 'ի հաջմունսն: Բայց յանձին կալցուք թէ և ճշմարիտ իցեն գրեալքս. լուսաւորեաց և ուսոյց զմեզ զի գիտասցուք թէ ընդ ում է մեզ քաջապէս մարտնչել, և ամօթ վարկանել զպարտութիւն առեալ մատնիմք և ըմբռնեալք լիցուք:

ԾԵ. Այսպէս ասացեալ հրաման ետ զձեռս յետս զհրեշտակն կապել զթղթաբերացն և տանել 'ի խաչ հանել: Իսկ նոքա յահէն ըմբռնեալք ասացին. Մեք քեզ զի՞նչ դժնդակ 'իրս գործեցաք, արքայ, զի այդպէս սպանանես զմեզ. հրեշտակք եմք Դարեհի, զի՞ առնես զմեզ չարամահս՝, ծուրացուցն նախանձեալ՝ որ 'ի խաչ հանիցն զդեսպանսն քո. զայդ մի ուսուցանէր ամենայն աշխարհի: Ասէ ցնոսա Թագաւորն. Պախարակեցէք զարքայն ձեր զԴարեհ և մի զիս. քանզի առաքեաց նա ինձ այսպիսի թուղթս ոչ իբրև աշխարհակալի, այլ իբրև աւազակապետի. արդ սպանանեմ զձեզ եկեալս իբր յինքնահաճոյ և յամբարտաւան մարդէ, և ոչ որպէս 'ի թագաւորէ: Իսկ նոքա ասեն. Ոչ է և Դարեհ ոչ ինչ գիտելով գրեաց քեզ այդպիսի ինչ, այլ մեք տեսանեմք աւասիկ այսպիսի պատրաստութիւն զօրաց. և իմացաք մեծ

1 Ս. Բուդդայական էր:    2 Զօրս ՕՕ. խուսափեա:

և կորովամիտ թագաւոր իբրև զորդի Ամոնայ և թագաւորին Փիլիպպոսի · աղաչեմք զքո քաղցրութիւնդ, զի շնորհեսցես մեզ զկեանս մեր ։ Եւ Աղեքսանդրոս ասաց · Այժմ երկուցեալ զարհուրեցայք 'ի հարուածոց մահուանէդ ձերմէ և մաղթէք չմեռանել, վասն այսորիկ արձակեմ զձեզ · քանզի ոչ եթէ կամք է ինձ սպանանել զձեզ, այլ ցուցանել զանազանութիւն հելլենացւոց թագաւորի խուժադուժ բռնաւորին ձերոյ · արդ մի ինչ ակն ունիք չար ինչ կրել յինէն · զի օրինօք թագաւոր զմարդ հրեշտակ ոչ սպանանէ ։

ճզ · Այսպէս ասացեալ Աղեքսանդրի՝ հրամայեաց զի թղթաբերացն պատրաստութիւն ճաշոյ լինիցի ։ Եւ բազմեցաւ նոքօք հանդերձ և ուրախ եղև ընդ նոսա ուտել և ըմպել ։ Եւ յաղթեալք 'ի գինարբութենէ հրեշտակքն կամեցան գաղտաբար ասել Աղեքսանդրի, որպէս թէ դարանամուտ լինելով կալցին զԴարեհ առանց պատերազմ տալոյ ընդ նմա ։ Ասէ ցնոսա թագաւորն · Մի՛ այդպիսի ինչ ասէք ինձ · զի թէ ոչ եկանէիք երթալ առ Դարեհ, թերևս ուսանէի ինչ 'ի ձէնջ · բայց վասն զի երթայք առ նա, ոչ կամիմ իրս ինչ ուսանել 'ի ձէնջ, զի մի գուցէ քսեսցէ ոք 'ի ձէնջ Դարեհի զճառեցեալս յինէն, և գտայց ձեզ պատճառք սատակման՝ մատուցանելով ձեզ շնորհ զոչ մեռանելն յինէն ։ Պատուեցին նախարարքն զԱղեքսանդրոս, և նոքին իսկ թղթաբերքն ։

ճէ · Եւ անդէն իսկ յետ աւուր միոյ գրէ թուղթ առ Դարեհ · և գաղտ 'ի թղթաբերացն ընթերցաւ առաջի նախարարացն և իմաստուն բարեկամացն իւրոց · որ ունէր նամակն օրինակ զայս ինչ գրեալ՝ «Թագաւոր Աղեքսանդրոս որդի Ամոնայ և հօր Փիլիպպոսի և մօր Ողոմպիադայ, թագաւորի թագաւորաց և աթոռակցի արեգական աստուածոյ Միհ-

րեայ և զաւակի աստուածոց և ընդ արեգական ծագողի՝ մեծի Թագաւորի Պարսից Դարեհի խնդալ ։ Ամօթ անարգանաց է այսքան՝ մեծ Թագաւոր Դարեհ և այսքան զօրութեամբ համբարձեալ և է աթոռակից աստուածոց, ընդ նուաստ և ընդ նըկուն ծառայութեամբ անկանել առն միոյ Աղեքսանդրի ․ քանզի² ոչ աստուածոյն անուանք 'ի մարդիկ հասեալ մեծ ինչ զօրութիւն նոցա շնորհեսցեն կամ իմաստութիւն, այլ առաւել խեռեալ ստամբակեսցին ․ զի յապականացու մարմինս անմահիցն անուանք բնակեսցեն ։ Բայց ահա և յայս խոկ ստգտեալ եղեր 'ի մէնջ ․ զի ոչ ինչ կարես առ մեզ, այլ աստուածոյն անուամբք յարեցեալ և զնոցայց զերկնայինն զօրութիւնս յերկրի զանձամբ քով առեալ ։ Քանզի ես եկից առ քեզ պատերազմ տալով իբրև առ մահկանացու Թագաւոր, զի և ես խոկ մահկանացու եմ ․ և միտումն յաղթութեան 'ի վերին խնամոցն լինի ։ Բայց առ ինչ գրեցեր ինձ այսքան ոսկի և արծաթ որ ստացեալ ունիս ․ զի ուսցուք մեք և վասն փափագանաց ոսկւոյն քաջապէս ընդ քեզ մարտիցուք, որպէս զի և քոյն մեր լիցի ։ Ոյ ես եթէ յաղթեցից քեզ, հռչակաւոր եղէց և մեծ Թագաւոր առ հելլենացիս և խուժադուժս, զի զայսքան զհզօր զԹագաւոր Թագաւորաց զԴարեհ սպանի ․ ապ՛ եթէ դու ինձ յաղթեսցես, ոչ ինչ քաջ գործեցեր, զի աւազակապետի յաղթեցեր որպէս որ գրեցերն առ իս ․ բայց ես Դարեհի Թագաւորի ։ Այլ և առաքեցեր ինձ ընծայս փոկ և գունդ և արկղիկ ոսկւոյ ․ դու ինձ զայս ետուր իբրև խաղ զիս առնելով, բայց ես զայս իբրև բարի նշանակ առեալ ընկալայ ։ Ո փակըս առ ի, զի խմոլ գեղարդեամբք և զինուք ծեծե-

1 ՕՕ ․ զայսքան ․ ․ զԴարեհ ։
2 Ի․ քանզի մահկանացու մարդոյ առ- ... մաստութիւն է խմ զօրութիւն, այլ ա- ... մարդկանցն իշխեսցեն ։

ցից զխուժադուժդ , իմոց ձեռօք ծեծեալ 'ի ծառայութիւն հնազանդեցուցից . և զգունդս որ նշանակեցեր ինձ , իբրև թէ զաշխարհս հասեալ կալայց յիշխանութեան , քանզի [1] գնդաձև բոլորակ է աշխարհ . և զարկղիկս [2] ոսկւոյ մեծ նշանակ ինձ առաքեցեր , զհնազանդութիւն քո ինձ տալով քեզէն զեկուցեր . քանզի յաղթեալ յինէն և ընդ իմ ձեռամբ անկեալ , խոնարհութեամբ հարկս տայցես ինձ ,, ։

ԺԸ . Այսպէս ընթերցեալ Աղեքսանդրի առաջի իւրոց զօրականացն , հաճոյ թուեցաւ ամենեցուն և գովելի . և կնքեալ ետ 'ի թղթատարսն , և զոսկին նոցա շնորհեաց զոր առաքեաց նմա Դարեհ ։ Իսկ նոցա ընկալեալ զիմաստութիւնն և [3] զմեծ խոհեմութիւնն անցեալ գնացին առ Դարեհ ։ Եւ Աղեքսանդրի զզօրականսն առեալ զամենայն և զԱսորիս և զմնաց հնազանդեալսն անցանէր գնայր յԱսիա ։

ԺԹ . Եւ ընկալեալ զգիրն Դարեհի , ընդոստուցեալ [4] յանձնանէ մեծաւ տագնապաւ գրէ առ իւրոյ թագաւորութեանն նախարարսն այսպիսի ինչ ։ " Թագաւոր Դարեհ յայնկոյս Տաւրոսի խնդալ ։ Ապաքէն ինձ յարուցեալ խաղացեալ Աղեքսանդրոս Փիլիպպոսի մանուկ , մոլեալ և անցեալ յԱսիա աւարել զիմ աշխարհ ։ Արդ դուք ջան եդեալ [5] զնա ձերբակալ արարէք , մի ինչ չար ընդ նորա անձին գործելով . զի ես մերկացուցեալ [6] զնա և [7] ծիրանի պատմուճանս և տանջանս նմա տուեալ այնպէս առաքեցից զնա յերկիրն մակեդոնացւոց 'ի գաւառ իւր առ մայրն իւր Ողոմպիադա , տալով նմա ճակգարանս [8] և կոճս ո-

1 Եւ . չէ աշխարհս բոլորակայն է և գնդային ։
2 Բ . և երկու ՕՕ . զարկղիկս ։
3 Եւ . և զմեծախոհորհրդութիւնն ։
4 Երկք ՕՕ . ընդոստուցեալ յանձնանէ ։
5 Զորս ՕՕ . ջան դրէք ։
6 ՀՀ . մերկացուցից զնա և 'ի պատ- [illegible] և [illegible] ։
7 Զորս ՕՕ . 'ի ծիրանի պատմուճանացն ։ Եւ . և ծիրանիս [illegible] և [illegible] ։
8 Ա . ճախարանս ։

րով մակեդոնացւոց մանկունքն խաղան . և առաքեմ նմա այր պարսիկ ողջամտութեան վարդապետ՝ փոկ առնելով, որ ոչ տայցէ նմա հրաման առն խորհուրդս ունել յառաջ քան զլինելն այր . և զնաւսն պատերազմի զօրս էած , հանդերձ արամբն յանդունդս ընկղմեցէք , և զգլխաւորսն զեկեալս ընդ նմա երկաթակապ առնելով տուք տանել 'ի կարմիր ծովն ընակել . և զձիս և զկարասեկիրս նոցա կալարուք , այն ձեզ լիցի և բարեկամաց ձերոց բաշխեցէք և տայցէք„:

ճժ . Գրեցին և այնց տեղեաց նախարարքն թուղթ առ Դարեհ և առաքեցին նմա , որ է պատճէնն այսպէս : "Աշտաստ և Սպանդխատար արքայից մերոյ Դարեհի խնդալ : Այսքան աղխն 'ի վերայ մեր , զարմանամք թէ զիարդ քեզ յանդէտս եղև մինչև ցայսօր . և առաքեցաք քեզ և 'ի նմանէ իսկ ազնէ զօրս գտաք առ մեզ յածեալս , ինն արս երկաթով և անդամոյլիք կապեալս , զորս ոչ իշխեցաք յառաջ քան զձեզ հարցանել : Արդ բարիոք արասցես վաղվաղակի հասանելով այսր բազում զօրութեամբ „:

ճժԱ . Զայս առեալ Դարեհի և ընթերցեալ, գրեաց և առ նոսա զայս ինչ : "Թագաւոր Թագաւորաց ինքնակալ Դարեհ , Աշտասպայ և Սպանդխատայ և որք ընդ ձերովք են այլոց զօրագլխացդ խնդալ : Յինէն մի ինչ երբէք յոյս ունիք . և եթէ 'ի բուռն առջիք դարձեալ զկորուսեալ զերիսն և զնշանաւորութեանդ ձերոյ ցուցանել թէ որպիսի ոք զազանաբար յարձակեցաւ 'ի վերայ ձեր և խուճապեաց զձեզ, որք կարեն չիջուցանել զհրընկեց բարկութիւն առն անաղատի , զահ սաստիկ ոչ կարացէք տանել . արդ զի՞նչ ունիք առել . եթէ մեռա՞ւ ոք 'ի ձէնջ մարտնչելով . զի՞նչ խորհեցայց վասն ձեր , որ զիմ թագաւորութիւնս յամօթ արարիք , պատճառս տալով առն աւազակի „:

ճժԲ . Աստանօր հարցեալ և ուսեալ Դարեհի

զԱղեքսանդրէ թէ մերձեալ է անցանել, զոյգ առ զոյգ բանակեցաւ հակառակ նմա առ գետովն Պինդարոս. և գրեալ թուղթ առաքեաց առ Աղեքսանդրոս, որ ունէր այսպէս. «Թագաւոր թագաւորաց, մեծ չաստուած Դարեհ և ազանց տէր, Աղեքսանդրի զայս ինչ ասէ. Քեզ միայն է անգէտ Դարեհի անունս զոր և աստուածք պատուեն և աթոռակից իւրեանց որոշեալ մեկնեցին. և դու իշխեցեր ընդ ծով անցանել, և ոչ երջանիկ համարեցար զի զանխուլ լեցիս 'ի թագաւորել մակեդոնացւոցն առանց իմոյս հրամանի. այլ անտիրելի՝ աշխարհ գտեալ քեզէն զքեզ հռչակեցուցեալ թագաւոր, և ժողովեալ արս նմանս քեզ աւազակակիցս, զօրաժողով եղեր 'ի վերայ քաղաքաց անպատերազմափորձ հելլենացւոց, որոց միշտ յերկիւղածաց վերայ տիրեալ էք, զորս ես աւելորդ վարկանիմ իբր 'ի բաց ընկեցեալս. և խնդրեցեր հարկս 'ի նոցանէ. Արդ համարիս զմեզ այսպիսի գոլ որպիսիս դու զմեզ կարծես. և զտեղիս զորս առեր, զորս ոչ պարծեցին ունել, չարահաւ խորհեցեալ վասն այսորիկ տեսանեմ զքեզ. քանզի նախ առաջին պարտէիր զանգիտութիւնդ քո ուղղել կազմել, առ իս տէրս քո պաշտօնեայ գալ լինել և՝ ոչ եթէ կուտել բազում քէնս 'ի վերայ քոյոցն. Այլ մինչև ցայս վայր իբր աստուած մարդկան պարտիմ թողութիւն շնորհել. վասն զի յայս զիս բախտս էած, մինչ 'ի Դարեհէ թուղթ խնդրել. գրեցի քեզ թուղթ գալ և երկիր պագանել Դարեհի. ապա եթէ զայլ ինչ հպարտ ամբարհաւաճութենէ բուռն հարեալ ունիս, յայնժամ կշտամբեցից զքեզ անձառելի մահուամբ՝ ևս չար քան զքոյդ, և քոյքդ կրեսցեն չար որք ոչ արկին զքև ողջախոհութիւն. Երդնում քեզ 'ի մեծն Արամազդ և յիմ հայրն, ոչ ևս յիշել զչարիսն քո զոր գործեցեր»:

1 Կէտ որ. տպէ։ 2 Եւ ոչ յաւելուլ քէն 'ի քոյոց վերայ։

ՃԺԳ. Իսկ այս Թուղթ իբրև ընթերցեալ եղև առաջի Աղեքսանդրի, ոչ ընդոստեալ զարթեաւ ընդ պատասխանս բանս նորա, այլ զայրացաւ և դիմեաց 'ի պատերազմ։ Իսկ ածեալ զզօրութիւնն ընդ Արաբիա 'ի դաշտն և Ճակատեցաւ[1] դէմ յանդիման անդր Դարեհի։ Իսկ դարեհեանքն իբր տեսանելով զԱղեքսանդրոս եկեալ ածեալ 'ի վերայ նորա զզօրութիւն զօրականին, կարծեցեալ գերանդաւորն կառօքն ընկրկել, և ապա յառաջագոյն ժամանեալք զգաւ 'ի կող տեղւոյն հասեալ կալան. և դէմ յանդիման անցեալ կացին կառքն, և զբոլոր կռուաճակատն[2] յարդարեալ կազմեցին. և գնդին հեծելոց ոչ ետուն թոյլ անցանել ընդ մէջ իւրեանց և ոչ զօրօք 'ի վերայ խաղալ. այլ բազում կառացն ամենայն ուրեք պատահեալ ապականեալք լինէին, և էին որք քայքայեալք ցրուէին։

ՃԺԴ. Անցեալ 'ի միւս կողմն Աղեքսանդրոս և արարեալ հանդէպ սոցա զպարուց[3] կողմն, և զաջոյ դեհն դէպ եղև կազմել Աղեքսանդրի. և[4] ելեալ յերիվարն ցլագլուխ և հրամայեաց հանկրիճիլ փողահարացն, ազդ առնել պատերազմական փողօք զպատերազմն նշանակել առ 'ի զարթուցանել զգումարեալ գունդն 'ի յազմուկ ռազմին. որ և հնչեցեալ փողքն և աղաղակ մեծ եղեալ զօրացն՝ շարժեցան յանհաշիւ և 'ի մեծ և 'ի բազում կռիւս. և դղրդէր առ հասարակ։ Իսկ մեծաւ հանդիսիւ բախեալ զմիմեանս 'ի հանդէս մարտին մեծ ժամս, 'ի գլուխ թևոցն հարեալ[5] ընդ միմեանս բուռն և մեծաւ ուժով ընդ միմեանց դէմ կային նիզակօք։ Որ և աստանօր երկո-

1 Զորս ՕՕ. Ճակատեալ կամ Ճակատեցաւ։

2 Այսպէս բառ միոյ օրինակի։ Բ. պատերազմական ձաղկաւն։ Զորս ՕՕ. [illegible] կամ [illegible] յայլս չիք։

3 Հ. զպարտաւոյ կողմն։

4 Հինգ օր. և հեծեալն 'ի մի [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։

5 Երկու օր. հասեալ։

յունց կողմանց յաղթութիւն արարեալ մեկնեցան 'ի միմեանց։

ՃԺԵ. Իսկ աղեքսանդրացիքն մղէին զդարեհացիքն և մեծապէս խորտակեցին. և խառնեալք ընդ միմեանս, անկեալք և խորտակեալք վասն բազմութեան զօրացն. և շատ այն ինչ էր որ յինքեանց անցս կրէին, և բազում ինչ որ 'ի թշնամեացն։ Եւ ոչ այլ ինչ էր անդ տեսանել, բայց միայն 'ի վայր անկելոցն. զի ոչ գոյր որոշել ոչ զպարսիկս և ոչ զմակեդոնացիսն, ոչ զզօրագլուխ և ոչ զնախարար, ոչ զհեծեալ և ոչ զհետևակ 'ի բազում փոշւոյն. քանզի ոչ երկինք երևէր և ոչ երկիր տեսանէր մարդ 'ի բազում եղելոյ ապաժուժին։ Եւ ինքն իսկ արեգակն վշտակից եղեալ ընդ անցեալ իրս՝ չկարացեալ տեսանել զայնքան հեղումն արեանցն՝ ստուերացեալ ամպով ծածկեցաւ։ Եւ հզօր գլման եղելոյ 'ի փախուստ դիմեցին զօրքն Պարսից. ընդ նոսա էր և Ամինդաս անտիոքացի որ փախուցեալ անկանէր առ Դարեհ, զի յառաջ ժամանակս մակեդոնացի էր և օգնէր։ Եւ ժամն ընդ երեկս կոյս էր խոնարհեալ. Դարեհի երկուցեալ զկառսն 'ի բաց թողոյր զի դժուարին էր, վասն զի առաջոյ դիւրեաւ գիտելի էր՝ զկառսն թողեալ հեծեալ[1] փախեաւ։

ՃԺԶ. Իսկ Աղեքսանդրոս առաւել քաջութիւն վարեալ, զհետ երթեալ Դարեհի հալածէր և ուր ասէ ոք թէ անդ է. բայց կառացն և մօրն և կնոջն և որդւոցն իբր ասպարէզս վաթսուն հալածեալ եհաս։ Բայց զնոյն ինքն զԴարեհ գիշերն ապրեցոյց. և առ այսոքիւք ձի կալեալ բազում և [2]նոր համդոյ 'ի համդոյէ փախչէր։ Եւ մակեդոնացիքն հասեալ 'ի կողմն Պարսից բանակէին. և մէջ գիշեր եղեալ 'ի վերայ դիականցն օթագանէին։ Եւ Աղեքսանդր

1 Ա. 'ի փախ[illegible]։

2 Բ. Եւ նոր 'ի նոյնս փախուցեալ [illegible]։

հասեալ 'ի վրանն Դարեհի էջ և 'ի նմա մնեալ բնակեաց։

ճժէ. Եւ յաղթեալ հակառակորդացն, և այսքանոյ պատուի հասեալ 'ի վերին խնամոցն, ոչ ինչ ամբարտաւան գործս գործեաց. այլ զօրաւորագոյնս և զազատ արս զմեռեալս հրամայեաց թաղել. և զմայրն Դարեհի և զկինն և զմանկունսն ընդ իւր եած պատուով. սոյնպէս և զայլ ևս մնացորդ գերիսն մխիթարեաց։ Եւ անկելոց մակեդոնացւոցն էր յոյժ, հետևակք հինգ հարիւր և յիսուն, և հեծեալք հարիւր և վաթսուն, և վիրաւորք յոլովակի քան զհարիւր և զվաթսուն։ Եւ 'ի խուժադուժ ազգացն վախճանեցան բիւրք երկոտասան։ Եւ զառ զապուր և զաւարն ժողովեաց դահեկանաց չորս հազար քանքարոյ։

ճժը. Իսկ Դարեհ ճողոպրեալ, դարձեալ զօր ժողովեալ խաղաց 'ի վերայ Աղեքսանդրի, և յոլով և զօրութեամբ քան զառաջինն. և գրեաց թուղթ որ ընդ ինքեամբ ազինք էին, որպէս զի բազում զօրութեամբ պատրաստք լինիցին։ Եւ ուսեալ ուրումն լրտեսի Աղեքսանդրի եթէ ժողովեաց Դարեհ զօրս 'ի վերայ գետոյն Եփրատայ և զբանակս խուժադուժ ազգացն անդր բնակեցուցեալ, գրեաց Աղեքսանդրի վասն առաջիկայ իրացն։

ճժթ. Եւ գրէ Աղեքսանդրոս։ "Սկամանդրայ իմոյ զօրականի խնդալ։ Ընդ քեզ զգունդդ և զզօրութիւնդ զոր ունիս, 'ի մօտ լեր առ մեզ. քանզի ոչ հեռի ասին թէ են խուժադուժքն "։

ճի. Եւ ինքն իսկ Աղեքսանդրոս առեալ զիւր զօրութիւնն անցանէր գնայր յԱքայիա. և հասեալ անդր բազում քաղաքս հնազանդեցոյց. և անդուստ զօր ժողովեալ բազմութիւն իբր բիւրս եօթն և տասն, և որ [1] հուպ էր Կերատոնն որ կոչի Տաւրոս՝

1 Բն. որ հեռաց էր Կերատոնն եւլի. և չէր 'ի յոյն և 'ի լատինն։

հարեալ զնիզակն մեծապէս յերկիր ասաց. Եթէ որք հզօրագոյն 'ի Հելլենացւոց կամ 'ի խուժադուժ ազգաց կամ յայլոց թագաւորաց բարձցէ զնիզակս զայս, անձին չար նշանակ է. քանզի քաղաքն նորա 'ի հիմանց բարձեալ լիցի։

ԾԻԱ. Եւ եկեալ հասանէր 'ի Պիերիս[1] քաղաք բեբրիկեացւոց, ուր էր տաճարն և պատկերն Որփեայ և պիերիդեան երաժշտն և գազանքն որ առ նմա անցեալ կային. և հայեցեալ Աղեքսանդրի 'ի նա, քրտաց[2] պատկերն Որփեայ յերեսացն և յամենայն մարմնոյն։ Եւ խնդիր արարեալ Աղեքսանդրի թէ զինչ կամի նշանակ քրտացն գոլ, ասաց նմա Մելամպոս[3] նշանագէտն՝ եթէ աշխատութեամբ աշխատ լինելոց ես, ով Աղեքսանդրէ, հանդերձ քրտամբք և երկովք զբարբարոսաց ազինս և զհելլենացւոց քաղաքս, և ընդ գազանաց անցս երթալով. որպէս Որփեայ քնար հարկանելով և երգելով զհելլենացին հաւանեցոյց, և զխուժադուժս ցանկութիւ զուարճական բանիւ գլեաց, և զգազանս ընտանեցոյց։ Նոյնպէս լուեալ Աղեքսանդրի զնշանակն՝ պատուեաց զՄելամպոս նշանագէտ։

ԾԻԲ. Եւ եկեալ հասանէր 'ի Փռիւգիա. և մտեալ 'ի նոյն ինքն յԻլիոն քաղաք զոհեաց Եկտորի և Աքիլլեայ և այլոց դիւցազանց։ Եւ տեսեալ զԱկամանդրոս գետ ընդ որ վազեաց Աքիլլեւս, զի և հինգ կանգնոյ ոչ էր լայնութիւն, և զվահանն Այանդեայ[4] զեօթնկաշեանն՝ ոչ կարի մեծ և ոչ այնպէս սքանչելի և զարմանալոյ արժանի որպէս գրեաց Հոմերոս, ասաց Աղեքսանդրոս. Երանի է ձեզ որ գիւտեցայք այնպիսի քարոզի Հոմերոսի. [illegible][5] որ

1 Այլ օր. Ի Պիերիս. ուղղեցաք [illegible] բստ յաջորդին։
2 Զօրս ՕՕ. [illegible] կամ [illegible] կամ [illegible]. և զկնի Բէ [illegible] [illegible] կամ [illegible]
[illegible]։
3 Բ. Մելամպոս. և զկնի։
4 Բ. Այանդեայ։
5 Հատուածդ [illegible] որ [illegible] [illegible] մինչև [illegible] քանզի ապա

զինչ և էին, 'ի նորա ժերթածան անցեալ և ընդ վեհան գրե-ցայք, յարդեանցն վրէպք առ 'ի նմանէ գրելոյն: Եւ մատու-ցեալ ժողովրդոցն ասէ ցնա. Աղէքսանդր, քան զՀռոմայեցիս որ զեօթն հազարամն երթեալ, լաւ են գրեալք մեք զարդարս քո: Եւ-նա ասէ. Ընչայն է ինչ 'ի Հռոմայեցւոց պատմութեանն Թեսա-ղէս գոլ, քան 'ի ձեռս Սքեղքէ: (Յայս վայր ' աղէկից ելանեմ և վառարանեալ մայրն Ողոմպիա, զինի հայանից ընդ-լոյ ընդ նմա յառաջարկէ 'ի նմանէ 'ի Մակեդոնիա հանդերձ զաւ-

*կամէր յամենայն ընդարձակ օրէ-նսական մեր, և 'ի համառօտն գեղ-ջկայ, և յերկրայականն թերատ և ոչ ճշգիւ միարան, որպէս ասացին 'ի սորա, համարձակեցաք նորոգ թարգմանութեամբ 'ի յունէն լրա-ցուցանել առ ոչ ածելոյ զպատ-մութիւն և յօդել ընդ յաջորդ հա-տածին: Այլ զի և յոյնն թերակա-տար էր և ուրեք ուրեք խանգա-րեալ, 'ի լատինականէն Վալերիո-սի փոխ առաք, փակագծիւ նշանա-կեալ զհատածս նորա. թէպէտ և չէն ճշգիւ ընդ միմեանս միաբանք:*

1 *Փոխանակ վաղերեան հա-տուածիդ յոյնն ասէ.* Եւ էկեալ ան-դէ 'ի դուռն և ծածկեալ լարէն զի-րն զմակեդոնացւոց զօրսն, որոց յաղ-թահարեալ էր 'ի պատերազմին զԴարեհ, ճանապարհ առար յԱֆրիկէ:

*Իսկ մեր ՀՀ. անուն մինչև ցկա-տարած նորոգ թարգմանեալ հա-տուածոյս այսչափ ինչ ունին.* Եւ-կերեալ հայ ընդ մօրն Դարեհի և անց 'ի Մակեդոնիա հանդերձ զէրեօքն զօր-էա 'ի Դարեհէ. և ճանապարհ յԱֆ-րիկէ արար: Եւ աֆտերացիք թագեցին զօրսն. և Աղէքսանդր հրամայեաց հրէից առնել. և նոքա աղաչեցին ա-ղաւնա' թէ ոչ իէր թշնամի էղաք. այլ 'ի Դարեհէ երկնչէաք. զի յետ գնալոյ քո առար հարկանել զմալաքս մեր. զի մեք հպատակեալ ծառայեմք. թէ զԴա-րեհ պարտեա, քո եմք ծառայք: Եւ ար-քայն հրամայեալ ընդ նոցա հանձարս, և անցեալ անտի գայ հասանէ 'ի Թիւրոս. և զԹուլոր Սղինթոս ասպարեզ. նոյնպէս և զսաղաքս քաղաքացւոյ: Եւ անդրստոյ

գնայ զօրօք և բնակեցա աս Եւ քա-նոս գետոյն և զամենայն հնազանդե-ցոյց. և զանս մարդասպանս կալեալ զօր-կերին և գնայ: Եւ պատահեալ անդ յամն և ածխարհին 'ի զօրն և 'ի սահ-մանն, և հրամայեաց զկին զինուորն ա-ռնել, զի մի առնման լինին. որ ածելը-ադրեցան. զի ասէ. Թէ մարդ կենդանի իցէ, կորէ և զգանէ զեղս և յիս և ադրանս. ադա յետ մեռանելոյն ուխտ են երկնչորոն: Եւ անդ էին առ զկ-րային. և այլն:

*Ի հատուածեդ զայս ևեթ ունի Ե. օրինակն.* Եւ կերեալ հայ ընդ մօրն Դարեհի և նաւեալ անց 'ի Մա-կեդոնիա հանդերձ գերեօն զօր գերեալ 'ի պատերազմին Դարեհի. և թագեալ անդ զմեծայն գերին, և իւր եւ դար-ձեալ դառնալ յաշխարհն արաբացւոց. որ է արաբիայ. և ճանապարհ դէպ առ Յեւքանս յԱֆրիկէ քաղաքն արար. և աֆ-տերացիքն թագեցին նմա զզօրսն և ոչ էպրան մտանել: Իսկ Աղէքսանդրոս բար-կացեալ հրամայեաց այրել զքաղաքն. և նոքա աղաչէին դեգան և ասէին. Մեծ ու թէ զսէզ արհամարհելով թագեալ զզօրսն, այլ 'ի Դարեհէ երկեա. թէ հնազանդեալ կայ յետոյ թագաւորութեան, և յետոյ մեզ լեալ ասէ վան զսեզ ընդդանելոյ: Այդ թէ դու քաղաքին մեր բանաս, մեք հզօր թագաւորի ծառայեմ եմք, թէ դու ես և թէ Դարեհ: Եւ զայս լուեալ Աղէքսանդրոս ասէ. Թէ վան այնորիկ թագեցէք, ապա գնացէք բացէք և կացէք խաղաղութեամբ. զի ես այժմ ոչ մտանեմ 'ի քաղաքդ ձեր մին-չև հարից զԴարեհ. և դուք յայնժամ հնազանդ լիցիք ինձ:

[illegible] գերեալն . և [illegible]
[illegible] ճանապարհ առնէր ։

ԺԻԴ. Եւ զայս [illegible] ժողովն [illegible] ) ։ [illegible]
[illegible] Աղեքսանդր և հռոմայեցւոց զօրավարաց [illegible]
[illegible] ։ Իսկ նոցա դեսպանս առաքեալ առ նա և ասեն .
[illegible]

ԺԻԴ. [illegible]

[illegible] կորուստ մատնեցելոց 'ի սոսկս, այլ զմակեդոնացիս այժմ ուր կարացից գտանել:

ԾԻԵ. Եւ յապահովացուցեալ զզօրսն՝ Ճանապարհ դէպ ուղիղ առնէր յայլ քաղաքսն: Եկն առ լոկրացիսն և հանգեաւ անդ զօրօքն օր մի: Եւ յուղարկեալ զամենայն ինչ զոր ունէր, եկն յակրագանթինացիսն. և մտեալ յԱպողոնի մեհեանն աղաչէր զամբծախօսն մարգարէանալ նմա: Եւ նա ասէ, ոչ է առնել նմա պատասխանի 'ի գիտանոցի՝ նորա: Եւ բարկացեալ արքայն ասաց. Եթէ ոչ կամիս ինձ գէտս պատմել, բարձեալ գնացից և ես զեռոտանիս զոր Կրիսոս եղիւրգացւոց թագաւորն նուիրեաց, որպէս Հերակլէսն երարձ գնաց՝ յաստուածոցն հրամանն պատասխանւոյ առնել նմա: Եւ զայս ասելով երարձ գնաց զամբծախօսն և զեռոտանին զոր Կրիսոս թագաւորն նուիրեաց: Եւ եկն 'ի սանդարամետականէ ձայն առ Աղեքսանդրոս այսպիսի ինչ. Հերակլէս, Աղեքսանդրէ, զայս ինչ արար՝ աստուած յաստուածոյ. բայց դու մահկանացու ես, աստուածոց մի ընդդիմանար. զի գործք քո մինչև յաստուածս խօսեցեալ լինին: Այսպէս ձայնին եկեալ ասաց ամբծախօսն գէտ. Աղեքսանդրէ, նոյն ինքն աստուած մարգարէացաւ քեզ՝ կոչեցեալ զքեզ հզօրագոյն անուամբ. քանզի գոչեաց յանդնդոց Հերակլէս Աղեքսանդրէ, զայս քեզ յառաջագոյն զեկուցանեմ, զի հզօրագոյն քեզ պարտ է լինել քան զա̃մ ոք:

1 Մի օր. 'Ի [illegible]:

2 Բ. խանգարեալ էր. այլ ՕՕ. [illegible] ուղղեցաք ըստ նախընթացին համեմատ լատինականին Վալերիոսի. ուր Թերի է յոյնն:

ՃԺԶ. Աղեքսանդրոս առեալ զզօրսն և Ճանապարհաւ անցեալ գնաց 'ի Մեդիայիս, և խնդրեաց 'ի նոցանէ զինուորս քաջս արս չորս հազար, և զհարկսն։ Իսկ Թեբայեցիքն ախեցին զդրունսն և ոչ հրեշտակ անգամ առաքեցին առ նա. այլ դէմյանդիման Ճակատեալք զինեցան ընդդէմ Աղեքսանդրի։ Իսկ ելեալ 'ի վերայ պարսպին զինուորք հինգ հարիւր ձայնեցին առ Աղեքսանդր և ասեն, եթէ կամ պատերազմ տուր կամ 'ի բաց գնա 'ի քաղաքէս։ Իսկ Աղեքսանդրոս ծիծաղեալ այսպէս ասաց. Ով քաջ Թեբայեցիք, զի՞ արդելեալ փակեցիք զձեզ 'ի ներքս 'ի պարսպիդ և արտաքոյ հրաման տայք կռուել. նա և ես վասն կռուոյ եկեալ եմ, և կռուեցայց ընդ ձեզ ոչ իբրև առ քաղաքս և քաջարս և հմուտս պատերազմական արդ, այլ իբրև առ գեղջուկս և ագէտս և կարի երկնչոտս. քանզի ահա զամենեսին նիզակակուր հնազանդս ունիմ. արդ դուք զանձինս արգելեալ փակեցիք ընդ պարսպօքդ, և արտաքոյ յօդական ձայն արկանէք. քանզի քաջաց արանց է յաղատ և յարձակ դաշտի կռուել, և կանանց գործ է արգելուլ և փակել զինքեանս յերկիւղէ առ հանդերձեալ կռուոյն։

ՃԺԷ. Զայս ասացեալ հրամայեաց հազար հեծելոց շուրջ ընթանալ արտաքոյ զքաղաքաւն և նետիւք խոցոտել 'ի վերայ պարսպացն. և այլ հազար զօրականաց հրաման ետ կացնօք և երկաթի սակրօք և երկայնահատ մրճօք և երկայնագոյն նգօք փորել զհիմունս։ Իսկ զայն որ յԱմփիոնայ և 'ի Զեթոսէ եղբարցն 'ի քնարէ յարմարեալ պատկանեցան քարինքն, նդախարխար առնելով 'ի վայր արկանել։ Իսկ կոչեցեալ խոյն մեծաւ բռնութեամբ յեցուցանել առ պարսպացն քակտումն. և է այս գործ 'ի մեքենայէ անուաւոր յերից զինուորաց բռնի մղելով տանել, և 'ի հեռուստ արձակեալ լինի առ պարիսպն, և դիւ-

րաւ յանդուգն յարձակմամբ զկարի քաջ հօծեալս և զյարմարեալ որմունս 'ի բաց քակեալ ընկենուլ ։ Եւ ինքն այլ ևս հազար պարսաւորօք՝ սպառնանելով 'ի բաց բրել ընկենուլ զԹեբայս շուրջ զայր ամենայն ուրեք ․ հուր սուր և քարինք և նետք և տէգք ձգեալ լինէին 'ի քաղաքն ։ Բայց ձեռն կարկառ՝ մակեդոնական ոչ վաստակէր զբազմախողխող երկաթն արեամբ արբուցանել ․ անօգնականք Թեբայեցիքն մօք կոյրք՝ յԱղեքսանդրէ կորուսեալք լինէին[3] ։

ԺԻԸ ․ Եւ յայնժամ Իսմենիաս ոմն Թեբայեցի փողոյն նուագաւոր երգոց տեղեակ և այր իմաստուն բարուք՝ տեսեալ զԹեբայեցւոցն կործանեալ և 'ի հիմանէ խլեալս և զամենայն հակառակս սատակեալ , հեծեծեալ դառնապէս 'ի վերայ հայրենի գաւառին իւրոյ , և 'ի ձեռն այլոցն հմտութեան քաջ լինել , սկսանի և ընդ միտ ածէ զփողոն բառնալ , և առ ոտս

1 Բ․ խանդարեալ էր․ այլ ՕՕ․ [illegible] ։ Ի․ [illegible] ․ Թերի էր և յոյն , եդաք ըստ լատ ։

2 Մի Օ․ [illegible] ։

3 Զօր ընդարձակ օրինակքս զնի Իսմենիայ նուագացն և բասպառնական բանիցն Աղեքսանդրի առ նա նկարագրեն զպատառապատուքանդումն Թեբայ , զորմէ տեսցի յէջ 71․ ՀՀ և Ի առա գնեն համաձայն լատինականին ․ այլ ամենեքին անհամաձայնք իւրեանց և ընդ մերոյն ։ Արդ թողեալ զլատինն որ 'ի սակաւ բանս ամփոփէ զխնդուն , գիցուք ստորանօր զոր ինչ ունին երկասեսակ օրինակքն ։

ՀՀ․ (Հռոմէն էջ) [illegible] և այլն ։

Ի․ [illegible] և այլն ։

թագաւորին 'ի ծունր իջեալ և ողորմագին լինի և գորովալի և սրտաբեկ նուաղ՝ երգելով, զի 'ի ձեռն փողոյն աղաչելոյն և զաշխարանսն երգելով կարասցէ յողորմութիւն ածել զսիրտ թագաւորին ։ Իսկ որոշեաց Իսմենիաս երգս բարոյական[2] և բանս քաղցրալուր մատուցանել հզօրին. և զձեռնն կարկառեալ՝ բազում արտասուօք սկսանի ասել այսպիսի ինչ տաղս գորովալի և երգս աղետականս ։

## ՆՈՒԱԳՔ ԻՍՄԵՆԻԱՑ ԱՌԱՋԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼԻՆ

ՃԻԹ. Թագաւոր և զարմ աստուածոց, շքեղ և գեղեցիկ Աղեքսանդրէ. այժմ փորձիւ ուսայց զքո համգիտապատիւ[3] աստուածզօրութիւնդ. և պատուեմք այսուհետև իբրև զաստուածս բարերար ։ Արգել զանպարտելի զձեռնդ 'ի Թեբայեցւոց. զի մի գուցէ ոչ գիտելով Թուեսցիս առ ընտանիս և ազգակիցս քո ամբարշտել ։ Վասնզի Դիոնեսիոս և Հերակլէս Թեբայեցիք և փառաւորք, նա և նախնեաց մերձաւորութեան խառնից[4] սկզբնասեր բողբոջք. Արամազդայ և Սեմելեայ հրագիղ[5] Դիոնեսիոս ծնեալ եղև, իսկ Հերակլէս յԱրամազդայ և յԱլկմենեայ սերմանեցաւ ։ Սոքա ամենայն մարդկան օգնականք և խաղաղականք, փրկութեան պահապանք երևեցան և քո են նախահարք, ո՛ յաղթող Աղեքսանդրէ. սոցա ընութեամբ պարտ է քեզ նըմանել և բարերար լինել ։ Իբր աստուածոյ ծնեալ զարմ մի՛ անտես առներ զԴիոնիսեայ և զՀերակլեայ դայեակս զԹեբաս 'ի կորուստ մատնելով. և մի՛ զգուարակաշէն քաղաքս կործաներ, քանզի նախա-

1 Այլ ՕՕ. ծունր իջելով։
2 Զորս ՕՕ. ողորմական կամ ողոքական ։
3 ՕՕ. հանգէտապատիւ ։
4 Այլ ՕՕ. խոսից ։
5 Այդպէս մի Օ. որպէս զբուցեն առասպելք հրակէզ լինել ընդ Սեմելեայ։ Իսկ այլ ՕՕ. հրագիղ։

տինք յետոյ մակեդոնացւոց եղիցին ։ Յանդգնես լինիս , Աղեքսանդրէ , զի Թեբայեցի ես դու և ոչ պելլացի . բոլոր զքեզ Թեբայեցւոց աշխարհս աղաչէ , զքո նախարարս բերելով զաստուածսն հնծանեան փողաւորի Դիոնեսի ուրախութեամբ և պարուք . որովք Հերակլէս արդար գործովք և օգնականութեամբք[1] մարդկան ։ Արդ նմանող եղեալ քոյոց նախնեացն բարեացն և քաջացն՝ ՚ի յոլովակի բարեգործութիս շրջեալ դարձո զքեզ՚ի բարկութենէդ . պատրաստ առ ձեռն քան զսատակելն զողորմելն կալ։ Մի՛ առներ անապատ զքեզ սերմանողս աստուածս քոյոց ծննդապետացն . մի՛ քակտել կործաներ զքաղաքս քո զսեպհական գաւառ , և մի՛ անգիտութեամբ բրեր՚ի հիմանց զայսպիսի պարիսպս շինեալս ՚ի Զեթոսէ և յԱմփիոնայ . վասն զի երգով և նուագաքնարի դու Արամազդայ որդի զոր գաղտուկն ծնաւ հարսնն Անտիոպեայ դուստրն՚ի պարս մոլեալ ։ Զհիմունս զայս և զմեծամեծ շինուածս աշտարակաբար շինեաց Կադմոս ։ Սա առնու հարսն զԱրմոնիաս զոր ծնաւ փրփրածինն[2] Կիւպրոս ընդ կշտագողին Թրեկիկացւոց խառնակեալ ։ Զքո անդաստանս մի՛ առանց հասանելոյ ՚ի վայր աւերեր , և մի՛ բոցակէզս առներ զամենայն պարիսպս Թեբայեցւոց ։ Նաւաւորի Լաբդակայ է տունս այս . աստ արար կին չար դէն , և Թշուառական զհայրասպանն զԻդիպոս ողորմելի և վշտագին մայրն . այս Հերակլեայ մեհեանն էր , բայց նախկին Ամփիտրիոնայ տուն էր . սա տըրտրնջեաց երիս գիշերս Արամազդ ՚ի մի Թուեցեալ[3] ։ Տեսանես զայնս շրջանակի բոցակիզեալ տունսն՝ որ տակաւին ՚ի վայր կաթեն զերկնի զքէնն . անդ զփա-

1 Այլ ՕՕ. օգնականութեամբ կամ օգնականաւ ։

2 Զոր ՕՕ. վերպակաւ առեն [illegible] ։

3 Զոր ՕՕ. [illegible] ։

փագելին՝ յորում տափեալն էր՝ հարկանել զՍեմելէ երբեմն Արամազդ։ Ահա հրոյս 'ի մէջ զհռափիոլ-տայլին ծնաւ զԴիոնեսիոս հնծանեան. աստ Հերակլէս մոլեգնոտեցաւ. աստուստ և Հերակլէս ելեալ մոլորութեամբ սպան զՄեգարա զկինն և զմանկունս խոցոտեաց նետիւք։ Այս բագին զոր տեսանես Անահտայ բարձրաձեղուն շինեալ, որոշեալ է բագին հին, յորս և Հերակլէտ, յորում և Հերակլէս պատմուճան յԱրկադայ կարելով մաղաղեցաւ ձեռօք Փիլոքտետեայ յարեան՝ վիշապին։ Այսքիկ են անբիծ անարատին բանք աստուածաբարբառք Տիրեսեայ տունքն, որ երկցս ազգաց և դարուց։ Աստանօր լինի գետն զոր 'ի կին շրջեալ կերպարանեաց Տիրեսեա՝ յԱթամաս մոլեալ. աստանօր զմանուկ զիւր զԼեարքոս նետիւ եսպան յեղնորթ տպաւորեալ. աստանօր 'ի նաւ վազեալ անկաւ յանդնդային ալիս հանդերձ Մելիկերտաւ մանկամբն 'ի կատաղոյն։ Աստուստ կոյր Եդիպոս 'ի բաց հալածեցաւ հրամանօք Կրեոնեայ, որոյ ցուպն պատերազմ շինէր. և այս գետս որ 'ի միջի Կիթերոնիս է, յԻսմենոսէ[3] մոլեկան ջուր բերելով. եղատէն զոր տեսանես 'ի բարձր վերացեալ ոստովք, աստանօր Պենթեւս ըղՊանթեւայ զպարսն կամեցեալ տեսանել, 'ի ծնող մօրէն Թշուառականն յօշ յօշ կոտորեցաւ։ Նաղան տեսանես որ խջուցանէ արինադոյն ջուր, զկնի որոյ զուարակի դժնդակ գոչիւն հնչէ. այս վտակ է գարշեցելոց[4] գրկաց։ Տեսանես զայն զողորկ զԼիկայ զկինն, որ զերկայն զլեառն ունի իւր ձեմարան. առաջ այս մեր Սփինքս, յորում կապեալ ծրարեցաւ հրաշաւորի խառնուած, գործելով 'ի մէջ ժողովրդոյ խեռաստամբակութիւն, զոր Եդիպոս սպան բազում

1 ՕՕ. յորէս կամ յորայ կամ փերակն ուժեր։ յարախնեադի։
2 Զօրս ՕՕ. տրէտոնեան.. դա-
3 ՕՕ. Իսմենոսէ։
4 Բ. թարմնչելոյ։

հոգս հոգացեալ։ Այս աստուածոց աղբիւր է և սքանչելի աւազան ջրոց, յորմէ համանգամայն բխեն՝ գեղեցիկ նահանգք և վտակք, Արտեմիս իջեալ լուացեալ զմարմինն և սրբեալ պայծառանայր. սա սուրբ Աքոլեան զոր ոչ է պարտ և արժան ասել, եթէ զլոգարանսն Պետովայ. որոց փոխեալ յեղն մարմինքն ՚ի շանց գիշակերաց[2] վասն լոգանացն որսացեալ եղև. իսկ մանկունքն պատերազմետուն ընդ Թեբաս։ Աստուստ Պողինկէս եած զարգիացւոց ժողովուրդն զօր արդնակիր զեօթնեւանդն գգետն. աստանօր Կապպանեւս առ պարիսպս բոցակէզ եղև. և զդրունս զայսոսիկ կոչեն Էղեքտրաց, և ընդ դրունս ելանեն պախս և ընդ անվթարս, զԱմփիարեւոս բացեալ եկուլ երկիր ուղիղեան երիվս[3] աղխեալ դրամբք. զՏիւպոմենդոսէ զՏիպոսթենայ որդի սպանանէ անկեալ ՚ի ձեռս աւազակաց առ դրունս այսորիկ։ Պարթենեպոս յորժամ յերկիրս եկն ՚ի դրունս յայս բիւր սատակիչ անուամբ կոչեցաւ։ Քաջալերեալ Տուդեւս[4] կալկդոնացի անց եկաց. աստանօր Պօղենիկէս և Ետէոկլէս ընդ միմեանս հարան. աստանօր Ադրաստոս[5] փախեաւ և մնաց։ Այս դրունք և քաղաքս Թեբայեցւոց Թաղեաց զզարմանապետս արգիացւոց[6]։

ԾԼ. Այսքան[7] Իսմենիաս աղաչեաց զարքայ և գեղձեցաւ, խոնարհեալ առ ոտս Աղեքսանդրի։

ԾԼԱ. Աստանօր բարկացաւ Թագաւորն Իսմենիայ երգչի, զի կարի բազում առասպելօքն նեղեաց. և ՚ի նմա յերկար զակն կառուցեալ և զատամունս կրճ-

1 Ա. [illegible]։

2 Բ. [illegible]։

3 Երկու ՕՕ. [illegible]։

4 Բ. [illegible]։

5 Զորս ՕՕ. [illegible]։

6 ՀՀ. զորս զնուագան Իսմենիայ զանց արարեալ, ասեն [illegible]։

7 Ա. [illegible]։

տեալ, լի ցասմամբ և բարկութեամբ ասաց այսպէս. Նռասպէս, ով ամենաչար ծնունդ կադմէացւոց, ով չարավիրագ բոյս Թշուառական արմատոյ, ով ամենաչար մարդ և ատելի աստուածոց, ով Իսմենիաս նշխար տրտմութեան, կայր աչաւ՛ եւ և մօրք. Հանճարականս լինչ և սնեղծեալ առասպելս ասելով կարծեցեր մոլորեցուցանել զԱղեքսանդրոս. զի եթէ զամենայն քաղաքս քակտեալ աւերեցից և հուրբ մաղեցից[2], զնահապետացն մոխրեցից զարմատս: Քանզի եթէ դու ճանաչես զիմ սերումն և թէ ուստի բնաւորեցայ և որք են ծնողքն իմ, ոչ էր քեզ պարտ քարոզել զայս Թեբայեցւոց եթէ մեր ազգակից է Աղեքսանդրոս. մի առ քաղաքակիցն մեր պատերազմեսցուք. տացուքն մա զօրաւիգն զօրաց. օգնական լիցուք մերոյ քաղաքացւոյ և ազգակցին Աղեքսանդրի. փառք է մեզ և հաստատութիւն արմատոյս, եթէ մակեդոնացիք խառնեալ միաբանեսցին ընդ Թեբայեցիս: Բայց յորժամ 'ի վրէժխնդրութիւն անձանց ձերոց ոչ կարացէք ժուժալ կամ ձեռնհաս լինել, քանզի քաջալերութիւն կռւոյդ ձերոյ ամօթ խօթ եղև, յայնժամ փոփոխումն և խնդրուածք և աղաչանք անպատ և յիմար. կամ ոչ կարացեալ միտս ունելով ընտրել[3] կամեցեալ զպատիւ, կարէք 'ի կռիւ ընդ Աղեքսանդրի: Այլ ոչ Թեբայեցւոց և ոչ քեզ լաւ է այս. քանզի[4] կատարածին երևեցելոյ զնոյն լինքն զԹեբաս 'ի նոյն ժամայն վաղվաղակի բոցակէզ արարից. իսկ զԻսմենիաս զքաջն փողահարաց կիսակէզս արարից, զի տանցն վերակացու և օգնական էր: Այսպէս հրամայեցից զերկուորեակ փողոցն հնչիւն զխոլտեան զառուսն նորա պարծեցեալ ասելով:

ՃԼԲ. Այս հրամայեաց զօրականացն բրել և 'ի

1 Զորս ՕՕ. [illegible]. յորոց մին 'ի [illegible]:
2 Այսպէս ՕՕ:
3 Զորս ՕՕ. [illegible]
4 Բ. [illegible]:

վայր արկանել զեօթնադռնեան պարիսպն զքաղաքին Թեբայեցւոց, և՛ դարձեալ Կիթերոնի պատսպարելով Թեբայեցւոցն . և նոյն ինքն Իսմենիաս արեամբ Թօթափեալ հոսելով յինքենէ . և անկեալ դնին պարիսպքն և քաղաքս Թեբայեցւոց . և առ հասարակ ամ̃ խողխողմամբքն վշտացեալք և քանդեալ դնէին պարիսպքն : Բազում լալիւն և խիստ [2] կականումն և յագւոց հանել և աշխար առնել զօչէին մանչելով : Իսկ Իսմենիաս զերկուորեակ գործեացն զհնչիւն փողոցն պատկանեալ յարմարեալ՝ զտամալոյն [3] կայր, որպէս հրամայեաց մակեդոնացին փող հարկանել որ զԹեբայեցւոցն իբս ահա Դիոնիսեայ , վասն որոյ պարիսպքն ամենայն անկան կադմէացւոց, և ապարանքն Լիկայ և Լաբդակայ տունքն՝ 'ի բարեպաշտութ̃ի երկրի յառաջագոյն խրատու . զՊինդարոս [4] եբարձ . և եԹող անվնաս զաշտարակն, յոր եկն մինչդեռ մանուկ էր , և ունէր հմտութ̃ի երաժշտականութեան առ քնարահնարութիւն [5] , ալևորն եկեալ զբազում զօրս 'ի գաւառին խողխողեաց , և սակաւս եԹող ամենևին դեռ ևս կենդանիս, և զանուն ազգին նոցա 'ի բաց ջնջեաց . քանզի Թեբաս , ասաց , ոչ ևս կոչել, այլ անքաղաք զնոցա քաղաքն լինել իբրև անօրէն գոլ զայսպիսի մարդն : Եւ պատասխանեաց իմ̃ 'ի Թեբայեցւոցն [6] ծննդենէ . քանզի մինչդեռ կադմէին պարիսպքն և զկատարումն առնուին, նախ առաջին Ամփիոնայ քնարաւն երգելով քնարս կատարեաց զպարիսպն . և 'ի խարխարումն կրել պարսպացն՝ Իսմենիաս փող հարկանելով զհետ եկեալ գտաւ : Արդ 'ի նուագերգութենէ երաժշտականութեան կազմեալքն , և [7] յերաժշտականութենէ նուագերգութեան անկեալ

1 Բ. միայն ունի զհատուածդ և դարձեալ. և փոխանակ Թեբայեցւոց։
2 Ա. հեծեծականս ողբոցն։
3 Չորս ՕՕ. զտամալիւն.. վասն ... նի դուրեալն ամենայն։
4 Մի Օ. զՊինդարոս։
5 Երկք ՕՕ. առ քնարահարութիւն։
6 ՕՕ. Թեբայեցւոցն ծննդենէ կամ Թեբայեցւոցն ծննդեանն է։
7 Բ. և յետ երաժշտականութենէ։

կործանեցան ։ Արդ այսպէս Թեբայեցիք ամենայն հանդերձ քաղաքաւն կորեան . և սակաւուց մնացելոց քարոզեաց Աղեքսանդրոս . Որ[1] անկանի 'ի քաղաքս Թեբայեցւոց, անքաղաք եղիցի ։ Ընդուստ գընաց Աղեքսանդրոս յայլ ևս քաղաքս ։

ՃԼԴ. Իսկ մնացեալքն Թեբայեցւոց առաքեն 'ի Դեղփիս խնդրել պատասխանիս, եթէ ընա՞ւ իսկ ուրեք եղիցի նոցա վերստին ստանալ զքաղաքն իւրեանց։ Եւ Ապողոն տուեալ նոցա պատասխանի այսպէս . Հերմէս և Ալկիդէս[2] և պարսպամարտն Պողիտեւկէս երեքեան սոքա աշխատութիւն կրելով յարուցեալ կազմեսցեն զքեզ, Թեբէ ։ Այսպէս պատասխանւոյն տուեցելոց կային սպասէին իրացն լինելոյ ։

ՃԼԵ. Իսկ Աղեքսանդր եկեալ հասանէր 'ի Կորընթոս . և գտեալ անդ զհանդէսս խաթխմանցն[3] զի լինէր, և աղաչէին զնա Կորընթացիքն առնել զհանդէսս խաթխմանցն ։ Եւ արքայն հաւանեալ նոցա անց և նստաւ . և մտին 'ի ներքս հանդէս նահատակութեան, և յաղթողքն պսակեալ լինէին 'ի թագաւորէն, և պարգևս տայր բարւոք հանդիսացելոցն ։ Եւ մի ոմն 'ի մարտիկ քուշտընդրացն՝ այր շահաւոր Թեբայեցի ազգաւ, և անունն էր Կլիտոմաքոս, գրեալ նկարեաց՝ կռիւ, մրցումն, բռնամարտութիւն՝ զերիս զայս կռուոյն . և յասպարիսին կարի յոյժ կռուական հմտութեամբ զարկոյց զհակառակամարտն, մինչ զօրութիւն առեալ[4] նմա յաշխարհականէն, եկն զպսակն առնուլ զկռուոյն ։ Ասաց Թագաւորն . Եթէ զայլ երկուսն ևս յաղթեսցես զորս գրով նկարեցեր, պսակեցից զքեզ երիս պսակս և տաց քեզ խնդրուածս զոր ինչ միանգամ խնդրեսցես ։

1 ՕՕ. յոր անկանի կամ յոր անկան 'ի տաղաւ. ։

2 ՕՕ. Աւդիդէս կամ Աւդինդէս. ուղղեցաք ըստ յաջորդին համաձայն լատինականին ։

3 ՀՀ. յաւելուածն է բանամարգեկայն ։

4 Բ. Թերևս էր. այլ ՕՕ. առնել ։

Զայս լուեալ չոգաւ անցանել 'ի հանդիսին. և զայլ ևս երկուս հանդէսս զորս էր կարգեալ գրով, մարտեաւ քաջապէս¹, յաղթեաց զմրցականն և զբռնամարտիկն. եկն առ Աղեքսանդրոս և պսակեալ լինէր զերիս պսակն։ Նա քարոզին ասացեալ նմա զի՞նչ ասիս կամ յորմէ՞ քաղաքէ քաղաքացի ես՝ զի զքեզ հռչակեցուցից, և ասէ մարտիկն. Կլիտոմաքոս կոչիմ, բայց քաղաք ոչ ունիմ։ Նա ուսեալ Աղեքսանդրի ասաց. Ո՛վ քաջ, այսպիսի ես փառաւոր մարտիկ զի 'ի միում ասպարիսի յաղթեալ երիս վարժմունս՝ կռիւ, մրցումն, բռնամարտութիւն, և պսակեալ լինէն ձիթենի ոստովք վայրենեօք, և քաղաք ո՞չ ունիս։ Նա ասաց՝ Կլիտոմաքոսն. Յառաջ մինչ չև լեալ էր թագաւոր Աղեքսանդրէ, կորուսի զիմ գաւառն և զքաղաքն։ Նա իմացեալ հզօր արքայն թէ ուստի է կամ ո՛ր է նորա գաւառն և զի՞նչ հանդերձեալ է խնդրել, հրամայեաց զի վերստին շինեսցին Թեբք 'ի պատիւ երեք աստուածոցն՝ Հերմեայ, Հերակլեայ և Պուդեւկայ. զի իմ եղիցին պարգեւք և մի՛ քո խնդիր։ Նա այսպէս վճարեցաւ հրամանն պատասխանւոյն Ապողոնի. Հերմէս և Ակլիդէս և պարսպամարտն Պողիտեւկէս, սոքա երեքեան աշխատեալք՝ զի վերստին շինեսցեն զքեզ, Թեբք։

1 ՀՀ. այդպէս։ Բ. Թերի էր. իսկ այլ ՕՕ. ֆոհլաանն։

ԿԱՏԱՐԵՑԱՆ ԾՆՈՒՆԴՔ ԵՒ ԳՈՐԾՔ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՈՑ

ԳՐԵԱԼ ՅԻՄԱՍՏՆՈՅՆ ՅԱՐԻՍՏՈՏԷԼԷ.

ԱՐԴ ՍԿՍԱՆԻՄՔ ԵՒ ԶԳՐԵԱԼՆ Ի ՊՂԱՏՈՆԻ

ՔԱՂԱՔ ԱԹԵՆԱՑԻՈՑ

ՃԼԵ. Համբարձեալ Աղեքսանդրոս 'ի Կորնթոսէ զօրօքն խաղայր գայ 'ի Պղատեայ քաղաքն աթենացւոց, ուր զկորէս պաշտէին աթենացիքն. և մտեալ 'ի մեհեան չաստուածուհւոյն, և ոստայն հանդերձից նախրական պաշտամանցն անկեալ լինէր աստուածուհւոյ: Զայս հարցեալ ուսանէր Աղեքսանդրոս. և ասաց քրմակինն աստուածուհւոյ. Ի բարի ժամու մտեր առ աստուածուհիս, ով Աղեքսանդրէ. նշանաւոր և հռչակաւոր պարտ է լինել քեզ 'ի քաղաքս, և լուսաւոր մեծապայծառ լիցիս մեծապէս: Այսպէս քրմանուշոյ ասացեալ, պատուեաց զնա Աղեքսանդրոս ոսկւով:

ՃԼԶ. Եւ յետ աւուրց Ստասագորաս պղատէացւոց զօրական՝ մտանէ և սա յաղձկանն 'ի մեհեան: Եւ առէ նմա մարգարէուհի կինն աստուածուհեայ. Ստասագորաս, քակտումն գրեալ է լինել քեզ յիշխանութենէդ: Եւ նորա սպառնացեալ նմա ասաց. Ո՛վ անարժան մարգարէութեանց զոր մարգարէանասդ. Աղեքսանդրի մտեալ այսր ասացեր նմա՝ թէ նշանաւոր գրեալ է քեզ լինել և պայծառ և երեւելի 'ի քաղաքս. իսկ իմ մտեալ ասես՝ քակտումն գրեալ է քեզ յիշխանութենէդ: Եւ նա ասաց. Մի՛ դժուարիր, ով զօրագլուխ, զամենայն ինչ յառաջագոյն նշանակեն 'ի ձեռն նշանակաց աստուածք մարդկան, մանաւանդ այնոցիկ որք յաւելեալ զօրութեամբ են. յորժամ եմուտ այսր Աղեքսանդրոս, անցեալ լինէր թել յանկիւնան հանդերձիցն նշանաւոր ծիրանին. ասացի նմա՝ Աղեքսանդրէ, նշանաւոր գրեալ է քեզ լինել վասն նշանաւոր ծիրանւոյդ. և դու մտեր այսր, կատարեցաւ հանդերձս և հաստատայնս և քակտեցաւ գործիս. արդ այժմ ո՛չ է քեզ յայտնի զի քակտումն գրեալ է քեզ յիշխանութենէդ: Ցասեաւ զօրավարն և 'ի բաց փոխեաց զնա 'ի քրմուհութենէն ասելով՝ եթէ անձին քում մեկնե-

ցեր զնշանդ և ոչ լինձ . տես զի դու փոխեցար առաջին ։ Լուաւ զայս Աղեքսանդրէ և փոխեաց 'ի սպարապետութենէ զՍտասագորաս, և քրմուհեայ անդրէն առնուլ զմարգարէութիւնն հրամայեաց ։ Եւ ասաց քրմանոյն . Ստասագորաս, ես մեկնեցի քեզ զնշանն, և լուծումն մեկնութեանն ճշմարիտ եղև ։ Եւ գիտացեալ Ստասագորայ զԱղեքսանդրէ թէ չոգաւ յԱթէնս, քանզի էր 'ի նոցանէ կարգեալ 'ի զօրավարութիւն, և պատմէ նոցա զԱղեքսանդրէ անցեալս ընդ նա ։ Խռովեցին[1] աթենացիքն և ըմբոստացան ընդ եղեալ իրսն, և թշնամանեցին[2] ամենեքին զմակեդոնացին . որ և ուսեալ զայս Աղեքսանդրի, գրեաց և նոցա թուղթ, որ ունէր օրինակ այսպէս ։

ՃԼԵ . « Թագաւոր Աղեքսանդրոս՝ աթենացւոց զայս ինչ ասէ ։ Յորժամ հօրն իմոյ վախճանի 'ի բախտէ առի զթագաւորութիւնս . և դադարեցուցեալ որք յարեւմուտս կոյս են գաւառք՝ թղթովք, և հաւանեցուցի զամենայն իշխանութիւն, և զոսա ընկալեալ՝ խրատ ետու կալ մնալ յիւրաքանչիւր տեղիս . իսկ հայրենի բարեկամացն իմոց մակեդոնացւոց, որք յօժարութեամբ ընկալեալ 'ի ձեռն քարոզի հռչակեցուցին վաղվաղակի զիմ թագաւորութիւնս . և սոցա բազմութեամբ և արիութեամբ և կամօք յապահովս ցուցեալ դադարեցուցի զԵւրոպայ իրսն, և զԹեբայեցիսն չարս չարաւ կորուսի, և բրեալ 'ի հիմանէ խլեցի զքաղաքն վասն ընդունայն հպարտութեանն ։ Բայց այժմ անցեալ յԱսիա՝ ասեմ աթենացւոցն ընդունել . ես նախկին գրեմ ձեզ, և ոչ բազում բանս որպէս դուքդ, այլ հակիրճ և համառօտ ասեմ զգլուխսն . ոչ վայել է որք ընդ իշխանութեամբ անկեալ են, այլ իշխանաց զայսօսիկ վայել է առնել և հրաման տալ . այս ինքն է Աղեքսանդրի լսել և

1 Երկու ՕՕ. Խնամոյն ։ 2 Բ. Խնամէին ։

հնազանդել։ Իսկ այժմ տակայն կամ վեհք եղերուք, և կամ վեհից հարկատուք[1] քանքարս հազարս„։

ԾԼԸ. Զայս ինչ գրեն փոխանակ արքայական գրոյն աթենացիքն. «Աթենացւոց քաղաքս և քաջք տան հռետորայքս՝[2] Աղեքսանդրի զայս ինչ. Մինչ հայրն քո կենդանի կայր, մեք մեծապէս արտմէաք. և իբրև մեռաւ, մեծապէս խնդացաք. Փիլիպպոս երեկս առեցեալ 'ի հելլենացւոց, զայսօրիկ և 'ի վերայ քո կարծել պարտ է. որդի Փիլիպպոսի, յանդուգն կամակար հարկս յաթենացւոց պահանջես քանքարս հազար, այս ինքն է պատերազմ տալ ընդ մեզ կամեցեալ. արիագոյն խորհուրդս ունելով եկ վաղագոյն և հասիր առ մեզ„։

ԾԼԹ. Կրկնեալ գրեաց Թագաւորն պատասխանի զայս ինչ. «Թագաւոր Աղեքսանդրոս՝ աթենացւոցդ զայս ինչ ասեմ. Առաքեցի զՊրոտեայ[3] զմեր, որ վաղվաղակի զեկուս ձեր կարեալ 'ի բաց բերցէ առ մեզ, և գիտնալ զհռետորացդ ձեր տարցի, զի մի կարասցեն խաբել և պատրել. և փորձեցայց զձեզ և զԱթենաս օգնական ձեր հրկեզ առնել, վասն զի զհրամանս ձեր ոչ առնէք։ Արդ տուք 'ի ձեռս զառաջին ուսուցան ձեր զհռետորսն, որպէս զի խորհեալ վասն օգտի ձերոյ ողորմեցայց զաւառին ձերոյ„։

ԾԽ. Իսկ նոցա առեալ ընթերցեալ զթուղթն գրեցին 'ի ներքոյ՝ ոչ առնեմք, և առաքեցին։ Իսկ յետ աւուրց ժողովեալ 'ի մի վայր, խորհեցան թէ զինչ արասցեն. առաքեսցեն արդեօք՝ թէ պատերազմ տայցեն։ Իսկ մինչդեռ խորհէին, յառն կացեալ Էսքինէս հռետոր՝ ասաց. Աթենացիք, զի յամրագոյն քան զխորհուրդ կամիք առաքել՝[4] զմեզ առ Աղեքսանդրոս. քաջալե-

1 Բ. յաւելու ած.
2 Յօրինակին գրեալ էր ալիքը ալիքը և հանդերձայք։
3 Ա.Բ.ՕՕ. զՊրոտեայ [illegible] տոս։
4 Երկու ՕՕ. առնել. ուփոփոխ-գոյ է։

բեալ գնասցուք, քանզի Աղեքսանդրոս ոչ Փիլիպպոսի է. քանզի Փիլիպպոս ծնաւ պատերազմական ճարնահանջոյ հպարտութեամբ, իսկ Աղեքսանդրոս Արիստոտելեայ խրատուք աշակերտեալ առ մեզ. և կարկառեալ զձեռս խրատ կրելով, զի եղիցի կորովամիտ և պատկառեսցէ տեսանելով զվարդապետս, և չինեսցէ տեսանելով զառաջնորդս իւր, որպէս պարտ և արժան է զթագաւորութիւն 'ի հօրէն ընկալեալ և թագաւորեալ, և փոխեսցէ զբարսն զոր ունի առ մեզ՝ 'ի բարեկամութիւն ։

ԺԽԱ. Զայս ասացեալ Էսքինի, յառն եկաց Դեմադէս քաջն հռետոր, և ընդ բերանն եհար զԷսքինէս մինչդեռ խօսէրն և ասէ. մինչև յերբ, Էսքինէս, խենէշս և թոյլս և երկիւղիւ լի բանս բերեալ մատուցանես, զի մի պատրաստեալ ընդդէմ կացցուք նմա պատերազմաւ, որ 'ի քեզդ եկն եմուտ դև երկչոտութեան այդպիսի բարբառել աթենացւոց ։ Որ քան ջատագովութիւնս առնելով որ յորդորէիր զԱթենացիս պատերազմ տալ ընդ Պարսից թագաւորին, արդ կասեցուցանես զԱթենացիս լռել և ոչ տալ պատերազմ ընդ Մակեդոնացի մանկանն, ընդ բռնաւոր կամակարի զհօրն՝ առեալ զյանդուգն համարձակութիւն ։ Նայց առ ինչ երկնչիմք պատերազմ տալ ընդ Աղեքսանդրի. որ զպարսիկսն հալածեցաք և զլակեդեմոնացիս 'ի պարտութիւն մատնեցաք և կորնթացւոցն յաղթեցաք և զմեգարացիս եւս փախստականս արարաք և զակխնթացիս աւար հարաք, այժմ երկնչիմք պատերազմել ընդ Աղեքսանդրի՝ ասէ Էսքինէս ։ Պատկառեսցի 'ի մէնջ յառաջնորդ վարդապետացս Աղեքսանդրոս, և ամաչեսցէ յերեսաց մերոց. դէմ յանդիման զամենայն զմեզ թշնամանեաց, և 'ի բաց արարեալ փոխեաց զպղատոնացւոց զօրավարն զոր մեք անդ կացուցաք,

1 Զօրս ՕՕ. ձեռ.

և զՀիպպողթոս զժողովս մերոյ զթշնամին անդ կացոյց զօրավար. և ասես թէ տեսանելով զերեսս մեր պատկառեսցէ կամ աչառեսցէ, այլ ոչ եթէ մերկս ըմբռնեալ զմեզ խոշտանգալից սատակեսցէ։ Բայց եկայք պատերազմ տացուք ընդ անազատին և ընդ անհաւատին Աղեքսանդրու. մի հաւատասցուք հասակին այնմիկ զոր ունի նա. քանզի անհաւատալի են միտք մանկանց, կարէ քաջապէս կռուել՝ ոչ զիրաւունս խորհելով. զՕնուր զերեալ աւերեաց, զի տկար էին ընդ նմա կռուել. զԹեբայեցիս բրեաց 'ի հիմանէ, որ ոչ էին նմա տկարք, այլ 'ի բազում պատերազմունս աշխատեալս. զպեղոպոնացիս գերի վարեաց, ոչ ինքն երթալով և պատերազմ տալով, այլ նոցա սովով և ժանտախտիւ յապականութիւն մատնելոց։ Իսկ ապա զի Քսերքսէս պարըսպեաց զծովն նաւօք լցեալ, սերմանեաց և զերկիր բազում գումարտակօք, ծածկեաց զինուք զօդս, ելից զՊարսից աշխարհն գերեօք. որ այսքան իշխեալ համարձակեցաւ և գործեաց, զքաջն Քսերքսէս 'ի բաց հալածեցաք 'ի Պիւրեայ և զնաւսն այրեցաք և յերկրէ զգումարտակս 'ի բաց հալածեցաք Կիւնիդերայ և Անտիփոնտայ և Կղէոքարայ՝ և այլոց քաջացն որք ընդ նոսա էին, արդ սոցա յաղթողք գտեալք՝ այժմ երկնչիմք յԱղեքսանդրէ բախել 'ի պատերազմ յանդիման մանկան, և որ առ նմա նախարարքն են և պաշտպանք վատախորհուրդք, որք ոչ գիտեն զնորա յանդուգն համարձակութիւնն զգաստացուցանել։ Եւ արդ յղեք զմեզ զտասն հռետորայքս առ նա. խորհեցարուք եթէ օգուտ բերէ ձեզ՝ առանց սպառազինութեան երթալ, ընդ միտ ածէք տեսէք։ Բայց ես յառաջագոյն զեկուցանեմ ձեզ, ա-

100. Անեփիտորայ կամ Զենեփտորայ կամ Նեփիտորայ. լաւ. Անեփտորմայ. եդաք ըստ յաջորդին, ուր մեր օրինակքն վերստին յիշատակեն։

թենացիք, զի բազում անգամ տասն շուրջ հաջելով զբազում ջոկս հօտից 'ի մի վայր առ երկիւղի ժողովեալ 'ի գայլոց ապրեցուցին ։

ՃԽԲ. Այսպէս 'ի ժողովըն խօսեցեալ Դեմադայ, աղաչէին աթենացիք զԴեմոսթենէս, որպէս զի քաջ և օգտակար խրատ տացէ յաղագս փրկութեան հասարակաց ։ Իսկ Դեմոսթենէս յոտն կացեալ և ակնարկութեամբ ձեռինն իւրոյ զբազում ամբոխն խնջոյին դադարեցուցեալ ասաց այսպէս. Որք քաղաքացիք. ոչ ասեմ աթենացիս քան թէ ձեր օտար և ոչ քաղաքացի. պարտէի արդեւք ասել արք աթենացիք, բայց այժմ ասեմ արք քաղաքացիք. հասարակ ամենեցուն է մեր փրկութիւնս, յաղագս այսորիկ հաստատուն խորհել կամ պատերազմ տալ Աղեքսանդրի, կամ տեղի տալ 'ի նմանէցն ասացելոց. քանզի Եսքինէս վարեցաւ խառնեալ բանիւ առ ձեզ, ոչ յորդորելով կռուել և ոչ 'ի բաց թողուլ զմարտընչելն. այր աւեոր և 'ի բազում ժողովս միաբանութեան խորհրդոց ջատագովութիւնս արարեալ. բայց Դեմադէս մանուկ է և ըստ մտաց խորհրդոց հասակին այսպէս խրատ տայ ։ Բայց 'ի բաց հալածեցին զԲոսերքսէս աթենացիք՝ ասէ Դեմադէս. թէ Կլինիդերոս' էր անդ, և Անտիփոն կռուէր, և Կղէոքարոս պատերազմ տայր, և Բոյիդրիմոս նաւօք մարտնչէր, և դարձեալ պաշտպան ես լինէր Երեքթեւս, Անդիմաքոս քաջանայր և յաղթէր ։ Եւ այժմ, Դեմադէս, ած զարմն զայնս, և պատերազմ տամք ընդ Աղեքսանդրի. հաւատասցուք զանձինս զօրութեան անուանելոյդ. ապա թէ ոչ են այժմ նոքա, և ոչ մեք պատերազմիմք. քանզի յիւրաքանչիւր ժամանակս առանձինն զօրութիւն և հրաման ունի ։ Մեծամեծս կարեմք ասել 'ի մէջ ժողովրդոցս բանիւք հռետորայք, բայց տկար եմք զէն զանձամբ առնուլ

1 OO. Կինիդերոս... ուղղեցաք ըստ նախընթացին ։

և 'ի կռիւ ընդոստչել։ Սակայն Իռսէրքսէս մեծ էր և հզօր զօրականօք, այլ 'ի պարտութիւն մատնեցաւ յայնժամ. և էր մեզ ըստ կամաց մերոց իրք, զի նուաճեալ գտաւ Իռսէրքսէս։ Բայց Աղեքսանդր յերեքտասան պատերազմունս մտեալ ոչ ուրեք պարտեցաւ, այլ և յոլով քաղաք առեալ ընկալան զնա. զայս հընարս գտեալ իւրեանց փրկութեան։ Տկար էին ծուրացիքն առ կռիւն Աղեքսանդրու. վասն այսորիկ յաղթեցին ծուրացիք առ Իռսէրքսէս նաւօք մարտընչելով և զնորա նաւսն հրակէզս առնելով։ Տկար էին թեբայեցիքն. որ յորմէ հետէ շինեցան, պատերազմ տան և ոչ պարտեցան երբէք 'ի պարտութիւն, բայց Աղեքսանդրի միայն հնազանդեցան։ Զպեղոպոնէսացիս, ասէ Գևմադէս, թէ ոչ նա պարտեաց, այլ սովն. և առաքեաց նոցա 'ի Մակեդոնէ ցորեան Աղեքսանդրոս. և Անտիգոնայ սպարապետին ասացեալ Աղեքսանդրէ, ընդ որս համդերձեալ ես կռուել ցարեա՞ն առաքես, և կարի քաջ ասաց, զի ես նոցա կռուելով յաղթեցից և ոչ սովով սատակեցից։ Բայց մի ինչ խռովեալ տատմբակէք. և ցասուցեալ էք զի զԱստասագորաս փոխեաց 'ի սպարապետութենէ իւրմէ։ Նախ Աստասագորաս տատմբակեալ. քանզի ասացեալ քրմանուշին՝ թէ Աղեքսանդրի ասացեր նշանաւոր լինել քեզ գրեալ է 'ի քաղաքս, և ինձ ասես քակտումն կրել գրեալ է յիշխանութենէս, եթէ այժմ ես զքեզ քակտեցից 'ի մարգարէութենէդ. ո՞չ ապաքէն լուեալ զայս յիրաւի թագաւորին, տատմբակեալ 'ի վերայ գործոյն Աստասագորայ։ Զոյգ է զօրավար՝ թագաւորի. արդ սոդտանէք զմակեդոնացին զի զԱստասագորաս փոխեաց 'ի սպարապետութենէն, զի աթենացի էր. և ո՞չ պարսաւէք զԱստասագորաս՝ 'ի բաց հանել ընկենուլ զքրմուհին աթենացի։ Նա սակայն զմեր վրէժ խնդրելով Աղեքսան-

դրը զայս գործեաց. զի զնա փոխեաց 'ի զօրավարութենէ, իսկ քաղաքավարութեան մերումանդէն հատոյց զմարդարէութիւնն ։

ՃԽԳ. Այսպէս ասացեալ Դեմոսթենի բազում գովութիւն եղև ամփիքտիոնացւոցն, և հնչումն բարբառոյ խառնակ անյայտ ։ Այլ Դեմադէս լուռ կայր, և Նոպլինէս գովէր, և Լիւսիաս վկայութիւն մատուցանէր, Պղատոն յանձն առնոյր և Դիմոկրատէս խրատ տայր, Դինոգինոս հաւանէր, և այլք ամփիքտիոնացիքն վարկանէին, և բոլոր ժողովուրդն կամակից լինէր Դեմոսթենի ճառեցելոյն ։

ՃԽԴ. Այս դարձեալ ասաց Դեմոսթենէս. Պատասխանի տացուք. Քսերքսէս, ասէ, պատերազմ ետ, Դեմադէս. պարտեաց զծովն նաւօք, և զերկիր սերմանեաց գումարտակօք. ծածկեաց զինուք զօդս. ելից զԱրոս գերեօք Հելլենացւոց, և զհելլենացիս ըմբռնեաց ընդ ձեռամբ արկեալ. որ հակառակ կացին նմա, ոչ գերեաց, այլ զինուորեաց. և որք նմա թշնամի եղեն, զօրաւիգն օգնականս արար. քանզի այնպէս հրաման ետ Աղեքսանդրոս դէմ յանդիման ամենեցուն. և ունէր զթագաւորութիւն՝ բարեկամաց բարիս առնելով ։ Այլ աթենացիքն կամին, որք բարեկամք են և առաջնորդք Աղեքսանդրի, զի իբրև թըշնամիք խօսեցեալք եղիցին ոչ լինել ։ Ամօթ անարգանաց է ձեզ առաջնորդաց և վարդապետաց Աղեքսանդրի անուսմունս երևել ։ Ոչ ոք 'ի թագաւորաց հելլենացւոց եմուտ յԵգիպտոս, բայց Աղեքսանդրոս. և զայս ոչ պատերազմ տալով, այլ հրաման պատասխանւոյ յաստուածոյն խնդրել, ուրանօր զիւրոյ անուանն՝ մշտայուշ քաղաք շինեսցէ ։ Այս ահա հիմն էարկ և կանգնեալ շինեաց. քան զամենայն գործ սկիզբն փութով եղեալ քաջայայտ է. որոյ և կատարածն վաղվաղակի 'ի տեսումն գայ, չոգաւ հասեալ յԵգիպտոս՝

100. [illegible]

որ էր ընդ թագաւորութեամբն Պարսից ։ Եւ աղաչէին եգիպտացիքն զօր երթալոյ ընդ նմա առ պարսիկս ։ Եւ նոցա պատասխանի կորովամիտն և ասաց ․ Լաւագոյն է ձեզ եգիպտացւոցդ՝ Նեղոսի համբառնալոյն և զհողագործութեանն հարկանել գործ, քան թէ զԱրեայ համարձակութիւնն զլինել, և հնազանդել նոցա զԵգիպտոս ։ Աղեքսանդրոս ոչ բոլոր աշխարհի յաղթկու և գեր 'ի վերոյ լեցի ․ քանզի ոչ ինչ է թագաւոր, բայց 'ի ձահ և 'ի դէպ երկիր ունել ։ Նախ առաջին 'ի հելլենացւոց Աղեքսանդր եառ զԵգիպտոս, մինչ զի առաջին զնա հելլենացւոց և խուժադուժ ազգացն լինել ․ քանի՝ ընկերս գումարտակաց բուծէ աշխարհն այն, այնպէս զի 'ի նմա անցեալ նստին ։ Այլ զայնս որ 'ի պատերազմի կոուլին, քանի քաղաքս թափուրս անմարդիս լցցէ և բնակեցուսցէ ․ քանզի որպէս բազմացորեանն է, այսպէս և բազմամարդս է ․ և զոր ինչ խնդրէ 'ի նմանէ թագաւորն, առատաբար 'ի ձեռն մատուցանէ ․ և թէ զօր կամի, տայ ․ թէ ցորեան պահանջէ, ունի տալ առ 'ի յագեցուցանել ․ ոսկի կամի 'ի հարկս, առնու ։ Եւ դուք աթենացիք, կամիք պատերազմ տալ ընդ Աղեքսանդրի, որ այսչափ ունի ռոճիկս կերակրոց զօրաց ։ Բայց էր մեզ կամ և ըղձալի տալ պատերազմ ընդ Աղեքսանդրի ․ այլ ժամանակս ոչ հրամայէ ։

ԾԽԵ ․ Այսպէս 'ի ժողովն միաբանութեան խօսեցեալ Դեմոսթենի, առ հասարակ ամենեքին միաբանութեամբ հաւանեցան առաքել Աղեքսանդրի զյաղթական պսակն յոսկւոյ լտերց յիսուն հանդերձ իւրեանց յանձին կալեալ ձեռնարկութեամբ և այլ ևս շնորհակալութեամբ հրեշտակաց փառաւորաց աթենացւոց ․ քանզի ոչ առաքեցին նմա զհռետորայսն ։ Իսկ հրեշտակքն երթեալ պատահեն նմա 'ի

1 Զօրս ՕՕ. փանկի. . անչէսու նափօլէն. . ճաւանէն, փանկի փաղատ։

Պղատեայ և մատուցանեն նմա զվարկ յանձնկալութեան թագաւորութեանն ։

ճխԶ. Նա ընթերցեալ և ուսեալ զՆոսքինեայ ջատագովութիւնն և զՊեհմադեայ ամբաստանութիւն և զժողովրդեանն զդիւրահաւանութիւնն և զամփոփտոփոնացւոցն զխրատ, գրեաց նոցա թուղթ այսպէս ։ "Թագաւոր Աղեքսանդրոս որդի Փիլիպպոսի և մօր Ոլոմպիադայ, Աթենայ իմաստուն հռետորաց և վարդապետացդ գրեմ զայս ինչ ։ Վասնզի այսպէս կամեցեալ վերին նախախնամութեանն թագաւորել ինձ ցորքան զամենայն խուժադուժս հելլենացւոց հնազանդեցուցից, բայց ես առաքեցի առ ձեզ գալ առ իս տասն հռետորացդ. ոչ զի չար ինչ արարից դոցա, այլ զի իբրև զառաջնորդս և զվարդապետս խնդութեամբ ընկալայց ։ Վասնզի ոչ համարձակեցի զանձն իմ գալ առ ձեզ զօրօք, զի մի զիս ձեզ թշնամի վարկջիք. այլ հռետորայիւքդ փոխանակ իմոց զօրականացս, զի յամենայն յահէ և յերկիւղէ զձեզ ազատս արարից ։ Բայց դուք այլ ազգ բերէք 'ի ձեզ զառ 'ի յիս իրս յանդիմանեալք, ոչ վասն անձանց ձերոց թագաւորութեան, որքան միանգամ 'ի ժամանակի 'ի մոտ եղի գործել ընդ մակեդոնացիս ։ Վասնզի մարտնչելով հօրն իմոյ ընդ զակինթացիս՝ դուք զօրաւիգն և օգնական էիք զակինթացւոցըն. և դուք յորժամ պատերազմ կրէիք 'ի կորընթացւոցն, մակեդոնացւոց զօրաւիգն և օգնական ձեր եղեալ, 'ի բաց թափեցին 'ի բաց քեցին 'ի ձէնջ ըզկորնթացիսն ։ Նա զպատկերն պղնձի զԱթենասի[2] կանգնեալ ձեր 'ի Մակեդոնիա, դուք զնկարապատկերսն հօր իմոյ վասն մեհենին Աթենայ 'ի բաց քակեալ ընկեցէք. յիրաւի էին վարձք հատուցմանն. առեալ ընկալայք 'ի մէնջ որքան դուքն հատուցէք ։

1 ՕՕ. յաղթութեան կամ աղթութեան ։

2 ՕՕ. զԱթենացի կամ զԱթենեացի ։

Աստի մի՛ քաջալերիք 'ի խրատդ որով յանցաւքդ առ մեզ. և զարհուրեալ էք եթէ գուցէ Թագաւորութիւնն 'ի վերայ մեր եկեսցէ. և պարտ է ձեզ անձանց վրէժխնդիր լինել. հազիւ երբէք կամեցայ զայս առնել ձեզ, զի և ես աթենացի էի: Քանզի երբ իսկ դուք ընաւ ինչ բարի խորհեցարուք վասն արանցդ որ առ ձեզ փառաւորք եղեն. զԵւկղիդէս 'ի բանդ արգելէք, քաջ խրատ տուեալ ձեզ և որ ինչ ձեզ յօգուտ էր առ Կաւոս[1]. զԱղկիպիադէս թշնամանեցիք, որ քաջապէս զօրավար եղև ձեզ. զՍոկրատէս սպանիք զվարդապետանոցն զգեղեցիկ ուսմանց Ելլադայ. առ Փիլիպպոս ապախտաւորք եղերուք, որ յերիս պատերազմունս ձեզ զօրաւիգն և օգնական եղև. Աղեքսանդրի ստգիւտէք վասն Ստասագորայ զօրագլխի, որ ապիրատ եղև և անիրաւ առ իս և առ ձեզ. քանզի նա զքրմապետն[2] աստուածուրհեալ որ էր աթենացի՝ 'ի բաց ընկեաց 'ի մեհենէն. իսկ ես զմարգարէութիւնն անդէն նմա շնորհեցի: Ընդունիմ յանձին ձեր զհաւատորայիցն առ ձեզ զջատագովութիւնն. զԵսքինէս որ ձեզ վայելէրն, խրատ ետ. և զԴեմադէս, որ քաջապէս ձեզ 'ի ժողովս միաբանութեանն առ ձեզ բարի խօսեցաւ. իսկ զԴեմոսթենէս, որ յօգուտ ձեզ խրատ ետ: Բայց արդ լուարուք դարձեալ, աթենացիք քաջք, և մի՛ երկնչիք չար ինչ կրել. քանզի անկարծելի ապիրատութիւն ինձ թուի, վասն զի ես յաղագս ազատութեան մարտընչիմ ընդ ազգս խուժադուժ, և ոչ զտեսլարան զԱթենս կործանել»:

ԾԽԷ. Եւ այսպէս գրեալ Աղեքսանդրու առ աթենացիսն, առժամայն առեալ զզօրսն և եկն առ Լակեդեմոնացիսն: Իսկ նոքա ընդդէմ կացին նմա, կամեցեալ ցուցանել զքաջութիւն իւրեանց և յա-

1 Բ. Կաւոս:
2 Այսպէս բառս միայն Օ: Բ. դպ. [illegible]. այլ ՕՕ. դքրմապետն կամ դքրմապետ:

մօթ առնել զաթենացիս, զի ոչ ընդդիմացան պատերազմաւ ։ Բայց ինքեանք փակեցին զդրունս և հրկեզ արարին զնաւս զօրականացն. քանզի տեղեակք էին նաւօք մարտնչել, առաւել քան որ 'ի վերայ երկրի քաջ պատերազմողք ։

ՃԽԸ. Ուսեալ Աղեքսանդրի զպատմութիւն նոցա առ պատերազմ, առաքէ նոցա նախ ինքն թուղթ այսպէս ։ «Աղեքսանդրոս մակեդոնացի թագաւոր, լակեդեմոնացւոց գրեմ՝ խրատ տալով ձեզ. զինչ կամս ունիք 'ի նախնեաց, ամբողջ պահել. բայց խնդալդ սաե՝ յետոյ կացցէ մնացէ, թէ իցէք եւեթ արժանի խնդալոյ ողջոյն ընդունել ։ Իսկ ապա ով քաջքդ պատերազմիկք և անպարտեալք, տեսէք մի գուցէ այժմ քակտեսջիք 'ի փառացն. ո՞ գիտէ, ցոյցս առնել կամեցեալ աթենացւոցն զզօրութիւնդ ձեր, 'ի նոցանէ այպնեալք լինիջիք՝ 'ի պարտութիւն մատնեալք յԱղեքսանդրէ ։ Արդ 'ի բաց ելէք 'ի նաւացդ այտի և 'ի մնոտի յուսոյ կարծեացդ ձերոց կամօք, զի մի հուրդ զձեզ բոցակէզս արասցէ» ։

ՃԽԹ. Այսպէս ընթերցեալ եղև թուղթն առ նոսա ։ Ոչ հաւանեցան լակեդեմոնացիքն, այլ ուժգին դիմեցին 'ի կռիւ. մինչ որք 'ի պարսպին զինեալք էին 'ի վայր անկանել. և զայն որ 'ի նաւսն՝ հրակէզս առնել. և հուրբ այրեցեալ նաւքն որ մնացեալքն եղեն, եկին յաղաչանս առ արքայն, մաղթելով զի մի գերեսցին ։

ՃԾ. Նա անդուստ դիմեալ Աղեքսանդրի խաղաց գնաց 'ի կողմանս խուժադուժ ազգացն. և Դարեհ ժողովէր զզօրագլուխս իւր և խրատ խնդրէր 'ի նոցանէ թէ զինչ արժան է գործել, և ասէր. Որպէս տեսանեմ ըստ յառնելոյ պատերազմեալ յառաջ անցանէ Աղեքսանդրոս գալ 'ի վերայ մեր. բայց ես զնմանէ աւազակաբար իբրս կարծէի ընդ միտ ածել,

1 ՀՀ. տպ. [illegible]

նա աւանիկ թագաւորական գործս առաջի արկեալ գործէ ։ Եւ որքան մեք մեծ գոլ թուիմք պարսիկքս , մեծ ես Աղեքսանդրոս համարձակութիւն յանձն առեալ երեւի . ինձ թուի թէ ես առաքեցի նմա սկետեայ ' և գունդ , որովք ունի խաղալ ընդ հասակակիցսն և խրատ կրել . իսկ նա կատարելապէս խրատեալ , 'ի վերայ իմ հասեալ վարդապետիս իւրոյ՝ գայ բոլորից յաղթել ։ Բայց եկայք խորհեսցուք զօգուտն հասարակաց և պատասխանի արասցուք յանդրէն յուղղութիւն իւրացն . մի անգոսնելով իբրեւ զոչ ինչ զարին մակեդոնացի և համբարձեալ հպարտութեամբ այսքանիւ մեծ թագաւորութեամբս Պարսից՝ առ հասարակ ամենայն աշխարհաւ ըմբռնեալ լիցուք ։ Բայց այժմ երկուցեալ եմ մի գուցէ մեծն քան զնուաղն նկուն գտցի 'ի ժամանակի , և վերին նախախնամութիւնն զփոփոխումն թագիս նմա փոխանորդեալ առնէ ։ Արդ եթէ պարտ է տեղի տալ և 'ի բաց թողուլ զԵլլադա , զի մեք մեծամեծ ազգաց խուժադուժ տիրեալ իշխեսցուք , և մի խնդրելով զԵլլադա ընդ ձեռամբ ունել՝ կորուսցուք զպարսիկս ։ Զայս Դարեհի ասացեալ ։

ՃԾԱ . Եւ Ոքսիդարկէս եղբայր Դարեհի ասաց առ այս . Ահա արդէն իսկ սկսար մեծ առնել զԱղեքսանդր և քաջալերութիւն տաս նմա , յաւելէ[1] 'ի վերայ գալ Պարսից տեղի տալովն և 'ի բաց թողլով զԵլլադա ։ Նմանելով և դու Աղեքսանդրի , և այդպէս կալցես հաստատուն զթագաւորութիւնդ . քանզի նա ոչ զօրավարաց և ոչ նախարարաց իւրոց հաւատայր զպատերազմն , որպէս դու որ նախարարացդ քոց հաւատաս . այլ ինքն է զօրավարն , նախարար և թագաւոր . և զօրացն ոչ հաւատալով նախ առաջին ինքն յարձակի 'ի պատերազմունսն պաշտպանե-

1 Զորս ՕՕ . [illegible] 2 Բ . [illegible]

լով զօրացն և արիաբար 'ի բաց դնելով զթագաւորութիւնն, և մրցմամբ յաղթելով առնու դարձեալ անդրէն զթագն իւր։ Ասէ Դարեհ. Եւ ես զի՞նչ նմանեցից նմա։

ՃԾԲ. Եւ միւս ևս զօրագլուխ ասաց զնոյն զայս. Ամենայն իմիք յաղթեաց Աղեքսանդրոս ոչ ինչ յապաղելով, յամենայն իրս քաջապէս յաղթելով, և ճըշմարիտ ըստ ծննդեանն և կերպարանին տիպ և գաղափար կերպարանաց զառիւծու ունելով։ Եւ Դարեհ ասէ. Դու զայդ զի՞արդ գիտես։ Եւ նա ասէ. Յորժամ առաքեցայ 'ի քէն առ Փիլիպպոս հայր նորա առ զհարկն պահանջելոյ 'ի Մակեդոնացւոցն, ուսայ և գիտացի զնորա յառաջադիմութեան կերպարանն և զմտացն կորովութիւն և զձև հանճարոյն։ Արդ և դու առաքեալ կոչեա զանբաւ ցամաքիս նախարարս. զի ազինք շատ են քո, Պարսից և Պարթևաց, Էլամացւոց և Բաբելացւոց, Միջագետաց և Լիբէացւոց, նա և Հնդկաց, կամ զտունն Շամիրամայ ևս թուեցից։ Արդ են քո ազինք հարիւր և ութսուն, 'ի նոցանէ զինուորեա. եթէ հնար գոյ քեզ, և զաստուածսն. զի թէպէտ և ոչ կարող եմք խուժադուժքս ուժով մարմնոյ պարտել զհելլենացիսն, բայց սակայն բազմութեամբ ամբոխիւ ահ արկեալ պակուսցուք զթշնամին։

ՃԾԳ. Եւ միւս ոմն դարձեալ ասաց. Բարւոք խրատ ետուր արքայիդ, այլ անարժանս. քանզի մի խորհուրդ մտածութեան հելլենացւոցն յաղթեալ ընկրկէ զբազում ամբոխս խուժադուժ ազգաց. որպէս և մի շուն լակոնացի որ զբազում ջոլիրս հօտից հալածիցէ։ Այսպէս խորհեցեալ նոցա, ապա հրամայեաց Դարեհ ժողովել զբազմութիւն մարտկաց։

ՃԾԴ. Բայց Աղեքսանդրոս գնաց ընդ Կիլիկիա. և է անդ գետ մի որ կոչի Ակէանոս. մաքուր է ջուրն, վճիտ և ականակիտ. ցանկացաւ թագաւորն լոգա-

նաւ՝'ի նմա, և 'ի բաց մերկացեալ լուացաւ 'ի գետն և 'ի դուրս ելեալ զարմանեցաւ ։ Այլ ոչ եղև նմա լոգարանն փրկութեան պատճառ . քանզի հովացեալ ցաւեաց գլուխն և ամենայն փորոտիքն դժուարեցաւ ։ Իսկ մակեդոնացիքն յանկանիլ դնելն Աղեքսանդրի հիւանդութեամբ , և նոքա յոգիս խուրեանց աչհացեալք՝ լինէին՝ թէ մի գուցէ գիտացեալ Դարեհի զհիւանդութիւնս Աղեքսանդրի՝ 'ի վերայ եկեսցէ զօրօք ։ Այսպէս մի անձն Աղեքսանդրի զայնքան ոգիսն զօրականաց քաջալերեալ յորդորէր ։

ձծե . Այլ էր անդ ոմն փիլիպպոս անուն կոչեցեալ սիրելի և բարեկամ արքային , բժիշկ քաջ և հմուտ , խոստացաւ Աղեքսանդրի տալ ըմպելիս դեղոյ և 'ի բաց թափել 'ի նմանէ զախտ հիւանդութեն . և թագաւորն յօժար լինէր առնուլ զփիլիպպոսի կազմեալ դեղն ։ Թուղթ մատուցաւ Աղեքսանդրի առաքեալ 'ի Պարմենիոնայ զօրագլխէ , եթէ Դարեհ հաւանեցոյց զփիլիպպոս բժիշկ, զի եթէ գտցէ ժամանակ 'ի դէպ ինչ, դեղելով սպանցէ զԱղեքսանդրոս , խոստացեալ նմա տալ զքուր քոյրն կնութեան , որում անուն էր Դագիփարտա , և հասարակորդ լինել թագաւորութեան նորա . և խոստացեալ է փիլիպպոս զայս առնել՝ Դարեհի ։ Այլ Աղեքսանդրի ընթերցեալ զթուղթն ոչ ինչ խռովեցաւ , քանզի գիտէր զսէրս փիլիպպոսի թէ որպիսի գութ գորովոյ ունէր առ նա . և եդ զթուղթն ընդ մնարով[3] գլխին ։

ձծզ . Եկեալ փիլիպպոս բժիշկն մատոյց նմա ըմբաժակն դեղոյ ասելով . Առ , տէր իմ արքայ , և 'ի բաց թափեսցիս 'ի տկարութենէ այտի ։ Իսկ առեալ Աղեքսանդրի զբաժակն 'ի ձեռն և պշուցեալ հայէր

1 Չորս ՕՕ . լուծանել . լուացանել 'ի գետն . . ու եղև նմա լուծանելն ։
2 Բ . հիւանդանալեաց ։
3 Չորս ՕՕ . 'ի [illegible] 'ի գլուխն ։

ընդ երեսն Փիլիպպոսի հարուստ ժամն առնելով. Ըմպեմ, Փիլիպպէ, զանձն իմ հաւատացեալ քեզ ։ Ասէ բժիշկն. Արդ, թագաւոր, և մի երկնչիր, զի անըստգտանելի է դեղդ ։ Եւ թագաւորն ասաց. Ահա ըմպեմ ։ Եւ անդէն 'ի բաց թափեաց ըմպելով զդեղն ։ Յայնժամ յետ ըմպելոյն ետ զթուղթն 'ի ձեռս նորա ։ Եւ ընթերցեալ զանձնէ իւրմէ ամբաստանութիւն ասաց. Տէր իմ Աղեքսանդրէ, ոչ գտցես նման զիս գրելեացս ։

ճԾԷ. Եւ առեալ Աղեքսանդրի 'ի հիւանդութեանցն գիրկս արկեալ պատեցաւ զՓիլիպպոսիւ և ասաց. Որպիսի՛ բարս ունիմ առ քեզ բարեկամութեան. քանզի յառաջագոյն ընկալեալ զգիրդ դեղոյն, և յորժամ արբի՝ ապա ետու քեզ 'ի ձեռն ըզթուղթդ, հաւատացեալ զիս անուանդ քում. քանզի գիտէի թէ Փիլիպպոս զԱղեքսանդրոս ոչ ինչ դժուարաւ խորհեսցէ ։ Ասէ բժիշկն. Աղեքսանդրէ, այժմ սատակեա զայն որ առաքեաց քեզ զթուղթս՝ զՊարմենիոն. զի նա հաւանեցուցանէր զիս դեղով սպանանել զքեզ, զի առից զքոյրն Դարեհի զԴադիփարտա 'ի կնութիւն. և ես, տէր իմ, իբրև ոչ կամեցայ, ահա թէ որպիսի՛ դժնդակութեամբ կամեցաւ կորուսանել զիս ։ Զայս հարցեալ փորձեալ Աղեքսանդրու և գտեալ անստգտանելի զբժիշկն Փիլիպպոս՝ սատակեաց զՊարմենիոն ։

ճԾԸ. Եւ անդուստ առեալ զզօրսն եկեալ հասանէր յաշխարհն Մարաց, և ձեպէր մտանել 'ի մեծ Հայս ։ Եւ զնոսա հաւանեցուցեալ անց գնաց շատ աւուրս ընդ անջրդի տեղիս և ընդ խորաձորս օձուտս և ընդ Արիակէ գնացեալ՝ եկեալ հասանէր 'ի գետն Արածանի, որ հոսի 'ի ծաղկաւէտ լերանցն Անդղայ գաւառին յակունքն Եփրատայ հանդէպ լերինն Արարատայ. և զնա կամրջեալ՝ կամարօք և երկա-

1 Չորս ՕՕ. խորհրդեալ և գծին պզտրմամբ ։

թի խողխեք, ընդ որ հրամայեաց զօրացն անցանել՝ Եւ իբրև ետես զնոսա երկուցեալս, հրամայեաց զգրաստականն և զսայլսն և զկերակուրն ամենեցուն անցուցանել նախ առաջին. և յայնժամ զօրացն հրամայեաց անցանել։ Իսկ նոքա երկնչէին տեսանելով զհոսումն յորձանաց գետոյն թէ մի՛ գուցէ յանկարծակի լուծեալ քակտեսցին կամարքն։ Եւ իբրև ոչ քաջալերեցան նոքա անցանել, առեալ զհամհարզսն նախ յառաջ ինքն անցանէր թագաւորն քան զամենայն զօրսն և ապա նոքա։

ՃԾԹ. Եւ է Պիկլաթ գետ մեծ և Արածանի 'ի Միջագետս և 'ի Բաբելոնի, որք հոսին 'ի Նեղոս գետ. զի ասեն. յորժամ Նեղոս տարեւորական ժամանակօք զեղանի արբուցանել զաշխարհհարբոյծն Եգիպտոս, յայնժամ գետս այս Պիկլաթ և Արածանի թափուր լինին. իսկ յորժամ զիջանէ և 'ի բաց ելանէ յԵգիպտոսէ, սոքա զեղուն։

ՃԿ. Վասն զի անց Աղեքսանդր և ամենայն գունդք զօրացն, յայնժամ հրամայեաց զկամուրջն Արածանոյ 'ի բաց բառնալ։ Եւ զօրականքն յոյժ դըժուարացան այնմիկ և կարի չար երկուցեալք՝ ասեն. Եթէ լիցի մեզ պատերազմ տալով գլորումն կրել մեզ 'ի խուժադուժ ազգացն, զիա՞րդ ունիմք անցանել 'ի փրկութիւն։ Իսկ արքայն լուեալ զխծբծանս զօրականացն ժողովեաց զզօրագլուխս նոցա և զնախարարս և զամենայն զօրականսն և ասէ ցնոսա. Պնդեցիկ յոյս մատուցանէք ինձ ընդ յաղթութեան, զայս ունել իբրև պարտեալք ընդ կրունկ դառնալ։ Արդ վասն այսորիկ հրամայեցի ես ձեզ 'ի բաց հատանել ընկենուլ զկամուրջն, զի պատերազմ տալով յաղթիցէք, և մի՛ գուցէ գլեալք 'ի փախուստ դառնայցէք. քանզի ոչ է պատերազմ փախուցելոց, այլ զհետ մտողացն։ Վասն որոյ երդնում 'ի խնամսն վերնական զանդրէն դարձն 'ի Մակեդոնիա ինձ ե-

*զեալ, յաղթելով խուժադուժ ազգաց, յաղթող յԵլլադա ընդ ձեզ դարձայց. բայց միայն դուք զբարիոքըն քաջալերեցարուք, և ընդխառնիլըն 'ի պատերազմ իբր խաղ թուեսցի ձեզ ։*

*ՃԿԱ. Այսպէս հրաման տուեալ Աղեքսանդրի՝ պատիւս մատուցանէին նմա զօրականքն և յորդոր. քաջարտութեամբ 'ի պատերազմին տեղւոջն կային. նմա վրանս հարեալ՝ նստէր անդ բանակեալ ։ Եւ Դարեհի գումարտակն 'ի վերոյ կողմանէ Դըկլաթն գետոյ, և սոցա վերջապահք էին հինգ նախարարք. բախեցան ընդ նոսա պատերազմաւ երկոքին կողմանքն, քաջապէս ետուն պատերազմ ։*

*ՃԿԲ. Իսկ ոմն 'ի Պարսից յետոյ կողմանէ Աղեքսանդրի եկն եկեալ և առեալ մակեդոնական զէն իբրև զօրաւիգն և օգնական մակեդոնացւոցն եզարկ զթագն Աղեքսանդրի և ջախեաց զսաղաւարտ նորա. և ինքն ըմբռնեալ 'ի զօրականացն՝ ածեալ առաջի կացուցին Աղեքսանդրի ։ Եւ ասէ ցնա. Ո՞վ ես, քաջդ՝ զի՞նչ կամ եղև քեզ զայս առնել ։ Եւ նա ասէ. Աղեքսանդրէ, մի՛ խաբեսցէ զքեզ մակեդոնական զէնս, քանզի ես պարսիկ եմ Դարեհի նախարար. զի ես մատուցեալ ասացի Դարեհի. եթէ եկեալ բերից քեզ զգլուխ Աղեքսանդրու, ինձ ինչ տաս. և նա խոստացաւ տալ ինձ զաւառ թագաւորութեան և զիւր դուստրն 'ի կնութիւն. և արդ ես ինձէն եկի այսր և ոչ պատահեցի խնդրոյն ։ Լուեալ զայս Աղեքսանդրի և կոչեցեալ առ ինքն զզօրականս իւր, մինչդեռ հայէին 'ի տեսանել, դէմ յանդիման նոցա արձակեաց զնա ասելով. Արք մակեդոնացիք, այսպիսի միամտութեամբ պարտ է գոլ զինուորացն ։ Եւ պարտեալք խուժադուժքն, զառ 'ի պէտս կերակրոցն ոչ ունելով, ձեպէին 'ի բակտրիացւոց աշխարհըն մտանել. բայց Աքանդարն անց մնաց անդէն կալեալ զտեղիսն նոցա ։*

ճԿԳ. Իսկ դարձեալ միւս ևս այլ նախարար Դարեհի 'ի մահ տուեալ զանձն եկն առ Աղեքսանդրոս և ասէ. Տէր արքայ, ես նախարար եմ Դարեհի, և մեծամեծ ինչ իրս վճարեցի նմա 'ի պատերազմունս և ապաշնորհ եղէ 'ի նմանէ, քանզի ոչ արժանիս որոց գործեցի՝ հատոյց ինձ. բայց դու տուր ինձ բիւր սպառազէնս զինուորացդ. նոքիմբք հանդերձ և իմօքս զինուորօք՝ և բախեալ ընդ զօրս նորա տամ քեզ 'ի ձեռս զթագաւորն Պարսից։ Ասէ ցնա Աղեքսանդրոս. Ես այդմ շնորհակալ եմ. երթ և օգնեա քում թագաւորին. քանզի ոչ հաւատամ քեզ զօտարըս որ զքոյդ մատնեցեր։

ճԿԴ. Գրեցին և որք յայնց տեղեաց նախարարքն Դարեհի այսպիսի օրինակաւ։ "Արքայից մերոյ Դարեհի, Միշտասպ և Սպանդիատար, տեառն խնդալ։ Իւս և յառաջագոյն յայտնի քեզ արարաք զԱղեքսանդրի վերագալուստն աշխս մերոյ. և այժմ դարձեալ քեզ ազդ առնեմք հասանել նմա 'ի տեղիս յայս և պաշարել զաշխարհս մեր և սպանանել բազում և յոլով պարսիկս. և մեք 'ի վտանգի մահու կամք կործանել։ Արդ փութա վաղվաղակի հանդերձ բազում զօրութեամբ յառաջագոյն հասանել քեզ քան զնա. և մի տալ նմա թոյլ մտանել առ քեզ, քանզի յոյժ հզօրագոյն և յոլով է մակեդոնացւոց գումարտակն քան զմերս. ողջ լեր, տէր մեր"։

ճԿԵ. Առեալ Դարեհի և ընթերցեալ առաքեաց Աղեքսանդրի նամակ օրինակ այսպէս գրելով։ "Դարեհ արքայ, Աղեքսանդրու զայս ինչ ծանուցանէ։ Գրեցեր ինձ թուղթ ամբարտաւան, 'ի ձեռն որոյ զմեզ խնդրես հանդիպել քեզ. ո՞չ ահա քերեցի զԱնկուրան, զի յարեւելից կողմանէ աստուածս 'ի մուտըս արեւու բնակեցուցանել. և վկայեմ առ աստուածըս յոր իրս ընդ իս անցուցեր. քանզի թուեցայց ըզմայրն յաստուածս երթալ գնալ, կին ոչ ունել և որ-

գիք ոչ լինել ընաւ ամենեւին ։ Բայց ես ոչ դադարեցից զթշնամիս խնդրել․ քանզի գրեցաւ ինձ զի [1] բարեպաշտ եղեր առ իմն․ զի թէ իրաւացի ես առնելիր և զառ ՚ի յիս իրաւունս պահելով և գալ առ իս կամէիր, և ՚ի ձեռն նոցա զհանդիտաստուած [2] պատիւն մատուցանես իմոցդ ։ Իշխանութիւն է քեզ այսուհետև յիմն ոչ խնայել, այլ չարչարել իբրև զթշնամւոյ որդիս․ քանզի և ոչ բարիդ առնելով դոցա՝ կարասցես զիս բարեկամս ստանալ, և ոչ չար ինչ առնելով՝ սակս այնորիկ թշնամի․ քանզի ընդ մի վարկեալ է ինձ երկոքին ։ Արդ ազդեա ինձ զվերջին պատասխանին, զի գիտասցուք զարժանն մերոյ օգտի ։

ՃԿԶ․ Իսկ Աղեքսանդրի ընթերցեալ մեծապէս ժպտեցաւ, և փոխանակ գրեաց անդրադարձութիւն այսպէս ։ “ Աստուածորդ թագաւոր Աղեքսանդրէ, Դարեհի արքայի խնդալ ։ Անտի հպարտութիւնդ և զշատխօսութիւնդ և զընդունայն և զմոլար ցոփաբանութիւնդ աստուածքն ստգտին մինչև ՚ի վախճան, զի ոչ դադարես հայհոյելով և ընդունայնս կարծելով ։ Արդ գիտասջիր, զի ոչ երկնչելով պատուեցի զքոյսս և ոչ յուսով գալ ՚ի հաշտութիւն ողոքեցի, իբր թէ առ քեզ գալով շնորհակալ լիցիս մեզ․ քանզի ոչ է արժան իմ թագս քում թագիդ ։ Բայց [3] սակայն ոչ զառ ամենեսեան բարեպաշտութիւն իմ, և առաւելագոյն առ քոյսն, կոչելով յերկնից յերկիր ՚ի վայր անկեալս ։ Արդ վերջին քեզ թուղթ գրեմ․ հաստատեալ և որոշեալ է ինձ այլ ազգ ինչ առնել քան թէ ընտանեբար և սիրով ինչ ունել առ քեզ „ ։

1 Ե․ չի բառն որոշեալ ինչն․ որդ ինքն խաչիւր իրաւացի իրս առնել և չիմ ուրեմն չարել, բաց զայս ըստ իս․ և իմ ճանն այնը պատուհայն լոր որոշել ինչն, առանձնապէս պատիւ զայն չարանալ է ինչ։ Բայց յայսմ հիմն ... 

2 ՕՕ․ ընդհանրապէս բառն․ ուղղեցաք ըստ այլ օրինակաց։

3 Ե․ Ամէր էի ամենեցուն բարի առնել, մեայն և քաղաքն արարի՝ որ չարենաց ՚ի գեղեցիկ էին առնելոյ ։

ՃԿԷ. Իսկ փոխանակ գրեալ նմա Աղեքսանդրի պատրաստ եղև առ պատերազմն. և գրեաց ընդ նոքեամբ նախարարացն հրովարտակ, որ ունէր օրինակ այսպիսի ինչ. « Թագաւոր Աքանդարիոս որ և Աղեքսանդրոս, նախարարաց զայս ինչ ասեմ, որ ինձ հնազանդեալքդ էք, փռիւգացւոց, Գամրաց, կիւլիկեցւոց, արաբացւոց և այլոց ազգաց ամենեցուն խնդալ. Կամիմ ձեզ պատմուճանս կազմել առ այր հզօր և առաքել յԱնտիոք Ասորւոց. և որքան միաբան մնացի չորքոտանի, սոցա կաշիքն առաքեսցին յԱնտիոք Ասորւոց, զի զինուորքն գտցեն գործ զառ 'ի պէտս սանապանայ և կօշկաց և զինապատեանս կազմել, զորոյ իւրաքանչիւր՝ զԹիւ կալջք. առարէք և առաքեսջիք յԱնտիոք. քանզի կարգեալ են ուղտք երեք հազարք յԱրածանոյ գետոյ մինչ յԱնտիոք յարքայութիւն: Բայց այլ ևս երից հազարաց ուղտուցն որ են յԱնտիոք, հրաման տուաք պատահել միմեանց. ոմանց ածել հասուցանել և ոմանց 'ի նոցանէ անցուցանել, զի առանց պակասութեան ինչ լինելոյ զարքայութիւն ունիցին. և այսոքիկ եղիցին պատրաստք. ողջ լերուք »:

ՃԿԸ. Գրեաց և Դարեհի նախարարն յառաջ յաղագս որ հասեալ կայ առաջի իւր՝ զայս ինչ. « Դարեհի տեառն իմոյ 'ի Սատարեայ խնդալ. Երկնչիմ այսպիսի ինչ գրել առ քեզ. բայց հարկիմ յարդեան ժամանակիս իրաց: Դիտասջիր, տէր իմ, զի Կոմարէս վիրաւորեալ է և երկու մեծամեծք մեռեալ են. բայց Կոմարէս վիրաւոր եղեալ անց գնաց յիւր վերանն. իսկ Թշնամիքն որ ինչ միանգամ ինչ նոցա օգուտ էր, տարան. այլ Անիխաս և որք ընդ նովաւ մեծամեծք էին՝ անցին գնացին առ Աղեքսանդրոս մուտս առեալ, զարքունի գեւղսն հրկէզս արարեալ հանդերձ այնոքիւք որ 'ի նոսա հարձքն էին. զՍիհր-

1 Բ. Իւրաքանչիւր որ զԹիւ կալջ:

զատոյ քոյրն սպանին և զգեւղն հրձիգք արարին"։

ճկթ. Լուեալ զայս Դարեհի գրեաց որ մօտ անդըր նախարարք էին պիտակաց այլ, լինել պատրաստ և զանդրէն գալն առնել։ Գրեաց և այնոցիկ որ մօտ թագաւորքն էին, իբր թէ հանդերձեալ եմք զքիրտնըն 'ի բաց ջնջել և մարտնչել մեզ առ ազգս Մակեդոնականս. որոց ոչ հաւատամ կարի խնդալ յորս իշխեցեալ գործեցինս. և հրամայեցի այնոցիկ որ 'ի Կող՝ գալ, և գնալ յառաջ անդր. ասէ. ոչ հաւատամ 'ի վաղնջուց արդիւնքն լինել գործոց։ Գրեաց և առաջի Պաւրայ արքայի թուղթ, աղաչեցեալ օգնականութիւն հասուցանել 'ի նմանէ, և աղդելովք պաշարեալ փակեալ պատերազմօք։

ճհ. Առեալ Պաւրայ և ընթերցեալ զգրեալսն, և փոխանակ նմա գրեաց նամակ այսպիսի օրինակաւ։ "Պաւրոս թագաւոր հնդկաց թագաւորիդ Պարսից Դարեհի խնդալ։ Ընթերցեալ զգրեալս ձեր յոյժ տրտմեցայ. զի թէպէտ և կամէի պատահել քեզ և խորհել վասն օգտի ձերոյ, սակայն արգելեալ լինիմ՝ յանընդհատ հանապազորդ հիւանդութենէ մարմնոյս. բայց արդ դու խնդամիտ լեր, իբրև մեր ամենեցուն ոչ կարացեալ կալ և ժուժալ թշնամեացս այսմ. բայց առ որ ինչ կամիս՝ գրեա մեզ, զի ընդ քև հնազանդեալ դնին զօրութիւնքս ամենայն. և որ հեռի են ուրեք ազինք, հնազանդին և լուիցեն քեզ"։

ճհԱ. Ուսեալ զայս ամենայն մայրն Դարեհի առաքեաց նմա թուղթ գաղտուկ, որ է պատճեանն օրինակ զայս։ "Հրոդոդունէ՝ Դարեհի որդւոյ իմոյ խնդալ։ Լսեմ զքէն զի ժողովեցեր ազինս և կամեցեալ այլ ճակատ տալ ընդ Աղեքսանդրի։ Որդեակ, մի խռովեր զաշխարհ, քանզի հանդերձեալն անյայտ է. թոյլ տուր յոյս ունել կալ մնալ առ 'ի լաւն, զի մի երկբայութեամբ վարելով 'ի կենացդ հատցիս.

քանզի դեռ այժմ 'ի պատուի եմք և 'ի մեծի առաւելութեան, և ոչ իբր Թշնամւոյ մայր գերի վարեալ: Սատի յուսամ 'ի դաշն ինչ 'ի բարիս գալ Աղեքսանդրի ,, :

ճՀԲ. Նու ընթերցեալ Դարեհի զԹուղթն արտասուեաց գաղտաբար. յուշ առեալ զիւր ազգն և միանգամայն խռովեալ լինէր յոգւոն, և զբակտրիացւոց աշխարհն պատուար ունէր պատերազմի :

ճՀԳ. Իսկ Աղեքսանդրոս ունելով զիւր զօրութիւնն Ճանապարհ առնէր 'ի Պարսից աշխարհն. զի քաղաքին պարսկան բարձրութեամբն իւրեանց մակեդոնացւոցն յայտնի լինէին : Իմանայր իմն կորուզն՝ Աղեքսանդրոս. քանզի որք անդ արածանէին հօտքն՝ կորզեաց և 'ի բաց եհան արօտականս. և 'ի ծառոցն ոստս հատեալ կապեաց 'ի վերայ չորքոտանեացն, և զկնի զօրականին գնային հօտքն, և ծառքն քարշէին 'ի վերայ երկրին և զհողն զամենայն 'ի վեր կոյս հոսեալ յուզէին սաստկութեամբ, և ելանէր փոշին մինչև 'ի լեառն յՈզիմպոս. մինչև պարսկացն իսկ կարծել այնչափ բազմութիւն նոցա գումարտակին լինել, կարծիս առեալ 'ի պարիկ[2]՝ և 'ի հողմաբեր թօթափմանց փոթորկացն զանչափն և զանհամարն : Զի 'ի բացուստ նկատեալ տեսողացն զտղմագին մթութիւնն՝ որոտաբեկ լքեալք թուլամտութեամբ ահ արկանելով միմեանց թափեցին 'ի կարութենէ և յամենայն զօրութենէ :

ճՀԴ. Նու եկեալ մերձ 'ի Պարսս 'ի բացէ իբրև աւուրց հնգից գնաց մեկուսի[3]. և խնդրէր հաւա-

1 ՀՀ. [illegible]

2 Բ. գրեալ էր [illegible]

3 Բ. [illegible] :

տարիմ հրեշտակս, զի առաքեսցէ առ Դարեհ զեկուցանել նմա թէ Երբ զխառնորդ պատերազմին առասցեն ընդ միմեանս ։ Եւ ինքն 'ի քուն մտեալ լեալ Աղեքսանդրոս՝ տեսանէր զԱմոնա, որ 'ի ձեւ Հերմեայ անցեալ կայր առ նմա, ունելով 'ի ձեռն քարոզականս և քղամիդ և գաւազան, և մակեդոնական գդակ 'ի վերայ գլխոյ նորա. որ ասէր նմա 'ի տեսլեանն. Որդեակ Աղեքսանդրէ, յորժամ պէտ լիցի քեզ օգնել, այժմ եկեալ հասեալ եմ զեկուցանել քեզ. զի դու և առաքեսցես հրեշտակ առ Դարեհ, նա մատն լինի քեզ և զամենայն հնարագիտութիւն քո յայտնի կացուցանէ նմա ։ Իսկ ապա 'ի վտանգ մահու տուր զանձն քո, և դու քեզէն լեր հրեշտակ երթալով առ նա, առեալ զձեւս զայս 'ի քեզ զոր տեսանես զի ունիմ ։ Եւ վտանգաւոր թագաւորի անձին իւրում հրեշտակ լինել և երթալ. բայց յորժամ աստուած օգնական է, ոչ ինչ վտանգ եկեսցէ զհետ ։ Տեսեալ զայս՝ հրաման պատասխանւոյ առեալ յԱմոնայ տեսլեամբն և սրտապնդեալ արիութեամբ թագաւորին Աղեքսանդրի՝ յոտն կայ խնդալով, և հաւուցանէ զբանս տեսլեանն առ նախարարսն. և նոքա խրատ ետուն զայս առնել որ երևեցաւ առ նա յերազին ։

ՅՈՐԺԱՄ ԵԿՆ ԱՂԵՔՍԱՆԴՐ ԱՌ ԴԱՐԵՀ ԻՒՐՈՎԻ ՀՐԵՇՏԱԿ

ճՀԵ. Ապա առեալ թագաւորն ընդ իւր նախարար մի քաջ, որոյ Ոմեղդէոս՝ անուն էր նորա, և երիս ձիս ուժաւորս. և էր յերկար ճանապարհ գնալ. և երթեալ հասանէր 'ի Ստրանկա գետն ։ Եւ գետս այս պաղէր ձեամբ մինչ յատականալ նմա և վիմանալ, և անցանել սայլի և գրաստու 'ի վերայ և ամենայն ումեք որ կամին անցանել ։

1 Յոյնն Ն–Գլ. ։ ՀՀ. ԵԳՏԷ. նուագի համաձայն այլոց ։ Հու. Նոյնպէս և զկնի յերրորդում

ՎԱՍՆ ԼԱՑՆԱՆՒՍՑ ՆԻ ՑՈՂՆԱՑԱՐԱՆ ԳՆՏՈՑՆ ՍՏՐԱՆԿԱՑ

ճհզ. Ապա յետ աւուրց յանկարծօրէն լուծանի գետս այս և լինի խորայորձան կոհակ, մինչ առնուլ զնա՛ ՚ի քարշ զօրս ընթանեսցէ համամրք որ անցանէին ընդ նա։ Եւ եգիտ սառուցեալ զնա Աղեքսանդրոս. և առեալ յինքն զձին զոր ետես ՚ի ձեռն երազին զԱմոնայ, և հեծեալ ՚ի ձի անց միայն։ Եւ Մեղդեայ աղաչեցեալ զնա ընդ նմա անցանել, մի՛ դուցէ, ասէր, հարկ լինիցի օգնականութեան։ Ասէ ցնա Աղեքսանդր. Աստ կաց մնա ինձ հանդերձ երկուք ձիովքդ. քանզի ունիմ, ասէ, օգնական ինձ զայն որ ՚ի տեսլեանն հրաման ետ զայս ձեւս առնուլ և միայն երթալ։ Զայս ասացեալ էանց ընդ գետն պաղեալ, որ ունէր զլայնութիւն չափս ասպարիսի միոյ և խորագոյն[1]։

ճհէ. Եւ եղեալ յայն կոյս անց գնաց և եկն ՚ի դրունս Պարսից։ Եւ պահապանապետքն որ անդն կային, իբրև տեսին զնա յայնպիսի ձեւի, կարծեցին աստուած գոլ զնա. բայց սակայն բուռն հարեալ հարցանէին ով է։ Եւ նա ասէ. Թագաւորին յանդիման տարերուք զիս. նմա պատմեցից։ Եւ արտաքոյ ՚ի սարաւանդակ վայրի էր Դարեհ. զօրաց հրաման տայր և դունդս կազմէր իբր ՚ի վերայ տկարաց մակեդոնացւոցն ՚ի պատերազմ։ Ապա արձակեալ ՚ի վերայ յոյժ զարմանալիւքն Դարեհի, եկեալ[2] փոքր միւս ևս երկիր պագանէր նմա աստուած կարծելով զնա յերկնուստ ՚ի վայր եկեալ։ Եւ էր[3] Դարեհ խուժադուժ պատմուճանօք զարդարեալ. քանզի էր

1 Չորս ՕՕ. յաւելուն այլ ևս ձիոյ. որ չէք և ՚ի յոյնն։

2 ՕՕ. Եկեալ մեն ևս երկիր պագանէր նմա, և աստուած, եղաք ըստ յունին։

3 Ի յունականն խմբագրին յաւելում էր Դարեհ։

յղկեալ կազմ կերպարանացն ձև, և 'ի միջի ժամանակըն անցեալք. թագազգեաց գլուխն ծածկեալ տեսանէր. և զհանդերձին զգոյն որպիսի ոչ երբէք զայլոյ ուրուք՝ բաբելոնացւոց անկմամբ ոսկեղէն թել ձեղանակ[1], և կօշիկս սեպաստանոն[2], և ցուպ յահեակ ձեռինն, և ոտիցն երկոքին սրունքն առ միմեանս գեղեցիկ կազմեալ և զմիմեանց բութն հարեալ 'ի հաշիւ գնացից։ Իսկ վառեալք սպառազէնք բազում ազինք երկոցունց կողմանց 'ի բիւր արանց շուրջ պատեալ պահէին զԴարեհ։ Իսկ պահապանքն առաջի նորա ածէին զԱղեքսանդրոս։

ՃՀԸ. Իսկ նորա տեսեալ զձևն զոր ունէր, զոր ոչ երբէք տեսեալ զայլոյ ուրուք կամ լուեալ, հարցանէր զնա Դարեհ թէ ո՞վ ես դու։ Իսկ նա ասէ. Հրեշտակ եմ թագաւորին Աղեքսանդրու։ Իսկ զի՞ առ իս ինչ պատմել եկիր։ Իսկ նա ասէ. Ես քեզ զեկուցից զի հասեալ է Աղեքսանդրոս. արդ գիտեա ո՛վ թագաւոր Դարեհ, զի որ յամի 'ի կռիւ, ահա քաջայայտ եղև հակառակորդին զինկատ[3] և տկար ունի զոգին 'ի պատերազմ տալ. իսկ ապա մի՛ հեղգար, այլ պատմեա ինձ թէ ե՞րբ կամիս զի բախեսցուք ընդ միմեանս պատերազմաւ։ Իսկ Դարեհ ցասուցեալ ասաց. Մի՛ և թէ դո՞ւ ես Աղեքսանդրոս զի այդպէս յանդուգն խօսիս. ոչ իբր զհրեշտակ, այլ իբր թէ նոյն ինքն իցես Աղեքսանդր. այլ զսովորական ճաշն արժան է առնել, վասն զի և նոյն ինքն Աղեքսանդր խմոց թղթաբերացն արար ճաշ. և դու ընդ իս զքոյդ արասցես փոյթ։

ՃՀԹ. Նոյնպէս ասաց թագաւորն, և կալեալ ըզձեռանէն Աղեքսանդրի տարաւ 'ի ներքս յարքունական տաճարն։ Իսկ[4] զայս նշանակ անձին խորհուրդ կա-

1 Զօրս ՕՕ. [illegible]։
2 Ն. [illegible]։
3 Մի Օ. [illegible]։
4 Ն. Իսկ Աղեքսանդրոս 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible]։

լաւ մակեդոնացին՝ ահա ընդ ձեռամբ արկանել և
իշխել գոռոզական բռնաւոր տերանց . և 'ի ներքս ե-
մուտ 'ի տունն ընդ Դարեհի, և անդէն 'ի ճաշ կո-
չեալ հրաւիրեցաւ ։ Եւ նախ 'ի վեր 'ի գահոյսն բազ-
մեալ էր Դարեհ . երկրորդ Ոքսիդարկէս եղբայր ար-
քայի . երրորդ Ովքոս նախարար Ոքսիդարկեայ . ա-
պա Աւգուլիտէս որ 'ի վերայ Ռոշայ . և Փաւարտէս
և զինի նորա Միհրդատ . անդէն բազմեցաւ և Տըր-
դատ . ապա Կանդաւղէս եթովպացւոց թագաւորն ,
և Պաւլիադրէս իշխան . յորս էր և Անխիփատոս և
Դիովսիոս , Կարդերովկետէս և Ագկիդէս . և դէմ
յանդիման սոցա միայն բազմեալ էր 'ի վերայ գա-
հոյից միոյ Աղեքսանդրէ մակեդոնացին ։ Եւ պար-
սիկքն պշուցեալ հայէին յԱղեքսանդրոս՝ զարմա-
ցեալ ընդ մարմնոյն փոքրկութիւնն . այլ ոչ գիտէին
զի 'ի փոքր ամանի գեղեցիկ զանդուած բախտեալ
կայ յերկնից յառաջագոյն արկեալ ։ Իսկ մատռուակ-
քըն ստէպ ստէպ բաժակօքն բերեալ մատուցանէին ։

ԺԶ . Ապա իբրև 'ի մէջ էին գինարբուացն , Աղեք-
սանդրոս հնարս ինչ այսպիսի իմացաւ . զի որքան միան-
գամ առնոյր զբաժակն , 'ի ներքս 'ի գոգ անդ դնէր . և
մատռուակքն զայն իբրև տեսին , յայտնեցին Դարե-
հի ։ Եւ թագաւորն 'ի բազմականէն ընդկանգնեալ
ասաց . Ո՛վ քաջ, առ ինչ զայս ընդգոգես բազմեալ ։
Եւ իմացեալ Աղեքսանդրի 'ի ձևոյն և զոգւոյն զխո-
ժադուժ յիմարութիւնն՝ ասաց . Մեծ թագաւոր ,
այսպէս Աղեքսանդրոս յորժամ ճաշ կազմէր սպարա-
պետաց և զօրագլխաց իւրոց , զբաժակսն զամենայն
պարգևէր նոցա . կարծեցի և զքեզ այսպիսի գոլ որ-
պէս և նայն է , և համարեցայ զԴարեհ իբրև զԱ-
ղեքսանդրոս ։ Եւ հաւանութեամբ բանիցն Աղեք-
սանդրի հիացան ամենայն պարսիկքն . քանզի լայ-
նութիւն միշտ բան յորժամ առնու , հաւատս հիաց-
մամբ գործեցէ 'ի լողսն ։ Եւ բազում լռութիւն

եղեալ, Աղէքսանդրոս յիշեաց և 'ի միտ էառ յանձնեցունց 'ի նոցանէ ։

ՃՁԱ. Պարասանդէս ոմն որ իշխան լեալ էր 'ի պարսկաստանի, նա քանզի գիտէր 'ի դիմաց զԱղէքսանդրոս յորժամ զառաջինն եկն 'ի Պելլէս մակեդոնացւոց 'ի Դարեհէ առաքեալ զհարկսն պահանջել, և ասէ առ ինքն. ո՞չ է սա այն որ 'ի Պելլէմն զոր ասէին Աղէքսանդրէ. այլ արդ հաւաստի գիտի ինձ զկերպարանսն ճանաչել։ Եւ հայեցեալ երկրորդ անգամ և միտ եդեալ ասաց. սա նա է ստուգապէս, ոչ է վրէպ 'ի փիլիպպեանն, քանզի ձայնս զսա յանդիմանեաց. և 'ի կերպարանացն անծանօթ եղեալս բազում մարդիկ 'ի ձայնն ճանաչին, թէպէտ և 'ի թող' ուրեք գնայցեն շրջիցին։ Այսպէս Պարասանդէս իմացեալ զԱղէքսանդրէ, մօտ անդր ընդ կողմնեալ առ Դարեհ ասաց. Մեծ թագաւոր Դարեհ և հզօր բռնաւոր պարսկաստան աշխարհիս, այս[2] հրեշտակս որ եկն առ քեզ, նոյն ինքն է Աղէքսանդրոս մակեդոնացին Փիլիպպոսի ծնունդ, այր քաջ։

ՃՁԲ. Եւ զայս իբրև լուաւ Աղէքսանդրոս և իմացաւ եթէ ծանեան զնա պարսիկքն, և զխնձոյն և զաղաղակն առ 'ի յարքունական ընթրիսն որ խօսեցեալ եղև, երկուցեալ առաւել և զհանդերձեալսրն կշռեալ՝ շմորեցուցանել[3] զնոսա և վրիպեցուցեալ, փախեաց ել արտաքս՝ բերելով զըմպանակն ոսկի 'ի գոգի. և հեծեալ 'ի ձին զի փախիցէ 'ի վըտանգէն, և ետես առաջի դրացն պահապան մի որ պահէր՝ ջահ 'ի ձեռին ունելով. զայն յափշտակեալ 'ի բաց եհան 'ի նմանէ և խողխողեաց զայրն. վաղվաղակի հեծեալ յերիվարն[4] երթայր անցանել 'ի

1 Բ. գրեալ էր և 'ի Բուղատրէն. չորս ՕՕ. և Բուղատրէն.. [illegible] ընկալեալ։

2 ՀՀ. այս Աղէքսանդր է [illegible] որդին Փիլիպպոսի։

3 Երկու օր. չմորեցուցանել. երկու այլ մնալ.. կամ չմոր.. երկուս մնալ..

4 Մ. յաւելու [illegible]։

պարսկաստան աշխարհէն ։ Իսկ պարսկացն տեսեալ՝ զփախուստ նորա եղանէին զինեալք՝ հասանել կամեցեալ փախուցելոյն ։ Բայց Աղեքսանդրոս յոլովէր[2] և յառաջ անցանէր Ճանապարհաւ, ուղղելով պեւկեաւ[3] զձին և ցուցանելով զՃանապարհն ․ քանզի գիշեր էր խոր խաւար յԱլոմիդուսին ։ Նոյ խուժադուժքն որ մտեալ էին զհետ նորա, ոչ հասին ։ Բայց նա ունէր 'ի ձեռին զառաջնորդն զպեւկէն ․ և նոքա 'ի խաւարէ անտի այսր և անդր անկանէին ․ զի որպէս աստղ պայծառ առ յերկնէ եղեալ 'ի բարձունս անցեալ եկաց ։ Բայց[4] որ 'ի ներքոյն[5] էն, ոչ բախին ընդ նոսա ․ այլ ինքն զամենեսին 'ի խորս անդ ապրեցուցանէ ։ Այսպէս Աղեքսանդրոս զամենայն պարսիկըս յաղթէր ։

ՃՁԳ․ Բայց Դարեհ հայէր տեսանել կասկածս անձին իւրում․ 'ի գահոյսն անցեալ նստէր ․ և ետես յանկարծօրէն նշանակ մի Ճշմարիտ՝ նկարակերպքն[6] Բոսերքսի, որ ընդ ձեղունն բացեալ անկաւ զոր սիրէրն Դարեհ ։

ՃՁԴ․ Իսկ մակեդոնացին անց գնաց ըստ պարսկաստան աշխարհն և եկեալ եհաս 'ի Սորանկա գետն և համանգամայն անցանել զգետն առ Թմբանն[7], մինչդեռ ունէր ձին զառաջին ոտն յերկրի, ջուրն լուծեալ 'ի ջերմութենէ արեգականն[8], և ձին բերեալ լինէր 'ի սաստկութենէ ջուրցն ․ բայց Աղեքսանդրոս յերկիր արտաքս 'ի ցամաքն պարսեաց ․ և

1 Բ․ [illegible] ։
2 Մի Օ․ [illegible] ։
3 Երկք օր․ [illegible] ։
4 փոխանակ հատուածիդ Բայց [illegible]
5 Զօրս ՕՕ․ [illegible]
6 Երկք օր․ [illegible] ։
7 Բ․ [illegible] Երկու ՕՕ․ [illegible] Ա․ [illegible] ։
8 Ա․ [illegible]

զնա 'ի գոգ առեալ ընկալաւ երկիր, և զերիվարն յափշտակեալ տարաւ Սորանկա: Իսկ՝ պարսիկքն առ նոյն ինքն գետն 'ի մարտ եկեալք, և տեսեալ եթէ աչա էանց Աղեքսանդրոս, ոչ կարացին անդէն հետի կալ [2], այլ 'ի բաց գնացին 'ի տեղեացն. քանզի գետս այս անհուն է ամենայն մարդկան: Եւ դարեհացիքն ասէին յայտնապէս զբարի դիպուածն Աղեքսանդրի: Իսկ Դարեհի հիացեալ հրաշալի պատահմամբն տարակուսանօք տրտմեալ լինէր: Եւ Աղեքսանդրոս սակաւ մի հետևոտն գնացեալ եգիտ զՄեդդէոս զոր թողեալ էր անդ երկոքին ձիովքն, և պատմեաց նմա զեղեալ իրսն ամենայն:

ճԶԵ. Ապա հրաման ետ գնդիցն հելլենացւոց յանուանէ զինել [3] և պատրաստ համանել առ նա. և նա 'ի մէջ անցեալ կայր նոցա որպէս Արամազդ յերկնի: Եւ զզօրականս ամենայն 'ի մի վայր ժողովեալ մակեդոնացւոցն եգիտ զԹիւն բիւրս երկոտասան. դոյզն էր Թիւն, այլ խոհականութիւն իմաստութեանն մեծ և առաւելեալ քան զբազմութիւնն: Եւ Աղեքսանդրոս խրատ տայր զօրականացն, և յօժարս 'ի մարտ պատերազմի յորդորէր ասելով. Արք զինուորակիցք իմ և բարեկամք, գիտեմ զի բազմութիւնս մեր սակաւ է, այլ մի ոք յոգիս տկարագոյն ինչ համարձակութիւն յարձակմանն բերցէ. քանզի մի ոք 'ի ձեռն զձեռն մերկացեալ՝ զհակառակամարտիցն զհազարսն կոտորեսցէ: Բայց գիտեմ զբազմութիւն Պարսիցն, որ այնքան անուսումնութեամբ և տխմարութեամբ առաւել են քան զմեզ. քանզի բազում բիւրք են Ճանճից [4] 'ի բուրաստանս, որ խաղխաղեն [5] 'ի բազմու-

1 ՀՀ. Եւ դարձեալ ծանանեցին զնէ և փնտրին սահմանել զաստ լայնս հայս (կամ լայն խորոյս) և խորայոր. քան, և ոչ խորոցին անցանել զնէս:

2 Զորս օր. անցեն զնէս երկու:

3 Զորս ՕՕ. զնա ափանել.. Ա. բանալ չերին:

4 ՀՀ և յոյնն այդպէս: Բ. այալ մինչև ցկէս էջ Թերթի էր. իսկ այլ ՕՕ. ձեռին բուրաստանս:

5 Այդպէս մի Օ: Ա. յլ ՕՕ. ոչխաղխաղէն. ոչխախաղէն. ուղխաղէոց էն. Թերևս ուղխաղխէալէն:

թենէն և նեղէն զմիմեանս յաւուր ամարայնոյ․ բայց յորժամ անկցի 'ի վերայ նոցա [1] ձիաստանք և շանաճանճք, և հալածականք առնեն զնոսա 'ի թեւոց շառաչմամբ ։ Այսպէս բազմութիւն ճանճացն այնոցիկ պարսկացն ոչ ինչ է առ սակաւութիւն յոյժ պնդակացս մակեդոնական զօրացն ։ Այսպէս ասացեալ թագաւորին, ամենեքեան գովեցին զնա ։

ՃՁԶ. Եւ չու արարեալ ընդ բազում ճանապարհըս և ընդ առապար, և եկեալ հասին 'ի թիկունս Ստրանկա գետոյ բանակեցան ։ Եւ Դարեհի առեալ զբազմութիւնն իւր գայ 'ի միւս կողմ Ստրանկա գետոյ․ գտանէ զնա նորապատ․ անց նախկին ինքն 'ի վերայ գալ Աղեքսանդրի․ և քարոզքն 'ի մէջ կացեալ քարոզէին և կոչէին 'ի մարտ պատերազմի զքաջսն ։ Եւ իբրև ամենայն զօրքն վառեալ կազմեցաւ, և 'ի կառս ելեալ Դարեհ վազեալ յարձակեցաւ կառօքն և անուոցն արամբք [2] գերընդաբար [3] 'ի թշնամիսն սպառնալով․ և բազում նախարարք 'ի կառս անցեալ նստէին, և այլք բերէին զէնս բազումս ամենագործ խորամանկ ։ Բայց մակեդոնացւոցն առաջի անցեալ երթայր թագաւորն Աղեքսանդր հեծեալ յերիվարն զուարակագլուխ․ և ոչ ոք կարէր 'ի նա մերձենալ ։

ՃՁԷ. Այլ իբրև երկոցունց կողմանցն կոչ առնէր պատերազմողականն փող, բազում թնդիւն 'ի միմեանս բախեալ ճայթմունս ուժգին և դոփիւն սաստիկ առնէին, և կանչիւն և գոչումն զօրականացն ամպոց որոտումն գործէր․ և մեծաւ յօժարութեամբ գումարտակեալ հասանէին 'ի գործ պատերազմին ։ Եւ սկսան ոմանք քարաձիգ լինել և ոմանք նետս առաքէին մինչև յերկինս, իբր այն թէ ծածկել և բա-

1 Հհ. նոցա ձիաճանճք, հալածական ։

2 Զորս ՕՕ. արեամբք ։

3 Մի օր. գերընդամբար ։ Ս. գերընդաղէն ։

տուերացուցանել զայլատակ որակութիւն տուընջենական ճառագայթիցն . և այլք կիսախողխող մարմինքն անկեալ դնէին յերկրի, ներկեալք յարիւն յապաժոյժք և առ հասարակ թաթաւեալք : Եւ 'ի կողմանէ Պարսից բազումք սատակեցան վախճանեալք սրով :

ԺԶԸ. Իսկ Դարեհ ընդ կրունկ դարձեալ թեքեաց զերեսանակ կառացն և 'ի բազմութենէն 'ի բաց փախեաւ յամենայն կուսոյն . և գերանդիքն յընթանալ կառացն հնձէին զբազմահօծ պարսիկսն որպէս յարտորայս զհասկս մշակքն հնձիցեն : Եւ եկեալ Դարեհ հասանէր 'ի Ստրանկա գետն ինքն և որք ընդ նմայն էին, և [1] անցին՝ գտեալ զգետն սառուցեալ՝ վարելով զկառսն դէպ ուղիղ . բայց այլ բազմութիւն զօրականացն կամեցեալ ընդ գետն անցանել, 'ի ստորուստ [2] լուծաւ սառնն, և ալլին յափշտակեալ էառ զամենեսին զչև ևս անցեալսն . իսկ այնք որ ոչ ժամանեցին անցանել ընդ գետն, 'ի մակեդոնացւոցն անողորմ կոտորեալք լինէին :

ԺԶԹ. Եւ Դարեհ փախստական եղեալ անկանէր յարքունիսն իւր, և ընկեցեալ զինքն յերկիր արտասուելով և հառաչանօք յոգւոց հանէր հեղձամղձուկ տապացեալ սրտիւ, կորուսեալ զայնքան բազմութի՛ զօրաց և [3] անապատ աւերակ արարեալ զբոլոր պարսկաստան աշխարհն : Եւ յայնպիսի յաղէտս տարակուսի ըմբռնեալ Դարեհի՝ զանձն իւր ողբայր ասելով . Աւաղ անզերծ [4] և վտանգալի աղէտակոծ տարակուսանացս . զի այսքան մեծ թագաւորաց թագաւոր Դարեհ, որ այսքան ազինս հնազանդեցուցի և շատ քաղաքս ծառայեցուցի, որ աստուածոցն աթոռակից եղէ և ընդ արեգական ծագեցի, և այժմ

1 Ա. Բ. հուն փոխեալ անցին զհետ աստուածացեալս:
2 Զորս ՕՕ. 'ի տարածանս:
3 Ա. Բ. անայր արարեալ զամենայն զօրսն Պարսից:
4 Զորս ՕՕ. անզերծանելն և կործանելն. ճշմարտեալ եղէ. անդորր ասէր:

փախստական մազապուր՝ եղէ անապատ աւերակ ։ Ճշմարտապէս է զոր ասաց մայր իմ, զի զհանդերձեալն ոչ ոք հաստատ գիտէ • քանզի դիպուած բախտի դուզնաքեայ ինչ միտումն թէ առցէ , զնուաստն գեր 'ի վերոյ քան զամպս 'ի վեր տարեալ հանէ բարձրացուցեալ • և զայն որ 'ի բարձունս են , յաղջամուղջս 'ի վայր իջուցանէ ։ Ես անկեալ դնէր դառնապէս Դարեհ ամայի 'ի մարդկանէ՝ այնքան ամբոխից տէր եղեալ ։

ճՂ. Այսպա սակաւ մի ուշաբեր եղեալ՝ և ընդկանգնեալ և յինք եկեալ և զգաստացեալ 'ի բազում հեծեծմանէն և 'ի դժնդակ հառաչմանէ և 'ի վտանգալից արտասուացն՝ ջանաց կազդուրիլ կալ 'ի վերայ միտացն , յետս ընկրկեալ զծփումն ալէկոծեալ վրշտացն ։ Կարգեալ թուղթս գրեաց առ Աղեքսանդրոս և առաքեաց առաջի նորա աղէտս աղաչանաց արկանել առաջի նորա • որ ունէր օրինակ այսպէս ։ " Դարեհ , արքայից Աղեքսանդրի տեառն իմում խնդալ ։ ՙՆախ առաջին գիտուն լիցի ձեզ , զի այր եղեր շատ և բաւական 'ի յիշատակս • զի մի մեծամեծս փքացեալ խորհեսցիս , այլ զմարդկայինն կարգս խոկալ և ընդ միտ ածել ։ Քանզի և Քսերքսէս որ զլոյսն ինձ եցոյց , առաւել քան զինքն խորհեցեալ և հպարտացեալ և քամահեալ զամենայն մարդկաւ , մեծ ցանկութիւն ունէր յԵլլադա զօրու երթալ • քանզի յոյժ հոգածու էր , բայց ոսկւոյ և այլ ևս քաջալաւութեան և բարեբախտութեան որ էր մեզ 'ի հարց՝ չոգաւ կորուսեալ զբազում ոսկին , զբազում արծաթն և զբազում խորանսն ։ Որս և դու հայեցեալ և տեսեալ՝ 'ի մեծամեծս խորհելոյ և ընդ միտ ածելոյ խորշեալ , գթա 'ի մեզ առ քեզ փախուցեալս անկեալս զքեզ աղօթական՝ Արամազդաւ . և զմիւսոյն է որ 'ի մեզ ազատութիւն 'ի պարսկաց , 'ի բաց տուր զմայրն և

1 ՀՀ. [illegible]

զկինն և զմանկունսն, և փոխանակ սոցա խոստանամ ցուցանել քեզ զգանձսն որ 'ի Մինա գաւառին է և 'ի Շուշ և 'ի բակտրիացիս, զորս հարքն մեր եդին յերկրի։ Եւ ըղձիւք խնդրեմ քեզ Պարսից և Մարաց մարդկան տիրել զամենայն ժամանակս. և Արամազդ իսկ զքեզ մեծարեսցէ. ողջ լեր»։

ՃՂԱ. Եւ թուղթս այս երբև ընթերցեալ եղև յԱղեքսանդրէ, հրամայեաց ժողով առնել զօրագլուխացն որ ընդ նմա էին և ընթեռնուլ զթուղթն։ Ասաց ոմն 'ի զօրագլխացն Պարմենիոն անուն՝ որ երթայր զհետ նորա. Աղեքսանդրէ, ահա առ զինչս և զգաւառսն զոր տամն, և ետուր այդրէն փոխանակ այդոցիկ զմայրն և զկինն և զմանկունսն։ Եւ առ այս ասաց Աղեքսանդրոս. Եւ ես այժմ, ասէ, ով Պարմենիոն, առի։ Եւ հրամայեաց՝ թղթաբերացն պատմել Դարեհի. Ես զարմացեալ եմ, ասէ, թէ առ ինչ Դարեհ աղաչէ ընչիւք փրկել զիւրսն. բայց ես կարի առաւել թէ և զգաւառն իմ խոստանայ տալ ցիս. այլ յայտ է թէ անգէտ է յայսմանէ։ Զի թէ յաղթեսցէ ինձ կռուով, իւր է այս. ապա թէ պարտեալ գտցի ինձ, մի ինչ խոստասցի զիմն. քանզի թէ յաղթեսցէ կռուով, ոչ յաղագս նորա մօրն և կնոջն և մանկանցն բանք նմա լինին առ մեզ, այլ մեզ առ նա յաղագս մերոյ տեղեացս։ Բայց 'ի բոլոր յԱսիա ոչ էի եկեալ, եթէ ոչ կարծէի իմ գոլ զաշխարհս. քանզի ապիրատ է 'ի յայլոցն ձեռնարկել։ Բայց եթէ յառաջագոյն այսր աշխարհի նա էր իշխան, զայս շահ երթեալ տարցի. վասն զի զայլս աշխարհ ունելով այսքան ժամանակս ոչ ինչ կրեաց։ Զայս հրամայեաց Դարեհի պատմել հրեշտակացն. բայց թուղթ ոչ գրեաց։

ՃՂԲ. Իսկ ինքն արքայ հրաման ետ զի 'ի զօրուն եղեալ վիրաւորսն բժշկել և հանել զմիտս, և զվախ

1 Բ. Դարեհի հրամայեաց պատմել թղթաբերացն։

Ճանճալսն 'ի տեղի արժանաւոր թաղմանն հասանել։ Եւ կացեալ մնացեալ անդէն զբուն ձմեռն, և արարեալ զկարգեալ զոհսն գաւառական աստուածոցն՝ հրաման ետ հրկեզ առնել զարքունիսն Քսերքսի զգեղայարմարս յաշխարհին յայնմիկ։ Եւ յետ սակաւ մի դարձեալ զղջացաւ և դադարել հրամայեաց նոցա։ Նաեւ և զգերեզմանս ընդելուզեալս ոսկւով մեծաւ և զթակոյկսն ոսկիս զի իբրև զդիւցազանց[1] էր տեսիլն. և առընթեր մերձ Կաւոսի գերեզմանն։ Կայր աշտարակ բացարձակ տասնայարկ, և 'ի վերնումն յարկին կայր յոսկւոջ աւազանի և [2] ապակի պատեալ դիակն, յորում երևէին և հերք նորա և ինքն ողջոյն։ Անդ 'ի գերեզմանն Քսերքսի անկեալ կային հելլենացիք, ոմանք հարուածեալ յոտս, այլք 'ի ձեռս, ոմանք յռնչունս և այլք յականջս։ Աթենացիք ոմանք կաղեալ ոտիւք աղաղակեցին առ Աղեքսանդրոս զի փրկեսցէ զնոսա։ Եւ նորա տեսեալ զաղէտս նոցա արտասուեաց և գթացաւ 'ի նոսա. հրամայեաց լուծանել և տալ նոցա երեքդրամեանս հազար և բնակեցուցանել իւրաքանչիւր զնոսա 'ի հայրենիս իւրեանց։ Եւ նոցա առեալ զարծաթն աղաչէին զնա բաժանել զերկիրն 'ի նոսա 'ի տեղւոջն յայնմիկ, և մի հարուածեալս զնոսա առաքել 'ի հայրենիսն յաղէտս ընտանեաց իւրեանց։ Եւ լուեալ նոցա Աղեքսանդրի, հրամայեաց չափել տեղիս և հատանել տալ նոցա, և ցորեանս 'ի սերմն տալ, և եզինս իւրաքանչիւր ումեք մին վեց, և զայլ ևս ինչ որ միանգամ պէտք էին առ մշակութիւն, և այլ ևս ինչս տալ դարձեալ։

ճԴԳ. Բայց Դարեհ վերստին հրաւիրէր առ միւս ևս այլ կռիւ, բախել ընդ Աղեքսանդրի. և գրէ թուղթ Պաւրայ թագաւորին հնդկաց գալ յօգնականութիւն, որ ունէր օրինակ զայս։ «Թագաւորաց թագաւոր Դարեհ առ Պաւրոս թագաւոր խնդալ։

1 Զօրս օր. դիւցազանց.. ապարանք իբրև արքայի։ ՀՀ. դիւցազնի։

2 Հաստուածդ և ապակի.. ընտանեաց իւրեանց պակասէր յամենայն օրինակս մեր, և լրացաւ 'ի յունէն։

Գրեցի քեզ վշտակից լինել մեզ յեղեալ կործանումն տանս իմոյ. քանզի որ եկնս 'ի վերայ զվայրենի զազանի անձն ունելով, ոչ կամի զմայրն և զկինն և ըզմանկունսն իմ 'ի բաց տալ. և ես խոստացայ նմա զանձս և յոլով այլ ինչս. յորոց թէ կամեսցի առանց ստգտանելոյ վարելով յիւս, ոչ հաւանի. վասն որոյ կամեցեալ աւար հարկանել զաշխարհս, 'ի վերայ որոց գործեաց, առնել ընդ նմա և այլ պատերազմ, և զայս կարի մեծ. արդ մինչև վանեցից զազգսն, և կամ ես ոչ ևս եղէց յաշխարհի. յայսքան մահու դրունս զիս հասոյց: Այժմ արժան և իրաւունք են քեզ ստամբակել 'ի վերայ իրացս զոր կրեցի, և վրէժխնդրութիւն առնել թշնամեացս, յիշելով զնախնեացն մերոց զսէրն և զիրաւունս: Արդ ժողովեալ յոլով ազինս 'ի կասպիական դրունս յաշխարհն անառիկ և դժուարական[1], և այնոցիկ որք զանն անդր ձեռն կալցյց, տուեալ ըստ ամսոյ ամսոյ առն հարստի ոսկիանակս երիս և հեծելոյ ոսկիանակս հինգ, նա և ցորեան և բուտ: Իսկ յամենայնէ քեզ առաքեցից զկէս աւարին՝ յորոց թէ առից՝ զթշնամեացն. և շնորհեցից քեզ և որ զուարակագլուխ ձին կոչի համդերձ արքունական[2] գեղիւքն, և զայնս որ 'ի Ր̃ ոչ հարձքն են հարիւր և ութսուն համդերձ իւրաքանչիւր զարդուք: Արդ ընկալեալ զթուղթս մի այլ ինչ առնել, բայց պատուիրել որ շուրջ ազինքն են՝ եկանել յոր տեղի որ ժամ եդաք գալ ամենեցուն ժողովել...

ԾՂԴ. Իսկ Աղեքսանդրի ուսեալ յումեմնէ 'ի Դարեհի փախուցելոցն անկելոցն առ նա՝ զհամդերձեալսն. որ և առեալ Աղեքսանդրի զզօրսն խաղայր զնայր յաշխարհն Մարաց: Իսկ լուաւ Դարեհ թէ յԱկբատան[3] է նա. բայց ոչ կարծեաց թագաւորել

1 Երկք ՕՕ. [illegible] [illegible]
2 Ս. [illegible] [illegible]
3 ՕՕ. [illegible] է:

Աղեքսանդրու յԱսիա, եթէ ոչ քամահեսցէ զանուամբն Դարեհի ։ Նա պատմեցաւ նմա թէ փախըստական է 'ի կասպիական դրունսն մերձ յաշխարհն Թալիշ 'ի գաւառն Գիլանայ . և Ճեպով առնէր ընթեռն մտանել ։ Նա լուաւ յումեմնէ թէ մօտ է . և Գիտանեայ ներքինւոյ ինքն փախուցելոյ և առ նա անկելոյ, որ պատմեաց նմա զամենայն Ճշմարտիւ . համարձակագոյն և քաջալերութեամբ զհետ մտանէր նմա ։

ՃՂԵ . Նա իբրև գիտացին Դարեհի նախարարքն զԱղեքսանդրոս մերձ 'ի տեղին, Բեսոս ոմն անուն և Արիվարդան զեղխեալ մտեալ նոսա ՝ բարուք խորհեցան սպանանել զԴարեհ . քանզի առէին առ միմեանս Բեսոս և Արիվարդան . սպանցուք զԴարեհ և պարգևս առցուք յԱղեքսանդրէ իբրև զթշնամի նորա սպանանելով ։ Այսպէս չար խորհուրդ զմըտաւ ածեալ և ոչ ամաչեցեալք 'ի նմանէ, կարծեցեալ մեծ փառս մատուցանել մակեդոնացւոյն, բերին 'ի վերայ նորա սրաւորեալ զձեռս ։ Նա իբրև ետես զչարսն Դարեհ, ասաց . Ով իմ տեարք, որ յառաջն իմ ծառայքն էիք, զի՞նչ այդքան զրկեցի զձեզ կամ զի՞նչ յանցեայ առ ձեզ, զի դուք զիս սպանջիք խուժադուժ յահրութեամբ . մի աղաչեմ, մի յոլով դուք քան զմակեդոնացիսն չար ինչ գործիցէք . մի և ապիրատնմանութեամբ քան զԱղեքսանդրին բերէք 'ի վերայ իմ . Թող տուք ինձ այսպէս 'ի տամալսս ՝ անկանել կալ և յոգւոց հանել զանհարթութիւն խառնակութեանս գիպուածոյ . քանզի եթէ եկեալ 'ի վերայ այժմ Աղեքսանդրոս գտցէ զիս խողխողեալ, թագաւոր զթագաւորի անկելոյ զվրէժ խնդրիցէ ։ Նա նոքա ոչ իւիք հաւանեալք մաղթանաց իւրեանց արքային, սրովք իւրեանց վանեցին զնա ։ Իսկ նա

1 Աչք ՕՕ. [illegible] ։ Յոյն Թէրի է ։ [illegible]
2 Զորս ՕՕ. 'ի [illegible] ։

ընդդէմ դարձեալ կռուէր ընդ երկոսին հզօր պատանիսն. զՆեոսս աջհեակ ձեռամբն ընդ երկիր կալեալ[1], և զձախոյ զծունկն յողինն նորա հարեալ և յետկոյս բեկեալ, և զԱռիվարդան աջոյ ձեռամբն պաշտպանելով զի մի անցէ 'ի վերայ իւր զյածումն սուսերին. և առ շեղ նոցա և կողմնակի հարուածքն լինէին նմա 'ի տիրապան ամբարշտացն, ոչ կարացեալ զօրութեամբ զնա սպանանել: Իսկ Մակեդոնացիքն ընդ Սորանկա գետն սառուցեալ անցանէին. և Աղեքսանդր եկն եմուտ յապարանս Դարեհի: Եւ վասն ամբարիշտքն ունեալ զմուտն արքայի, թողեալ զԴարեհ կիսամահ 'ի բաց գնացին փախստեայ, մինչև ուսցին թէ որպիսի թագաւորն առ նոսա ունի բարս:

ԾԴԶ. Իսկ իբրև եկն եմուտ յապարանսն, գտանէ Աղեքսանդրոս զԴարեհ կիսամահ տակաւին հոսեալ յերկիր 'ի սրոյն, կարի սեաւ արեամբն սաստկապէս ներկեալ: Ողբս առեալ[2] կականեաց 'ի վերայ նորա աշխարանս արժանի տրտմութեան. արտասուս յակնաղբերցն գետաբար հոսելով տխրեալ ծրմբէր. և քղամիդաւն ծածկեալ զմարմինն Դարեհի, իբրու զի թագաւոր էր, 'ի վերայ թագաւորի թըշուառութեանցն տխրատէր[3] տրտմեալ. զձեռսն եդեալ 'ի վերայ Դարեհի լանջացն ողորմութեամբ լի, այսպիսի բանս առ նա խօսեցաւ. Արի կաց 'ի քումդ երկրէդ[4], ով արքայ Պարսից մեծդ Դարեհ, և բոյոցդ տէր լեր դարձեալ. կալ զքո թագաւորատան բազմութիւնդ. առ 'ի քեզ զքո մեծութիւն փառացն զթագ արքայութեան: Երդնում քեզ, Դարեհ, 'ի վերնական նախախնամութիւնն և յաստուածսն ամենայն, զի ճշմարտութեամբ և ոչ կեղ-

1 Հինգ օր. [illegible] գծեալ [illegible]:
2 Ս. յաւելու [illegible]:
3 Երկք ՕՕ. [illegible]:
4 Ս. յաւելու և [illegible] 'ի [illegible]:

ծեալ խաբէութեամբ առեմ զայս քեզ. քանզի քեզ միայն ըղձիւք խնդրեմ զթագդ և զկայսերական գաւազանդ լինել զոր ունէիր, քանզի ընդ քեզ և ես բազմեալ հաւասարէի սեղանոյ հացկերութեան[1] ձեռամբ, յորժամ եկեալն էի յԱղեքսանդրէ հրեշտակս առ քեզ: Այլ արդ արի յոտն կաց և կալ զքո աշխարհ. կանգնեա զքեզ 'ի քաջալերութիւն յանձն առնլով, զի օգուտ ոչ է պարտեալ թագաւորի թշուառացեալ տրտմել. զի անդխտութիւն[2] մարդկան առ 'ի վախճան մահու և 'ի նմանէ ոչ ոք զերծանել պանծայ: Բայց պատմեա, տէր արքայ, եթէ ո՞յք էին որ հարին զքեզ. ազդեա ինձ զնոսա, զի զքեզ այժմ 'ի ցաւոց հանգուցից:

ՃՂԷ. Եւ զայս իբրև ասաց Աղեքսանդրէ, ապա մաղձնեալ հեծեծութեամբ Դարեհի և զձեռան 'ի նա կարկառեալ ձգեաց յինքն զԱղեքսանդրոս, և պատատեալ զնովաւ ասաց. Աղեքսանդրէ, մի երբեք գուցէ բարձրասցիս հպարտութեամբ ընդվզեալ 'ի թագաւորական փառսդ. քանզի յորժամ գործ համգիտաստուած գործեսցես և յերկինս ձեռօք քով թուեսցիս հասանել, ընդ միտ ած և գիտա զհանդերձեալսն. քանզի դիպուած բախտի ոչ գիտէ զթագաւոր և ոչ զիշխան, ոչ զգեղջուկ և ոչ զբազմութիւն. բայց անորոշ բարուք գնայ յամենայն ուրեք և յածի: Բայց տես դու արդ եւս թէ որպիսի ինչ էի աշխարհակալ, կամ այժմ զինչ եղէ թշուառականս. տէարս երկրի, որ և ոչ անձինս տէր եղեալ մեռանիմ: Թաղեա զիս, որդեակ, քոյով փառաւոր ձեռօքդ. պատեսցեն Մակեդոնացիք և մի պարսիկք. խուժադուժք մի եղիցին Դարեհի յազգակցութիւն: Արդ տես և պատրաստ լեր պահելով զքեզ 'ի քոյոցն, զի մի վտանգս կրեսցես 'ի Մակեդոնացւոցն որպէս և ես այժմ 'ի պարսկական յարանց: Այլ աղերսիւ քեզ

1 Չորս ՕՕ. հացկերութեամբ: 2 Բ. հանդիպութիւն:

յանձն առնեմ թշուառական զմայրն արքայուհի զՌոդոգունէ իբրև զքո ծնող, և 'ի կին իմ իբրև յարիւն զթա. իսկ զդուստրն իմ զՌոքսիանէ տամ քեզ 'ի կնութիւն. զի թէ ինձ և 'ի մեռեալս կայ մնայ յիշատակօք, երկու ծնունդք 'ի ծնողս պարծես-ցին, դու հարբն քով Փիլիպպէիւ և դուստրն իմ Ռոքսիանէ Դարեհիւ: Պատուեա զքոյրն իմ Դարիփարտա քոյր քեզ տեսանելով, և զեղբայրն իմ մեծարեա զՈքսիդարկէս իբրև զհարազատ թագաւորի, զի մի Մակեդոնացիքն ոտնհար լինին 'ի վերայ. և զայլ մանկունսն խնամածութեամբ և սիրով ընկալ որպէս վայել է քոյին հանճարեղ իմաստութեանդ: Եւ զայսքան ասացեալ Դարեհի բանս անդարձականս՝ եհան զոգին 'ի գիրկս աշխարհակալին Աղեքսանդրու:

ԵԹԷ ՈՒՐԱՆՕՐ ԹԱՂԵԱՑ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ ԶԴԱՐԵՀ

ճԴԸ. Իսկ Աղեքսանդրի բախտակից[1] եղեալ և 'ի գութ գորովս շարժեալ լայր դառնապէս. և հրամայեաց թափօրով[2] բառնալ զմարմինն և թաղել զնա որպէս պարտ էր զթագաւոր թաղել պարսկական օրինօք: Հրամայեաց առաջնոյ Մակեդոնացւոցն և Պարսիցն երթեալ առաջի վառեալ. բայց ինքն իսկ արքայն զուսն մածուցեալ ինքնին բառնայր ընդ նախարարսն զդին[3] Դարեհի. բայց ոչ այնչափ հեծէին որք զհետ երթային տեսանելով զԴարեհ, որքան զԱղեքսանդրոս 'ի բառնալն զնա: Եւ եդին 'ի գերեզմանի թագաւորացն Պարսից. և անդ զուարակս և հօտս բազում զենեալ, հանդէս գերեզմանական արար: Եւ ինքն իսկ ուժեղ և կարողապէս նստեալ

1 Մի Օ. առաջին եղեալ:
2 Յորս ՕՕ. Թափօրաւ կամ Թափօրով.. Մակեդոնացւոցն երթեալ և Պարսիցն առաջի վարեալ:
3 Յորս օր. զԴարեհին կամ զԴարեհն:

յաղթող թագաւորութեան՝, և հրամանս և օրէնս եդ Պարսից աշխարհին 'ի ձեռն հրովարտակին, որ ունէր օրինակ այսպիսի ինչ.

ԾՂԹ. " Թագաւոր Աղեքսանդրոս 'ի թագաւորէ աստուածոյ Ամոնայ և 'ի մօրէ Ոլոմպիադայ գրեմ ամենայն բնակչացդ որ 'ի պարսկաստան յաշխարհիդ էք Արեաց և անարեաց, գեղջէից և քաղաքայնոց. Ոչ է այսպէս, ասէ, ըղձալի էր ինձ զայսքան բիւրս չարաց[2] ոչ տալ կորուսանել, բայց եթէ դև կամ բախտ ինչ արար զիս հակառակ Պարսից յաղթութիւն տանել. Այս յայժմ շնորհակալ եմ վերնական խնամոցն նա և աստուածոց ամենեցուն և ամենուրհեայ: Գիտել արժան է ձեզ, որ կարգեալ նախարարքդ էք, ում պարտ է լսել և հնազանդ լինել որպէս առ Դարեհիւն և 'ի նմանէ կարգելոց զօրապետացդ ամենեցուն. զի մի գիտիցէք զայլ ոք թագաւոր, բայց զԱղեքսանդրոս միայն մանուկ և իմաստուն. և վարիլ իւրաքանչիւր կրօնիւք և սովորութեամբք, օրինօք և ընդելութեամբ, տօնիւք և կացըրդիւք, խրախութբ հացկերութից և զուարակազենութեամբք, որպէս առ Դարեհիւն կատարէիք. Իւրաքանչիւր[3] ոք որում կարգի հասելում 'ի վարս կենցաղոյս կացցէ պարսիկ, այլ 'ի քաղաքի բնակեսցէ. իսկ ապստամբքն խոշտանգեսցին մահուամբ. Այլ ընչից ձեզ թողութիւն առնեմ, իւրաքանչիւր տիրել իւրոցն. բայց յոսկւոյ և յարծաթոյ, յորում պանծալով և խրոխտալով ցուցցի[4] ամենայն այր քաջ և վատթար. Արդ զամենայն զոսկի և զարծաթ հրամայեմ զի վարեալ լիցի 'ի ձեռն այնոցիկ՝ որ 'ի գաւառս և 'ի քաղաքս մեր բնակեալ իցեն, և գահեկան[5] զոր

1 Ա. յաւելու. [illegible] գաւազանաւ առաջնորդելով և փառօք վերին նախախնամութեամբն փրկելով [illegible] և [illegible] [illegible] Հրամանաւ:

2 Զորս ՕՕ. չորեքայ:

3 Զորս ՕՕ. Իւրաքանչիւր յի-րաւ կարգի վարս... և ընդ[illegible]:

4 Ա. այդպէս. այլ ՕՕ. ցուցի:

5 Բ. դարեհեան:

ունի ամենայն որ պարգեւս իւրաքանչիւր մարդոյ 'ի կիր ծախոց ըստ կամաց իւրոց արկանել։ Բայց զամենայն զվրիժակ՝ զինուց եւ զվահանս տանել 'ի ցուցեալ եւ կազմեալ զինանոցս. եւ Նախարարքն զորս փորձեցեն հանդերձ ինքեամբք զօրութիւնս զայս եւ զինեցեն. եւ հանդէս որպէս սովորութիւն է առնել՝ վարեսցին կամօք զօրագլխին եւ Նախարարի։ Այն յաղին վերայ մի յարիցէ, եւ մի գաւառ 'ի գաւառի վերայ ուրուք. բայց յաղագս վաճառականութեան միայն՝ առաջէն, եւ այս իւրու քան արանց. եւ կամ իբր զթշնամի պարսիկ օրինօք խոշտանգեալ՝ սատակումն կրեսցէ. եւ վաճառականք դարձեալ ամենեքին նովիմբ այսու գործելով՝ վարեսցին որպէս առ Դարեհիւն կատարէին։ Իսկ անդաստանաց եւ այլոց ամենեցուն յորոց նմա երիս մասունս հարկէին, ես զերկուսն առից. զի կամիմ զաշխարհ ընդարձակութեան բարեկենդանութեան առնել, եւ զՃանապարհս Պարսից զվաճառ առնել խաղաղութեամբ հանդերձ հանդարտութեամբ. որպէս զի որք յԱսիադայն իցեն, դիւրաւ յորում կամին 'ի քաղաքս Պարսից երթիցեն. քանզի յԵփրատայ գետոյ յանցիցն եւ յսկզբանէն 'ի Ճանապարհի կէս չափ լարոյ եւ լարով իւրաքանչիւր ումեք Նախարարի[3] առաքեցի Ճանապարհ առնել եւ գրել 'ի վերայ ուր Ճանապարհն տանի. եւ նշանակ ինչ եթէ երկու Ճանապարհք դիպիցին եւ կամ յոլովք, որպէս եւ են լայն Ճանապարհք եւ անբաւ ցամաք. եւ այս յայտ եղիցի։ Արդ վասն զի զայն որ 'ի Ճանապարհսն եղեւ հօգ առ Դարեհիւ, եւ կարգեցաւ ծախ սովորական, շնորհեմ 'ի մեհեանս աստուածոց եւ մանաւանդ զՈրոսոբարէս. վասն զի արժանապէս դէմ յանդիման Կաւոսի ծննդական տօնիցն եւ զիմն կամիմ թէ արասցեն. հրամայեցի Մոքիւղայ Նախա-

1 ՕՕ. վճիժակ. եդաք ըմբռնին։
2 Զորս ՕՕ. փորձեալ։
3 Բ. եւ այլ երեք ՕՕ. Նախարարի։

բարի զի զինն և զԿաւոսին զծննդական տօնս արտա-
ցէ խրախճանութեամբ մեծաւ հանդիսիւ, և հան-
դիսին խմբում պարսիկք տեսողք լինիցին և ըմբշա-
մարտիկք, և 'ի Պարս դիցեն զայս ։ Բայց կամիմ և
զկոյսն զպսակեալն զքաղաքն մեր՝ մինչ ցորքան կոյս
մաքուր կայ և միայ՝ քրմանոյշ լինել մօր իմոյ, առ-
նուլ 'ի պատիւ տարեորական քանքար զոյգ պսակին .
ապ՝ եթէ զնա ընութիւնն հասեալ գրաւեսցէ և կին
արասցէ, տացի նմա զինն զի ունիցի 'ի տեղ պաշտա-
կանի ։ Եւ սոյն այս խրատունք և այնմ որ առնու
զքահանայութիւնն կացցէ մնասցէ ։ Բայց կրթու-
թիւն և հանդէս եղիցի 'ի նշանաւոր տեղւոջ գեղե-
ցիկ իբր 'ի հելլենական քաղաքի . բայց զընտրու-
թիւնդ ինքնին ես արարից մինչդեռ կենդանի եմ .
այլ յետ իմոյ վախճանին կարծեմ զաշխարհն զոր ե-
տու, կարել և պէտս զայս առնել ։ Եւ տուեալ լիցի
պատերազմական կառաց տաշտ ոսկի, որ ունիցի կշ-
շիռ սատերս հազար և երկերիւր, և այլք արծաթիք
մի մի որ տանիցին 'ի նոցանէ չափ՝ յորմէ կարիցէ այր
ուժեղ զգաստ արբենալ ։ Եւ ձիոյ պատերազմակա-
նի տաշտ հանդիսակչիւ՝ և պատմուճան մարական .
և յաղեքսանդրեան ճաշն հանապազորդ, որում հա-
սեալ իցէ և յաղթեաց, ըստ պարսկաց օրինացն պսակ
առցէ զոյգ ոսկի սուրբ և պատմուճան պարսիկ սա-
տակ, և գօտի ոսկեղէն, և տաշտ երկուս՝ սատերս
հարիւր և եօթանասուն, և զյաղթութեանն նշանակն
յաղեքսանդրեան տաճարին ուտել հաց ամենայն ի-
մոց նախարարացն, տաճարին ամենից՝ որ 'ի Պարս
են իշխանք պարսիկք քաղաքացիք, որ ոչ հակառակ
թագաւորին են ։ Եւ հանդիսիցս այսոցիկ՝ դաւա-
ռապետք մատակարարք եղիցին մեր աղեքսանդրա-
ցիքս . և քուրմ աղեքսանդրեան տաճարին Սոքիւ-
ղոս որ շինեաց զաղեքսանդրեան տաճարն, և զգեց-

1 Ձեռ ՕՕ. հնդկաստանեային կամ հնդկաստանեային ։

ցի պսակ ոսկի և պատմուճան ծիրանի, և մանաւանդ 'ի նշանաւոր յաւուրսն իմ․ բայց արտաքոյ քան զհրամայեալսն մի ոք իշխեսցէ մտանել 'ի տաճարն․ բայց ըստ ամենայն օրինաց՝ արգելեալ լիցի 'ի մտանելոյ մարական ազգն։ Նաև կամիմ զձեզ մի զանձինս դատել յորժամ ունիցի իրս ինչ առ ընկերն, և մի առ որում կամիք, մանաւանդ յաղագս գլխաւորաց․ և եթէ գտցի արտաքոյ խորհուրդս նոցին ժողովելով կամ նախարարս և կամ այլ ժողով, իբրև զթշնամի Պարսից կորուսեալ սակաւակեաց սատակեսցի„։

Մ․ Նաև վասն զի այս ամենայն եղեալ կատարեցաւ, դարձեալ յինքն ասելով Աղեքսանդրոս․ Մարք յեղեալ կործանեցին զԴարեհ զիմ զմեծ հզօրն․ և ես ոչ սպանի զնա, այլ այլք ոմանք զորս ես ոչ գիտեմ, որոց մեծամեծ պարգևս պարտիմ նախարարաց, ընդտուրս զոր կամին՝ շնորհեմ, և գաւառս մեծամեծս, զի զիմ թշնամին սպանին։

ՄԱ․ Այսպէս ասացեալ Աղեքսանդրի, պարսկական բազմութիւնն խռովեցաւ, իբրև թէ հանդերձեալ է աշխարհական զՊարսս իւրել[1]։ Նա գիտացեալ զբազմութեանն տրտմութիւն, ասէ․ Զինչ կարծէք, ով պարսիկք, իբրու թէ հանդերձեալ եմ զձեզ բառնալ, թողուլ անփառաւորս և աննշանաւորս, որք սպանէք զթագաւորն զԴարեհ․ քանզի եթէ կենդանի էր Դարեհ, դարձեալ զօրաժողով լինէր 'ի վերայ իմ 'ի պատերազմ․ իսկ այժմ զի սպանեալ եղև, ամենայն պատերազմ լռեալ դադարեցաւ։ Արդ եթէ մակեդոնացի էր որ եսպան, եկեսցէ առ իս համարձակ և առցէ զքաջութեանն պարգևս զոր ինչ ինքն պիտոյացեալ կամեսցի․ և եթէ 'ի Պարսից ոք իցէ, ընաւ իսկ մի խռովեսցի[2]․ քանզի երդնում յաստուածս և 'ի մօրն իմոյ Ողոմպիադայ

1 Բ․ և Ս․ միայն ունէին, և պակասէր։ գրեալ ըմբռնեալ․ յայլս հաստուած 2 Բ․ խռովին։

փրկութիւնն զի նշանաւորս և ամենայն ուրեք երևե-
լիս ամենայն մարդկան արարից զնա ։ Այսպէս եր-
դուեալ թագաւորին, առ հասարակ ամենայն բազ-
մութիւնն արտասուեաց ։

### ՍՊԱՆՈՒՄՆ ԲԵՍՈՍԻ ԵՒ ԱԹԻՎԱՐԴԱՆԱՅ

ՄԲ. Իսկ չարքն այն որ սպանին զԴարեհ, Բեսոս
և Աթիվարդան, իբր թէ առեալ ընկալցին մեծ ինչ
պարգևս յԱղեքսանդրէ. և այս զի երդմամբ եդև,
ինքեանք մատուցեալ առեն զնա. Արքայ, յաւիտեան
կաց, տէր Աղեքսանդրէ. մեք եմք որ զԴարեհ սպա-
նաք, որ էրն քո թշնամի ։ Իսկ զայս լուեալ Աղեք-
սանդրի հրամայեաց ըմբռնել զնոսա և ՚ի վերայ գե-
րեզմանին Դարեհի ընդ խաչ հանել ։ Իսկ նոքա գո-
չէին աղաղակէին և ասէին. Աղեքսանդրէ, երդուար
մեզ յաստուածս և յՈղոմպիադայ փրկութիւնն ե-
թէ զսպանողսն Դարեհի երևելիս և նշանաւորս ա-
րարից, զինչ այժմ հրամայես զմեզ խաչել՝ ան-
ցեալ՝ զերդմամբքն քովք զոր արարեր ։ Այլ թա-
գաւորն ցնոսա. Ոչ յաղագս աղաչելոյ, ով չարք, այլ
վասն բազմութեանս. որք պարսիկք ոչ այլ ազգ օ-
րինակաւ էր այսպէս դիւրաւ գտանել և յայտնիս
զնոսա երևեցուցանել, եթէ ոչ սակաւ մի սպառնա-
ցեալ էր Դարեհի մահուանն. քանզի այսպէս էր ինձ
խնդրելի զնորա սպանողս ՚ի մեծ պատիժ մահու-
մատնել. քանզի որ զիւրեանց տէրն սպանին, ևս կա-
րի արագ համարձակութիւն յանդգնութեան բե-
րէին և զիս խակ հասանել ։ Իսկ ձեզ, ով չարք, ոչ ե-

1 Չորս ՕՕ. և անցանես զերդմամբս ։ Այլ թագաւորն. Ոչ յաղագս, ասէ, չարք, զի ոչ էր ինչ դարձ զթագաւոր սպանանել. այլ երդուեալ թէ երևելիս սանէմ, այժմ խաչելոցն ՚ի խաչին և երևելի լինիցի ՚ի մարդկանէ. զի դարձ էր ինձ այսպէս պատիժ տալ Դարեհի սպանողացն. քանզի որ զիւրեանց տէրն սպանին, ևս կարի արագ համարձակութեան յանդգնութեան բերէին զիս իսկ հասանել ։ Այսպէս ասացեալ ։

զէ տաերգութիւն • քանզի երդուայ երևելի և նշանաւորս ամենայն մարդկան առնել • արդ եղիջիք երևելիք և նշանաւորք 'ի վերայ խաչիցդ կախեալ • Այսպէս ասացեալ Աղեքսանդրի՝ գովեցին առ հասարակ ամենեքեան • և չարքն այն խաչեցեալք լինէին առ գերեզմանին Դարեհի •

ՄԴ. Բայց յետ սակաւ աւուրց Սքանդարն զքաղաքն 'ի խաղաղութեան արարեալ, ասաց առ բազմութիւնն • Ո՞ կամիք նախարար լինել քաղաքիս • Եւ նոքա ասեն • Աղաչեմք զքո քաջութիւնդ, ինքնակալ տէր մեր արքայ, զի շնորհեսցես մեզ զԱզաղիտէ՝ զԴարեհի հօրեղբայրն • Եւ պարգևեաց Աղեքսանդրոս •

ՄԴ. Եւ գրեաց թուղթ առ մայրն Դարեհի և առ կինն, որ ունէր օրինակ զայս • "Թագաւոր Աղեքսանդրոս Ստատիրայ և Հռոդոգունեայ ողջոյն խնդալ • Ընդդէմ կացեալ մեր Դարեհի վանեցաք որպէս աստուած կամեցաւ, զոր աղօթիւք խնդրէի և կամէի կենդանւոյն ընդ իմ ցոյց թագաւորութեամբս առնել • Դարձեալ այնքան կարէի զկամս խօսիցն նորա լսել • այլ Դարեհ անկեալ վիրաւոր յիւրոցն ըմբռնեցաւ • որ և զուզնաքեայ շունչ յանդուղըն ունելով, ողորմեալ աշխարհեցի զնա՝ մարդկային անցս 'ի վերայ կրելով, և իմով քղամիդաւս պատեալ՝ հարցանէի զկորուստ նորա • Եւ նա յաւանդ տուեալ յանձն արար ինձ զձեզ, տուեալ զՀռոքսանէ զդուստրն իւր 'ի կենակցութիւն իմ • բայց յաղագս այլոց ինչ իրաց ոչ ժամանեաց ընդ իս խօսել յաղագս որոց կամէր • Արդ զեղեալ պատճառս կորստեան նորա զհետ մտեալ վանեցի • վրէժ խնդրել արժան և վայելուչ, զառն մահուամբ բարձի 'ի կենաց • Բայց բարիոք թուեցաւ ինձ առաւել զարանչելն մարմինն նորա զի ձերովք սովորական օրէնովք լացջիք և պատեա-

1 Յայն օրինակս Բ. զԱզատաղիփէս. այլք զԱզատաղիփեայ կամ զԱզատաղիփեայ :

ջէք ։ Բայց կարծեմ զձեզ լսել զպատմութիւն նորա և ոչ յագել՚ի տրամութենէն ։ Արդ հրամայեցի գերեզմանն՚ի գլխացաղնականն նմա լինել առ հայրենիս նորա գիցաղունս, և առաքեցի զմարմին նորա զքանչելի թաղման արժանի լինել ։ Արդ դուք ՚ի տրամութենէդ և ՚ի փղձկալի արտասուացդ դադարեցարուք ։ քանզի ես զձեզ անդէն հաստատեցից ՚ի ձեր տեղիսն թագաւորել, որոց կամեսջիք ազանց ։ բայց յարգեան ժամանակիս լերուք յորում տեղւոջ էք մինչև զատի իմ կարգեալ յօրինեցից ։ քանզի մալեցան ամենք անհաւանել ։ և մինչև ցայժմ բաս ձեռն տալոյ զօր ՚ի մէնջ արժանի արար կարկառել նմա ՚ի Ռոքսանէս՝ իրաւացի զդուստրն իւր արժանիս վարկանել աթոռակից լինել ինձ ։ Բայց ես քաջ կամիմ թէ դուք ընդ իս կալջիք՝ երկրպագութիւն կրել սմա իբր Աղեքսանդրի կնոջ կամիմ ։ ողջ լերուք ,,։

ՄԵ ։ Իսկ նորա գրեցին թուղթ առ Աղեքսանդր այսպէս ։ " Աշխարհակալ արքայից ։ Ռոդոգունէ և Ստատիրա, թագաւորաց թագաւորին Աղեքսանդրի տերամբ խնդալ ։ Աղօթիւք խնդրեցաք յերկնաւոր աստուածոյն որք գլեցին զԴարեհի անունն և զՊարսից, և քեզ պարծանս յաւիտենականս կացուցանել յաշխարհի ։ որ խորհրդով և հանճարով, իմաստութեամբ և զօրութեամբ հանդիսապատիւ ընտրեցար ողոմփիացն աստուածոց ։ Գիտեմք զի ընդ քոյին զրկօքդ լինելով բարիք կեամք, և գիպուածով բաստի ՚ի վերայ յաղօթս կամք գեղեցիկ քեզ մատուցանել զայս և զքանչելագոյն և լաւագոյն բոլոր աշխարհի տիրել քեզ ամենայն և անթիւ ժամանակօք ։ զի ոչ իբր ՚ի գերիս մատեար առ մեզ անկեալս ընդ քոյին ցպով թագաւորութեանդ, այլ ունիս իբրև յաւուելութենէ մեծութեան եղեալս ։ բայց այժմ ոչ ես գերիք եմք ։ այլ գիտեմք արդ զԱ-

ղեքսանդրոս Դարեհ եղեւ և Աղեքսանդրի երկիր պագանէին, որ ոչ յամօթ զնեղ արար։ Արդ դրեցաք Պարսից, հնացելում ազինք, որպէս զի ապաշխեայ զՊարսս աստուածդ աթոռակից նստուցանել Արամազդայ, երկրպագութիւն կրել զուգ ընդ նմա. և զՌոքսիանէս զոր ընտրեցեր և վարկար աթոռակից լինել քեզ, երկիր պագցուք իբրև Անահտայ յորժամ Արամազդ զՌոքսիանէս յամուսնութիւն իւր առնէ։ Դրեցաք և Պարսից ազինք այսպէս, զի գիտասցես, այժմ զԴարեհ գիտեմք. որ և այժմ Դարեհի զաւազան թագաւորութեան ուղղեալ կանգնի. քանզի Արամազդն մեծ Աղեքսանդրոս զՌոքսիանէ յամուսին իւր առնու։ Արդ զամենայն որ 'ի Պարսս աստուածք հաստատեալ են, բառնալով բերեալ մատուցանեք Աղեքսանդրի օրհնելով և գոհանալով, զի զՊարսից պարծանս առաւել մեծապէս բարձրացոյց։ Այլ 'ի հարսանիսն պարսիկք զԱղեքսանդրոս քարոզեալ և հռչակեցուցեալ երկրպագեցուք ։»

ՄԶ. Իսկ թագաւորն բուռն հարեալ զգրանէն, անգէն ասաց պատմել. Հրաժարիմ 'ի հանգիստաստուածական պատուոյդ. քանզի ես մահկանացու մարդ եղեալ՝ երկնչել պարտ և արժան է այսպիսումս. քանզի վտանգ բերեալ մատուցանէ յաղագս ոգւոյ։ Բայց գովեմ և շնորհակալ եմ և ընդունիմ զձեր իմաստութիւնդ, և փորձեցայց արժանիս ծնողացն ձերոց՝ հոգ տանել վասն ձեր. ողջ լերուք։

ՄԷ. Բայց գրեաց և մօրն Ոլոմպիադայ և ընկալու զհարսանիսն և յուղարկեաց 'ի Մակեդոնիա։

ՄԸ. Եւ յետոյ գրեաց և Ռոքսիանեայ թուղթ այսպէս. «Թագաւոր Աղեքսանդրոս, Ռոքսիանեայ քեռ խնդալ։ Դրեալ Ոլոմպիադայ մօր յաղագս այլ ինչ իրաց որ անկ էր մեզ, պատուիրեցի զկանացի զարդն և զհանդերձն Ռոդոգունեայ, զմօրն Դա-

րեհի և զորս կնոջն զՍտատիրայ զոր առաքեցի բերել ձեզ զկարասն մակեդոնական. զայն տուեալ զարդ յարմարուածոյ մարմնոյ ունել զՌոդոգունեայ և ոչ Ստատիրայ։ Եւ աՀա 'ի միտս բերելով երկիր պագէք ամենայակալողին Եւմեսեայ Եւդէկեայ, և զՀզօրն և զերկարն յանձանց ձերոց զնախանձն 'ի բաց ընկեցէք։ Եւ յորժամ յայսոսիկ Հայեսջիք, կարծեցէք և զսա 'ի սոսայն զնոյնս ունել. քանզի այս առ աստուած և առ մարդիկ արդարակք են, մի անՀար լինել դիպուածոյ բախտի։ Բայց փորձեցեր և դու արժանիս խորՀել Աղեքսանդրի, և զերկիւղն առ 'ի յՈղիմպիադայ պատուել. զի զայս գործելով, անձին քում և ինձ մեծ և գեղեցիկ շքեղութիւն տասցես. ողջ լեր ինձ սիրելեաւդ„։

ՄԹ. Իսկ Ողիմպիադայ պատրաստեալ զԹագաւորական զգեստն զպատուականն զամբարՀաւաճն քան զո̃մ Թագաւորական տեսութիւն և առաքեաց զնոսա 'ի Մակեդոնիայէ և զՀարսանիսն փութով կատարել։ Եւ բազում ցնծութեն եղելոց յարքունիսն Աղեքսանդրու և Ռոդոգունեայ, գրէ Թուղթ մօրն Ողիմպիադայ. „Թագաւորաց Թագաւոր Աքանդարիս Ողիմպիադայ քաղցուայնոյ՝ մօր և Արիստոտէլի իմաստնոյ և պատուական առաջնորդի մեծ վարդապետի խնդալ։ Հարկաւոր Համարեցայ գրել ձեզ վասն ընդ միմեանս բախմանն եղելոյ իմոյ և Դարեհի յայնկոյս Տաւրոսի Հանդերձ իմով զօրականօքս և իմով մակեդոնացօքս։ Քանզի լուեալ զնմանէ զի խաղացեալ գայր Հանդերձ բազում Թագաւորօք և նախարարօք առ խախական գոգովն, ըմբռնեալ այծս բազում և կապեալ ջաՀ յեղջիւրս նոցա գնացի 'ի գիշերի 'ի վերայ նոցա։ Իսկ նոքա իբրև տեսին զմեզ, 'ի փախուստ դարձան՝ կարծեցեալք եթէ բազում է գումարտակն և խաղացեալ գայ 'ի վ̃ր նորա։ Եւ այսպէս

1 Նրկք օր. Թագաւորէնի կամ Թագաւորէնի։ Ա. Թագաւորախնդրաւոր։

ընդդէմ նոցա զյաղթութեն նշանակն գործեցաք, յա-
բուսմ տեղւոջ և քաղաք շինեցի Այծս անուանեալ. և
յԻսի գոգն շինեցի քաղաք Աղեքսանդրիա զԿատա-
տիսոն։ Որ և անդուստ հալածական արարի զԴա-
րեհ մինչև 'ի մուտս Հայոց աշխարհին, ուրանօր է
Դկղաթ և Եփրատայ աղբիւրն, ուր 'ի բուռն ան-
կեալ Դարեհ իւրոց զօրականացն՝ սպանեալ եղև 'ի
Բեսոսէ և յԱրիովարդանայ 'ի Մարաց զօրականացն։
Բայց ես յոյժ տրտմեցայ. քանզի թէ յաղթեցի նմա,
ոչ կամէի սպանանել, այլ ունել ընդ իմով գաւազա-
նաւ թագաւորութեանս. և հասեալ գտի զնա մինչ-
դեռ շունչն կայր[2]. և հանեալ իմ զքղամիդն անուամե-
սխտոն[3] արկի 'ի վերայ նորա։ Ապա հայեցեալ տե-
սանէ զանյայտութիւն դիպուածոյ բախտի 'ի վերայ
առաջիկայ օրինակին։ Եւ պատեալ զԴարեհ և պա-
տիւ արարեալ հրամայեցի 'ի բաց հատանել զքիթս
և զականջս այնոցիկ որ պահէին զնորա շիրիմն ըստ
սովորութեանն Պարսից։ Ապա անդուստ խաղացեալ
դիմեցաք և յածեցաք 'ի Թաւ մայրիս. յորում և նշա-
նակ իմն և անուանս հրամայեցի դնել հնազանդեալս
զԲեսոսի և զԱրիովարդանայ և զՄաղկայ թագաւո-
րութիւնն, և զՄարս և զՀայս և զվրացիս և զամե-
նայն պարսկական աշխարհ որում թագաւորեաց մեծն
Դարեհ։ Եւ անտից առեալ բազում առաջնորդս
կամեցայ մտանել յետոյ կողմանն անապատին Մա-
րաց ըստ սայլից շրջանի, և տեղեացն այնց մարդիկն
ասէին եթէ յայն տեղւոջ կան մարդիկ վայրենի և
չար գազանք։ Բայց զի ես կամէի առաւել զտեղին
և զմարդիկն տեսանել, հրամայեցի հանդերձ բա-
զում զօրու 'ի տեղեացն և 'ի մերոց զինուորացս տալ,
և երթալ զտեղին տեսանել։ Եւ ապա եկաք 'ի տե-
ղի մի որ էր Ճանապարհ և ձոր յոյժ յոյժ խորագնա-

1 ՕՕ. դոր։
2 Ա. 'ի շունչն կայր։
3 Մի Օ. անուանեխտոն։

դոյն՝ . ընդ որ գնացաք մեք տեսանելով զանապատ տեղիսն և գազանս այլ և այլ ազգս ։ Իսկ եղեալ 'ի տեղի մի զինն ժամու և գտաք անտառ ծառոց որ կոչի կանափնիտով, որ ունէր պտուղ նման խնձորոյ ։ Իսկ էին յայնմ անտառին մարդիկ որ տնկածոյք կոչէին, և ունէին մեծութիւն առ մարդ կանգունս քսան և չորս, և երկայնապարանոցք էին, և ձեռք և մատունք սղոցաձևք . որք եկին ժողովեցան առ մեզ, բայց ես յոյժ տրտմեցայ զի տեսանէի այնպիսի կենդանիս ։ Իսկ ասացի ըմբռնել 'ի նոցանէ . և իբրև յարձակեցաք 'ի վերայ նոցա աղաղակաւ և ձայնիւ փողովք, իսկ նոքա իբրև տեսին զմեզ 'ի փախուստ դարձան . և սպանաք 'ի նոցանէ չորս հարիւր և երեսուն և երկու . և նոքա 'ի մերոց զինուորացն հարիւր և վաթսուն և չորս ։ Իսկ անցաք մնացաք ուտելով զպտուղս ծառոցն, որպէս և այլ մարդիկ ուտէին . զայս կերակուր միայն ունէաք ։ Ապա անդուստ գնացեալ՝ եկաք 'ի դալարկուտ[2] իմն վայր, ուր կային մարդիկ վայրենիք նման հսկայից, մեծութեամբ իբր զառաջինսն, լանջօք բոլորակք, թաւք, չէկք . և ունէին երեսս որպէս զառիւծու . և այլք որ կոչէին ովքսողք[3], հերս ունէին կանգունս չորս, և լայնութիւնն իբրև աշտէի . և եկին առ մեզ մաշկեայ պարեգօտովք, հզօրք յոյժ, պատրաստք պատերազմ տալ առանց տիգաց և նետից . 'ի գումարտակէն մերմէ սպանին բազումս . և բարեկամաց և մանկտւոյն բազմաց կորուսելոցն 'ի մէնջ հրամայեցի հրդեհ առնել և հուրբ կռուել ընդ նոսա . և այնպէս անցեալ գնացին որեարքըն . և զինուորք որ էին[4] 'ի մէնջ երկոտասան բիւր, և հրամայեցի խարոյկս արկանել և զմնացեալ ոսկերս

1 Զօրս ՕՕ . խորտփեալ կամ խորտփեալ . . . գազանս և այլ ազգս . . . երկայնապարանոցս . . . բռնել 'ի նոցանէ ։
2 ՀՀ . 'ի դալար կոյս իմն վայր ։
3 ՀՀ . ովբսողք կամ ովքսողք ։
4 Ա . զինուորք խոցեալ 'ի մէնջ ։ Բ . Թերի էր ։

նոցա 'ի Սպետրխադա տանել. բայց նոքա աներևոյթք եղեն: Իսկ մեք 'ի վաղիւ անդր մտաք յայրս նոցա, և գտաք գազանս կապեալ առ դրունս նոցա՝ մեծամեծ իբրև զշունս որ առ մեզ կոչին զանտակես, երկայնութիւն կանգունս չորս, երեքաչիք խայտաբղետք. տեսաք և լու որպէս առ մեզ կրիայքդ են, ազգ երկրատեսակք և խռովարար: Եւ անդուստ խաղացեալ եկաք 'ի տեղի մի ուստի ելանէր աղբիւր յորդ և քաղցրաՀամ[1]. և անդ Հրամայեցի բանակ Հարկանել և փոս և պատնէշ շուրջ դնել, զի Հանգիցեն և կազդուրեսցին սակաւիկ մի զօրականքն՝ յիշելով զՀմակեր մարդիկն: Ապա երևեցաւ մեզ զինն ժամաւն կամ զտասն՝ այր Թաւ իբրև այծ. և ես դարձեալ ընդոստացայ և խռովեցայ տեսանելով այնպիսի կենդանիս, և ասացի ըմբռնել զայրն. և նա աՀաւոր[2] և լրբաբար Հաջէր ընդ մեզ: Եւ Հրամայեցի մերկանալ կին մի և երթալ առ նա, Թերևս 'ի ցանկութեան տռփանս մատնեալ լիցի. և նորա առեալ զմարդըն և Հեռի 'ի բաց գնացեալ՝ ուրոյն իսկ ուտէր. և ամենեցուն մեր ընթացեալ[3] արձակելով Հասանել և ունել, պապաջեաց խախանջելով իւրով Թաւ լեզուաւըն: Եւ լուեալ զայն այլոց ընկերացն եկին 'ի վ̃ր մեր 'ի խարձէն բիւրք անթիւք, բայց մեք էաք բիւրք չորք. և Հրամայեցի Հրդեհս Հարկանել զխարձն, և նոցա տեսեալ զՀուրն 'ի փախուստ դարձան. և մեր զՀետ մտեալ նոցա կապեցաք 'ի նոցանէ բիւրս քառասուն. և նոքա 'ի կերակրոց զինքեանս արգելեալ սատակեցան. և ունէին խորՀուրդս ոչ մարդկայինս, այլ վայրապար իբրև զշունք Հաջէին: Եւ անտուստ խաղացեալ եկաք 'ի գետ մի իբրև յուղխաջուր. Հրամայեցի ապա բանակ Հարկանել և զէնս զանձամբ արկա-

1 ՀՀ. մարգտախին կամ մարգա- տախին:

2 Հինգ օր. յաՀաւոր կամ աՀաւոր. պՀաւոր կամ պիաւոր:

3 Երկու ՕՕ. ընթացան: Բ. յըն… խանդարեալ էր:

նել ըստ սովորութեան զօրականացն, և այնպէս կերակուր ճաշակել նոցա ։ Եւ էր 'ի գետ անդ ծառք սքանչելիք . միանգամայն ընդ արեգական ծագելն և ծառքն աճէին մինչև 'ի վեց ժամն . և 'ի վեց ժամէ աւուրն 'ի վայր նուազէր, մինչ զի ընաւ ինչ ոչ երևիլ 'ի նոցանէ . և արտօսր ունէին իբրև զպարսիկ ստաքտիկէ, և հոտ կարի յոյժ անուշ և պիտանացու ։ Եւ հրամայեցի հատանել զծառսն և ստրնգով ժողովել զարտօսրն . և յանկարծօրէն յիմոց մանկանցն անտի տանջեալք լինէին յաներևոյթ դիւաց . զտանջողաց ճղփիւնն լսէաք և զհարուածսն եկեալ 'ի վերայ թիկանցն տեսանէաք . բայց տանջողքն ոչ երևէին . այլ ձայն իմն գայր որ ասէր . Մի՛ ժողովել մի՛ հատանէք . եթէ ոչ՝ եղիցի անձն այն մեռեալ, և ժանդախտիւ ստապեսցին զումարտակդ ։ Եւ հրամայեցի ապա ոչ հատանել և ոչ ժողովել ։ Բայց էին 'ի գետ անդ քարինք սեաւք . զի որք միանգամ մերձենային 'ի քարինսն յայնոսիկ, զնոյն գոյն քարանցն ընդունէին 'ի մարմինսն ։ Եւ էին վիշապք բազումք 'ի ջուր անդր, և բազմազգս ձկանց՝ որք հուրբ ոչ լինէին եփեալք, այլ ցուրտ ջուրբ աղբերացով ։ Եւ մի ոմն 'ի զօրականաց անտի լուացեալ ցուրտ ջրով և եդեալ յաման եթող, և ապա եգիտ եփեալ զձուկնն յամանէն . և յետ միոյ ժամու փորձեցեալ զայս եցոյց և այլոցն ։ Եւ էին 'ի գետի անդ հաւք նման հաւուց որ առ մեզ են . և եթէ ոք 'ի նոսա մերձենայր, հուր ելանէր 'ի նոցանէ . և հրամայեցի մի՛ ումեք հպել 'ի նոսա ։ Եւ 'ի վաղիւ անդր անցեալ գնացաք, և յածեալ շրջէաք . և ասէին առաջնորդքն . Թագաւոր, ոչ գիտեմք ուր երթամք . դարձցուք անդրէն, զի մի՛ ևս դժուարին տեղիս անկցուք ։ Բայց ոչ կամեցայ ։ Եւ պատահէին մեզ գազանք հնդատանիք բազումք և չարք, հինգաչօքք և այլք վեցաչիք և վեցոտանիք, երկայնութեամբ էին իբրև կանգունս երեսուն, և վաղէին 'ի վերայ

մեր. և այլ բազում ազգս, էր որ անցանէր և գնայր փախստական, և էր որ 'ի վերայ մեր յարձակէին։ Բայց եկաք 'ի տեղի մի աւազուտ ուստի ելին գազանք քառասուն և երկու, և աչս ունէին վեց, բայց երկուքն միայն տեսանէին և այլովքն ոչ տեսանէին։ Եւ անդուստ խաղացեալ եկաք 'ի տեղի մի ուր էին անգլուխ մարդիկ. գլուխ ոչ ունէին բնաւ, այլ 'ի լանջս ունէին զաչս և զբերանն, և խօսէին մարդկեղէն իւրեանց լեզուաւն. Թաւք, մորթազգեստք, ձկնակերք՝ ծովայինս. քաղէին 'ի ծովէ անտի և յերկիր գերէրի՝ որ առ մեզս լինին, որ ունէր լտերս քան և հինգ. քաղեցին և ետուն մեզ։ Եւ փոխկասած յոլովս և մեծամեծս տեսաք որ սողային յերկրի։ Տեսաք և խեցգետինս մեծամեծս իբրև զնաւս։ Եւ բազում անգամ աղաչէին զիս բարեկամքն դառնալ, և[2] ես ոչ կամեցայ, քանզի կամէի տեսանել զկատարած երկրին։ Ապա անդուստ խաղացեալ ընդ անապատ Ճանապարհ գնացեալ 'ի ծովակողմն կոյս, և ոչ ես այնուհետև ինչ տեսանէաք ոչ հաւ և ոչ գազան, բայց միայն զերկինս և զերկիր. և զարեգակն ոչ ևս տեսանէաք, այլ ընդ աղօտ աւուրս տասն։ Եւ եկեալ 'ի տեղի մի ծովային, և զվրանսն և զա̃մ բանակն 'ի ներքոյ եդեալ մտանէաք 'ի նաւսն. և նաւէաք 'ի կղզի մի ծովուն որ ոչ էր հեռի յերկրէն, յորմէ լսէաք խօսս մարդկան հելլենական, և որք խօսէին, ոչ տեսանէաք։ Եւ զինուորքն 'ի մահ վտանգի տուեալ զանձինս՝ լողս անցուցանել[3] 'ի նաւէն 'ի կղզին, և խեցգետի մի ել կորզեաց ձգեաց 'ի ջուրն զինուորս յիսուն և չորս. և անցեալ գնացաք 'ի տեղեացն երկուցեալք։ Եւ եկաք 'ի տեղիս յերկուս աւուրս ուր ա-

1 Ա. [illegible]։
2 ՀՀ. [illegible]։
3 ՀՀ. այցալէս։ Բ. Թէրի էր. խոկ այլ ՕՕ. [illegible]։ Թուի ինձ որ ծրոտնի յառաջ բերեալ գաղտ-մութիւնք Ա. 3. առէ 'ի [illegible] 'ի նաւէն։

ըեղանն ոչ ծագէ. և կամեցեալ իմ պատմել և ձեռն արկեալ տեսանել 'ի ձեռն ծառայից ուր երջանկաց վայրքն էին, Կալիսթենէս իմ բարեկամն խրատ ետ ինձ մտանել համդերձ բարեկամօք քառասուն և մանկամբք հարիւր և զինուորօք հազար և երկերիւր. և արտաքոյ յետ Ճանապարհին իմացաք էշ մատակ որ ունի յաւանակ, զորս կապեցաք անդրէն զյաւանակն 'ի բանակին. Եւ 'ի մտանելն մերում լորօք[1] հնդետասան, հաւք երկու պատահեցին մեզ որ ունէին մարդկեղէն երեսս, և մեծ էին քան զհաւս որ առ մեզ լինին, և հելլենականաւ խօսիւք 'ի բարձանց աղաղակէին. Ո՛ ի՞ զվայր կոխես զաստուածոց զտուն տեսանելով. ընդ կրունկ դարձիր, թշուառական. քանզի զերջանիկ կամարացն կղզիս կոխել ոչ կարես. զի՞ յերկիրս ելանել բռնանաս, զոր ոչ է քեզ հնար. Եւ դողդոջումն և սարսափումն զիս կալեալ յահէ յերկեղէն եղելոյ 'ի հարկէ, լուայ աստուածային ձայնին որ 'ի յերկուց[2] հաւուցն ասացեալ եղև. Բայց միւս ևս հաւ բարբառեցաւ հելլենական ձայնիւ և ասէ. Արտաքս կոչէ զքեզ արևելք, և Պաւրոսի հնդկաց յաղթեցես թագաւորին. Եւ զայս ասացեալ թռեաւ 'ի վեր հաւն. Եւ ընդ կրուկ դարձեալք ապա կալեալ զառաջնորդ աստղն զըստ սայլից, և այսպէս 'ի դուրս ելեալ յաւուրս քսան և երկուս. և դրունս դրունս արարեալ խնամաբար խցի զտեղիսն, և գրեցի 'ի վերայ վիմի որքան միանգամ տեսաք. և գնացի համբարձեալ յայնժամ միայն զոհս մատուցանել գաւառային աստուածոցն»:

ՄԺ. Ապա առեալ Աղեքսանդրի զզօրութիւնն դէպ ուղիղ[3] գնայր 'ի Հնդիկս, ուսեալ զՊաւրոսէ թէ մարտակից օգնական գայ լինել Դարեհի. Հարցեալ և ուսեալ Աղեքսանդրի թէ փղօք և այլովք

1 ՀՀ. լորեօք. բորբ:
2 Բ. յերկուց. երկք ՕՕ. յերկ- 3 Բ. դէմ առ ուղիղ:

գազանօք վայրենօք վարի Պաւրոս 'ի կռուին, զայն որ 'ի Պարսս պատկերք պղնձիք էին արարեալ՝ հրամայեաց հանել 'ի սայլս և տանել զհետ նորա ։ Եւ այսպէս խաղայր գնայր ընդ բազում անապատս անցեալ, և ընդ անջրդին տեղիս և ընդ խորաձորս և ընդ դաշտս աշխատէր հանդերձ ամենայն զօրականօքն, մինչև մեծամեծ իշխանացն ասել ցնա ․ Շատ և բաւական ունէաք մինչև ցպարսիկս առնել զպատերազմ և հնազանդել զԴարեհ, զայն որ պահանջէր զհարկն 'ի հելլենացւոց ․ արդ զի՞ աշխատիմք երթալ 'ի հնդիկս յանդնաց և 'ի գազանակուտ՝ տեղիս, որ ոչ ինչ անկ Եղլադայ ․ բայց եթէ Աղեքսանդրոս իւրով վսեմախոհութեամբն պատերազմող քաջ է և կամի հնազանդեցուցանել զխուժադուժ ազինս, զի՞ երթամք մեք զհետ նորա ․ երթիցէ միայնակ և տացէ պատերազմ ․ այն բաւական է զի յանոպայ և յամայի վայրի գազանակուր արար զբազումս ․ զմեզ ընդ իւր մի տարցի օգնական և մարտակից իւր զաշխատեալքս և զտառապեալքս յայսքան պատերազմաց ։

ՄԺԱ ․ Եւ լուեալ զայս արքային 'ի մի վայր ժողովեաց զամենեսին, և կացոյց զպարսիկ զօրն առանձին և զմակեդոնականն ընդ այլ հելլենացիսն և ասաց ․ Արք զինուորակիցք և մարտակիցք մակեդոնացիք և այլք հելլենացիք, այս պարսիկքս թշնամիք էին իմ և ձեր ․ հրամայեցիք ինձ միայն երթալ 'ի պատերազմունս առ խուժադուժսն ․ քանզի լուայ յամանց զի ասէին ․ եթէ կամի ընդ խուժադուժսն պատերազմել, ինքն Աղեքսանդրոս միայն երթիցէ, զմեզ մի տարցէ զկնի իւր ։ Բայց սակայն զայս ձեզ յիշեցուցանեմ ․ իբր եթէ այնց պատերազմաց ես միայն յաղթեցի ․ և զորս միանգամ կամիմ առնուլ դարձեալ 'ի խուժադուժ ազգացն՝ միա՞յն յաղթեցից ․ քանզի իմ կամք և խորհուրդք առ կալ զանձինս ձեր ա-

1 Զօրս ՕՕ ․ գազանօք ։ ՀՀ ․ գազանաւէք ։

մնեցուն քաջալերել, որ ահաւադիկ անարանայքդ վատթարեալք ։ Առ Դարեհի բազմութիւնն ո՞չ ես առաջի զօրուն 'ի կռուան պաշտպան լինէի ․ ո՞չ ես անձին իմոյ հրեշտակ ես ինքէն մտի առ Դարեհ ․ ո՞չ մահու մատնեցի զիս 'ի վտանգ ․ բայց ապա զի՞, երթայք գնացէք 'ի Մակեդոնիա միայն զանձինս ապրեցուցանել ։ Արդ մի յերկուանայք առ միմեանս վիճելով, զի ոչ ինչ կարէ զօր առանց թագաւորական իմաստութեան ։ Այսպէս ասացեալ աշխարհակալին, աղաչէին զնա ապահովանալ 'ի բարկութենէն, ունել զնոսա մարտակից և օգնականս մինչ 'ի կատարած ։

ՄԺԲ ․ Եւ յետ աւուրց 'ի սահմանս Հնդկաց եկեալ ․ որ և պատահեցին նմա թղթաբերքն առաքեալք 'ի Պաւրայ, և մատուցին նմա զգիրն ․ և նա ընթեռնոյր այսպէս ․ « Պաւրոս թագաւոր հնդկաստանաց, Աղեքսանդրի Մակեդոնացւոյ՝ որ զքաղաքս ամենայն աւար հարկանես, հրաման տամ 'ի բաց երթալ գնալ ․ իբր զի մարդ ես, զի՞նչ կարես՝ առ աստուածս ։ Բայց առ ինչ է 'ի վերայ այլոց թշուառութեանց ոտն հարկանես խնդալով ․ քանզի ընդ տկարս մարտուցեալ պատերազմաւ՝ կարծես զանձն եթէ հզօրագոյն ես քան զայլս ։ Այլ զի ես անպարտելի եմ, զի ոչ միայն մարդկան եմ թագաւոր, այլ և աստուածոց ․ քանզի եկեալ այսր Դիոնեսիոսն, զոր ասես աստուած, 'ի բաց հալածեցի իմով զօրութեամբս ։ Իսկ ապա ոչ միայն խրատ տամ քեզ, այլ և հրաման տամ վաղվաղակի անցանել գնալ յԵլլադա ․ զի ոչ ահեցէ զիս առ Դարեհիւ կռիւն, և ոչ այլոց ազանց հնազանդութիւն՝ որքան միանգամ ըստ նոցա անարութեն եղեն դիպուածով քեզ ։ Բայց դու կարծես զքեզ հզօրագոյն լինել, իբրու զի տկար ես ․ այլ 'ի բաց արի կաց և խաղացեալ գնա յԵլլադա ․

1 Նրկք գր. Խաշծեւ ։

քանզի թէպէտ ունին հնդիկք զելլադացւոցն 'ի վաղնջուց յառաջ մինչ չեւ Քսերքսի թագաւորի էր զնա ըմբռնեալ ընդ ծառայութեամբ, բայց այժմ իբրեւ զանպիտան ազն եւ առ որս ոչ ինչ գոյ արժանի թագաւորական տեսութեան, ոչ դարձան յիւրեանց. վասն որոյ ա՟մ մարդ զլաւն ցանկալ ունել եւ ոչ ըղնուազն առնուլ. այսպէս՝ եւ մեք զԵլլադա անարժան գոլով 'ի բաց թողաք եւ զերկիր պարարտ վայելեմք: Իսկ ապա երթ ժողովեցիր եւ դարձիր յԵլլադա. զի որոց ոչ կարես իշխել, մի ցանկար,,:

ՄԺԳ. Այսպէս ընթերցեալ Աղեքսանդրի՝ ասաց ընդ զօրականսն. Արք զինուորակիցք, մի դարձեալ խռովեցուցէ զձեզ ընթերցեալս գիր 'ի Պարսայ. յիշեցէք[2] եւ զոր Դարեհն գրեաց. քանզի ճշմարտապէս միախորհուրդ է խուժադուժ ազգացն անզգայութ՟ն: Քանզի որպէս առ նոսա գազանք, վագերք, ինձք եւ առիւծք եւ փիղք խրոխտացեալք յիւրեանց քաջութ՟ն զանազանութեամբք մարմնոցն՝ դիւրաւք 'ի մարդկային իմաստութենէ որսացեալք լինին, այսպէս եւ թագաւորք խուժադուժ ազգաց խրոխտացեալք 'ի բազմութիւն զօրուն դիւրաւ 'ի խոհեմութենէ հելլենացւոց ըմբռնեալք լինին:

ՄԺԴ. Այսպէս յայտնի երեւեցուցեալ Աղեքսանդրի եւ սրեալ 'ի քաջալերութիւն զզօրն, գրէ փոխանակ Պարոսի թուղթ, որ ունէր յինքեան օրինակ այսպիսի ինչ: «Թագաւոր Աքանդարիոս Մակեդոնացի, թագաւորիդ հնդկաց Պարոսի խնդալ: Արդ գիտեա զի ես առաւել յօժարագոյնս արարեր զմեզ 'ի կռիւ ընդ քեզ զայրանալ, ասելով զԵլլադա ոչ ինչ ունել արժանի թագաւորական տեսութեան. այլ զձեզ զհնդիկս զամենայն ինչ բարի ստացուածս ունել՝ աշխարհս եւ քաղաքս: Բայց գիտես զի ամենայն

1 Բ. չունի զՀաստատուածդ. այսպէս. ... վայելեմք:

2 ՀՀ. ՆԻ. որպէս Դարեհի հպարտախօսէ:

մարդ զլաւն ցանկայ առնուլ և ոչ զնուաղն ունել. արդ վասն զի Հելլենացիքս զայս ոչ ունիմք, իսկ խուժադուժքդ ստացեալ ունիք. արդ մեք Հելլենացիքս ցանկամք լաւացն, կամիմք և զայս 'ի ձէնջ ստանալ։ Բայց գրեցեր դու ինձ և վասն անձին քո թէ աստուածոց և մարդկան թագաւոր ես. նա և քան զաստուածս զքեզ մեծամեծ կարես առնել։ Այլ ես իբրև առ մարդ պոռոտախօս և խուժադուժ ընդհարկանիմ պատերազմաւ և ոչ իբրև ընդ աստուածոց. քանզի զաստուծոյ զմի զսպառազինութիւն ոչ կարէ տանել առ հասարակ ամենայն աշխարհ, կամ զորոտման ճայթիւն կամ զկայծականց լուսաւորութիւն կամ զփայլատակմանց ճարճատիւնս։ Արդ որպէս ըզքեզ աճեալ ոչ պակուցանեն յինէն պատերազմաւ հարեալ ազինքն, և ոչ զիս երկեցուցանեն պոռոտող բանքդ„։ Այսպէս գրեալ զթուղթն ետ տանել։

ՄԺԵ. Իսկ Պաւրոսի ընթերցեալ զգրեալսն 'ի նմանէ, յոյժ զայրացաւ. և ժողովէր զբազմութիւնն, յոլով փիղս և բազում գազանս որ մարտակիցք լինէին հնդկաց։ Իսկ իբրև մօտ եղին մակեդոնացիքն և պարսիկք, և Աղեքսանդրի տեսեալ զբազմութիւն պատրաստութեան պատերազմին՝ երկեաւ ոչ 'ի բազմութենէն, այլ 'ի գազանացն. քանզի տեսեալ զնորոգ և զսքանչելի գործ գազանացն, զի ընդ մարդկան ունէին սովորութիւն կռուել, և ոչ ընդ գազանս։ Մտանէ ապա և ինքն Աղեքսանդրոս հրեշտակ 'ի պաւրիական քաղաքն զինուորական ձևով իբրև 'ի կերակուր ինչ գնել։ Իսկ նոցա տեսեալ զնա տարան դէմ յանդիման Պաւրոսի։ Ասէ թագաւորն ցնա. Զի՞ եկեալ է քո այսր։ Ասէ. Զինուորք եմք Աղեքսանդրի առաքեալք։ Ասէ ցնոսա. Զի՞ է Աղեքսանդրոս։ Ասեն ցնա. Ողջ է և կենդանի։ Ասէ. Իսկ ընդէ՞ր ցանկայ ընդ այսքանում Պաւրոսի պատերազմ տալ. բայց ես մխիթարեցից զնա եկեալ։ Իսկ բազում

ժամ խորհեալ, անձին իւր տեսանելով զպատրաստութիւն բազմութեան գազանացն, և հարցեալ զիւր խորհուրդն գայ 'ի զօրս իւր։

ՄԺԶ. Նա այս զի՞նչ ապա առնէ կորովամիտն Աղեքսանդրոս։ Որքան միանգամ ունէր մարդապատկեր պղնձի, զնոսա հրամայեաց քաջ ջեռուցանել զի իբրև զհուր լիցի պղինձն, և տայր տանել առաջի հանդէպ գազանացն։ Իսկ գազանքն 'ի վերայ յարձակեալ և բուռն հարեալ զպղնձի պատկերացն 'ի մարդոյ կերպարանս՝ վառեալք լուծանէին բերանք նոցա, և ոչ ևս այնուհետև յոք մերձենային։ Այսպիսի հնարիւք զյարձակումն գազանացն դադարեցոյց հանճարամիտն Աղեքսանդրոս։

ՄԺԷ. Նայց պարսիկքն առաւել բռնահարէին զհնդկացիսն և 'ի բաց հալածէին զնոսա նետաձգութեամբ և ձիամարտութեամբ. և բազում լինէր նոցա կռիւ սպանողացն, նա և սպանելոցն։ Անկաւ յերկիր և Աղեքսանդրի զուարակագլուխն երիվար երկարդնեայ գեղարդեամբն հարեալ 'ի Պաւրոսէ։ Իսկ կասեաց մտօք մակեդոնացին՝ եղեալ այսօրիկ. և անփոյթ արարեալ 'ի կռուոյն ինքն միայն քարշէր զձին, զի մի բարձեալ լիցի 'ի թշնամեացն։ Զեօթն օր արարին պատերազմ տալով և աշխատելով զօրքն Աղեքսանդրի։

ՄԺԸ. Իսկ ոմանք 'ի նոցանէ զարհուրեալք կամեցան զանձինս իւրեանց մատնել։ Իսկ իմացեալ զայս Աղեքսանդրի թէ հանդերձեալ է յիւրոցն մատնութիւն կրել, լուր եղեալ՝ 'ի ձեռն քարոզչացն առ այս ասաց ցՊաւրոս. Պաւրէ, այս ոչ է թագաւորի զօրութիւն եթէ ընդ վայր տարապարտ այսքան զօրք կորիցեն. այլ քաջութիւն առողջութեան իւրոց մարմնոյն, եթէ երկաքանչիւր ոք 'ի մէնջ զօրուն 'ի հանդստեան իցէ, և մեք 'ի կռիւ իջցուք. զի ես և դու միայն ընդ միմեանս մարտիցուք յաղագս թագաւորութեան հնդկաց։

ՄԺԹ. Զայս լուեալ Պաւրոսի և խոստացաւ միայնամարտիկ լինել ընդ նմա, տեսանելով զմարմինն Աղեքսանդրի ոչ համեմատ իւրոյ մարմնոյն. քանզի էր Պաւրոս կանգունս հինգ, իսկ Աղեքսանդրոս կանգունս երիս։ Կացին միմեանց ընդդէմ՝ի մարտ պատերազմի. և երկաքանչիւր բազմութիւնն հայեցեալ տեսանէին եթէ ո՞ յաղթիցէ։ Սրդովեցան՝ ընդ միմեանս՝ խառնեալ զզօրն Պաւրոսի. և ընդոստացեալ Պաւրոս դարձաւ յետս կոյս ուսանել կամեցեալ ըղպատճառ հեծելախումբ ամբոխիցն աղմկի և խռովութեան։ Իսկ Աղեքսանդրի կքեցուցեալ զոտն վաղեաց ՚ի վերայ նորա, և դնէր ՚ի ներքոյ զսուրն հանդէպ գանձակին և անդէն սպանանէր զհսկայաձև գոռոզն զթագաւորն Պաւրոս, և զմնեղէն բլուրն դիաթաւալ՚ի վայր ընկենոյր յերկվարէն։ Զոր տեսեալ Պարսից և մակեդոնացւոց զօրացն Աղեքսանդրի, ճախր առեալ ճեմէին տեսանելով զարքայն իւրեանց այնպիսի սէգ և սարասի բարձրութեամբ յաղթեալ հակառակամարտին յասպարիսի։

ՄԻ. Յայնժամ սկսան նախարարքն և զօրքն ընդ միմեանս բախել և մարտնչել։ Իսկ Աղեքսանդրոս ցնոսա. Ով Թշուառական և յիմար հնդիկք, յետ մահուան թագաւորին ձերոյ զի՞ մարտ եդեալ կռուիք։ Եւ նոքա ասեն. Զի մի և մեք գերի վարեալք լիցուք։ Իսկ ցնոսա թագաւորն. Դադարեցէք ՚ի պատերազմէդ և երթայք մտէք ՚ի քաղաքդ ձեր ազատք և աներկիւղ. զի ոչ եթէ դուք համարձակեալ յանդգնեցարուք ընդ իմում զօրուս պատերազմ տալ, այլ Պաւրոս ընդ իս կռուեցեալ։ Արդ երթայք ՚ի գաւառդ ձեր և կալարուք զնա ազատութեամբ։ Զայս ասաց, գիտացեալ զի ոչ համեմատ էր զօրականքն նորա ընդ հնդիկս կռուել։

1 Չորս ՕՕ. Եւ ելեալ ընդառաջ [illegible] Պաւրոսի. և ընդ[illegible] կամ ընդ[illegible] և [illegible]

ՄԻԱ. Եւ հրամայէ թաղել զՊաւրոս իբրև զթագաւոր։ Իսկ զպատուական ինչսն նորա զամենայն բարձեալ զոսկի և զարծաթ և զականս պատուականս, ճանապարհ դէպ ուղիղ յՈքսիդրակաս առնէր. ոչ իբրու զի բազումք էին կամ պատերազմողք, այլ իբր մերկ իմաստասէրք, ընդ տաղաւարօք և 'ի ներքնատունս բնակեալք էին։

ՄԻԲ. Եւ նոցա ուսեալք եթէ եկեալ հասեալ է Աղեքսանդրոս առ նոսա, յղեն առ նա զքաջ իմաստասէրս իւրեանց, թուղթս տանել տան նմա։ Զոր առեալ Աղեքսանդրի, ընդ որս և ընթերցեալ, որ ունէր օրինակ զայս։ "Բրաքմանք մերկ իմաստասէրք՝ Աղեքսանդրի առն քաջի և հզօրի գրեցաք խնդալ։ Գիտեա զի ոչ ինչ գտցես 'ի մէնջ առնուլ գնալ. զի եթէ կամիս զոր ինչ ունիմք՝ բառնալ, ոչ ինչ պէտք են աստ քաջութեան կամ հանդիսի. այլ եկ առ մեզ սիրով, թերևս ուսցիս ով եմք. քանզի քեզ 'ի վերին զօրութենէ նախախնամութեան արարչութենէ ըզհետ գայ պատերազմողական յաղթութիւնդ, իսկ մեզ՝ իմաստասիրել"։

ՄԻԳ. Այսպէս ընթերցեալ Աղեքսանդրի խաղաղութեամբ չոգաւ առ նոսա, և ետես զամենեսեան մերկավէրարկուս ընդ տաղաւարօք և ընդ այրիւք բնակեալս, և զմանկունս և զկանայս հանդերձ հօտիւք ընդ վայր բարձեալ թողեալ։ Զի մի ոմն 'ի նոցանէ եհարց. Գերեզմանս ո՞չ ունիք։ Եւ նա ասէ. Այրս այս յորում բնակեալս եմք, է ինձ գերեզման. քանզի աստ հանդեայց յերկրի, թաղելով զիս 'ի քուն բնակչաց ընդ երկրաւ, վասն զվախճանեալ անդ յաւիտենական քունն բնակեցայց։ Եւ միւսում ասաց. Ո՞ր յոլով են, վախճանեա՞լքն եթէ կենդանիք։ Եւ նա ասէ. Ենն ահա վախճանեալքն յոլով. այլ մի՛ չափել զոչ ևս էսն. քանզի որք տեսանինս, յոլովք են քան զայնս որ ոչ ևս երևին։ Եւ ցայլ ոմն եհարց. Զի՞նչ

հզօրագոյն է, մա՞հ թէ կեանք։ Եւ նա ասէ. կեանք։ Ասէ Թագաւորն. զի՞արդ։ Ասէ. Զի արեգակն ծագեալ հզօրագոյնս ունի զճառագայթս ՚ի կեանս, և երեկուն մտանելով տկարագոյն տեսանի։ Եւ զմիւսն եհարց. Զի՞նչ յոլով է, երկի՞ր թէ ծով։ Ասաց. Երկիր. քանզի և նոյն իսկ ծով ՚ի վերայ երկրի հաստատեցաւ։ Եւ ցայլ ոմն եհարց. Զի՞նչ յամենայն գազանաց է խորամանկագոյն։ Եւ նա ասէ. մարդ։ Եւ զի՞արդ է այս։ Ասէ. Յանձն քո հարց. քանզի ահա քանի՛ գազանս ընդ քեզ բարձեալ բերես, զի զայլոց գազանացն զորս միանգամ յափշտակեալ՝ տարցես։ Եւ աշխարհականն ոչ բարկացաւ՝ գիտացեալ զօ հարցանէն։ Եւ ցայլ հարցանէ. Զի՞նչ է Թագաւոր։ Եւ նա ասաց. Աւելաստացութի՛ւն ագահութի՛ւն. զօրութի՛ւն ապիրատ. համարձակութի՛ւն յանդուգն. ժամանակի յաջողութեան հասանել։ Եւ այլում ասաց. Զի՞նչ առաջին է, գիշե՞ր թէ տիւ։ Եւ նա ասէ. գիշեր։ Զի՞արդ է այս։ Եւ նա ասէ. Զի ծնեալն՝ ՚ի խաւարի յորովայնի անդէ. ապա յայտ գայ ելանէ առնուլ զլոյս։ Դարձեալ այլում ասաց. Ո՞ւմ ոչ կարեմք սուտ խօսել, այլ ճշմարիտ բան նմա մատուցանեմք։ Եւ նա ասաց. Աստուծոյ. քանզի ոչ կարեմք սուտ խօսել այնմ որ զամենայն ինչ գիտէ՝ աստուած։ Եւ առ այլ ոմն ասաց. Ո՞ր լաւ է մասն կողման, ահեկի՞նք թէ աջինք։ Ասաց. ահեակք։ Եւ նա ասաց. զի՞արդ։ Եւ նա ասէ. Զի նախ առաջին արեգակն ծագէ յահեկին կողմանէ յաջակողմն կոյս. և մերձաւորութիւն առնեմք ընդ կանայս յահեկին կողմանէ. և դիեցուցանէ կին նախ առաջին տալով մանկանն զահեկին ստինն. իսկ զաստուածս բարձեալ բերիցեմք յահեկին ուսոց վերայ բառնալով. նա և դուք իսկ թագաւորք զիշխանութեան գաւազանն յահեկում ձեռին ունիք։ Ասէ առ այլ. Ամենից ազին մարդկան ո՞վ յաղթէ։ Ասաց. Մահն, զի բուռն

է և խիստ առ ամենեսեան ։ Ասէ Աղեքսանդր. Աս-
տուած առ ինչ իրս բարկանայ ։ Ասաց. Ընդ մեծա-
տանց անիրաւունս և ընդ աղքատաց հպարտութիւն ։
Ասէ. Յարարածս զի՞նչ է քաղցրագոյն ։ Պատաս-
խանի. Սէր 'ի սրտէ ։ Եւ զի՞նչ դառնագոյն ։ Պա-
տասխանի. Նախանձ և ատելութիւն ։ Այսպէս յիւ-
րաքանչիւր ոք հարցեալ ասաց ցնոսա. Միահամուռ
ամենեքին խնդրեցէք 'ի մէնջ զի՞նչ և կամիք ։ Գոչե-
ցին ամենեքին և ասեն. Տուր մեզ անմահութիւն,
զի մի՛ մեռցուք ։ Եւ Աղեքսանդրոս ասաց. Զայդ
իշխանութիւն ես ոչ ունիմ. քանզի և ես իսկ մարդ
եմ մահկանացու ։ Եւ նոքա ասեն. Իսկ ապա զի
մարդ մահկանացու գոլով քո, առ ինչ այդչափ պա-
տերազմ տաս և այդչափ տաժանիս յոլով արիւնս
հեղլով, զի կամօք զամենեցուն զինչս առցես. և
ո՞ւր զայս տարցիս. ո՞չ դարձեալ զայս ես այլոց ես
թողլոց ։ Ասաց ցնոսա արքայն. Այս ոչ 'ի մէնջ, այլ
'ի վերին նախախնամութենէն մատակարարեալ լի-
նի, զի մեք արբանեակք լիցուք նորին հրամանին.
քանզի ոչ շարժի ծով, եթէ ոչ հողմն շնչեսցէ. և ոչ
տատանին ծառք, եթէ ոչ օդն սահեսցէ. ոչ առնէ
արդիւնս մարդ, եթէ ոչ 'ի վերնական խնամոցն ըղ-
կամս առցէ ։ Եւ արդ ես դադարել կամիմ 'ի պա-
տերազմտալոյ, այլ ոչ տայ թոյլ բարուցս իմոց տէրն.
վասն զի թէ ամենեքին միաբարոյք էաք, դատարկ
և անգործ լինէր աշխարհ. 'ի ծովու ոչ նաւել լինէր,
տուն ոչ շինեալ լինէր, ամուսնութիւնք ոչ կատա-
րէին, մանկարարութիւնք ոչ էին. քանզի քանի՛ մար-
դիկ յինէն եղելոց պատերազմաց թշուառացան՝ կո-
րուսեալ զիւրաքանչիւր իրս, և այլք բարեբաստիկ
եղեն յայլոց մեծացեալք. քանզի ամենեքին զամենե-
ցուն առնլով՝ այլոց անդրէն փոխանակ բառնալ թո-
ղումք. և ոչ ուրեք ոչ ինչ է ։ Զայս ասացեալ Աղեք-
սանդրի, և չուեալ անցանէր գնայր բազում աշխա-

տութիւնս աշխատեալ 'ի Ճանապարհս, ընդ անդնայց և ընդ անկոխ տեղիս գնալով. և ոչ էր 'ի սակաւ հոգս։

ՄԻԴ. Այս գրեաց Թուղթ Արիստոտէլի յաղագս պատահելոցն իրաց, այսպէս օրինակ ունելով։ «Թագաւոր Աղեքսանդրէ՝ Արիստոտէլի վարդապետի իմոյ խնդալ։ Պատահեալ մեզ հրաշաւոր և սքանչելի իրքն հնդկային աշխարհիս, հարկաւոր համարեցաք պատմել ձեզ։ Վանզի հասեալք 'ի պրասիական՝ քաղաքն, որ Թուէր մեզ մայրաքաղաք գոլ հնդկաց աշխարհին, որ և հասեալ կալաք զյայտնի սարաւանդ մի հնդկական ծովուն։ Եւ դիմեցի ես հանդերձ սակաւուք յառաջ ասացեալ տեղիս, և քննեալ և ուսեալ գտաք զի արածանէին անդ իգակերպ ձկնակեր՝ մարդիկ։ Եւ ես կոչեցի առ իս զոմանս 'ի նոցանէ, և գտի զի խուժադուժ էին խօսիւք. և հարցի յաղագս տեղեացն. և նշանակեցին ինձ կղզի մի զոր ամենեքեան տեսանէաք 'ի միջոցի ծովուն, յորում ասացին կարի յոյժ հին ուրումն Թագաւորի գերեզման գոլ, յորում ոսկի բազում կայր նուիրեալ։ Եւ ես յօժարագոյն եղէ 'ի կղզին անցանել, և չարաչար ընդդէմ կային մեզ խուժադուժքն։ Եւ հրաժարեալ նոցա 'ի մէնջ աներևոյթ լինէին. զիւրեանց նաւկնեարն բարձին Թողին, որ էր Թուով երկոտասան։ Եւ այս այսպէս եղելոյ իրաց, սակայն Փիդոնայ հարազատ բարեկամին իմոյ և Հեփեստիոնայ և այլոց բարեկամացն ըստ դիպուածոյ ոչ տուեալ ինձ Թոյլ անցանել, և մանաւանդ աշակերտակցին իմոյ Փիդոնայ որ ասաց. Եթէ ոչ ես յառաջագոյն մտանեմ 'ի նաւդ և անցանեմ տեսանեմ զկղզին, յայնժամապա առաքեմ առ քեզ զմակոյկս. բայց յառաջ

1 Այս օրինակք ասա և յէինիսն ըեք համաձայն լատինականին։ [illegible]. միօրինակ վարեցաք ամենայն ու-

2 Այսպէս ըստ միոյ օրինակի համաձայն լատ. այլք [illegible]։

քան զիս վտանգ կրել քեզ ոչ է հարկաւոր. քանզի եթէ փիղոն կորիցէ, այլք քեզ շատ գտցին բարեկամք. ապա թէ Աղեքսանդրոս, աշխարհ ամենայն թշուառացաւ: Եւ հաւանեալ նմա թողլ ետու անցանել յառաջագոյն նովիմբ այնուք երկոտասան մակուկօք, յորս մտին արք հարիւրք: Եւ նոցա իբրեդիւր եղե նաւարկելն և մերձեցան 'ի կղզին, և չարաքարոյ խուժադուժքն կղզի է ասէին, և կիտոս էր: Եւ սակայն անահ[1] ելեալ՝ զնաւկնեարն մալխօք իբր 'ի կղզւոջ կապեալ հանգուցանէին[2]. և հաստատեալ և կառուցեալ զնաւացն ելս, և 'ի բաց հանելով զնաւուն պարանօք 'ի ըկաձև տեղին, և նոքա ելին արտաքս տեսանելով մեր: Եւ ժամ մի իբրև էանց, յանկարծօրէն մխրճեցաւ գազանն 'ի խորս ծովուն. և մեք աղաղակեցաք, և գազանն աներևոյթ եղև, և նոքա կորեան չարաչար հանդերձ բարեկամաւն իմ: Եւ ես յոյժ զչարէի 'ի վերայ պատահելոց իրացն. և զխուժադուժսն խնդրեալ ոչ ևս կարացաք գտանել. և կացեալ մնացաք աւուրս ութ 'ի վերայ սարաւանդակին. տեսաք յեօթներորդում աւուրն զգազանն զի փիղս ունէր 'ի վերայ իւր: Եւ ձեպէին զմեզ շատք 'ի մեծամեծաց. անցաք գնացաք 'ի պրասիական քաղաքն, և բազում ինչ հրաշալի և սքանչելի տեսեալ որ էր հարկաւոր զեկուցանել քեզ: Քանզի տեսաք գազանս զանազանս և բնական տեղեաց տեսութիւնս և ազգս սողնոց. բայց որ քան զամենայն էր սքանչելագոյն՝ զարեգական և զլուսնի պակասութիւն և զյանկարծօրէն կորուստ, և զմեր անցս յանկարծօրէն արկուածս. յաղագս որոյ իւրաքանչիւր ուրուք, առաջնորդ վարդապետ պանծալի, հարկաւոր է ցուցանել քեզ: Քանզի յաղթեալ մեր Դարեհի Պարսից թագաւորին, և զնորայն ընդ ձեռամբ արկեալ և հնազանդեալ, ընդ բոլոր աշխարհ գնա-

1 Բ. անդր ելեալ:

2 Բ. հանգուցանէաք:

ցեալ շրջէաք՝ 'ի նմա թագաւորեալք տեսանելով զպարիսն ։ Քանզի էր ոսկւոյ բազմութիւն և արծաթոյ, և թակոյկք ոսկիք յականց զանազան պատուականաց զարդարեալ, և տանէր մի մի թակոյկ բաժակ՝[1] իննսուն. և այլ շատ տեսիլք սքանչելեաց ։ Եւ անտից սկիզբն արարեալ զՃանապարհն 'ի կասբիական դրանցն գնացաք. և միանգամայն ընդ լինել տասն ժամ՝ փող հարկանել 'ի Ճաշ, մինչև յիններորդ ժամ գիշերոյն. զի պարտ և արժան էր զգնացս Ճանապարհին լինել ժամ հինգ մինչև 'ի մէջ գիշերոյն, և զայլ ևս մնացեալ ժամն վեց յանկողինս 'ի հանգիստ դառնալ. և միանգամայն ընդ արեգականն ծագել փողք նշանակէին մինչև 'ի չորս ժամն ։ Եւ այնքան էր բազմութիւն պատրաստութեան զօրականացն, զի մի մի իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ զարդարեալ էր օղով և սռնապանօք և բարձապանօք մորթեղինօք, և լանջապանօք զմարմինս իւրեանց պատէին ։ Քանզի յառաջագոյն ասացին ինձ բնակիչք տեղեացն զաղնոցն 'ի Ճանապարհս զատակումն գործել, քարոզաւ հռչակեցուցեալ ազգին՝[2] տուն արարի[3] մի ումեք առանց այսր կազմածի լինել, զի մի անձին մեղ դիցէ ։ Եւ գնացեալ մեր անբաւ Ճանապարհս աւուրս երկոտասան՝ եկաք 'ի քաղաք մի որ էր 'ի մէջ գետոյ, և յաւազուտ ինչ տեղիս շուրջ զգետովն՝ յորում մեք կամէաք բանակ հարկանել ։ Եւ էր 'ի քաղաքին եղէգն կանգնոց երեսուն[4] շրջափակ չափաւորութիւն ունելով. յորոց և քաղաքին ամենայն ձեղունքն[5] յարկեալ էին. բայց ոչ կայր 'ի վերայ յատակի քաղաքն, այլ 'ի վերայ յառաջ ասացելոց եղէգանցս. և նաւկնեար էին 'ի գետն, որ

1 Բ. գրեալ էր բաժիննսուն. իսկ այլք բաժակ ինն, պատուարգրով ն:
2 Բ. ազգին:
3 Բ. միահետ գրեալ էր տունարարի գուցէ ոչ վայրապար. մի օր. տուն արարի ։ Ա և Հ. տուն արարի ։
4 Այլք երեսնից:
5 Հ. ձեղունքն:

քննելով տեսաք 'ի տախտակաց յեղեգանց յայսցանէ կազմեալ 'ի պահպանութիւն ։ Դրա անդ զբանակն հարկանել հրամայեցի, և հասեալք յայն տեղի յերկս ժամս աւուր շրջեաք անդ ։ Եւ եկեալ 'ի գետն գըտանէաք զջուրն դառնագոյն քան զցմախ. և կամէին մերքս անցանել 'ի քաղաքն. էին ձիադետիք և յափըշտակեցին զարսն ։ Եւ լինէր մեզ այնուհետև ամենայն իրօք անցանել 'ի բաց գնալ 'ի տեղւոջէն. և փող հարեալ խաղացեալ գնացաք 'ի վեց ժամէ մինչև 'ի մետասան ժամ 'ի ջրոյն խափանեալ ցայնքան մինչև տեսանել ինձ զկնաւորս ոմանս որք զկուրեանց մէզն ըմպէին ։ Եւ ահա ընդ շամբս և ընդ անբաւ ջուր անցեալ եկաք ըստ դիպուածոյ 'ի տեղի մի որ էր լիկ, ամենաբեր անտառս ունելով. յոր եկեալ ժողովեալք պատահեցաք քաղցր ջրոյ որ զանցուցանէր[1] զմեզու քաղցրութեամբ ։ Եւ յայժ խնդալից եղեալ ես հանդերձ բարեկամօքն՝ գտաք 'ի վերայ սաբաւանդակին, որ էր գրեալ 'ի նմա զայս ինչ. Սեսանքուսս աշխարհակալ, հաստատութիւն արձանի աբարի որ ընդ կարմիր ծովն նաւեն ։ Հրամայեցի ապա բանակ հարկանել անդ և զառ 'ի յանկողինսն կազմել. և փող հարաք ճաշ առնել, և խարոյկ յետ այսորիկ արկանել առ 'ի զգուշութիւն պահպանութեան. և որպէս էրն մեր սովորութիւն, ննջեալ 'ի քուն եղաք ։ Եւ միանգամայն ընդ պայծառ լուսնոյ և գեր 'ի վերոյ մեր լինել զերիւք ժամօք գիշերոյն՝ եկեալ 'ի մի վայր ժողովեցան ամենայն գազանքն անտառին 'ի յառաջ ասացեալ լիկն ջուր ըմպել ։ Եւ էին 'ի նոսա կարիճք կանգունք[2] և աւազասոյզք, էին որ սպիտակ էին և էին որ շէկք էին. և երկիւղ ոչ դուզնաքեայ ունէր զմեզ ։ Եւ ահա ոմանց կորուսելոյ և զմանկանց վաղվաղակի[3] լալիւնս և կառաչ ոչ սակաւ

1 Ա. մոռացուցանէր զմեզ դառնութե- [illegible] քաղցրութեամբ ։

2 Այլք 'ի չափ կանգնոյ ։

3 Երկք օր. վաղվաղակի [illegible] կամ [illegible] և [illegible] ։

ունէր զմեզ ։ Ակումէին և գազանքն չորքոտանիք
գալ 'ի լիճն ըստ սովորութեան իւրեանց ջուր ըմպել.
յորում էին առիւծք մեծամեծ քան որ առ մեզ զուա-
րակք են, և ռնգեղջերք մեծամեծք յանտառէ եղե-
գանցն գային 'ի դուրս. նա և վարազք մեծամեծք
քան զառիւծս, որոց ատամունքն էին կանգնեայք.
և լուսանունք[1] և լինձք և վագերք և կարճագլք և
փիղք և եղնախոյք և ցուլարկափիղք, և արք վե-
ցամնեայք և փոկոտունք[2], և շնակաքաւք[3], և այլ շատ
ազգ կենդանեաց գազանաց կերպարանօք. և էր ահն
և երկիւղն որ ոչ ունէր զյապաղումն ։ Իսկ երկաթով
զոմանս 'ի նոցանէ վանեցաք և զանտառն հուրբ այրե-
ցաք. և սողունքն 'ի ներքս 'ի հուրն ընթանային ։ Իսկ
էր որ առ ոտն կոխէաք և սուսերօք սատակէաք. և
առաւելապէս հրկէզս լինէին, մինչև լուսինն 'ի վեց
ժամ գիշերոյն եմուտ ։ Իսկ այսպիսի ահ ընդոստա-
կան և սաստիկ արհաւիրս կրելով կայաք զարմա-
ցեալ ընդ զանազան[4] կերպարանս նոցա ։ Իսկ ահա
յանկարծակի հասեալ անդր գազանի միոյ որ մեծ
էր քան զամենայն փիղ, որոյ անուն էր ըռնաժանի,
որ ցանկայր յարձակիլ 'ի վերայ մեր. և ես շուրջ այսր
և անդր ընթանայի և աղաչէի զքաջ ընկերակիցսն
իմ զխարոյկսն արկանել և զանձինս պահել՝ զի մի
չարաչար կորուսեալք լիցուք ։ Իսկ գազանին յօժ
ցանկացեալ վնաս առնել մարդկան, և վազեաց ան-
կաւ 'ի խարոյկսն. և անտի 'ի ներքս 'ի բանակն մը-
տեալ կորոյս 'ի նոյն ժամայն արս քսան և վեց. իսկ
այլ արք քաջք 'ի մէնջ հարեալ սատակեցին զգազանն
միեղջիւրի. և հազիւ արք հազարք երեք հարիւրք
կարացին քարշել զնա 'ի տեղւոյն 'ի բաց ։ Իսկ միան-
գամայն ընդ մտանել լուսնին գիշերազուէաք յաւա-

1 Բ. Լուսանունք ։ Հ. լուսանիւթք ։ Եւ Երէբողք։
2 Այլք փոկոփնեայք ։
3 Հ. Շնակաքաւք .. որ ունէ ամէնքն։
4 Այլք գունան կամ գունեանսերս ։

զուն 'ի վեր վաղէին հնգկանգնեայք և այլք ութ-
կանգնեայք. և ոմանք 'ի նոցանէ կորուսին զաագու-
մըս 'ի մերոց: Սաղէին 'ի վեր 'ի լճէն խեցգետնեաց
բազմութիւն, որ զգլխակիրս և զհրամանսն ' և զվը-
րանսն ամենայն կորուսանէին: Եւ ջղջիկանք էին
քան զաղաւնիս մեծամեծս, որ ատամունս ունէին
զդդ մարդկան: Եւ բուք առ լճին անցեալ նստէին.
զորս որսացեալ էր մեր, մեծ խորտիկ զայն ունէաք
մեզ. 'ի մարդկան վերայ ոչ յարձակէին և ոչ 'ի հուր
մերձենալ իշխէին: Իսկ իբրև տիւ եղև, այսք ամե-
նայն անցեալ գնացին: Եւ յայնժամ 'ի վայրացն ա-
ռաջնորդսն զոր ունէաք յխուն, որ 'ի յայս չարս ըզ-
մեզ տարեալ հասուցին, անդ հրամայեցի խողխողել,
առ գետն ' բառնալ ընկենուլ: Եւ զայս 'ի մի վայր
ժողովեալ անցաք գնացաք լորս երկոտասան. և ե-
լեալ ըստ անապատն՝ եկեալ պատահեցաք և եղաք
'ի բռնութեան Ճանապարհն որ տանէր 'ի պրասիա-
կան քաղաքն: Եւ գնացեալ աւուրս ինչ եկաք 'ի
քաղաքիկ մի փոքրագոյն, և կամեցայ հանգուցանել
զիմ քաջորեարսն աւուրս հինգ: Եւ 'ի վեցերոր-
դում աւուրն զամենայն զայս այսպէս մատակարա-
րեալ պատրաստէաք այնուհետև դառնալ զվեց ժա-
մու, լինի[3] 'ի վեր 'ի յօդդ տեսիլ իմն այսպիսի յամ-
սեաննն նաւասարդի որ օր երեք էր. նախ և առաջին
յանկարծօրէն հոսեաց հողմն սաստիկ, մինչ զի և
զխորանս և զվրանսն մեր 'ի մի վայր զբանակին բե-
րել ընկենուլ. և մեք մինչ յոտն կացաք, յերկիր 'ի
վայր զարկանէաք: Եւ վաղվաղակի իմ հրաման
տուեալ զվրանսն կանգնել և զայլն ևս հաստատել:
Եւ մինչդեռ մեք կազմէաք, դէպ եղև զալ ամպոյ, և
խաւար եղև այնքան՝ զի և ոչ տեսանէաք զմիմեանս.

1 Իմա զհրոյ ամանս կամ մանօթս պատերազմի: ՀՀ. ...էր...:

2 Այլք և 'ի գետն.. ընդ առ- գաւն:

3 Այլք լինի 'ի վեր 'ի յօդդ տե- սիլ կամ 'ի յօդոտեսիլ իմն երևեցա- յանձնանն.. յանկարծակի հնչեաց հողմն:

և անյայտ ամպին և օդոյն մթին եղելոյ և թանձրացելոյ առանց բերելոյ, ապա տեսաք յօդսն հողմն ուժգին և զանազանս որ գային. տեսանէաք և յերկնէ առաջոյ՝ իբրև ասպարիսաւ տասն՝ բոլոր ամպս 'ի միմեանց գիզեալս, և դարձեալ ստէպ ստէպ կարմրացեալ. և այս եղեալ 'ի յաւուրս երիս: Այլ արեգակն աներևոյթ եղեալ զաւուրս հինգ՝ ձիւն բազում լինէր. դէպ եղև զինուորաց որք յանդգնաբար եղեն յօդն, թաղեալք ուղղորդք. յետ այսորիկ 'ի ձեանն առաւել քան զեօթանասուն վախճանեալ: Իսկ իբրև արեգակն ծագեաց, մեք բազում ինչ կորուսաք և զբազումս 'ի մէնջ: Այլ էին դաշտքն [2] վասն յատակէն 'ի բարձր ելանել զիզանալ ձեանն՝ կանգունս երիս: Այլ յետ աւուրց երեսուն Ճանապարհին դիւրագնաց եղելոյ, դարձեալք և եկաք գնացաք. յետ աւուրց հինգ բախեցաք կռուով և տիրեցաք պրասիական մայրաքաղաքին հնդկաց համդերձ Պաւրոսաւ և որք ընդ նմայն էին, և նորայոցն ամենեցուն ամենալիր բարեօքն, յաղագս որոց ձեզ գրեալ է: Այլ եղելոյ այսր և իմ շուրջանակի իրս բնութեան մատակարարեալ: Իսկ հնդիկք յօժարութեամբ 'ի մի վայր եկեալ ժողովէին և տային ինձ զայս. Թագաւոր մեծ, առցես զքաղաքս և զթագաւորութիւնս և զլերինս և զաղինս՝ յորոց ոչ ոք 'ի կենդանեաց եհաս, և ել 'ի վերոյ [3]. ոչ ինչ այսուհետև և ոչ ինչ ոչ գոյ արժանի քոյոյ առաւելութեանդ. և գիտես զի յոր կամիս կողմ, և որք միանգամ են 'ի քաղաքնեարդ մարդիկ՝ գան առ քեզ. բայց ոսկի յոլով քան որ աստ կայ, ոչ այլ ուրեք գոյ: Այլ սոցա գովեստ և գովութիւնս արարեալ առացի. Վասն զի եղէ 'ի բազում յածմանց վերայ բարձրախոհութենէ, եթէ ինչ աւուրք գիտէք առակ և հրաշալի

1 Այլք [illegible]

2 Այլք [illegible]

3 Այդպէս ամենայն օրինակք:

ինչ արժան թագաւորական տեսլեան, նշանակեցէք ինձ։ Եւ ոմանք եկեալ 'ի քաղաքկներոյն ասէին. Արքայ, ունիմք ցուցանել հրաշալի արժան իմն քեզ. քանզի ցուցցուք քեզ տունկս որ մարդկօրէն խօսի։ Եւ նոյնժամայն հրամայեցի զնոսա գան հարկանել, իբրև այն թէ խաբել զիս. բայց սակայն հարկաւոր համարեցայ գնալ։ Եւ անտի գնացեալ իմ աւուրս երկոտասան՝ եկաք 'ի գեօղ մի, զոր ասէին վերջ գոլ և եզր կողմանն հարաւոյ յարևելս կոյս. և յետ սորա այլ ոչ ինչ գոյ. այլ որպէս ասէին՝ անապատ գազանաւտ [1], յոր տեղիս ոչ ոք 'ի մէնջ երթեալ։ Եւ իբր հասաք, տարան մուծին զմեզ 'ի դրախտ մի. քանզի գեօղն ոչ քարամբք և ոչ աղիւսովք՝ այլ 'ի ծառոց էր ծածկեալ վասն արեգական և լուսնի. իսկ 'ի միջոցի դրախտին իբր ըստ նոցա պաշտամունքին՝ նուիրական մեհեան էր արեգական և լուսնոյ։ Եւ երկու ծառք էին յոյժ հանդէտ երկեանք [2], որք էին հաւասարք սարոյ [3] ծառոյ որ առ մեզ լինին. և շուրջ էին ծառքն յառաջ ասացեալքս նմանք այնց ծառոց որ յԵգիպտոս միրաբաղանոսն ասեն, և պտուղն նման. և [4] կոչէին զարուականն [5] արոգաց խորհրդոց և զիգականն իգաց. և անուն էր արուականին արեգակն և իգին լուսին, զորս նոքա ասէին իւրեանց ձայնիւ՝ մութուամ աւուսա [6]։ Եւ արկեալ սոցա մորթ ազգի ազգի կենդանեաց, արուն զարուաց և էգն զիգաց։ Եւ նոցա երկաթ ոչ գոյր և ոչ պղինձ և ոչ անագ և ոչ կաւ 'ի ստեղծանել ինչ։ Եւ ես հարցի զնոսա, թէ էր իրիք են մորթեանս։ Եւ նոքա ասեն. Առիւծուց և ընձուց. բայց ոչ ար-

1 Այլք գանուոց.. ըստ նոցա գազանաբնան։

2 Բ. երկնեանս։ Հ. երկայնեան։

3 Զորս օր. սարոյն։ Ս. սարերոյն։

4 ՀՀ. Վ ծառն արուական արեգականն, որ խօսի մարդոյ 'ի ծագել արեւուն և լեւ օրն. և Վ ծառն իգական լուսնին, որ և խօսի կանանց. զոր ասեն իւրեանց լեզուն։

5 Բ. զարուարականն։

6 ՀՀ. մութաայ և աւուս կամ աւուսա։

ժան է աստ գերեզման ունել, բայց զարեգական և զլուսնի ։ Եւ վերարկուս ունէին զգազանացն մորթս ։ Եւ յաղագս գազանացն զպատճառն հարցանէի ուսանել. և նոքա ասէին. Իբրև այգ լիցի յորժամ արեգակն ծագէ, ձայն 'ի ծառոցդ գայ. իսկ յորժամ 'ի միջոցի երկնի լինի, և յորժամ հանդերձեալ է մտանել, այս երիցս ։ Զնոյն և 'ի վերայ լուսնին ասէին ։ Դարձեալ ասէին, թէ որքան շրջի արեգակն և երևի լուսով, հրամանս պատասխանւոյ ցուցանեն. և յորժամ լուսինն՝ զլուսնոյ ։ Եւ որք թուէին թէ իցեն քուրմք, եկին առ իս և ասեն. Մուտ 'ի ներքս մաքուր, և երկիր պագ ։ Եւ մուծանէին ընդ իս և զարեկամսն իմ զՊարմենիոն [1], ըզԿրատերոն, զՍեղգոն, զՄաքիտայն, զԹրասիլէոնտա, զՍաքայոնա և զընկերն զԹէոդեքտոն, ըզՆիոկլէ, արս տասն ։ Եւ քուրմն ասէր. Թագաւոր, երկաթ ոչ է արժան 'ի մեհեանս մուծանել ։ Հրամայեցի ապա բարեկամացն զսուրսն 'ի բաց դնել արտաքոյ քաղաքորմոյն ։ Եւ եկին ընդ իս 'ի զօրացն արք երեք հարիւր ապաղէնք ։ Հրաման ետու որք ընդ իմն էին ամենեցուն շուրջ դիտել և տեսանել մի գուցէ ոք 'ի վերայ ծառոցն ելեալ կայ ։ Եւ նոցա դիտեալ և քննեալ ասեն՝ թէ ոչ ոք է ։ Կոչեցի առ իս 'ի հնդկացն որ զհետ իմ եկեալք էին, զի թարգմանութեան հասից 'ի նոցանէ. Երդնում յԱրամազդ յոլոմպիայն, յԱմոնա, յԱթենաս յաղթակիր աստուածս ամենայն, թէ ոչ սպանանեմ զձեզ ։ Եւ միանգամայն ընդ մտանել արեգականն ձայն եկն 'ի ծառոցն հնդկերէն խուժադուժ լեզուաւ որ ոչ [2] թարգմանեցաւ մեզ ։ Կոչեցի առ իս 'ի հնդկացն, և նոքա ոչ կամեցան թարգմանել ինձ որ ինչ 'ի ծառոցն ասացաւ. վասն որոյ երկնչէին յինէն և ոչ կա-

1 Այլ օրինակք զՊարմենիոն, ըզԿրատերոն. երգաք ըստ այլ տեղեաց։ 2 Յօրինակին չիք ոչ։

մչին յայտնել ։ Իսկ իմ մտախոհ[1] եղեալ և բուռն
հարեալ ձգեցի տարայ զնոսա 'ի զատ տեղի . որ և
յականջում ասացին ինձ զայս հնդիկքն . Գիտացիր
արքայ , զի վաղ կորնչելոց ես 'ի քոյոցդ ։ Եւ որք առ
ին կային , աստուածային նշանացն յայտնի լինելոց ,
և լուսինն թաքուցանել կամեցեալ յարևելս երե-
կումն դարձեալ հրաման պատասխանւոյ առնուլ ։
Քանզի կշռեալ զհանդերձեալսն մտի 'ի ներքս և ա-
սացի աղաչելով թէ յողջոյն հասից մօրն իմոյ Ոլոմ-
պիադայ և հարազատ բարեկամացն ։ Դարձեալ
մինչ բարեկամքն անդ կային , միանգամայն ընդ ծա-
գել լուսնին ծառն զնոյն ձայն արձակեաց հելլենա-
կան խօսիւք այսպէս թերևս . Աղեքսանդրէ , 'ի Բա-
բելոն պարտ է քեզ մեռանել . 'ի քոյոցն սպանանիս
և ոչ կարես հասանել յՈլոմպիադա մայրն քո ։ Իսկ
իմ և բարեկամացն յոյժ հիացումն կրեալ կամէի
պսակս գեղեցիկս նուիրել աստուածոցն . և քուրմն
ասէր . Ոչ է արժան այժմ լինել . և եթէ բռնադա-
տես , գործեա զինչ կամիս , քանզի թագաւորի օրէնք
անգիր են ։ Եւ իմ տրտմագին եղեալ և յոյժ գժուա-
րեալ ընդ իրսն , Պարմենիոն և Փիլիպպոս աղաչէին
'ի բուռն լինել և ընդ առաւօտս պատրաստ ունել ։ Եւ
ես իբրև ոչ կամեցայ , յարուցեալ առաւօտուն ընդ
արևագալն հանդերձ տասն բարեկամօքն դարձեալ
մտի 'ի մեհեանն . և մեկուսի թողի զնոսա , զի մի որ
'ի զօրականացն պատճառս կալցեն[2] ։ Եւ եկեալ առ
ծառն հանդերձ քրմաւն , և եդեալ զձեռս 'ի վերայ
ծառոցն հարցի և ասեմ . Ով է կատարեալ իցեն ինձ
կենացս ամք , զայս կամիմ 'ի ձէնջ ուսանել՝ եթէ հա-
սից 'ի Մակեդոնիա և ողջոյն տաց մօրն իմոյ և կը-
նոջն Ռոքսիանեայ , և յայնժամ այսպէս դարձայց ։
Եւ միանգամայն ընդ լինել ծագման արեգականն և
արկանել զնշոյլս 'ի ծայրս ծառոցն , ձայն ելին սուր և

1 Զորս օր . Տպագրէ ։ 2 Այլք կրէօքն .

յայտնի եղև որ ասէր․ Աղեքսանդրէ, կատարեալ են ամք կենացդ քոց, և ոչ ես հասանելոց խնդրոյդ՝ հասանել առ Ոլոմպիադա մայրն քո․ այլ 'ի Բաբելոնի ես կորնչելոց և 'ի Մակեդոնիա չես մտանելոց․ ընդէր․ քանզի զբաղումս 'ի մարց և 'ի քաղաքաց իւրեանց նա և 'ի գաւառաց և 'ի բարեկամաց անտես և կարօտս արարեր․ զի զամենայն զոր և սերմանէ ոք, զնոյնն իսկ հնձեսցէ․ այլ յետ սակաւ ժամանակի մայրն քո և կինն քո չարաչար կորնչելոց են յիւրեանցն[1], և քոյրն քո 'ի քոյոց ընտանեացն․ և յաղագս այսոցիկ մի աղաչեր, քանզի ոչ ևս ինչ լսելոց ես յինէն զոր հայցես մաղթանօք։ Ապա անդուստ գնացեալ իբրև յառաջին ժամու և եկեալ աւուր միոյ գնաց ճանապարհս, կոչեցեալ զզօրականսն ամենայն և խօսեցեալ ընդ նոսա միաբան յաղագս որոց կամէինն։ Իսկ աւուրս հնգետասան գնացեալ հասի փաղփաղակի 'ի պրասիական[2] քաղաքն․ և նոքա առաքեցին 'ի մերձաւոր քաղաքսն՝ եթէ ինչ օտարք ախտանան յաղագս այնոցիկ՝ որ բերեալ ինչ լինին 'ի հարաւային կողմանէքդ։ Բերեալ կալան իմ առաջի ձկնամորթս, նոյնպէս և ընձուց, և մեծամեծ առաւել ժանիս կանգնեանս[3] երեք․ ուղղմուրենայց[4] վեցկանգնեանս կչիռ քանքարաւորս․ յուղիդաս երկքանքարաւորս, և այլ ժանիս ձկանց կանգնեանս՝ որ յարմարէին 'ի պատեանս սուսերաց։ Բերեալ մատուցին ինձ գաղտակուրս հանդերձ այլովքն ամենայնիւք․ մինն ծիրանի էր և տանէր բաժակս վեց և յոյժ հրաշալի էր 'ի տեսանել, և միւսն տանէր բաժակս չորս, և այլքն բաժակեանք․ սպունգք ծիրանիք երեսուն և գղուկք յիսուն։ Իսկ 'ի պրասիական

1 Երկք օր. յիւրանցն ։ Հ. յիւրեանցն ։

2 Ամենայն օրինակք պրասիական. պրասիական. պրասայիական. պրասյական. դարասիական ։

3 Այլք կանգնեայս կամ կանգուսնս. . վեցկանգնեայս ։

4 Հ. ուղղմորենայց ։

քաղաքէն խաղացեալ գնացեալ եկեալ հասաք 'ի Պարս 'ի շամիրամեան թագաւորութիւնն . զոր հարկաւոր համարեցայ ագդել քեզ . ողջ լեր ,,։

ՄԻԵ . Նոյնպէս գրեալ զթուղթն Աղեքսանդրի առ Արիստոտէլիս , ճեպէր զզօրականն 'ի շամիրամեան յարքունիսն . քանզի ցանկայր տեսանել , զի էր ընդ ամենայն աշխարհ և ընդ Ելլադա հռչակաւոր ։ Վասն զի էր քաղաքն շուրջ պարսպեալ ինքնաբոյս քարամբք . երկայնութիւն և լայնութիւն ասպարիսաց[1] երից . դրամբք հարիւր և քսան պարսպեալք[2] . և արտաքուստ կողմանէ զդրունս զգեցուցեալ երկաթիւ և պղնձով , քանզի բազում լինի առ նոսա երկաթ . և առ հասարակ ամենայն քաղաքն 'ի վիմաշէն յարկէ շինեալ էր ։ Եւ թագաւորէր քաղաքին կին մի , որ գեղեցկութիւն ամբարտաւան ստացեալ ունէր . և 'ի միջին տիս հասակին եղեալ առն՝ երից որդւոց մայր , անուն Շամիրամայ բամբշան՝ Կանդակէ ։

ՄԻԶ . Երրորդ դարձեալ առ սա առաքեաց թուղթ Աղեքսանդրոս , որ ունէր այսպէս ։ " Թագաւոր Աղեքսանդրոս , դշխոյ Կանդակէ որ 'ի Մերոյէ , և որ ընդ քեւ թագաւորք են՝ խնդալ ։ Հասայ յԵգիպտոս , լուայ անդ 'ի քրմանց[3] տեսանելով զձեր գերեզմանս . և բնակութիւն սորա յայտնի էին , զի ժամանակ ինն տիրեցէք Եգիպտոսի . և Ամոն ընդ ձեզ զօրավար եղև . և յետ սակաւ ժամանակի հրաման պատասխանւոյ եղև յԱմոնայ , և շոգայք դարձայուք 'ի ձեր երկիր ։ Վասն որոյ առաքեցի առ ձեզ զի զտաճարն և զառնապատկերն Ամոնայ բերջիք 'ի սահմանս , զի զոհս մատուսցուք նմա . եթէ կամիք և դուք գալ ընդ նմա , զի 'ի միասին լիցուք վաղվաղակի 'ի Մերոյէ , և 'ի միասին խորհեսցուք . առաքեցէք մեզ զոր ինչ մեզ թուի բարիոք ,,։

1 Այլք յաւելուն ձի։
2 Բ և երկու այլ պարսպեալս։
3 Այդպէս ամենայն օրինակք։

ՄԻԷ. Գրեաց անդրէն նմա և դշխոյն Կանդակէ թուղթ, որ ունէր այսպէս. «Դշխոյ Կանդակէ Մերովայ և որք ընդ նովաւ թագաւորք են՝ Աղեքսանդրի խնդալ։ Յայնժամ հրաման պատասխանւոյ ելին յԱմմոնայ զօր առնել յԵգիպտոս. բայց այժմ ինձ անձամբ ոչ շարժել յիմմէս և ոչ այլ ումեք գալ 'ի վերայ իմ, բայց յայնցանէ՝ որք գան 'ի վերայ մեր վրէժ առնուլ և առնել խեր ընդ թշնամիս։ Բայց դու մի ստգիւտ լինիր գունոյս մերոյ. քանզի եմք բարուք ոգւոյ պայծառագոյնք քան որ առ քեզ սպիտակդ են։ Եւ եմք բազմութիւն յանբաւ ժամանակաց. սկիւտաղք ութսուն պատրաստեմք այնոցիկ որ գան 'ի վերայ մեր չար առնել։ Բայց ուղիղ արասցես զԱմոնա աստուած մեծարելով զմեծն։ Եւ բերեն քեզ առ 'ի մէնջ հրեշտակքս աղիւսս բոլորաձոյլս և եթովպացւոց մանկունս հինգ հարիւր. պապկայ երկերիւր. և Ամոնի մերում աստուածոյ որ 'ի վերայ սահմանացդ Եգիպտոսի է, պսակս ծակ զմրխտեայ և մարգարտով կազմեալ. հորմայս յիսուն. և անծակ մարգարտաց և անծակ զմրխտաց այլ կարբանոցս[1] տասն. և գզրոցս և տուփս փղոսկրայս ութսուն. և են առաքեալ խնչքս, և գազանաց ազգ 'ի մէնջ փիղք[2] երեք հարիւր յիսուն և վեց. ինձք երեք հարիւր. ռընգնեղջիւրս երեքտասան. յովազք չորք. գառագղօք շունք մարդակերք իննսուն. զուարակք կռուողք երեք հարիւրք. ժանիք փղաց իննսուն. մորթք ընձուց երեք հարիւր. ցուպք սեաւք հնդիկք եօթն հազար և հինգ հարիւր։ Արդ առաքեա թէ կամիս որք եկեսցեն առցեն զայս վաղվաղակի. և գրեա մեզ թէ առ հասարակ ամենայն աշխարհի տիրեցեր»։

ՄԻԸ. Առեալ զայս Աղեքսանդրի և ընթերցեալ՝ առաքեաց զԿլէոմիս զԵգիպտոսի գաւառապետն,

1 Հհ. ուբճանոյ։ զրաւդ և ճիւղ։
2 Բ. բազում ուրեք գրեալ էր

զայս երթալ առնուլ ։ Եւ նա գնաց առ տիկինն ։ Եւ Կանդակայ լուեալ վասն Աղեքսանդրի թէ զիարդ 'ի վերայ քաղաքաց խուժադուժ ազգացն եկանէ և ընդ ձեռամբ արկանէ զայսքան մեծամեծ թագաւորս, զմի ոմն յիւրոց անտի կոչեաց առ ինքն հելլենացի նկարիչ, և հրամայեաց երթալ նմա՝ իբր ընդ առաջ նմա, և ոչ տալ գիտել՝ նկարել զԱղեքսանդրոս և դառնալ անդրէն և տալ ցտիկինն Կանդակէ ։ Եւ նորա առեալ եդ 'ի ծածուկ տեղւոջ ։

ՄԻԹ․ Եւ եղև իմն այսպիսի․ որդի Կանդակայ, որում անուն էր Կանդաւղէս, հանդերձ սակաւ հեծելովք արշաւէ 'ի վրանն Աղեքսանդրի ։ Իսկ որք անդ պահապանքն էին, ըմբռնեցին զնա և տարան առաջի փոքրկի Պտղոմեայ, որ ունէր զերկրորդ թագաւորութեան․ քանզի 'ի քուն կայր աշխարհակալն ։ Եւ հարց ցնա Պտղոմէոս․ Ո՞վ ես ։ Եւ նա ասաց․ Որդի Կանդակայ դշխոյի ։ Եւ զի՞նչ առնես աստ ։ Եւ նա ասաց․ Հանդերձ կնաւն իմով և սակաւ զօրօք դայի 'ի տարեւորական խորհուրդ իւղագլխութեան[2] կատարել առ Ամազոնս․ իսկ թագաւորն բեբրիկացւոց տեսեալ զկինն իմ՝ եկեալ բազում զօրու յափշտակեաց զնա[3] և շատ զինուորս եսպան․ արդ դարձայց անդրէն, որպէս զի յոլով զօրս առեալ խլեցից զԲեբրիկիա ։ Եւ լուեալ զայս Պտղոմեայ յոտն եկաց և մտանէ առ Աղեքսանդրոս, և զարթուցեալ զնա պատմեաց նմա զոր ինչ միանգամ լուաւ ։

ՄԼ․ Եւ լուեալ զայս թագաւորն յարեաւ եկաց, և առեալ զթագն իւր պսակեաց զՊտղոմէոս և զբրղամիդն էարկ զնովաւ և ասաց ցնա․ Գնա եւ ար-

1 Այլք նմա առ Աղեքսանդրոս, և [illegible] Աղեքսանդրի և [illegible] նմա ։ Եւ [illegible] ։

2 Երկու օր․ [illegible] ։

3 Այլք զնա և [illegible], և [illegible] 'ի [illegible] ։

տաքս իբր թէ դու իցես Աղեքսանդրոս, և ասա. զԱնտիգոնոս ինձ զհամահարզն կոչեցէք. և յորժամ եկից, պատմեա ինձ. և ասացեալ զայս խորհուրդ առցուք յաղագս նոցա, տուք ինձ խրատ։ Եւ արտաքրս Պտղոմէոս. զոր տեսեալ զօրականացն կարծիս իմն առնուին և առէին. Օ՜ ի՞նչ արդեօք կարծեալ խորհիցի կոռլամիտն Աղեքսանդրէ։ Իսկ Կանդակայ որդւոյն տեսեալ զնա 'ի Թագաւորական զգեստուն, երկեաւ թէ մի՛ գուցէ հրամայեսցէ զնա սպանանել. քանզի կարծեաց եթէ Աղեքսանդրոս է։

ՄԼԱ. Եւ ասաց Պտղոմէոս. Օ Անտիգոնոս ինձ ոք կոչեսցէ զհամահարզն իմ։ Եւ արտաքս Աղեքսանդրոս. որում ասաց Պտղոմէոս. Անտիգոնէ, սա է որդի Կանդակայ դշխոյի, և յափշտակեցաւ կին սորա 'ի Թագաւորէն բեբրիկացւոց, զի՞նչ տաս ինձ խրատ առնել։ Եւ նա ասաց. Տէր իմ Աղեքսանդրէ, ես խրատ տամ քեզ զի վառեսցին զօրքս պատերազմ տալ ընդ բեբրիկայցիս, զի փրկեսցուք զսորա կինն և տացուք 'ի ձեռս սորա 'ի պատիւ մօր իւրոյ։ Եւ Կանդաւղէս խնդայր զայս լսելով։ Ասաց Պտղոմէոս. Թէ զայս կամիս, Անտիգոնէ, զդոյն իսկ և գործեա. իսկ ապա իբր զհամահարզ իմ հրաման տուր պատրաստել զօրու։ Եւ նոքա պատրաստէին հրաման առեալ 'ի Պտղոմէոսէ իբր յԱղեքսանդրէ։

ՄԼԲ. Հասին 'ի տեղին յետ միոյ աւուր։ Ասաց Աղեքսանդրոսն Անտիգոնէ. Մի՛ երևեսցուք բեբրիկացւոցն 'ի տունէ, զի մի՛ գուցէ գիտասցեալ Թագաւորին՝ յառաջ քան զկալուն սպանցէ զկին սորա. ո՞ր ես այն եղիցի մեզ փառք յաղթութեան՝ Կանդաւղայ կորուսեալ զկին իւր. այլ գիշերի անկցուք 'ի քաղաքն և լուցցուք տունս, և նոքին իսկ բազմութիւն մարդկան զկինն մեզ 'ի ձեռս տացեն. զի ոչ է մեր կռիւ յաղագս թագաւորութեան, այլ սակս պահանջման կնոջն։ Եւ այսպէս ասացեալ Անտիգո-

նեայ, անկաւ առաջի նորա Կանդաւղէս և ասէ · Ո՛վ մտաց քոց քաջաց, իմաստունն Անտիգոնէ · իցէ՞ արդեօք թէ դու իցես Աղեքսանդրոս և ոչ համահարզ Աղեքսանդրի ։

ՄԼԳ · Արդ 'ի գիշերի մտին 'ի քաղաքն · և մինչդեռ 'ի քուն կային [1] նոքա, լուցին զարտաքոյ ապարանս նոցա ։ Իսկ նոքա զարթուցեալ և հարցեալ թէ զի՞նչ են պատճառ հրկիզութեանս, և հրամայեաց Աղեքսանդրոս կոչել 'ի ներքս զԿանդաւղէս ։ Թագաւոր մեծ զօրութեամբ և աստ հրաման տայ ձեզ 'ի բաց տալ զկինդ յառաջ մինչ զքաղաքդ ամենայն հրկեզ արարից ։ Իսկ նոքա յառաջագոյն ըմբռնեալք զամենեսին յարուցին, և երթեալ յապարանսն թագաւորին զօրութեամբ բազմութ՟ն բացին զարքունիսն և յանկողնէ թագաւորին 'ի բաց հանին զկինն և ետուն ցԿանդաւղէս, և զթագաւորն սպանին ։

ՄԼԴ · Իսկ Կանդաւղէս յոյժ շնորհակալ եղև խրատուն և մտածութեանն Անտիգոնեայ ։ Դարձեալ անդրէն 'ի բանակն Աղեքսանդրի և գիրկս արկեալ զնովաւ ասաց · Անտիգոնէ, հաւատա զանձն քո ինձ և եկ առ մայրն իմ, զի քեզ ընծայս արքունականս մատուցից ։ Իսկ նորա խնդալով ասաց · Խնդրեա զիս յարքայէ · քանզի և ես իսկ ցանկամ տեսանել զքաղաքն ։ Իսկ ասաց Պտղոմէոս որ և Աղեքսանդրոս՝ Կանդաւղայ · Կամիմ 'ի ձեռն թղթոյ ողջոյն ասել մօրն քում դշխոյի ։ Իսկ Կանդաւղէս խնդրեաց յարքայէն զԱնտիգոնէս, զի տարցէ առ մայրն իւր և արքունական պարգևօք դարձուսցէ զնա ։ Ասէ Պտղոմէոս որ և Աղեքսանդրոս · Արդ [2] առեալ զայս հրեշտակս զիմ Անտիգոնոս՝ դարձեալ ամբողջ այսրէն առաքեա, որպէս և դու ողջ առ մայրն քո երթաս

1 ՀՀ · Կային՝ ելին նոքա 'ի քաղաքն և լուցին և հրակէզ արարին · և նոքա աղաղակեցին թէ զինչ է պատճառ հրակիզութեանս ։

2 Այլք Տամ զհրեշտակս իմ զԱնտիգոնոս, այլ տարցես ։

հանդերձ կնաւդ քով զերծեալ գոլին քաջութեամբըդ 'ի բեբրիկացւոց Թագաւորէն ։ Եւ նա ասաց . Տէր Թագաւոր , ես երդուիմ յաստուածսն ամենայն , նա և 'ի գլուխ քո և 'ի բախտ մօրն իմոյ . զի որպէս առնում զայրս զայս առ իս՝ իբրև զդոյն ինքն զքեզ աշխարհակալ , և մեծաւ պատուով առաքեցից առ քեզ զդա հանդերձ արքունական ընծայիւք ։

ՄԼԵ . Եւ անդր երթալով՝ շատ զօրութիւն ընդ իւր՝ Աղեքսանդրի , և ուղևորական գրաստ և սայլակառս . և յերթալն իւրում հիացեալ զարմանայր ընդ զանազան լերինսն բիւրզաքերս՝ երկրին , որք հասանէին մինչև յերկնային ամպս . և ծառք բարձրածայրք պտղօք ակաղձեալք ոչ որպէս առ հելլենացիսն , իբր յատուկ առանձինն հիացման արժանի ։ Քանզի խնձորենիք էին ոսկեգոյնք՝ որ զխանձուծն պտղոյն ունէին , որպէս առ հելլենացիս վարունգքդ են . իսկ ողկոյզ խաղողոյ զոր ոչ կարէ կոտակ զմի տանել 'ի գիր . և ընկոյզք՝ որ քան զմեղրապտուղս մեծ էին ։ Նայց բազում վիշապք զծառովքն պատեալ էին . և մողէզք քան զվիշապս մեծ էին . և կապիկք ոչ ինչ ընդհատք 'ի բարբարոսական գազանաց , կամ ևս 'ի հելլենացւոց արջոց . և այլ կենդանիք զանազանք և ' գունակ գունակք և նորակերպք ։ Այլ և ոմանք տեղիք էին բաքանչելիք և աստուածայինք . և խորշք անդնդայինք որ վիմուտ էջս ունէին ։ Բայց Կանդաւղէս . Ընտեգոնէ , աստանօր վայրքս աստուածային բնակութիւն կոչի . և բազում անգամ յայրս յայսմիկ տեսանին[3] բազմեալք 'ի վերայ գահոյից աստուածք , այնմիկ՝ որ զնոսա հրաւիրեալ կոչէ Թագաւոր . իսկ արդ եթէ կամիս դառնալ , առ նուիրական սպանդս և արա զոհս 'ի տեղիս , և երևեսցին քեզ ։ Կանդաւղի զայս այսպէս ասացեալ , և երթային զճանապարհն ։

1 Հհ . բեբրիկացւոց կամ բերէկ. կամ բերէկոաւոց . և այլն ։ բէբր ։
2 Հհ . և էին առաւել նորակերպք
3 Այլնայն ոչ . դէտանէն ։

ՄԼԶ. Արդ հասին յարքունիսն, և ելին ընդ առաջ նորա մայրն իւր և եղբարքն. և իբրև հանդերձեալ էին գիրկս արկանել նմա, ասէ Կանդաւղէս. Ոչ նախ ինձ գիրկս արկեալ պատուեսջիք, եղբարք, եթէ ոչ նախ զփրկիչն իմ եղեալ և զկնոջ իմոյ զբարերարդ ողջունեսջիք՝ զԱնտիգոնէս զհրեշտակն մեծ թագաւորին Աղեքսանդրու. Առ որ ասեն. Օ ի՞նչ մատոյց քեզ փրկութիւն. Եւ իբրև պատմեաց զամենայն իրս և զյափշտակութիւն կնոջն իւրոյ 'ի բեբրիկացւոցն և զնորա զօգնութիւնն, ապա գիրկս արկեալ և շաղեալ պատեցան զնովաւ մայրն և եղբարքն, և ճաշ պայծառ կազմեցին յարքունիսն.

ՄԼԷ. Իսկ 'ի միւսում աւուր անդր Կանդակէ եկն 'ի դուրս արքունական թագով, ցուցանելով զառաւելութիւն հասակին մեծութեան և զերեսն հանգիտատուածոյ, մինչ թուել Աղեքսանդրի զմայրն իւր տեսանել զՈլոմպիադա. Իսկ զարքունիսն տեսանէր փայլակունս ոսկիայարկ ձեղուամբք և վիմակերտ որմովք, և անկողինք էին ձեռնականք ոստայնանկաց արուեստ ոսկւով գործեալ. և գահոյք՝ որ[1] ունիկինայց և բիւրղայց՝ 'ի վերայ կային, և բագմոցն փոկակապ մածմամբք պնդեալք. և սեղանք 'ի փղոսկրեայ[2] նիւթոց առաջի եդեալ. և գոճազմոյ արարուածոյ նաւիրումն. և սիւնքն նումիտականք, որոց խոյակքն հնդիկ փայտ սևաթոյր փայլիւն. և մարդապատկերց[3] էին նուէրք կանգնեալք 'ի քաջ պղնձոյ, որք վասն բազմութեանն ոչ կարէին զթիւ առնուլ. Եւ կառք գերընդաղէնք ճախարակեալք ծիրանի քարէ հանդերձ ձիօքն և կառավարօք՝ կարծես տային զընթանս 'ի յարձակումն ընթացից գիմել. Եւ փիղք 'ի նմին քարէ քանդակեալք՝ ոտիւքն ընդ գետին կոխէին զթշնամիսն, և զպատիճապատեալ զհակառակորդօքն. Եւ այլ տաճարք դարձեալ համ

1 Այլք նոր.
2 Զորս օր. 'ի փղոսկրանիւթոց.
3 Երկու ՕՕ. մարդապատկերք.

գերձ սեամբք 'ի միջէ քարէ գրօշեալք[1]. և խուժա-
գուժ աստուածոց պատկերք՝ տեսողացն ցուցանելով
զերեսն արփինագոյն ։ Եւ գերանք բարձրաբերձք 'ի
բարձու յարկեալք որքան[2] թէ սաւսոյք 'ի բուսոյ վեր-
ամբարձեալք . և իբր գետ հոսէր ոսկեգոյն ջուր ա-
կանակիտ՝ երևելով այլ ազգ Պաքտուղոս[3] ։ Եւ մի
ըստ միջէ ծառոց կարգաւ տնկելոց հասուն ցանկա-
լի յոստոյն ունէին զմիրգսն ։ Զայս տեսեալ Աղեք-
սանդրի հրաշացեալ զարմանայր հիացմամբ ։

ՄԼԸ. Եւ էր հացկից եղբայրն Կանդաւղայ ։ Աղա-
չէր Կանդաւղէս զմայրն և մաղթէր տալ հրեշտակին[4]
արժանի ինչ ընծայս ըստ նորա իմաստութեանն և
այնպէս արձակել ։

ՄԼԹ. Իսկ միւս օրն առեալ զձեռանէ Անտիգոնայ
Կանդակէ ցուցանէր նմա սենեակս պայծառս և լու-
սաճաճանչս յոդագոյն քարէ, մինչ զի զարեգակն ան-
գամ 'ի ձեռն կճեայ[5] տախտակացն յորմնն կարծել 'ի
ներքս . և 'ի նա էր տաճար մի մեծ յանփուտ փայտից
և անայրելի 'ի հրոյ ։ Եւ տուն շինեալ էր, որոյ ոչ
էր կառուցեալ հիմն 'ի վերայ երկրի, այլ 'ի վերայ
մեծամեծ չորեքանկիւնի[6] փայտից կոփեցելոց կառու-
ցեալ անուաւոր, որ քարշեալ լինէր 'ի քսան փղաց .
և թէ ուրեք երթայր թագաւորն 'ի քաղաք տալ
պատերազմ, յայնմ[7] լինէր ։

ՄԽ. Եւ ասաց Աղեքսանդրոս ցդշխոյն Կանդակէ .
Ընդ այս ամենայն արժան էր զարմանալ, թէ առ հել-
լենացիս էր և ոչ առ քեզ ։ Ծարկացաւ Կանդակէ
և ասաց . Ճշմարիտ ասացեր, ով Աղեքսանդրէ ։ Եւ
նորա յափշտակեալ[8] յանուանէ կոչմանէն, յայնկոյս
դարձաւ ։ Եւ նա ասէ . Ընդ զի դարձար յայնկոյս՝

1 Այլք դրուագեալ ։
2 Ա. այդպէս. այլք որք անբե-
-ռնայք ։
3 Այլք Պակտողոս ։
4 Բ. հրեշտակին ։
5 Չորս օր. կճեայ ։
6 Երկու օր. չորեքանկիւնի ։
7 Այլք այնմ լինէր յորժ ։
8 Հ. ափշտակեալ ։

ձայնեաց Աղեքսանդրոս։ Եւ նա ասաց. Ես, տիկին, Անտիգոնոս կոչիմ հրեշտակ Աղեքսանդրի։ Ասէ դշխոյն. Թէպէտ և Անտիգոնոս կոչիս առ իս, այլ թագաւորն Աղեքսանդրոս ես. բայց այժմ ցուցանեմ քեզ։ Եւ բուռն հարեալ զնմանէ տարաւ 'ի ներքս 'ի սենեակն. և բերեալ մատուցանէր նմա զնկարագիր պատկերագիրն, և ասաց նմա. Ճանաչես զքո ձև կերպարանաց. արդ զի՞ դողաս, զի՞ խռովեալ ես, պարականորոյդ և հնդկավանդ. որ կործանեցեր զյաղթութիւն զՄարաց և զՊարթևաց, այժմ առանց պատերազմի և զօրու անկար ընդ ձեռամբ Կանդակայ դշխոյի. այսուհետև գիտեա, Աղեքսանդրէ, զի որ ոք թուի 'ի մարդկանէ խորհել ինչ մեծամեծս, և այլ ոք թերևս մեծամեծս քան զնորա խորհուրդն և զիմաստութիւն ունի։

ՄԽԱ. Եւ այս սրտմտեցաւ Աղեքսանդրոս և կրճտէր զատամունսն իւր։ Ասաց Կանդակէ. Զի՞ սրտմտեալ ես, զի՞ կրճտես զատամունսդ. այժմ զի՞նչ կարես առնել ինձ այդքան մեծ թագաւորդ։ Եւ նա ասէ. Վասն այնորիկ դողմամբ կրճտեմ զատամունս, ես և ընիկ սրտմտիմ, զի ոչ ունիմ զսուսերն իմ առ իս։ Ասէ տիկինն. Եւ թէ ունէիր զայն զի՞նչ կարէիր առնել։ Եւ նա ասաց. Սպանանէի զքեզ նախկին, զի այլ մի ես գտցիս, քան թէ հնազանդել, և ապա անձամբ[2] անձին իմոյ մահուիչ լինէի։ Եւ նա ասաց. Եւ այդ զի՞նչ քաջութեան և թագաւորական մտաց է. այլ արդ մի երկնչիր, Աղեքսանդրէ, քանզի դու որպէս զմանուկդ իմ և զկին դորա 'ի բեբրիկացւոց մահու ապրեցուցեր, և ես զքեզ այսպէս պահեցից՝ ասել առ խուժադուժն ոչ գոլ զքեզ Աղեքսանդրոս. քանզի եթէ գիտասցեն զքեզն եթէ դու ես Աղեքսանդրոսն, դառնապէս սպանանեն անդէն զքեզ վաղ-

1 Այլք 'ի ներքսագոյն սենեակ մի . . նմա զնկարեալ պատկերն։ 2 Հ. անձամբ իմովին իմոյ։

վաղակի, զի և դու զՊաւրոս սպանէր. քանզի կին փոքր որդւոյ իմոյ դուստր է Պաւրոսի. սակս որոյ կոչեցիր Անտիգոնոս, վասն զի 'ի ներքս յոգիս պահեցից զքո խորհուրդս:

ՄԽԲ. Զայս ասացեալ ել ընդ նմա արտաքս և ասաց. Որդեակ իմ Կանդաւղէ, և դուստր իմ Մարպէսդա, եթէ ոչ 'ի դէպ ժամանակի գտեալ էր ձեր զզօրն Աղեքսանդրի, ոչ ես զքեզ այլ այսրէն ընդունէի, և ոչ դու զկինդ քո գտանէիր. արդ եկայք արժանի լիցուք հրեշտակիս Աղեքսանդրի և մատուցուք սմա ընծայս արժանապէս: Նա ասաց երկրորդ որդի նորա Կարաբովս. Մայր դշխոյ, Աղեքսանդրոս ապրեցոյց զեղբայրն իմ և զկին նորա. տացուք դմա զինչ կամիս: Իսկ երրորդ որդին ասաց. Տիկին մայր, տրտմի իմ կինն յաղագս հօրն իւրոյ զի սպանեալ եղև յԱղեքսանդրէ. և արդ նա տրտմեցուցանել կամի զմակեդոնացին, և զնորա հրեշտակս ընդ ձեռամբ ունելով աստ սպանանել զայս Անտիգոնոս: Ասէ. Նա զինչ օգուտ է քեզ, որդեակ. զի ոչ ինչ է փոյթ Աղեքսանդրի եթէ աստ զսա սպանցես, քանզի են բազումծառայք Աղեքսանդրի քան զսա: Նա ասաց Կանդաւղէս. Այլ ինձ սա եղև փրկիչ և կնոջ իմոյ, և ես երդմամբ պարտիմ զսա ամբողջ անդրէն դարձուցանել առ Թագաւորն. իսկ ապա եթէ այդպէս իցէ, և մեք յաղագս սորա աստ մարտ պատերազմի առնելով խառնիմք ընդ միմեանս. ես ահա զայդ ոչ կամիմ. բայց եթէ դու կամիս, պատրաստ գտցես զիս:

ՄԽԳ. Իսկ Կանդակէ երկուցեալ վասն մանկանցն թէ մի՛ գուցէ կռուեսցին, 'ի բաց առեալ զԱղեքսանդրոս միայն ընդ միայն ասաց. Աղեքսանդրէ, ամենայն ուրեք եղեալ ես կորովամիտ. բայց աստ և՛ ոչ մի ինչ

1 Այլք [illegible] կռուեսցին:

պատճառս ոչ կարես գտանել մտաց, որպէս զի մի և վասն քո կուսեսցին մանկունքս իմ։

ՄԽԴ. Եւ ասաց Աղեքսանդրոս. Կարապով, և դու Կանդաւղա, եթէ զիս աստ սպանջիք, ոչ ինչ փոյթ է Աղեքսանդրի. քանզի հրեշտակք ոչ եթէ պատուականք ինչ իցեն թագաւորաց, այլ անպիտանք են նմա 'ի գործ պատերազմի։ Արդ եթէ զիս աստ սպանջիք, ունի և այլ հրեշտակս Աղեքսանդրոս. և եթէ կամիք յինէն զթշնամին դիւրաւ ըմբռնել զԱղեքսանդրոս, խոստացարուք ինձ մասն պարգևաց տալ աստ, զի առ ձեզ անցից մնացից և հաւանեցուցից զարքայն գալ առ ձեզ իբրու թէ ձեր կամեցեալ զօր պատրաստեցէք նմա զընծայսն դէմ յանդիման մատուցանել. և յայնժամ ընդ ձեռամբ արկեալ և զանձանց վրէժ խնդրեալ, հաւանեցուցեալ դադարեսջիք 'ի սրտմտութենէ։

ՄԽԵ. Հաւանեցան եղբարքն. բայց Կանդակէ հիացեալ զարմացաւ ընդ միտսն Աղեքսանդրի և ասաց ցնա առանձինն. Աղեքսանդրէ, իցիւ թէ էիր և դու իմ որդի, զի քև ամենայն ազանց իշխէի. քանզի ոչ եթէ պատերազմաւ ևեթ ընդ ձեռամբ արկեր զաշխարհ քաղաքայնօք, այլ բազում իմաստութեամբ. արդ լեր 'ի սոցանէ պաշտպանութիւն կրել, և պաշտօն մեծապէս Կանդակայ՝ պահել նմա զխորհուրդն։ Բայց խրատ տամ քեզ, զի յայսմ հետէ այլ մի վստահասցիս անձամբ անձինն քո հրեշտակ լինել. զի մի նմանեսցիս այնոցիկ որ զինքեանս արտահանել ջանան։

ՄԽԶ. Եւ յետ աւուրց 'ի գնալն տայ նմա Կանդակէ ընծայս արքունական, պսակս ադամանդեայ բազմաքանքար, և վակաս ակինովտոն յունիոփնայց և բիւրեղայց, և քղամիդ աստղաճաճանչ 'ի բոլորածիրանէ ոսկեթել։ Եւ այնպիսի պատուով առաքէ զնա յանձնարարութեամբ ընդ իւր զինուորսն։

ՄԽԷ. Եւ գնացեալ արքայ 'ի կարգեալ աւուրս ե-հաս 'ի յայն սքանչելի այրն, ուր ասաց նմա Կանդաւղէս զաստուածսն գնալ շրջել: Եմուտ 'ի ներքս հանդերձ սակաւ զինուորօք. և տեսանէ բաղ աստ-ղաճաճանչ. և փայլփէին յարկ ձեղուանցն իբրև յաս-տեղց ճառագայթից, և արտաքուստ երևոյթք դի-ւաց, և թմբրին լուսթեամբ ծառայել. և զարհու-րեցաւ յառաջագոյն ըմբռնեալ. բայց եկաց մնաց տե-սանել թէ զինչ լինիցի: Տեսանէր զոմանս' բազմեալս, որք փայլակէին յաչացն իբրու ճրագացն ճառագայթք, և զմի ոմն որ ասէր. Խնդա և ուրախ լեր, Աղեքսանդրէ, գիտես զիս թէ ով եմ ես: Ասէ. Ոչ, տէր: Եւ նա ասէ. Ես եմ Սեսոնքուսիս[1] աշխար-հակալ թագաւոր ընակակից աստուածոց եղեալ. բայց ոչ այնչափ բարեբախտիկ եղէ որքանդ[2] դու, զի առցես անուն անմահ և յետ մահու: Եւ ասեմ. Ո՛ խմրդ, տէր: Ասաց. Ո՛ի ես զբոլոր աշխարհ հնա-զանդեալ և այսքան ազինս ծառայեցուցեալ անա-նուն եմ. բայց դու եղիցիս անուանի, շինեալ զփա-փագելի աստուածոյն յԵգիպտոս զԱղեքսանդրիա, Սուտուղոյս[3], Խալան, Դրաւղ, Վուտալ[4]. այլ երթ 'ի ներքս և տեսցես զարարիչն ամենայն բնութեան և զվերակացուն:

ՄԽԸ. Երթայ թագաւորն 'ի ներքս և տեսանէ բաղ հրափայլ և զաստուածս որ անցեալ նստէր 'ի վերայ աթոռոյ, զոր երբեմն ետես 'ի Հռակոտիդի երկրպագեալ 'ի մարդկանէ' զտէրն Սարապիս: Ա-սաց. Ո՞ ինչ է այս, դև անապական բնութե՞ն ծնունդ, տեսի զքեզ 'ի կողմանս լիբէացւոց յաթոռ նստեալ, և այժմ աստ դարձեալ տեսանեմ զքեզ: Ասաց, մօտ

1 Այսպէս յոյն և լատին. իսկ մերքն [illegible] կամ [illegible]:

2 Այլք [illegible]:

3 Չորս ՕՕ. միայն ունէին ըղ-բառդ, և գրեալ [illegible]:

4 Չորեքին անուանքդ չէք 'ի յոյն և 'ի լատինն:

առ նմա կալով, Սեսոնքուսիս[1] Աղեքսանդրի. Սա ամենայն ուրեք երեւի 'ի միում տեղւոջ հաստատեալ. որպէս և երկին երեւի ամենայն ուրեք 'ի միում բարձրութեան հաստիւ հաստատեալ։

ՃԽԹ. Եւ ասաց Աղեքսանդրոս. Տէր աստուած, քանի՞ ամ կեցից։ Եւ Սեսոնքուսիս ասաց. Բարւոք է մահկանացուի ոչ գիտել թէ երբ վախճանի. քանզի[2] ակն ունելով աւուրն այնմիկ յորժէ հետէ ուսանի՝ վախճանեցաւ. բայց անգիտութեամբ կրել զայս՝ զանխուլ մոռացօնս մատուցանէ, ոչ ունել 'ի մտի թէ ընաւ ամենեւին իսկ վախճանի. բայց սակայն զոր շինես քաղաքն, եղիցի հռչակաւոր և երեւելի ամենայն մարդկան, կերակրիչ և դայեակ ամենայն աշխարհի. և բազում թագաւորք եկեսցեն յատակմն քեզ երկիր պագանելով իբր աստուածոց, և բնակեսցես[3] 'ի նմա մեռանելով և ոչ մեռանելով. քանզի գերեզման քեզ լիցի զոր շինես քաղաքն։

ՃԾ. Այսպէս ասացեալ հրեշտակին, ելանէր արտաքս Աղեքսանդրոս. և առեալ զկուրան զնայր զՃանապարհն զոր երթալոցն էր։ Եւ էին ընդ առաջ նորա նախարարքն և պսակեցին զնա թագաւոր և ետուն նմա զարքունական պատմուճանն։

ՃԾԱ. Իսկ զգնաց Ճանապարհին յԱմազոնս առնէր. և երթեալ մօտ անդր առաքեաց առ նոսա թուղթ, որ ունէր օրինակ զայս. "Թագաւոր Աղեքսանդրոս՝ Ամազոնեացդ խնդալ։ Զառ Դարեհիւ զկռիւն կարծեմ զձեզ գիտել, և անդուստ 'ի Հնդիկս, որ զօրու գնացաք. և գտեալ անդ արս քաջս զառաջնորդս նոցա և զթագաւորսն և զմերկ իմաստասէրսն, և առեալ հարկ 'ի նոցանէ բարձաք. Թողաք յիւրեանց

1 Բ. Սեսոնքոսիս. երեք օր. Սեսոնքոսայ. Աղեքսանդրէ։

2 Այլք [illegible] [illegible]. այս [illegible] [illegible] է [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible]։

3 Այլք բնակեսցես։

*տեղիս կալ մնալ, և 'ի խաղաղութեան զերկիրն հաստատեցաք. վասն որոյ խնդութեամբ զմեզ ընկալան, և զոհս կատարել վասն մեր արարին. և անդուստ դարձեալ առ ձեզ եկաք։ Արդ և դուք եկայք մեր ընդ առաջ. քանզի դամք ոչ չար ինչ առնել, այլ տեսանել զաշխարհ, միանգամայն և ձեզ բարի առնել. ողջ լերուք ”։*

ՄԾԲ. *Նա ընկալեալ զայս, և նոքա նմա գրեցին այսպէս. “ Ամազոնայք քաջք և առաջինք զօրուս, Թագաւորին Աղեքսանդրի խնդալ։ Գրեցաք քեզ զի գիտասցես յառաջ քան զմտանել քո 'ի տեղիս, զի մի դուցէ անփառաւոր դարձցիս անդրէն. 'ի ձեռն այսր թղթոյ հաւաստի գիտուն առնեմք զքեզ իմանալ զիրս աշխարհիս մերոյ և զմեզ. զի եմք քաջք և առաքինիք. քանզի եմք ամազոնական գետոյ այլ յայսկոյս, և բնակեալ եմք 'ի կղզւոջ. և շրջաչափութիւն' իւր տարւոյ գնաց, և շուրջ զիւրեաւ գետ է որ ոչ ունի սկիզբն. և է մի մուտ։ Նա եմք բնակեալքս կոյսք բիւրք քան զինուորք, որ զարանց փորձ ոչ գիտեմք, և արու առ մեզ ոչ գոյ ոք. և արքն մեր յայնկոյս գետոյն բնակեալ են, զաշխարհն՝ վիճակ ընդ որ կալեալ 'ի վայելչութիւն։ Նա մեք տարւոյ տարւոյ առնեմք կացուրդս, տօնս ամենժողովս[3], ձիապանութիւնս[4] զենլով Արամազդայ և Պոսիդոնի[5] և Հեփեստեայ աւուրս երեսուն։ Նա այսպէս անցանեմք ընդ գետն յայնկոյս առ արսն, և նոքա առնեն առ մեզ զամուսնութիւն մերձաւորութեանն աւուրս երեսուն։ Նա որք կամին ապականել զոմանս 'ի մէնջ, անցանեն մնան անդէն առ արսն. և զէգսն որքան միանգամ ծնանին, եղեալ եօթնամեայս՝ անցուցանեն առ մեզ։ Իսկ յորժամ թշնամի զօր 'ի վե-*

1 Այլք [illegible] կամ [illegible]։
2 Այլք [illegible]։
3 Երկու օր. ամենաժողովս։
4 Այլք [illegible] Արամազդայ։
5 Ամենայն օրինակք. Պոսիդոնի եղաւ ըստ յունին։

րայ մերոյ աշխարհիս եկեսցէ, եւանեմք ընդդէմ նոցա հեծեալս աւելի քան զբիւրս երկոտասան, եւ այլքըն զկնգլին պահեն. եւ գամք ընդ յառաջ 'ի սահմանս, եւ արքն յետոյ կազմ զկնի մեր գան: Եւ եթէ ոք 'ի պատերազմին վիրաւոր լիցի, կերակրեալ լինին 'ի նուիրական սեղանոյն Արամազդայ, եւ ամենեքին նմա երկիր պագանեն երկիցս յաւուր, եւ ազգայնոցն պսակ յարայիշելի: Եւ որ ոք անկցի 'ի պատերազմին պաշտպանելով աշխարհիս, մերձաւորք նորա ինչս առնուն ոչ սակաւ: Եւ եթէ ածցէ ոք 'ի թըշնամեացն 'ի կղզիս, կայ առաջի յաղթութեանն նշանակ ունելով արծաթիս եւ ոսկեղէն ոչ սակաւ եւ ուտիկ կերակրոյ մինչեւ 'ի կեանս իւր. մինչ զի զմեզ ամենեցուն նահատակել վասն մերոյ աշխարհիս: Իսկ եթէ 'ի թշնամեացն յաղթեսցուք կամ փախիցեն, ամօթ նոցա կայ եւ մնայ, զհետ նոցա երթալով յամենայն ժամանակս. եւ եթէ մեզ յաղթեսցեն, եղիցի կանաց ամազոնուհեաց յաղթեալ: Արդ տես, ով թագաւոր Աղեքսանդրէ, մի՛ գուցէ այս պատահեսցի քեզ. բայց պսակեմք զքեզ ամի ամի որքան եւ կարգեսցես: Արդ խորհեալ յաղագս այսորիկ գրեա մեզ այսրէն, եւ գտցես զբանակս մեր 'ի սահմանս քո:

ՄԾԳ. Եւ արքային առեալ եւ ընթերցեալ ըզգրեալսն եւ յոլով ժմտեալ, գրեաց նոցա անդրադարձութիւն օրինակ զայս: "Կայսր ամենայն թագաւորաց Աղեքսանդրոս, Ամազոնուհեացդ խնդալ: Երից մասանց աշխարհիս տիրեցաք վերին օգնականութեամբն. եւ ոչ ուրուք թողեալ նշանակ անյաղթութեան, այլ ամենեցուն յաղթեալ. արդ ամօթալի է մեզ թողուլ, եթէ ոչ եկեսցուք 'ի վերայ ձեր զօրու: Արդ եթէ կամիք կործանել եւ անընակ զաշխարհդ ձեր լինել, կայեք մնացեք 'ի սահմանսդ. բայց եթէ կամիք 'ի ձերում յերկրիդ բնակել եւ ոչ առնուլ զփորձ

1 Ա., յլք Գ.:

պատերազմի, անցեալ ընդ գետդ երևեցարուք մեզ. սոյնպէս և որքն ձեր կարգեսցեն զինքեանս 'ի դաշտիդ ։ Եթէ զայս արասջիք, երդնում ձեզ 'ի Հայրն իմ Արամազդ և յԱրէս և յՀերա և յԱթենաս յաղթաւորն՝ ոչ զրկել զձեզ ։ Բայց զոր կամիցիք տալ հարկ, զայն առից 'ի ձէնջ 'ի ձեր զինուորութիւնդ, և ոչ եկից 'ի ձեր յարկ յերկիրդ. և զորս որոշեսջիք հեծեալս, առաքեսջիք առ մեզ. և տամք ըստ իւրաքանչիւր ամսոյ իւրաքանչիւր ումեք կնոջ ոսկւոյ մնաս հինգ, թող և զայլ ինչ. և 'ի տարւոջն գլուխ նոքա արձակեալք լիցին յիւրեանց գաւառն, և դուք այլս փոխանակ նոցա առաքեսջիք ։ Որդ խորհուրդ 'ի մէջ առեալ առաքեսջիք մեզ այսրէն պատասխանի. ողջ լերուք,, ։

ՄԾԴ. Եւ նոքա խորհուրդ արարեալ գրեցին նորա պատասխանի, որ էր օրինակ այսպէս ։ "Ամազոնեաց քաջք և առաջին զօրուն զինքնակալ թագաւորիդ զհրամանսն ընկալաք զԱղեքսանդրի ։ Տամք քեզ իշխանութիւն գալ անցանել առ մեզ և տեսանել զաշխարհս մեր ։ Եւ կարգեմք տալ քեզ 'ի տարւոջն ոսկւոյ քանքարս հարիւր և քաջագոյնսն 'ի մէնջ հինգ հարիւր. առաքեցաք քեզ ընդ առաջ գալ 'ի սահմանսդ՝ բերելով քեզ զինչսն և հեծեալս քաջս հարիւր. սոքա եղիցին առ ձեզ զտարին ։ Իսկ եթէ ոք 'ի սոցանէ ապականեսցի յայլազգւոյ, եղիցի 'ի գաւառին օրէնս ամբարշտեալ ։ Բայց գրեա որք կամիցին առ ձեզ կալ մնալ. և զայլսն 'ի բաց առաքել՝ առցես այլս ։ Վասն որոյ հաւանիմք քեզ դէմ յանդիման և 'ի բացեայ. քանզի լուաք զքո առաքինութիւնդ նա և զզօրութիւնդ. քանզի զի՞նչ եմք մեք առ ամենայն աշխարհս ընդ որ դու անցեր, զի քեզ ընդդէմ կացցուք 'ի բաց ։ Բայց թուէր մեզ բարիոք 'ի մերում վայրս բնակել քեզ հաւանելով,, ։

ՄԾԵ. Եւ զայս կարգեալ՝ զուղէգնացութիւնն

տանէր 'ի պարասանգացւոց աշխարհն ։ Իսկ յոյժ 'ի հեղգութիւն պղերգութեան եկին զինուորքն պարգևին միջոցելոց. Արամազդ ոչ դադարեաց տեղալով աւուրս քառասուն, մինչև բառնալիք վահանացն 'ի ջրոյն փտեալք լինէին, նա և երեսանակք ձիոցն. և բազմաց 'ի մանկտւոյն ոտքն թրջեալ հարան վասն բոկութեան ։ Իսկ այն ինչ դադարեալ անձրևին, տօթեղև այնքան մինչ ոչ ումեք կարէին տանել ։ Ազէն և որոտմունք մեծամեծք, և փայլատակունք անկանէին տեղ տեղ, մինչև ձայնք այսր և անդր ընթանային յաղագս այնոցիկ որ 'ի գնդին ։ Իսկ հանդերձեալ էին անցանել ընդ գետն ։ Հարցանէր զաշխարհին յաղագս բազմութեան զօրութեան թագաւորին որ յանկոյս էր 'ի պարասանգացւոց աշխարհին. և էր այս աշխարհ առ Ովկիանոսիւ ։ Իսկ ասացին նմա բնակիչք աշխարհին՝ եթէ են նորա փիղք մարտամունք հինգ հազար, և կառք բիւր և մարդկան բազում բիւրք ։ Զայս լուեալ մտաւորին Աղեքսանդրու, աւար առեալ զառ գետովն և զայլ ևս զաշխարհն հնդկաց, և այսպէս բագինս շինեալ և հրաւորս 'ի ձեռն խւրոյ զօրուն զոհս աստուածոցն կատարէր ։

ՄԾԶ. Իսկ ընկալաւ թուղթ յիմաստնոյն յԱրիստոտելէ, որ ունէր այսպէս ։ "Արիստոտելիս՝ թագաւորին Աղեքսանդրի խնդալ ։ Տարակուսեալ եմ յոյժ 'ի խնդիր զինչ առաջին քեզ, ապա զինչ վերջին թուեցից. քանզի Արամազդ վկայէ և Պոսիդոն, զի երջանիկ և երևելի և հռչակաւոր գործոց նախ առաջին աստուածոց ամենեցուն և ամենուրեք շնորհ ունիմ ։ Զի զամենայն հանդէս և զնահատակութիւն նա և զվտանգ յանձին կրեալ՝ և ոչ 'ի միում ոչ ըմբռնեցար. քանզի 'ի հնդկաց աշխարհն երկրորդ և բազմապատիկ 'ի ձմերունս՝ մատնեալ ապրեցար. և

1 [illegible]

՚ի նոյն երկիր եթէ որ զինքն տալ ժուժայցի, երեւելի եւ հռչակաւոր եւ սքանչելի գործոց անուանս առցէ ։ Բանզի զօրապետութեան քաջ նահատակ դիւրաւ գիտելի է, եւ ՚ի խորհուրդ խրատու Նեստովր, եւ ՚ի զինուորութեան կուիւ քաջ Ոդիսեւս՝ որ զբազում մարդկան ետես զքաղաքսն եւ զմիտս ծանեաւ ։ Զի ասեմ քեզ, որ առ երեսուն ամօք եղէն իրք ․ զոր ասեն եթէ Աղեքսանդրոս մակեդոնացին յարեւմտից յարեւելս եհաս, եւ խնդութեամբ ընկալան զնա եթովպացիք, սկիւթացիք, ոմանք ՚ի մուտս եւ ոմանք յելս արեգական ․ եւ այլքն որք թուէին ընդդէմ կալ քեզ, եւ նոքա առաքեցին աղաչելով, որպէս զի բարեկամասցիս նոցա ․ այս թագաւոր հանդիտաստուած[1], ողջ լեր ։։ ։

ՄԾԷ․ Եւ առեալ զզօրն եկն եւ գնաց ՚ի Բաբելոն․ եւ հասեալ անդ մեծաւ պատուով պատուեցաւ, եւ[2] զօհս մատոյց չաստուածոց, եւ հանդէս ՚ի մերկակրթութիւն[3] ըմբշաց եւ երաժշտական կատարէր ։

ՄԾԸ․ Յայսցանէ եղեալ, ապա գրէ թուղթ Ոլոմպիադայ մօրն զիւր իսկ անցեալ իրսն, որոյ է պատճէնս այս եւ թղթոցս այսոցիկ առաքելոց, ծանուցանէ առանձինն գործեցեալ իրս Ոլոմպիադայ դշխոյի․ յորում յայտնի եւ հաւաստի պատմէ զամենայն մի ըստ միոջէ այսպէս ։ “ Թագաւոր հզօր եւ կայսր ինքնակալ երից մասանց աշխարհի, գրեմ Ոլոմպիադայ մեծապատիւ մօր իմոյ խնդալ անընդհատ ։ Եւ գիտութիւն լիցի, զի ՚ի սկզբանէ գործեցելոցն մեզ մինչեւ յայն որ յԱսիա իրքն եղեն, հաւանեալ եմ գիտել քեզ ՚ի մինչն առ քեզ գրեցեալ ։ Բայց կամ եղեւ ինձ եւ յաղագս վերին կողմանցն զճանապարհին յայտ-

[illegible] ․ ․ սկիւթացիք ․ եւ [illegible] [illegible] ․ այլ երեսուն ամօք եղէն իրքս, [illegible] ՚ի [illegible] ։

1 Այլք հանդիպաստուած ։

2 Հհ․ [illegible] ՚ի [illegible] եւ ՚ի հանդէս մերկամարզութեան երաժշտական պարէից ։

3 Հին․ օր․ ՚ի մերկամարզութիւն ։

նել քեզ. քանզի գնացեալ 'ի Բաբելոն կոյս և առեալ ընդ իս յուէտ զհզօրագոյնս բիւրս հնգետասան, դարձեալ արարի և այլ ճանապարհ: Եւ հասեալ 'ի Պարասանգաս ելի 'ի Հերակլեայ արձանսն յաւուրս յիսուն և հինգ. քանզի ասացին զՀերակլէ սահման աշխարհին առնել և լինել զերկուս արձանսն, զմինն ոսկի և զմիւսն արծաթի. որոյ միոյն բարձրութին կանգնոց երկոտասան, և միւսոյն կանգնոցս երկուց. և ոչ հաւատացեալ թէ իցեն սեղմք կռածոյք, կամ եղև ինձ զոհս մատուցանել Հերակլի և ծակել զմի յարձանացն, և երևեցաւ ինձ համակ ոսկի. կամ եղև ինձ դարձեալ ընուլ զծակն, և գտաւ ծակուածն զի տարաւ ոսկիս հազար և հինգ հարիւր մողալ՝ որ է դրամ մի: Եւ աստուստ դարձեալ ընդ անապատն և ընդ վախուտ վայրս, և 'ի բաւէն ոչ կարէաք տեսանել զմօտակացն թէ ո՛ ոք արդեօք իցէ: Եւ 'ի տեղեացս յայսցանէ գնացաք, և գայաք 'ի Պարասանգաս յաւուրս եօթն, որ կոչի Թերմադոն գետ, որ ելանէ և մտանէ 'ի Պաւտոս, վայր դաշտային ունելով իւր գնացս և բարեբախտիկ. և բնակեալ էին աստ ամազոնացիք կանայք՝ մեծութեամբ և գեղեցկութեամբ գերազանցեալք առաւելութեամբ քան զամենայն կանայս, բարեկաւք և առաքինիք. և համդերձս ունէին ծաղկեայս և զինուք վարէին արծաթի տապարովք. երկաթ և պղինձ ոչ գոյր անդ. հանճարովք և իմաստութեամբ զարդարեալք էին: Եւ բանակ առեալ մեր առ գետովն, զի ոչ գոյր մեզ յայնկոյս անցանել ուր Ամազուհիքն բնակեալ էին, քանզի էր գետն մեծ և անհուն, և ունէր գազանաց բազմութիւն և սեաւ քարանց. և սոքա անցեալ առ մեզ ճակատեցան. և առեալ 'ի նոցանէ հարկս անցաք գնացաք 'ի կարմիր ծով կոյս 'ի նեղ տեղի. յաջմէ կողմանէ էր լեառն բարձր, և յահեկէ կողմանէ

1 Երկու օր. մխեաւ. երկու այլ ձեռաւ կամ նխեաւ:

ծով բախէր։ Եւ զոհեալ Պոսիդոնի ձիս տասն, և հանգուցեալս յերկրորդում աւուրն, դարձեալ անտի եկաք յԱտլաս գետ։ Եւ անդ էր տեսանել ոչ զերկին և ոչ զերկիր. և էին անդ աղինք բազումք և բազմապատիկք բնակեալք. քանզի տեսաք շնագլուխս և անգլուխս մարդիկ, որք զաչսն ունէին 'ի լանջսն և զբերանն, ծակասոյզք ևս որ ընդ երկրաւ բնակեալ էին ազգք վայրենիք։ Եւ 'ի տեղւոյս յայսմանէ էր երկիր 'ի բացէ աւուր միոյ նաւելոյ. և նաւեալ առ սովաւ գտաք զԱրեգ քաղաք. ինձ այսպէս թուի թէ սա է որ ասեն քաղաք պղնձի, որոյ էր շրջապատումն ասպարիսաց հարիւր և քսան. և աշտարակք էին 'ի նմա չորեքտասան ոսկւով և զմրուխտով շինեալ, մի մի 'ի նոցանէ ունէր աստիճանս վաթսուն։ Եւ 'ի վերայ անցեալ կայր կառք ձիովք յոսկւոյ և 'ի զմրուխտէ, և տեսանել զնոսա ոչ էր դիւրաւ վասն շամանդաղին. և քուրմն արեգական եթովպացի էր. և զոհս մատուցեալ արեգական, վասն զի ոչ գտանէաք լոյս, դարձեալ անցաք գնացաք անտի։ Եւ երթային առաջի մեր կանթեղնաւորք[1] պարսիկք, առեալ զամբարս արծաթիս ունելով լուցեալս. և եկաք 'ի Տանայիս գետ, որ հոսի յԱսիա և յԵւրոպէ։ Եւ անդուստ խաղացեալ եկաք 'ի Քսերքսի և 'ի Կաւոսի յարքունիսն. և գտաք լաւ տունս ոսկւով և արծաթով 'ի լիս, և նշանաւոր բաժակս բազում և այլ ինչ շատ լաւ։ Եւ էր տուն մեծ յարկաւոր, որ ինքն թագաւորն սովորեալ էր հրաման պատասխանւոյ յաստուածոց ընդունել, յորում ասացին հաւ մարդկային ձայնիւ թարգմանեալ։ Քանզի էր 'ի մէջ ձեղուանն լորանոց[2] ոսկի, յորում էր հաւն այն 'ի չափս աղաւնոյ. զոմանէ ասացին՝ թագաւորաց թարգմանել մարդկային ձայնիւ յորժամ զձայնսն բախեալ ընդ

1 Այլք կանթեղաւորք։

2 Ամենայն օրինակք լորանոց. եդաք ըստ յունին.

նմա լուիցէ. և 'ի նմա աստցին լինել ժամանակս բազում։ Եւ կամեցայ ես զնա իջուցանել 'ի վայր, զի առաքեցից քեզ. և քուրմն ասաց զայն ձայնի գոլ։ Եւ յարքունիսն ես 'ի Շուշա գտաք Թակոյկ արծաԹի որ տանէր սափորս երեք հարիւր և վաԹսուն. զոր և չափեցաք 'ի մեծ Ճաշն, յորում և զզոհսն արարաք փրկուԹեանց։ Էր և տուն մեծ յորում գրեալ էր նաւամարտուԹիւնն Քսերքսի ընդ աԹենացիս։ Եւ կայր անդ 'ի միջոցի աԹոռ ոսկի և 'ի վերայ նորա խորան ոսկի, յորում ասէին հրաման պատասխանւոյ աստուածոց ընդունել Թագաւորի յորժամ հրեշտակուԹիւն ուստեք եկեսցէ։ Էր աստանօր և գաւկայ արուեստն յարմարականք առ որ ինքնին հարեալ լինէր. և շուրջ զաԹոռովն կայր ամանս բաժակի 'ի վեշտասան կանգնոյ, որ ունէր աստիճանս երկոտասան. և 'ի վերայ անդ անցեալ կայր արծուի ոսկի, որ զԹեւսն իւր 'ի վերոյ տարածեալ ունէր բոլորուածոյն՝ ամենայնի բաժակամանին։ Եւ էր անդ բարունակ եօԹնուղէշ տպաւոր[2] ոսկի և ոսխտակ և սուսոյ և մուրտ, ամենեքին սոքա գեղեցկաքանդակս[3] գործեալք. քանզի յաղագս այսոցիկ ես գրեցի քեզ. զի այնքան էին, մինչ 'ի բազմուԹենէն ոչ կարէաք զամենայն յիշեցուցանել. ողջ լեր, մայր իմ»։

ՄԾԹ. Իսկ Թուղթս այս իբրև գրեցաւ յՈղոմպիա մայրն, մինչդեռ էր 'ի Բաբելոնի և հանդերձեալ էր փոխել զկենցաղս, մեծ իմն յայտնի երևոյԹս առնէր դեն. որ և նշան մի եղև այսպէս։ Քանզի 'ի դաւառայնոցն կին ումն ծնաւ մանուկ. վերին կողմն մարմնոյն մինչև ցպորտն ունէր զամենայն ինչ մարդոյ ըստ բնուԹեան, և զներքոյն վայրենեաց գազանաց։ Եւ էր բոլոր տիպք կերպարանացն նման Սկիւլլայ,

1 Բ. Քուրմաստածայն։
2 Երկու օր. տապաւոր։
3 Այլք գեղեցկայարմարս տնտղ. կազմածեալ։

եթէ ոչ զազանացն այլայլութեամբ և բազմութիւն այլափոխեալ լինէր. քանզի էին կերպարանք ընձուց և առիւծուց և գայլոց և վարազաց՝ վայրենեաց և շանց[1]։ Եւ սոցա կերպարանք շարժէին և քաջայայտ երևէին ամենեցուն ճանաչել զիւրաքանչիւր ձև. իսկ մանկանն էր մեռեալ և կապուտակ մարմինն[2]։ Եւ միանգամայն կինն ընդ ծնանելն զառաջասացեալ մանուկն՝ եդեալ զնա ՚ի խնծի և ծածկեալ եկեալ հասանէր յապարանս Աղեքսանդրի և ասէր սենեկապանին ազդել վասն նորա թագաւորին. քանզի ունիմ իմն յաղագս պիտանացու իրաց ասել և ցուցանել նմա։ Եւ նորա դէպ եղև զի հանգուցեալ էր ՚ի սենեկի իւրում ՚ի հասարակ աւուր։ Եւ իբրև զարթեաւ և ՚ի սենեկապանէն լուաւ յաղագս որ եկեալ էր անդր կինն, հրամայեաց կոչել ՚ի ներքս։ Իսկ նորա ՚ի ներքս մտեալ, հրամայեաց արքայ զի որ ՚ի ներքս կային՝ արտաքս ելանել։ Եւ իբրև ելին, ապա բացեալ եցոյց նմա զծնեալ հրաշն, ասելով թէ ինքն ծնաւ։ Իբրև ետես զայն Աղեքսանդրոս, հիացաւ մեծաւ զարմացմամբ. և զմոգս և զնշանագէտս քաղդէացիս միանգամայն կոչեցեալ՝ հրամայեաց զընթերցութիւնն ասել վասն նորա, խոստացեալ նոցա կամ մահ և կամ փառս եթէ ոչ ասասցեն զճշմարիտն։ Եւ էին նշանաւոր և փառաւոր և իմաստնագոյնք քաղդէացւոցն, և մին ՚ի նոցանէ ըստ արուեստին կարի առաւելեալ էր քան զամենեսեան, որում դէպ եղև ոչ պատահել անդ. բայց որք անդ էին, ասացին հզօրագոյն լինել և ահաւոր թշնամեաց զԱղեքսանդրոս, և տիրել ծովու և ցամաքի. և զհզօր ահագին անասունն ասացին՝ որ ընդ մարդկային մարմնոյն անկեալ գնէին՝ զայս ինչ նշանակել, հզօրագունիցն

1 Այլք՝ հրապարակաւորացն կամ հրապարակ հրապարակաց․․ մարմնոյն։

2 Այլք՝ յասպարէզն և այլ փողո․ խաղալիկացն նոյն կիներոյ։

նմա տիրել, և ոչ այլ ոք քան զնա լինել հզօրագին[1] ։ Իսկ սոքա զայս ասացեալ, զիարդ և էր՝ Թափեցան 'ի նմանէ ։ Իսկ յետ նոցա եկն եհաս միւս ևս քաղդէացին յուղւոյ առ Թագաւորն . և տեսեալ զգիր նշանին, գուշեաց մեծապէս և զհանդերձս պատառեաց, և յոյժ զչարեալ արտասուէր 'ի վերայ փոփոխմանն որ հանդերձեալն էր լինել 'ի մեծն աշխարհակալ ։ Իսկ Աղեքսանդրի տեսեալ զնա այսքան հարեալ յանցիցն՝ երկեաւ ոչ սակաւ, և հրամայեաց քաջալերաբար ասել զնշանին տեսիլն ։ Իսկ նա ասաց նմա զայս . Թագաւոր, ոչ ևս ես դու այսուհետև 'ի կենդանութեան . այլ մարմինդ քո ելեք և եթող ըզմարդկային բնութիւնս . քանզի այս նշանակէ հրաշալի նշանն ։ Իսկ Աղեքսանդրոս պահանջէր 'ի նմանէ զյաղագս սորա բանն ։ Իսկ պատասխանի նշանալոյծն և ասէ . Ո՜վ քաջդ քան զամենայն մարդիկ, մարդկային մարմինն դու ես, և գազանաց կերպարանքն զօրքն որ ընդ քեզ են . եթէ էր և մարդկային մասն մարմնոյն կենդանի և շարժէր որպէս և գազանքն որք ընդ նմա կան, հանդերձեալ էիր դու ամենեցուն իշխել . բայց այժմ այս ինքն է որ մեռեալն է վերին մասնն և գազանքն կենդանիք, արդ որպէս փոխեցաւ 'ի կելոյ, այսպէս և դու մեկնեալ յայնոսիկ որ ոչ ևս են . զոր օրինակ գազանքս որ ընդ մարդկային մարմնոյն կան՝ ոչ զխորհել և ոչ զմիտս ունին ընդանաբար առ մարդիկ, այսպէս և որ շուրջ զքեւ են՝ սիրեն զքեզ . և բազում խառնակութիւնք լինին յաշխարհի իբրև վախճանեցիս . և որ շուրջ զքեւ են, ընդ միմեանս անկեալք զմիմեանս արեամբ սպառեսցեն ։ Զայս ասացեալ իմաստասէրն ել արտաքս, և զմանուկն այրել լաւ համարեցաւ քաղդէացին ։

ՄԿ . Իսկ Աղեքսանդրի լուեալ զայս 'ի սիրտ իւր հարեալ տրտմեցաւ և ասաց . Ո՜ Երամազդ, զզա-

1 Այլք հզօր ահագին ։

ւանմն 'ի վախճան ածեալ վասն խմ. վասն որոյ եթէ այդպէս քեզ կամ եղև, ապա ընկալ և զիս զայսպիսի մահկանացու։ Այլ զայս կամէր ասել. զի և Դիոնեսիոս վասն երևման չար գործոյն՝ որ անցին ընդ նա յանցանէ՝ որ ընդ նորա իշխանութեամբն էին, ընդ չաստուածս համարեալ եղև. նոյնպէս Հերակլէս սոյնօրինակ զինքն համարեցաւ՝ գործոց յայտնի ցուցեալ յամենայն աշխարհի, ամենայն աստուածոց հացկից լինել։

ՄԿԱ. Քանզի՝ մայրն նորա Ողոմպիադա բազում անգամ գրեաց առ նա վասն Անտիպատրեայ, և դըժուարեալ յոյժ խոտորեալ անարգէր, զի մայր էր Աղեքսանդրի. և սակայն առնէ Անտիպատրոս զինչ և կամի. և գրէ ամբաստանութիւն և վատթարութիւն զնմանէ. վասն այսորիկ դարձեալ ասացեալ Ողոմպիադա, յանբաւ ցամաք կամէր անցանել Աղեքսանդրոս, քանզի գիտեաց զառ մայրն եղեալ զԱնտիպատրեայ լուծանել զթշնամութիւնն։ Այլ առաքեաց կոչեաց զԱնտիպատրոս 'ի Մակեդոնիայ առ ինքն, առաքեալ զԿրատերոն։ Այլ զգեցեալ Անտիպատրէս զհնարսն Աղեքսանդրի, զինուորական սպասաւորութեամբ՝ դաւեաց մահ աշխարհակալին, երկուցեալ թէ մի գուցէ թշնամանք ինչ եկեսցեն նմա։ Քանզի լուեալ ընդ միտ ածէր և խորհէր զԱղեքսանդրէ աճեցեալ կարի յոյժ ամբարտաւանութիւն վասն գործոյն որ պատահեցան նմա յաջողութեամբ. և յղեալ բերեալ զոռքսական դեղն՝ զորոյ զօրութիւնն գիտէր թէ յոյժ դժնդակ է, և արկեալ 'ի ջորոյ[3] զեղամանի[4] խարշեալ առ կարել ողջ պահել ըղ-

1 ՀՀ. Իսկ Անտիպատրոս զօրավարն որ էր 'ի Մակեդոնիա, բազում չարիս արարեալ. և Ողոմպիադայ գրեաց բազում անգամ գիր առ Աղեքսանդրոս վասն Անտիպատրեայ. . . անարգէր զմայրն Աղեքսանդրի։

2 Ամ օր. ամբարտաւանութիւն։

3 Այլք 'ի ջրոյ։

4 Երկու օր. դեղ յամանի կամ դեղի ամանի. երկու այլ ձեղ յամանի կամ ձեղամանի։

բազմութիւն դեղոյն. քանզի այլ ինչ աման ոչ պղնձի և ոչ խեցեղէն ոչ հանդուրժեաց տանել զզօրութիւն դեղոյն, այլ անդէն խորտակէր. և եդեալ զնա յերկաթի տուփ՝ ետ Կասանդրայ բանիւ խօսեցեալ ընդ Յուղղայ ընդ եղբօրն վասն զդեղն տալոյ։

ՄԿԲ. Իսկ հասեալ Կասանդրայ ՚ի Բաբելոն, եգիտ զԱղեքսանդրոս զի զոհս առնէր և ընդունելութիւնս օտարաց։ Խօսեցաւ ընդ Յուղղայ որ էր տակառապետ Աղեքսանդրի։ Իսկ Յուղղայ դէպ եղև յառաջագոյն սակաւ աւուրբք զի Աղեքսանդրի բրով հարեալ էր զկառափն վասն անառակութեան ինչ պատճառի. վասն որոյ պատանին ՚ի մտոյ առ ձեռն ունելով զբարկութիւն՝ խնդութեամբ լուաւ գործել զանօրէնութիւնն. և առ իւր օգնական զՄանդիոն Թեսաղոնիկեցի, որ էր Աղեքսանդրի բարեկամ և իւր տռփող. և սա զրկանս ապիրատութեան վարկաւ իւր զՅուղղայ զանձն ըմպել. վասն կամացն և ախորժութեան կալաւ յանձին նմա զի տացեն զդեղն ըմպել։

ՄԿԳ. Իսկ Աղեքսանդրոս ՚ի խնդութեան եղեալ ընդ մերձաւոր բարեկամսն և զինուորեան արուեստականացն. քանզի բազումք ՚ի Բաբելոն գային ՚ի հանդէս [1] Աղեքսանդրի պսակել, և առանձինն ՚ի հանդէս անցանելով վասն երևելի փառացն խնդալից եղեալ արքային։

ՄԿԴ. Իսկ ապա յարուցեալ ՚ի հանդիսէ կամեցեալ երթալ, եկն առ նա Մեդիոս աղաչելով զնա մտանել առ իւր բարեկամսն, ասելով ցնա՝ թէ ՚ի մի վայր ժողովեալ են հարկաւոր բարեկամքն քո և մնան քեզ։ Այսպէս նորա խօսեցեալ, հաւանեալ եղև Աղեքսանդրոս Մեդեայ խորամանկութեանն. երթայ ՚ի գինարբուսն։

1 Բ. և երկք այլ ՚ի հանդիսի. և զկնի ՚ի հանդիսի անցանելով։

ՄԿԵ. Եւ էին ժողովեալքն քան[1]. Պերդիկկաս, Մելէագրոս, Պիթոն, Լէոնատոս, Կասսանդրոս, Պոլիկեստէս, Պտղոմէոս, Լիւսիմաքոս, Փիլիպպոս, Սղկիաս, Եւմենէս, Փիլիպպոս որ բժիշկն էր[2], Նէարքոս կրետացի, Հերակլիդէս, Եւրոպպէոս, Արիստոն, Փարսաղիոս, Փիլիպպէ մեքենայից հըմուտ, Փիլովտաս, Մենանդրէս, Պարդանա: Ի սոցանէ որ համդերձեալն էր գիտել՝ Պերդիկկաս և Պտղոմէոս, Սղկիաս և Լիւսիմաքոս, Եւմենէս և Կասանդրոս[3], ոչ գիտէին. իսկ այլքն ամենեքին կըցորդ էին գործոյն և միաբանեալք ընդ Յուղղայ և ընդ Կասսանդրայ, և տուեալ երդմունս. քանզի ցանկային ընչից և իրաց, և յԱղեքսանդրէ ակնածէին և յոգւոցն նորա գերախանչ հպարտութենէն յոյժ պակուցեալք էին:

ՄԿԶ. Բազմեալ արքային, մատոյց նմա Յուղղոս զբաժակն: Եւ ապա այսպէս որք անդն էին, բան արկին 'ի ներքս վասն յերկար դեգերման ըմպելեացն լինելոյ 'ի բազում ժամանակս զբաղապէս: Յանկարծօրէն Աղեքսանդրոս գոչեաց իբրև նետիւ հարեալ զլեարդն. և սակաւ մի ժամանակ կալեալ զինքն և ցաւոյն ժուժացեալ երթայր գնայր 'ի բաց առ ինքն, պատուիրեալ որք անդն էին՝ ըմպել[4]: Եւ նորա յոյժ երկուցեալք 'ի նոյն ժամայն լուծին զգինարբուսն, և արտաքուստ ակն ունէին եղեալ անցիցն պատահման: Իսկ Աղեքսանդրի դարձուցեալ կամեցեալ բղկարի շատ գինին՝ խնդրեաց թև, քանզի սովոր էր այսպէս առնել. և Յուղղոս շաղախեալ դեղովն մա֊

1 Այնոյն օրինակք քան առեն, և թուեն քան և մի:

2 Մի օր. ուժի [illegible] էր:

3 Վրիպակ ինչ թուի լինել յամենայն օրինակս, զի Կասանդրոս ոչ յիշատակի 'ի ժողովեալսն. իսկ եթէ Կասանդրոս իցէ ըստ միոյ օրինակի, տակայն տառ ընդ տնդէտս թուի, այլ փոքր մի զնի միաբան ընդ Յուղղայ առի. որպէս յայտ է և 'ի նախընթաց բանիցն:

4 ՀՀ. յաւելուած [illegible]

տոյց նմա. վասն որոյ եւ առաւել կարի յաղթեաց դեղն անապականդոյն [1] ընդ մարմնն խառնեալ եւ բախեալ, եւ ծաղքեալ [2] ընդունայն ործալով [3] Աղեքսանդրոս, հրաշալի ցաւով զգիշերն ամենայն անցուցանէր ցաւագին հեծեծանօք եւ ժուժալով համբերութեամբ:

ՄԿԷ. Իսկ 'ի միւսումն աւուր գիտացեալ զանձնէ չար անցսն, եւ խօսելով անյայտս եւ անհաւաստիս, վասն զի լեզուն ահա անդէն իսկ պղրմեցաւ, եհան 'ի բաց զամենեսին, թէ հնար գոյ խաղաղ լինել եւ առանձինն խօսել յաղագս որոց կամէրն ինչ: Եւ Կասանդրայ միաբանեալ ընդ եղբօրն, եւ 'ի գիշերին [4] չոգաւ եհաս 'ի բոլորս 'ի բաժակս նորա տանել [5] Յուղղայ համարձակութեամբ. քանզի դաշն եդեալ էր ընդ Յուղղայ, եթէ վախճանեսցի թագաւորն, թափի յամենայն ծանրութենէ. եւ զայն սուրնտոյն առաքեաց 'ի Մակեդոնիա, նշանօք գրեալ առ նա իբր թէ գործն վախճան ընկալաւ:

ՄԿԸ. Եւ Աղեքսանդր իբր գիշեր եղեւ, հրաման ետ ամենեցուն 'ի տանէն արտաքս ելանել. ընդ որս եւ զԿոմբափէ եւ զՌոքսիանէ զիւր կինն արտաքս յղեաց: Եւ 'ի տանէն 'ի դուրս իմն հանէին 'ի գետ կոյս, որ Եփրատեան կոչի, որ ընդ մէջ Բաբելոնի անցանէ, հրամայեաց բանալ եւ մի ումեք լինել ըղվայրօքն, զոր օրինակ սովորեալ էին յառաջագոյն զպահն առնել: Եւ իբրեւ մէջ գիշեր եղեւ, յարուցեալ 'ի դահոյիցն անցոյց զճրագն. եւ 'ի դուրս ելեալ՝ 'ի չորս գնայր [6] առ գետոյն [7], եւ տեսանէր ըղ-

1 Այլք անապականագոյն:
2 Երկու օր. ծաղկեալ կամ թակթեալ:
3 Ա. ործկալով: ՀՀ. ընծկալով:
4 Մի օր. և զգիշերոյն:
5 Մի Օ. տարեալ. միս այլ տեղանէր.. և զծառայութեան առաքեաց 'ի Մակեդոնիա առ հայրն, և գրեաց առ նա նշանաց:
6 Ա. սրբեգյակի գնայր: ՀՀ. 'ի դուրս գնայր 'ի գետն 'ի չորս անկեալ կամ 'ի չորս կամ 'ի չորք գայր:
7 Մի օր. յաւելու և հայեցեալ ընդ երկինս և զաւն պտուղեալ յոգւոց

կինն իւր զՌոքսիանէ, զի յընթացս երթայր առ նա․ և ընդ միտ ածէր և ձեռնարկէր լինել գործել արժանի իւրոյ համարձակ քաջութեանն․ զհետ երթայր կատարածին եղեն իւր 'ի խաւարի․ և զհեծումն Աղեքսանդրի զուն ուրեք ձայն արարեալ կոչէր, և առաջնորդէր հեծեծմանն Ռոքսիանէս․ և նա լուեալ դադարէր․ Եւ ինքն իսկ կինն գիրկս արկեալ նմա ասաց․ Աքանես թողուս զիս, Աղեքսանդրէ, զանձն քո 'ի մահ տալով։ Եւ նա ասաց․ Ով Ռոքսիանէս, փոքր ինչ եհ է քեզ իմոց փառաց բառնալ 'ի քէն․ բայց սակայն զայս մի ոք լուիցէ․ Եւ դարձեալ 'ի Ռոքսիանեայ՝ պատապարեալ չոգաւ անդրէն 'ի տուն։

ՄԿԹ․ Եւ տիւ եղեալ հրամայեաց Պերդիկկայ և Պտղոմեայ և Լիսիմաքեայ՝ մտանել․ ասաց ցնոսա զի այլ ոք մի մտցէ առ նա մինչև կտակ գրեսցէ վասն իւրոյն իրաց․ Եւ նոքա եկին արտաքս․ Իսկ զկտակագիրսն առ իւր նստոյց զԿոմբափոն և զՌերմոդինէս մատաղ մանկունս․ Եւ Պերդիկկան կարծեցեալ զԱղեքսանդրէ՝ թէ թողու զիրս իւր զամենայն Պտղոմեայ վասն բազում անգամ առ նա ճառելոյ յաղագս Պտղոմեայ բախտաւոր ծննդեանն․ այլ և Ոլոմպիաս ես յայտնի արար, զի էր 'ի Փիլիպպոսէ առեալ զՊտղոմէոս, միայն զատ երդմնեցուցանէ եթէ լինի Աղեքսանդրի իրացն ընկալուչ փոխանորդ առ 'ի բաշխել զինչս նորա․ Եւ իբր գիշեր եղև, սկսան գրել դպիրքն․ Եւ թագաւորն հրամայեաց առ ինքն կոչել զՊերդիկկաս և զԼուկկիաս և ըզՊտղոմէոս և զԼիսիմաքոս․ և նոքա եկին մտին յորքունիսն։

[illegible]

1 ՀՀ․ Լիսիմաքեայ և [illegible]

ՄՀ. Իսկ յանկարծօրէն յամենայն մակեդոնացւոյն եղև դոչիւն ուժգին. և միահամուռ ընթացեալք յապարանսն ասելով թէ սպանին սենեկապանքն զնա, եթէ ոչ ցուցցեն զթագաւորն իւրեանց։ Իսկ Աղեքսանդրի լուեալ զխնճոյ խռովութեանն, եկն Պերդիկկաս և ուսոյց նմա զինչ և ասէին մակեդոնացիքն։ Հրաման ետ զգահոյսն բառնալ և դնել՚ի տեղւոջ, յորում զօրն անցանելով կարիցէ տեսանել զնա. և զզօրավարսն միայնահանդերձս մուծանել և ընդ այլ դուռն հանել, որպէս զի մի բախեալ անկցին ընդ միմեանս։ Մտանէին ՚ի ներքս մակեդոնացիքն և անցանէին առ նովաւ և քաջալերէին զնա. բայց ոչ ոք էր որ ոչ արտասուեաց ՚ի վերայ եղելոյն իւրաց յայսքան մեծ և յաշխարհակալ թագաւոր։

ՄՀԱ. Իսկ Պեւկաղաւոս ոմն այր ՚ի նոցանէ, տեսանելով ոչ անվայելուչ, բայց գեղջուկ էր և տգէտ, և ոչ միոյ կարգի իշխանութիւն պետութեան ոչ ունէր, մօտ կացեալ առ ինքնակալն ասաց. Ո՛ Աղեքսանդրէ, փիլիպպոս հայր քո տիրեալ իշխեաց մակեդոնացւոյն առ բարի. և դու, շրջեալ զձայնն ասաց մակեդոներէն՝ արտասուելով, դու ահա լքանես թողուս զմեզ. կորեաւ և ամենայն Մակեդոնիա ՚ի քո իսկ վախճանեալդ. բարւոք է մեր ամենեցուն մակեդոնականացս մեռանել ընդ քեզ, որ արարեր զհայրենի քաղաքն քո արժանի Արամազդայ։ Իսկ Աղեքսանդրի արտասուեալ կարկառեաց զձեռն իւր աջոյ, կալաւ զձեռանէ մակեդոնացւոյն և յայտնի նշանակ առնէր աղաչանացն, վասն զի անցին մակեդոնացիքն։ Դարձեալ ՚ի դուրս եհան զՊերդիկկաս. և Ոգկիասու հրամայեաց ընթեռնուլ զկտակն, զոր ետ գրել իւր իսկ կորովամիտ և մտատես իմաստութեամբն. և է կտակին պատճէն այսպէս։

ՄՀԲ. «Թագաւոր ինքնակալ Աղեքսանդրոս որ

դի Զմիւռնայ և Ոլոմպիադայ, հաւատացւոց սպարապե-տաց իշխանաց խորհրդաւորի ժողովրդեան խնդալ։ Դուք զՀերակլեայ զնախնոյն մերոյ արձանս սահմանս եդեալ Ճակատագրեցելոյն ընդ աստուածս, և մտերմութեանն հաստատել կամեցեալք՝ իրաւունս վարկայք ձեզ առաքել զոր ինչ գիտեցաք կարծեցեալ յաւէտ զձեզ հելլենացւոց 'ի Ճահ և 'ի դէպ պահապանս յինէնս գործեցելոց. երկուս միանգամայն, զի և սիրեմ զքաղաքդ ձեր, վասն որոյ գրեմ՝ զպահապանս 'ի բաց հանել 'ի քաղաքէդ ձերմէ, զի համարձակութեան հասեալ պահիցէ զազատութի̃. միանգամայն և կամիք զի պահեալ լիցի առ ձեզ մեր պատուական ինչ։ Քանզի գիտեմք զքաղաքդ ձեր երախտաւոր և յիշատակի արժանի. վասն որոյ երևեսցուք հոգ տանել դմա ոչ նուազ քան զմերոյս իսկ գաւառի և մեզ արժանի։ Զաք համարձակութեամբ զաշխարհն 'ի ձեռս իւրաքանչիւր ումեք, սկսեալ նախ առաջին յորմէ ծնեալն էաք, յայս եկաք ելաք կամաց։ Նաև հրաւիրեցաք խնամակալաց թագաւորացն՝ նախ առաջին նախնիս առաքել 'ի զօրուէն դահեկանս ոսկւոյ քանքարս հազարս յեգիպտացւոց մեհեանս. վասն զի և զգիս մեր հրամայեցաք անդր տանել։ Նաև զկարգս կազմուածոյն, որ քուրմք եգիպտացիք իրաւունս վարկցին առնել, այսպէս և մեք թոյլ տամք։ Նաև պատուիրեցաք զԹեբաս բիովտացի վերստին կանգնել և կազմել յարքունական ընչից. շատ և բաւական վարկաք որչափ թշուառացան թշնամանս կրել և խրատեցան զգաստութեամբ արժանապէս մեղացն եղելոցն 'ի մեզ։ Բայց տալ և ցորեան 'ի մակեդոնացւոց թեբայեցւոց մինչև բազմացցին մարդիկ քաղաքացն։ Բայց կարգեցաք և ձեզ տալ 'ի կազմութիւն քաղաքին ոսկի դահեկան քանքարս երեք հարիւր և պատերազմիկ նաւս քառասուն, որպէս զի հաստատուն ազատ

իցէք. և արդիւնս յԵգիպտոսէ պարգևս ըստ ամի գրիւս երկուս բիւրս, և երկիր ձեզ չափել և հաստանել տալ. որպէս զի ունիցիք ձեզ յայլում ժամանակի արդիւնս բաւական, և ոչ ումեք կարօտիցիք: Իսկ Պտղոմէոս իմոյս մարմնոյ եղեալ պահապան, և ձեզ հոգ տանել. և զի օգուտ բերցէ ձեզ, ցուցաք զայս ամենայն: Արդ մի կարծէք թէ աւանդեցաւ ձեզ կըտակս այս ընդ վայր և զխնամածուս թագաւորութեանն հաստատել. և է յիմմէ տեսութենէ հնածուացն բաժանումն ցուցանելով":

ՄՀԳ. "Թագաւոր Աղեքսանդրոս որդի Ամոնայ և Ողոմպիադայ: Թագաւոր մակեդոնացւոց առ արդեան ժամանակս զԱրիդէոս զորդի Փիլիպպոսի առաջիք: Բայց լիցի 'ի Հռոքսիանեայ որդի Աղեքսանդրի, զնա արասջիք թագաւոր Մակեդոնացն, և անուն դիջիք նմա որ ինչ հասարակ ամենեցուն կամ լիցի մակեդոնացւոց. և եթէ էգ լիցի 'ի Հռոքսիանեայ, ընտրեսցեն ընտրապէս մակեդոնացւոցն իմաստունք զոր և կամին իւրեանց թագաւոր, եթէ ոչ կամիցին զԱրիդէոս զորդին Փիլիպպոսի թագաւորել իւրեանց: Իսկ այն որ ընտրեալն լիցի, պահեսցէ զարգիացւոց իշխանութիւնն, և հարկ տայցեն մակեդոնացիք արգիացւոց հանդերձ թագաւորաւն ընկարգեալ սովորականս. և առանձին եղիցի Ողոմպիադայ մօրն Աղեքսանդրի բնակել 'ի Հռովդոսէ թէհովգացւոց":

ՄՀԴ. "Թագաւոր Աղեքսանդրոս Ամոնայ և Ողոմպիադայ որդի ցուցանէ խնամածուս իւրոյ թագաւորութեանն ամենայնի մակեդոնացւոց զԿրատերոն, և կին նմա զԿեւանէն զդուստր Փիլիպպոսի մակեդոնացւոց թագաւորին. և Պտղոմեայ զԵգիպտոս, և կին նմա տալ զԿղէոպատրաս զքոյրն Աղեքսանդրի զօրավարին քաջաց. և այն որ 'ի վերայ բաբելոնեան աշխարհին է մինչև 'ի բակտրիացւոց՝

նախարար երևեցուցեն և խնամակալ զՊերդիկկաս, և կին սմա զՀռոքսիանէ զկինն Աղեքսանդրի. և հրաման տայց խնամածուաց թագաւորութեանն առնել ոսկի տապան յերկերիւր քանքարէ, յորում եդեալ լիցի մարմինն Աղեքսանդրի աշխարհակալի։ Եւ առաքել զմակեդոնացւոց ծերունիսն զտկարացեալս 'ի Մակեդոնիա և 'ի Թեսաղոնիկէ, և տալ իւրաքանչիւր ինչս ըստ արժանւոյ։ Եւ յԱթէնս տեղա և ոսկի աթոռ Աթենայ, որ 'ի գեղեցկին 'ի վեր 'ի կուսանոցն։ Եւ առաքել յԱրգոս զսպառազինութիւնն Աղեքսանդրի թագաւորի 'ի նուէր Հերակլի, և քաղաքին ոսկի դահեկանս հարիւր և յիսուն քանքարս։ Առաքել և 'ի Դեղփիս զփղոյն ժանիս և զմորթս վիշապաց և տաշտս ոսկիս հարիւր և մատանիս ընտիրս հարիւր։ Եւ զՊերդիկկաս զոր թողում Եգիպտոսի թագաւոր հանդերձ շինեցելովն քաղաքաւն Աղեքսանդրաւ մայրաքաղաքաւ, զի վարեսցէ իմով անուամբ ակոչութեամբս քաղաքին Աղեքսանդրի. զի կացցէ մնասցէ հաստատուն թագաւոր Աղեքսանդրոս։ Յուցանէ հնդկաց թագաւորութեանն որ առ Հիւդասպաւ գետովն ձկտի, զՏաքսիադէս. 'ի վերայ որոշելոյն զՊիթոն. և 'ի վերայ Պարապամիսադացն զԱքսիդարկէս բակտրիացի զՀռոքսիանեայ զհօրեղբայրն զկնոջն Աղեքսանդրի. և 'Փիլիպպոսի զԱնտիպիա, զՕուշմնաստան և զՊարթևաց աշխարհն զառ 'ի հարաւոյ կոյս։ Եւ երևեցուցանէ 'ի Լիւրիա թագաւոր զԱկղիաս, և տայց նմա ձիս տանել իւր յԱսիայ հինգ հարիւր. և յայսմանէ արարեալ Ոսկեայ կերպարանս պղնձիս Աղեքսանդրի, Ամոնայ, Աթենայ, Հերակլի, Ողոմպիադայ, Փիլիպպոսի, և ձօնեացէ զայս յոլոմպիեան

1 ՀՀ. միայն ունին և Փիլիպպոս... 'ի Հայաստան կայր. որ և մնացածն խնդիր զասնի 'ի լուսանցն։

2 Այսպիսին օրինակք 'ի Աստը... կամ 'ի Աստեն. եդաք ըստ լսա։

մեհենին, կամ ուր և կամ լինի. և ձօնեսցեն թագաւորութեանն խնամածուք պատկերս Սղկեայ[1]. Նուէրեսցէ և Պտղոմէոս և Եգիպտոսի պատկերս զդնձիս Աղեքսանդրի, Ամոնայ, Աթենայ, Հերակլի, Ողիմպիադայ, Փիլիպպոսի[2] „ :

ՄՀԵ. Եւ ամենեցուն այսոցիկ եղելոց մտեալ Սղկիէ Ամենայ թերացեալ էր տանել զթուղթն. և կարգաց[3] Սղկլա[4] ձեռեալ զնա յաղագս թերացեալ գաւառին. վասն զի կարգեաց չինել զքաղաքն վերըստին զԹեբաս. և առնէ զայլ ևս խնամածութիւն: Արդ Իսմենիաս[5] խնդացեալ ընդ գաւառին, մեծաւ յօժարութեամբ առ արքայնեկութիւնն դարձեալ:

ՄՀԶ. Բայց Աղեքսանդրի կակղանալիս իմն ապեղանեաց, զոր Հռոքսիանէ արկ ՚ի վերայ նորա, ապահովեաց ՚ի բազում ցաւոցն, և եկն քուն սակաւիկ մի. վասն որոյ արգել զարձակումն աւուրս հինգ[6]: Եւ Աղեքսանդրի խնդրեալ ջուր յողողել զբերանն, դարձեալ Յուղղոս զբաժակն դեղոյ արարեալ մատուցանէ նմա: Եւ նորա առեալ և ողողեալ զբե-

1 Բ. ունի և զայլ հատուած թերի հանդերձ երկու կամ երեք խանգարեալ բառիւք այսպէս. [illegible] ..... [illegible] որ չէք յայլ օրինակս:

2 Հհ. յաւելուն, որ չէք և ՚ի լատինն. [illegible]

3 Մի Օ. [illegible]: Ա. [illegible]: Բ. թերի էր:

4 Այսպէս մի Օ: Բ. թերի. այլք [illegible]:

5 Բ. խանգարեալ էր. այլք այդպէս:

6 Հհ. յաւելուն և [illegible]:

բանն՝ անդէն իսկ գոչեաց մեծաձայն և շտապեցու- ցանօքն, յուսահատեալ 'ի կենաց և 'ի մնալ ունայ- նութեանց աշխարհիս այսորիկ ։

ՄՀԷ ։ Կոչեաց առ ինքն զՊերդիկկաս և զՊտղո- մէոս և զՍելևկոս և զԼիւսիմաքոս զմանկեզմնացուց իշխանսն. ասաց ցնոսա այսպէս ։ Ո՜վք, յաղագս թա- գաւորութեանն որպէս հասարակաց Ճառեցի, բայց Ողկիաս՝ ունի յաւանդ զհռովմայեցիքն, առ ցեն յինէն մատակարարեալս՝ ։ բայց արդեան ժամանակս Պեր- դիկկայ և Ռոխսարեայ յանձն առնեմ զգիրս ։ Իսկ Ողկիաս անդրէն զձեռն զօձիքն արկեալ և մեծապէս գոչեալ գնաց արտաքս ։ Իսկ զԼիւսիմաքոս առ ինքն կոչեալ ասաց ։ Երթ 'ի Թրակէ և մի արտասուեր ։ Իսկ սա ևս գոչեցեալ անց գնաց արտաքս ։ Բայց ըզ- Պտղոմէոս առ իւր նստուցեալ ասաց ։ Երթ և դու յԵգիպտոս և մարմնոյս մերում խնամ տարցես ։ Բայց մեղմիկ խօսէր ընդ նմա, զի մի որ լուիցէ ։ վասն զի և Պտղոմէոս շտապեալ լինէր յարտասուացն, և համդերձին ներքոյ առնէր զերեսն և գաղտաբար արտասուէր[5] ։

ՄՀԸ ։ Նայլախոն 'ի վերայ թագաւորին զօրանայր, և այլ ոչ կարէր այնուհետև խօսել ։ և սրկուծն և ձկտուծն սաստիկ 'ի վերայ անկանէր, և հեծեծելով ասէր ։ Ո՜վ եղ յանձն առնեմ զաթոռ թագաւորութեան իմոյ, վերնական նախախնամութիւն, որ տէր ես երկնի և երկրի, իշխան ծովու և ցամաքի, կարող և հզօր ամենայն աստուածոց և դիցն ։ և արդ ընկալ զիս, Հերակլէ և Աթենա, և դուք այլք ամենայն ուրայի վերուք[4] ։ Իսկ շտապեալ 'ի ցաւէն զմատանին ետ ցՊերդիկկաս ։

1 Յօրինակին առաւ զՖիլիպոս Ոսկիոս ։

2 Հ. Համաձայնաբար ։

3 ՀՀ. յաւելուն Նա նա կոչեալ զդաստան 'ի ծայրս Յուղի և 'ի շուրջ ածել զամենայն Բաբելոն ասելով. Եւ Աղեքսանդր յամենայն փառացն ըստ կեալ փառս մեծ, որ երէց անկեալ աշխարհին տէրէր ։

4 Երկու օր. առեալ 'ի վերայն ։ Բ. առեալ վերայն ։

ՄՀԹ. Եւ Հռոքսիանէս 'ի ձայն մեծ գոչեցեալ և զգեստն փետտեալ՝ կամեցաւ առ ոտս առն իւրոյ Աղեքսանդրի անկանել։ Եւ կալեալ զնա Ողիմպիաս ածէր առ Աղեքսանդրոս։ Եւ մեծապէս մաշեալ հեծեծալով Աղեքսանդրի և ձեռն ածեալ զգլխովն նորա և բուռն հարեալ զաջոյ ձեռանէ նորա՝ եդ 'ի ձեռին Պերդիկկայ. և ակնարկելով յայտնի երևեցոյց՝ խնամարար յանձն արարեալ։ Եւ որքան զայս գործեաց, ախտն 'ի վերայ հասեալ շտապէր՝. յայնժամ զաջն հասեալ կալաւ Հռոքսիանէ կնոջ նորա։ Եւ շուրջ երեքին անցեալ կային աստի և անտի, Պերդիկկաս, Պտղոմէոս, Պուկիաս։ Եւ նորա զոգին իւր հանեալ, և նոքա ամփոփեցին զնա։

ՄՁ. Եւ այսպէս Աղեքսանդրոս աշխարհակալ և մեծ թագաւոր յաստուածս անց գնաց, կեցեալ սորա ամս երեսուն և երիս։ Բայց ոչ չարահաւ կարծեմ ասել ոլք ասեն՝ թէ Արամազդայ որդի է. այլ և ոչ որք Ամոնայն ասեն. քանզի կարի շատ զանցոյց զմարդկային բնութեամբ, ողջախոհութեամբ, արդարութեամբ, արդեւաւորութեամբ, առատութեամբ, արիութեամբ. զբազում պատերազմունս հերքեաց, և գործեաց զամենայն ինչ առանձինն իւրով մարմնով. և վկայէ նոյն ինքն իրքն։

ՄՁԱ. Եւ՝ եկեալ առ նա Պտղոմէոս ասաց. Աղեքսանդրէ, ում թողուս զթագաւորութիւնդ։ Ասէ. Այնմ՝ որ կարէ, կամի, կեցուցանէ, կատարէ։ Իսկ

1 Զորս օր. յաւելուածովս շաղէր և ննջէր. և արքայն հառաչմամբ արձակեաց զհոգին. և Հռոքսիանէ ուրովն կործանեալ զձեռն կալաւ զաջ արքային։ Եւ զայլն։

2 ՀՀ. զհատուածդ. Եւ էլեալ. 'ի նոյն ժամայն. 'ի գետոյ եւ զատեն 'ի վերայ անդր նախ քան զարձակել հոգւոյն Աղեքսանդրի. զի յետ ասելոյ արքայն 'ի վերայ հասեալ շտապէր և ննջէր զարքայն, ասեն այսպէս. Եւ ասէն առ Աղեքսանդրէ. ում թագաւոր զթագաւորութիւնդ։ Եւ նա ասէ Պերդիկ. Այնմ, որ կարէ և կատարէ։ Եւ շտապեալ էհան զոգին. և հասեալ Հռոքսիանէ կալաւ զաջն. և այսպէս Եւ շուրջ երեքին մինչև վկայէ նոյն ինքն իրքն. և զկնի առեն անդրնդ միջամարտ. Եւ յետոյ հոգւոյն էլ զամենայն դոյ և խաւար, և այլն։

զայս նորա ասացեալ, անդէն 'ի նոյն ժամայն եղև շամանդաղ օդոյ և խաւար, և երևեցաւ փայլակն անկեալ յերկնէ 'ի ծով, և ընդ նմա արծուի մի մեծ, և պատկերն պղնձի Արամազդայ որ 'ի Բաբելոնի էր՝ տատանէր՝ և փայլակն անդրէն դարձեալ վերացաւ յերկինս, և արծուին ընդ նմա երթայր ունելով յինքեան աստղ՝ ճառագայթաւոր. և իբրև թագուցեալ եղև աստղն յերկնի, արդէն[3] և Աղեքսանդրոս կափոյց զաչսն։

ՄՁԲ. Իսկ պարսիկքն կռուէին, կամեցեալ զարքայն 'ի Պարս տանել և ընդ աստուածս Միհրեայ երկրպագել. իսկ մակեդոնացիքն 'ի Մակեդոնիա։ Եւ այս ասաց Պտղոմէոս, եթէ է գիտանոց բարելացուոցն Արամազդայ. 'ի նմանէ հարցումն պատասխանւոյ ընկալայց, թէ ուր զմարմինն տարցուք զԱղեքսանդրի։ Եւ հարկեալ ետ հրաման բարելացուոյն Արամազդ այսպէս. Ես ինքնին հրաման տամ որ օգուտն է ամենեցուն ձեզ. է քաղաք 'ի Եգիպտոս Ովկիանոսի յորձանման, հինգ դաշտ թագաւորական առեալ բազմափարթամ մերձ 'ի յերկիրն Մովսնեայ անուն Մեմփիս. անդր առաքեալ տար և հանգո զանմահիցդ եղեալ որդի, և զինքն թագաւոր եղջերաւոր խնդութե՛ պատճառ. Այսպէս հարցման պատգամին պատասխանի արարեալ։

ՄՁԳ. Եւ ապա՝ առեալ Պտղոմէոսի տանել յԵգիպտոս. և նորա առեալ կապարեայ տախտակ, և

1 Ամենայն օրինակք տանէր. և-դաւ ըստ լաւ։

2 ՀՀ. Հնոց նորա աստուածան ճառագայթելով։

3 Բ. այդպէս. այլք անդրէն։

4 Ջհաստատուեդ զայդ ամեայ Նա ապ ասեալ Պտղոմէոսի. պարէրակի ծնանդ է, 'ի հնմաստ օրինակացն առեալ եդաք. որ ամենայն ընդարձակ օրինակք այդ անենեթէ թուղթ պակասի աւ. աղեաւս. յորոց միայն Բ. զինի այգարարութեանց ասէ և զայս. Եւ տանէ նորա ինքն Աղեքսանդրոս անդարձելի ծոց եղեալ հայր Թագաւոր. որ 'ի թերի հաստատածոյն գուցէ մնացորդ իցէ. և ապա յարէ անընդմիջապէս զյաջորդ հաստատածն համաձայն այլոց Յայնժամ առաւ առնէ նմա Գերեզման։

արկանէր 'ի վերայ նորա մեղր մնեսխաղական և հալուէ հիպատիկեան. և զմնեալ զմարմինն և եդեալ 'ի վերայ կառաց ջորւոց և տանէր յԵգիպտոս։ Իսկ իբրև հասին 'ի Պելլուս, մեծամեծքն ելին փողահարօք ընդդէմ առաջի մեհենից օրինակաւ սովորութեան, և մուծին 'ի Մեմփիս առ Սեսոնքոսի աշխարհակալ գիցն։ Ձայն եղև որ ասէր. Տարէք յիւր քաղաքն զոր ինքն շինեաց. քանզի յոր տեղ որ լինի մարմին դորա, ոչ դադարի տեղին այն 'ի պատերազմէ և 'ի խռովութենէ, վասն զի պատերազմի ծնունդ է։

ՄԶԴ. Յայնժամ ապա առնէ նմա գերեզման Պտղոմէոս յԱղեքսանդրիա, որ ցարդ ևս կոչի Աղեքսանդրի մարմին. և անդ եդ զնա մեծաշուք պատուով, պատուէր տուեալ Աղեքսանդրի այսպէս վարել, որ յիւր անուն կոչեցաւ քաղաք, և հանդերձեալ է ամենեցուն տիրել. առատաձեռն մեծի Սարապեայ և Մեմփեայ կացուցանել 'ի քաղաքիս քուրմ[1], որ իբր 'ի գուրս եկանիցէ, մեծաւ փառօք իցէ զարդարեալ ոսկի պսակաւ և ծիրանեաւ, տանելով տարթորական, որ է քանքար մի։ Իսկ այսպէս եղիցի անթշնամանելի, և յամենայն հարկէ 'ի բաց արձակեալ ազատ. և տացէ այնպիսին զկարգ պատուի այսօրիկ և առաւելեալ իցէ ազատութեամբ ազգի քան զամենայն մարդիկ. և կացցէ մնացէ հաստատուն պարգևս այս և որդւոց նորա։

ՄԶԵ. Ընդ բազում թագաւորս պատերազմեալ Աղեքսանդրի յաղթեաց զորս վախճանելով եթող։ Քանզի եկաց ամս երեսուն և երեք. յութեստանամենից սկսեալ պատերազմ տալ. և մարտեալ 'ի պատերազմունս ամս եօթն, մինչ քսան և հինգ ամաց եղև. և զայլ ևս ութ ամսն եկաց խաղաղութեամբ. և 'ի սադրանաց ներհակին հանեալ եղև 'ի կէս աւուրց, և հնազանդեաց զբազում ազինս խու-

1 Ամենայն օրինակք ք․․․։

ժողուժ ազգաց քսան և երկուց և զհելլէնացւոց երկոտասան . և շինեաց քաղաքս երկոտասան , որ մինչև ցայժմ կան շէն՝ և լիակատար, և բնակեալ են անթիւ մարդիկ . զԱղեքսանդրիա՝ որ ՚ի զուարակագլուխ ձին շինեաց . զԱղեքսանդրիա զԿատոխսն . զԱղեքսանդրիա զ՚ի Պօրոսյ . զԱնդրանիկոյ զԱղեքսանդրիա . զԱղեքսանդրիա զՍկիւթիայ . զՄիջագետաց զԱղեքսանդրիա . զԱղեքսանդրիա զ՚ի վերայ Դկլաթ գետոյ . զԱղեքսանդրիա զԲաբելոնի . զԱղեքսանդրիա զորովադեանն . զԱղեքսանդրիա զ՚ի Մասսագետս . զԱղեքսանդրիա զառ ՚ի Քսանթոսի . զԱղեքսանդրիա զառ ՚ի յԵգիպտոս ։

ՄԶԶ . Այս զօրաւոր և յաջողաբախտ աշխարհակալս Աղեքսանդրէ ծնեալ եղև յամսեանն տուբիլ ըստ եգիպտացւոյն յառաջնում աւուր՝ յարևելս , և կատարեցաւ ՚ի Պարմուփիր որ օր չորս էր՝ յարևմուտս կոյս . և կոչեաց զօրն զայն նուիրած վասն զԱղեքսանդրոս որ մանուկ վախճանեցաւ ։ Եւ այս է կատարումն ժամանակի կենաց նորա և ծննդեանն և յառաջադիմութեանն , յաղթութեան և քաջութեան , թագաւորութեանն և տիեզերակալ իշխանութեանն , հանճարոյն և իմաստութեան , իրաւանց և դատաստանին , ողջախոհութեանն և արիութեն , զոր վերին նախախնամութեամբն վարեալ զկենցաղըս վճարեաց զվախճանն մահու հասարակաց ։

1 Այլք ՚ի չէն ։

2 Յամենայն ընդարձակ օրինակս պակասէր զԱղեքսանդրիա որ ՚ի զուարակագլուխ ձին շինեաց . որք երկոտասան առեն, և թուէն մետասան . և զհաստատեալ զայդ առաք ՚ի միոյ ՚ի համառօտ օրինակացն համաձայն լատինականին ։

# ԽԱՉԱՏՐՈՅ ԿԵՉԱՌՈՒԵՑՒՈՅ

## ԲԱՐԱՌՆՈՒԹԻՒՆՔ

## Ի ՄԱՀՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ

ԽԱՉԱՏՐՈՅ

# ԿԵՉԱՌՈՒԵՑՒՈՅ

## ԲԱՐԱՌՆՈՒԹԻՒՆՔ

## Ի ՄԱՀՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ

ԵԹԷ ՈՐՊԻՍԻ ՈՂԲՍ ՎՏԱՆԳԱԼԻՑ ԵՒ ԱՂԷՏՍ ԱՒԱՂԱԿԱՆՍ ԱՍԱՑԵԱԼ Է ԲԱՐԱՌՆԱԲԱՐ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ Ի ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՆ ԻՒՐՈՒՄ ԸՄԲՌՆԵԱԼ ԴԵՂՈՎ

*ԱՒԱՂ վշտապահաս տուգանաց տագնապիս տառապանաց տուայտեալ մարմնոյս, թէ զիարդ էի կամ յորպիսի հասի տառապանս, կարծիս առեալ եղջերօք անմահ կալ մնալ իբր թէ յԱմոնէ կամ յԱրամազդայ հելլենական նուագօք 'ի Կրաւնոսէ և յԱռայէ՝ սերեալ ազգաբանութբ. և այժմ յիմացեալ[2] անձողոպրելի 'ի մահուանէ, որ յաղթէ յաղթողաց։ Նորանի էր ինձ 'ի դեռաբողբոջ և յաղբուն[3] հասակին յորժամ ձեռն առեալ ձօձէի սիգալով 'ի կառամարտութիւնն Նիկողայոսի. և 'ի վայր ընկձեալ զկարծեցեալն հզօր, և պսակ առեալ զմրցականն ողոմպիական, դառնայի առ մայրն Ողոմպիադա։ Յիշեմ զառ Դարեհիւ զօրամարտութիւնն փախստական լեալ յիմմէ բազկաց այնքան ջախջախ և մեծ թա-*

1 Մի Օ. յԱռամայէ. այլ Օ. Ռեայէ։ Բառն. յաղթէին.. զոր անպարտելին գրէի։
2 Մի Օ. յիմացեալ։
3 Այլք յաղթէին. բաղթէին. յաղ.

գաւառութեն իշխան · կամ զհնդկականն առ Պաւրոսիւ, զոր անդրաքայլեալ գլեցի՝ զբլուրն մեղէն դիւթաւալ կացուցեալ : Ո՛չ միայն թէ արք թագաւորք ոչ գերծան 'ի յաղթող բախտէ իմմէ, այլ և զանտառաբնակ կենդանիսն ձարակ տուեալ հրոյ և սրոյ յանուպայ և յանմարդի վայրաց վարեցի · և երիս մասունս աշխարհիս հարկատու և զօրապահանջ ինձ յօրինեցի · երկոտասան քաղաք քանդակեալս և ընդելուզեալ զարդարեցի : Արդ որ այսքան հզօր և յաղթական փառաց հասայ, արդ այժմ կամ տարաբերեալ ծփմամբ կոհակօք 'ի մահիձս մեռական և մահահրաւէր : Տեսակս իմ ցանկալի սևացեալ թըխացեալ քան զքարինս եթովպական · հասակս իմ պանծալի գթառեալ թափեալ 'ի վայելչալի պերճութեանց · գլուխ իմ ընդգրկեալ՝ ծնդեալ իբրև ըղհակ՝ որ հասանէ 'ի մանգաղս մահու · Ճակատ իմ լիալիր և մաքուր ծրարեալ պատեալ 'ի վարշամակս դեղոց · աչերս իմ ծովածաւալ սպառնանկատ և քաղցրահայեաց կաշկանդեալ և խփեալ մածմամբ իբր խլըդանց և ջղջիկանաց · վարս և հեր գլխոյ իմոյ փետտեալ ցամաքեալ իբր զմանուշակ գարնանայնոյ յերկիս աւուրս սպառեալ : Ներան իմ և լեզու ես երկթերթի որ սատականն մահ մատուցանէր և աղքականն կեանս պարգևէր, որ և վարդ 'ի շըրթանցս հոսէր, այժմ սպարդեալ[2] լռեալ անբանութեամբ, հատեալ ծրրրեալ ապականեալ և երեթն տուեալ նմանիմ անբանից կենդանեաց : Ձեռք իմ բուական և քաջուղեշ[3], որ նիզակաւ և սուսերաւ զբաղումս առնէր սրտաթափ և ահակոտոր · մէջ իմ ափիծու և ընձան կարձեալ իբր ձագարաց, ամփոփեալ 'ի ներքոյ վերարկուին · ոտք իմ սընթաց իբր զգարշապարս յուշկապարաց օդապարիկ լինելով իբր

1 Այլք ընդ [illegible] ... որ [illegible] :

2 Այդպես ամենայն օրինակք :

3 Երկք որ · քաջազեշ :

[1]Բուէներքա և Պաղխոս, արդ մերկեալ կալեալ 'ի մետաղս մահճաց, այլոց կարկառմանց կարօտացեալ: Ո՜ մտաւ ածեմ զգեգերումն մակադրական մխպա-սանութեանց յորժամ էի առ Ճեմականսն սադի-բացի 'ի սպաս բանեղէն և կորովամիտ կոկոզմանցն 'ի մայրն իմաստութեան առ Աթենայ իսկուրհւոյն. յորժամ ծաւալէաք 'ի ծաղիկ բուրաստանաց իմաս-տութեանն, 'ի գիտութիւն գոյից և 'ի ծանօթու-թիւն աստուածայնոց և մարդկայնն իրողութեանց, խոկմամբ յիմաստս մահու, նմանելով անմահից ըստ կարողութեան, և հասեալ յարհեստն արհեստից և 'ի մուտն մակացութեանց, սիրելով զիմաստ քան զա-կանս պատուականս: Իսկ այժմ յիմարեալ անսանա-բար ոչ կարեմ գիտել զգիարդն. բայց զայս միայն զի բաղկացեալ 'ի քառից տարերց 'ի նոյն իսկ լուծա-նիմ. զի ինքն միայն է անմահ, որ ամենից տիրէ:

## ԵԹԷ ՃԱՆՃՆ ԻՒՐ ՏԱՌԱՊԵԱԼ ԵՒ ՃՐԿԵԱԼ ՈՐՊԷՍ ՈՂԲԱՑԷ ՈԼՈՄՊԻԱԴԱ ՄԱՅՐՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ

Լացէք զիս, մարք մանկագունից միամօր զաւա-կաց, առաւել քան զԹամուզ և զգեղազէշ դուստրն Յեփթայեայ, զարքակորոյս՝ զմայր աշխարհակա-լի. զի ոգիս թռեաւ և շունչս եղ արտաքս. իսկ մար-մին թշուառականիս առասպելաբար շրջի, դիակեր լինելով սատանեալ կենաց իմոց: Արեւն իմ էանց և սպառեաց լուսինն լրացեալ. պարք զօրու աստեղացն ինձ թօթափեցան, և խաւարեցան տեսլարանս 'ի հայեցուածէ: Ուր առ այս զինչ ասացից. եգիպտա-կան մարգարէն ազդեաց ինձ զգալն Ամոնայ. և ես

[1] Մի օր. Ղարեփայակերայա:

ծնայ զքեզ, որդի դիցազնական, իբր յանմահից ծնու-
ցեալ եղեալ 'ի գրկաց եղկելւոյս, և զուարակագլուխ
երիվարուն յածար ընդ ցամաք և ընդ ծով. զլերինս
հարթեցեր և զյորձանուտ ձորս լցուցեր. զթագա-
ւորս խաղ արկեալ ընդ ոտիւք գետնեցեր. զանվայր
և զապառուտ դաշտսն մարգաւէտ' արարեալ երփ-
նատունկ ծառօք ծաղկեցուցեր. և միահեծան իշխա-
նութեամբ յարևելից յարևմուտս մտրակեցեր. և ես
կարծէի զիս մայր կայսեր և ինքնակալի. այժմ մե-
ռելոյ մայր, և անդամ եւ ոչ կենդանւոյ: Մեռա-
նիմ ընդ իմ մեռելոյդ. կորնչիմ ընդ կորուսելոյդ.
նուաղիմ ընդ ողկարիդ. տապանամ ընդ տքնեցե-
լոյդ. խոցոտիմ ընդ հարեալ սրտիդ: Այժմ պիտոյ է
ինձ տապարն Հեփեստոսի առ 'ի հերձանել զգլուխ
ծնողիս Աթենայ: Այլ զինչ ասացից, արքայ և ար-
քայորդի. կորուսի զքեզ' արտաքս գնալով քեզ 'ի
Մակեդոնէ, և այլ ոչ եւս տեսի: Նազեցար իբր ա-
րուսեակ, և ցնդեցար նման մրրկի. գոչեցեր ամպօք
իբր առիւծ, և տկարացար զինչ սարդի ոստայն. ծաղ-
կեցար իբր զգարուն, և խորշակահար եղեր թարշա-
մեալ. որ բազումք յինէն զարհուրէին, այժմ ես 'ի
բազմաց կորնչիմ: Ուրեմն յաղթեցին ինձ անէծք
մօրն Դարեհի կամ ծնողին Պաւրոսի արքային հնդ-
կաց, որ եւ այս թշուառութեանս հանդիպեցայ:

ԵԹԷ ԶՈՐՊԻՍԻ ՈՂԲՍ ՅՕՐԻՆԵԱՑ ԴՈՒՍՏՐՆ ԴԱՐԵՀԻ ՀՌՈՔՍԻԱՆԷ ԿԻՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼԻՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ

Ջնջեցաւ կտակ կենաց հիքոյս և թշուառու-
հւոյս. անմահից ջուրք մարտեդեալ լքին զիս յեր-
կուց դիմաց 'ի Պարսից և 'ի հելլենացւոց: Դարեհ

1 Ա. այդպէս. այլք հարկաւ էր:

չէ 'ի միջի հայրն իմ հռչակաւոր, և Աղեքսանդրէ բար-ձաւ 'ի միջոյ. խուժադուժքն ցրուեցան և մակեդոնացիքն կան տարակուսեալ. տուն հօր իմոյ քայքայեալ ցրուեցան, և ապարանք առն իմոյ մեծապէս տառանեցան. իսկ ես հասայ իբրև զջուր, կոխան եղէ իբրև զհող անպիտան։ Ընդէ՞ր երկնեաց արգանդն Ռոդոգունեայ. կամ ընդէ՞ր ոչ հարին զիս աշտէիւ մկրաւորք հօրն իմոյ։ Այդպէս առեր զիս յաւանդ 'ի ձեռանէ հօր իմոյ, տէր իմ Աղեքսանդրէ, զի և աւուր միոյ տեսլեան երեսաց քոց ոչ եղէ արժանի. արարեր զիս դշխոյ և թագուհի, և քոյին սոսկալի սիրոյդ ես ոչ եղէ արժանի. որք էի 'ի ծնողաց, արդ այրի եղէ 'ի գլխոյ։ Կարօտիմ մահձիդ, գիրկս արկանեմ տապանիդ, խոնարհիմ քո գարշապարիդ, յանձն առնեմ զոգիս քում ոգւոյդ։ Զի որպէս հանդերձեալ ես յաստուածոցն խառնիլ երամս, այսպէս և զիս արա քեզ գերեզմանակից և մահակից. զի կին կայսեր ոչ պարտ և պատշաճ է զուգիլ ընդ ումեք։

## ԵԹԷ ՆԱԽԱՐԱՐՔՆ ԵՒ ԶՕՐՔՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ ԶՈՐՊԻՍԻ ԿԱԿԱՆ ԲԱՐՁԵԱԼ ԼԱՆ ԶԹԱԳԱՒՈՐՆ ԻՒՐԵԱՆՑ

Եկայք 'ի միասին, թագաւորք և իշխանք, կուսակալք և կողմնապահք, կոմս և նախարարք, սեպուհք և ստրատելատք, պատրիկք և պայազատք, ըմբիշք և դիմամարտք, նիզակակիցք և սուսերաւորք, կապարճակիրք և զրահաւարձք, և այլ ամենայն արքունական սենեկի սպասաւորք. վառեցէք զդրօշմն. բարձրացուցէք զնիզակսն. կազմեցէք զերիվարս. փող հարէք պատերազմի. ձայն տուք 'ի բանակս հազարապետացդ. զի արքայս ոչ է մեռեալ, այլ ննջէ։ Նագայս ասելով 'ի յողբ շարժլին, պատառեն զպատմուճան, ներկեն արեամբ զերեսս, փետտեն զհերս վար-

սից, Ճողէն զմորուս խուրեանց, հող զգլխով արկանեն, տան զերեսս միգախառն մոխրի, հնչէն զգալարափողսն, յօրինեն զգամբանականսն. կուռին երամք դասուց, ողբան թշուառապէս, հեծեծեն ողորմագին, յոգւոց հանեն դառնապէս և զաշխարանն այսպէս հրատարակեն. Տէր արքայ, այսքան ժամանակս աշխատ եղաք 'ի գործ պատերազմի, ծովակուրս և գազանաբեկ լինելով, ձիւնածեծ և խորշակահար, և զամենայն աշխարհ հարթ և հաւասար առնելով յայս եկեալ հասաք, զի մտցուք 'ի հայրենի քաղաքն մեր Մակեդոնիա, կարօտ գոլով մեր ծնողաց և զաւակաց, զի հանդիպցուք սակաւիկ մի յարեանց և 'ի քրտանց. այժմ զձեռն 'ի քեզ ամփոփելով մահացուցեր զմեզ մահանալովդ։ Ո՜վ եհար զքեզ, պատմեա զի հարցուք զնա. ո՞վ ընկրկեաց ըզքեզ, ասա զի մարտիցուք ընդ նա. ո՞վ դաւեաց նենգաւոր, հրամայեա զի դատեսցուք զնա. շատ անգամ քո մտեալ 'ի պատերազմ և մեր ընդ քո, ուրեք երբեք ոչ ծուլացաք և ոչ վատ անուն ժառանգեցաք, և զկամս քո անյապաղ կատարեցաք։ Առ այս զի՞նչ պատասխանի տացէ արքայ. Դուք ինքնին գիտէք, ո՛վ հազարապետք և բուն բարեկամք իմ, զի հանապազօր ասէի 'ի լսելիս ձեր, եթէ ես մարդ եմ մահկանացու. բայց վասն զի վերին նախախնամութիւնն ոչ տայր ինձ թոյլ հանգչել, 'ի ձեռն իմ մատակարարեալ նախախնամէր զարարածս, բարեացն բարիս տայր առնել, չարեացն զչարն հատուցանել։ Արդ այս եղև ինձ դառն և դժնդակ չարիս, զի կարօտէի ամենուրհեայ մօրն իմոյ ցանկալի. թերևս զերեսս եդեալ 'ի վերայ քաղցր և պայծառ ստեանցն, որ երկամբք զիս դիեցուցին, առ որս ոչ եղէ արժան։ Արդ ես երթամ զհայրենի Ճանապարհն, տալով ըզմարմինս իմ հողոյ, որ մայրն է անմահ և անապական։ Իսկ նոքա առ այս զի՞նչ արդեօք ասէին. Մե-

ռանիմք ընդ քեզ, ով Աղեքսանդրէ. քանզի 'ի բառնալ կենդանւոյն գլխոյ, սուղեալ սպառնմամբ նուաղին ամենայն անդամքն։ Լոյս էիր աչաց մերոց, արդ ընդ քեզ և խաւարեցան բիբք աչաց մերոց. Հաց էիր քաղցելոցս, այժմ'ի բաց քո բառնալոյդ 'ի մէնջ սովամահ եղեալ սատակիմք. Ջուր էիր պապակելոցս, այլ 'ի պակասելդ քո ծարաւեալ ծմրիմք 'ի տապոյ սրտից։ Նաև այսպիսի ողորմագին ձայնիւ զմահաբեր զուժն յորդորէին [1]։

1 Աստ 'ի կատարած չորրորդ բարբառնութեանս կան յօրինական առ 'ի կեչառուեցւոյն մատծեալ ցուցոս և անհամբանք. այն է բաղդատութիւն անօրինական գործոյն Փիլիպպոսի ընդ Աղեքսանդրի, այսպիսի ունելով ակնդրն. Աղե- [illegible] . . . . . . . . Եւ ապա չորէ զբաղդատութիւնն թուականութեան. յորոց առանձնութեանն սակաւս յառաջ բերեմք։ [illegible] . . . . . . . . . Յետ այսոցիկ դնէ և զևսր յիշատակարանն անընդմիջաբար այսպէս. [illegible]

Այլ զնի յիշատակարանիս 'ի կատարած մատենին կարգեցելոյ զհինգերորդ բարբառնութեան Բ- [illegible]. կարծիս տան ոչ փոյքաւոր թէ չէ նորին խաչատրոյ, և յոյժ մատենագրութեանն խակ այլևայլութիւն ունանի ընդ նա և ընդ առաջինն։

## ԵԹԷ ՈՐՊԻՍԻ ԲԱՆՍ ԽՐԱՏԱԿԱՆ ԽՕՍԵՑԵԱԼ ԼԻՆԻ ՀԱՆՃԱՐԵՂԻՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ ԱՌ ԲԱՐԵԿԱՄՍ ԻՒՐ

*Բարեաց գործոց և քաջապէս առաքինութեանց ոչ գոյ հակառակ կամ պատերազմ. այլ յիշատակ նորա օրհնութեամբ և խաղաղութեամբ. որպէս և ինձ իսկ վարժապետն Արիստոտէլէս զիս ուսուցանէր յաշխարհարար ներտառութեանն ասելով, եթէ բազում անգամ ինձ բարեբախտեալ ճշմարտապէս իբրև գործով Աղեքսանդրէ գոլ թուեալ ինձ իմաստասիրութիւն. զոր 'ի ճառին առաքինութեան առճեմականքն այսպէս հրատարակէր, եթէ գովելի են գեղեցիկքն արդարութեամբ և պարսաւելի պակշոտեալքն և արբեալքն մեղօք, և աւելի գարշելիքն զեղխութեամբ. քանզի բարեացն յառաջեալ լինին արդարութիւնքն և գարշելեացն չարութիւնք: Զի յերից մասանց յաշխարհէ զերիս զայսսիկ պահանջեմ օրէնս. նախ և առաջին 'ի թագաւորաց. զի պարտ է թագաւորին անսուտ լինել 'ի բանս և անագահ յառնուլ կաշառաց. զօրաւոր լինել և ոչ արծաթասէր: Զիշխանս այսպէս խրատեմք. զի պարտ է նոցա երկրասէր լինել, ողորմած և պատերազմասէր: Զհեծելաւորսն այսպէս նուաճեմք. պարտին նոքա զգոյշ լինել պատրաստութեամբ, զուարթք յատենի, ընդդակազմ պատերազմողական, պատրաստութ՟ հոգ. տանել սուսերացն և երիվարացն: Իսկ քաղաքականացն և աշխարհայնոցն և ռամկական ժողովրդեան զայս ևս, ոչ լինել գողք և աւազակք, խաբող կամ զրպարտողք, զրաբանք կամ զօշաքաղք, նենգիչք կամ պատրողք, շողմոգ կամ քսմսուք, սադրողք կամ բամբասողք, ծոյլք և կամապաշտք: Քանզի այս ամենայն աղէտք եկամուտք ներքսամուտ եղեալ ապակա-*

նէն զկենցաղասիրաց անձինս. զի ախտին խրոյ սրտին ցասմանն և ցանկութեան յաղթել մեծ է և արիական քաջութիւն: Նա և երկնչել 'ի մեծ գազանէն որ մահն է հասարակաց, որ 'ի միասին կացուցանէ զտնանկս և զթագաւորս. իսկ զմոաց տեսական գործարանն առ աստուած վերաբերել, քանզի և այն ամենայն ոչ ինչ շահեցուցանէ: Պարտ է փակել զդրունս բանաւոր քաղաքիս այսմիկ, զի մի՛ յօտար մտասակարաց քանդեալ և աւերեալ լիցի, որ ընդ այսոսիկ զամօթլածութեանն յինքեան բերել գլխատակ, որ քան զամենայն որակութիւն տեսակաց դերագոյնս գործէ, որով գոլի յաստուծոյ և 'ի մարդկանէ: Նւս առաւել համբակացն տիոց ազդ առնեմ, զի յոլովակի ունելով զեռանդն արեան առ սրտին, զի մի՛ ցոփաբար 'ի ցասումն և 'ի ցանկութիւն հակամիտեսցին. այլ այնպիսիքն մղիլ 'ի պատերազմ և կամ յաշխատութիւն. գործել զերկիր, զի ձնշմամբ մարմնոյն 'ի լաւ անդր և 'ի բարին բարդաւաճեալ յապենիւազն նկրտեսցին. 'ի բացէ կամել լինել 'ի ծանօթից շողոքորթաց և յօտարաց զրպարտողաց, զի մի՛ դատարկասցին անձինք այնպիսեաց: Մի՛ լինիք այնպիսիք որ թշնամիքն այպանել ձեռնարկեն ասելով երևելիդ ինձ և անտեսանելիդ իմոց թշնամեաց. այլ զերկուս ձևսդ միապէս սանձել մտաց յոլովակի գործեսցէ: Որ և արդարև տագնապին այնորիկ որք ոչ համդիպին ուղղաբար մերձեալք յիմաստասիրութեան յարդասիս: Տինա այս արհեստ 'ի վերնական փառացն հասեալ առ մարդկային բնութիւն, որ և 'ի ձեռն սորա կարէ զարդարել զմասունս արարածոց: Նւ այս բանք ներտաղականք առ 'ի խրատ զրուսական և ողջախոհ իմն մոլութիւն՝ կարող է ուղղել զբարս անուղիղս իբր դաստիարակ գոլով մարդկային եռակի հասակացն, մանկութեանն և երիտասարդութեան նա և կատարեալ և բուն հասակին:

Եւ այսպէս անցուցեալ զաւուրս հասակին, սոյնպէս անցուցեալ զառօրեայս, անդր ընթանալ առ ստուգապէս հայրենին եթէ մահուամբ և եթէ կենօք. զի այս կականմամբ սակաւուք, և այն յոլովակի և անվճար ժամանակօք։

# ՑԱՆԿ


Աբդերա և Աբդերացիք 62.
Ադուղիսէ 119.
Ադրաստոս 69.
Ազանացիք 2.
Աթամաս 68.
Աթենաս 76. 83. 146. 164. 180-182. 191. 192.
Աթենացի 80. 84.
Աթենացիք 74-79. 81. 82. 84. 85. 108.
Աթենք 75. 83. 180.
Ալկիդէս 72. 73.
Ակաթեմին 38.
Ակառնանեանք կամ Ակառնացիք 24. 25.
Ակոնիս 37.
Ակրագանթինացիք 63.
Աղեքսանդր կամ Աղեքսանդրոս Մակեդոնացի 14-196.
Աղեքսանդր այլ 179.
Աղեքսանդրացիք, բնակիչք Աղեքսանդրիոյ 38. 39. 41. 116.
Աղեքսանդրացիք, զօրք Աղեքսանդրի 58.
Աղեքսանդրեան 116.
Աղեքսանդրիա Եգիպտոսի 37. 39. 40. 43. 44. 47. 160. 180. 185. Աղեքսանդրիա Կասոսիան 123. Երկոտասան Աղեքսանդրիա անուամբ քաղաքքն միանգամայն 186.
Աղկիդէս 100.
Աղկիպիադէս 84.
Աղկմենէս 66.
Ամազոնական 162.
Ամազոնացիք. որ և Ամազոնուհիք. Ամազուհիք, Ամազոնք 151. 161-164. 167. 184.
Ամիւնդաս 58.
Ամոն կամ Ամոնաս 6. 7. 9. 12. 32. 35. 36. 41. 48. 52. 97. 114. 146. 149. 150. 178-181. 183. 189. 191.
Ամփիոն 64. 67. 71.
Ամփիկտիոնացիք կամ Ամփիքտիոնացիք 33. 81. 83.
Այծք 123.
Այրարատ 89.
Անահիտ 42. 68. 121.
Անաքսիմենոս Արիստոկլէս 15.
Անգղ 89.
Անդիմաքոս 79.
Անկուրան 92.
Աննիսա 94.
Անտիգոնոս, որ և Աղեքսանդր 152-158.
Անտիգոնոս սպարապետ 80.
Անտիոք կամ Անտիոքա 39. 94.
Անտիոքացի 58.
Անտիպատրէս կամ Անտիպատրոս 172. 182.
Անտիփոնոս 13.
Անփիարեւոս 69.
Անփիարիոն 69.
Ապառնիս 37.
Ապիս 185.
Ապողոն 63. 72. 73.
Առխարդան 110. 111. 118. 123.
Առնիփատոս 100.
Ասանդրոս 174.
Ասիա 28. 45. 54. 75. 107. 110. 166. 168. 180.
Ասորիք 39. 47. 48. 54.
Ասպեդիա 37.
Ատլաս 168.
Ատտանաս 27.
Արաբացիք 94.
Արաբիա 57.
Արածանի 89. 90. 94.
Արամազդ 5. 12. 27. 35. 40. 42. 56. 66-68. 103. 106. 107. 121. 146. 162-165. 171. 177. 183. 184. 189.
Արգէոս. Արգէս 37.
Արգիացիք 2. 69. 179.
Արգոս 180.
Արեգ 168.
Արէս 5. 37. 82. 164.
Արիանէ 89.
Արիդէոս 179.
Արիոմէնա 16.
Արիստոպպոս 26.

Արիստոն 174.
Արիստոտէլ կամ Արիստոտէլէս 15. 19-21. 77. 122. 138. 149. 165. 196.
Արիք 114.
Արկադա 68.
Արմենիոս 67.
Արտեմիս 69.
Աւգուստինէս 100.
Աֆրիկեցիք 35.
Աֆրիկէ 35. 39.
Աֆրոդիտէս 5.
Աքայիա 59.
Աքիլլեւս 60. 61.
Աքտէոն 69.
Բաբելացիք կամ Բաբելոնացիք 87. 99. 184.
Բաբելոն 90. 148. 166. 167. 169. 173. 175. 184.
Բաբելոնեան 179.
Բաբելոնիոս 9.
Բակտրիա 180.
Բակտրիացի 180.
Բակտրիացիք 91. 96. 107. 179.
Բաղկեցի 26.
Բեբրիկացիք 60. 151. 152. 154. 155.
Բեբրիկիա 151.
Բեսոս 110. 111. 118. 123.
Բիովտացի 26. 178.
Բիովտեան 70.
Բիովտիա 62.
Բոմնիւրացիք 2.
Բոյեդրոմիոն 79.
Բրաքմանք 135.
Գադիփարտա 88. 89. 113.
Գազա 48.
Գամիրք 94.
Գիլան 110.
Գիտանէս 110.
Դարդանոս 174.
Դարեհ 30. 47. 49-59. 62. 85-89. 91-123. 128-131. 139. 161. 189. 192.
Դարեհացիք. Դարեհեանք 57. 58. 103.
Դեղփիս 18. 72. 180.
Դեմադէս 77. 79-81. 83 84.
Դեմոսթենէս 79. 81. 82. 84.
Դիմոկրատէս 38. 81.
Դիոնգինոս 81.
Դիոնեսիոս կամ Դիոնիսոս 49. 66-68. 71. 130. 172.
Դիոնիսեան 173.
Դիովսիոս 100.
Դիկլաթ 90. 91. 123.
Դրակոնտիա 38.
Դրաւղ 160.
Դրոսոքարէս 115.
Եբերացիք 2.
Եգիպտական 191.
Եգիպտացի 3. 6. 10. 29. 42.
Եգիպտացիք 1. 46. 82. 178. 186.
Եգիպտոս 1. 2. 4. 17. 18. 38. 46. 47. 81. 82. 90. 145. 149. 150. 160. 179-182. 184. 185.
Եգիոս և Եգմիոս 37.
Եթովպական 190.
Եթովպացի 168.
Եթովպացիք 100. 150. 166.
Եղիոնն 41.
Ելլադա 18. 84. 86. 91. 106. 115. 129-131. 149.
Ելլադական 18. 33.
Ելլադացիք 131.
Ելլենացիք. տե. Հելլենացիք.
Եկբատան 109.
Եղէքտրայ դրունք 69.
Եղեւրդացիք 63.
Եղեւրեքէս 38.
Եմեսոս Եւդիկէս 122.
Եպիւրդոս 37.
Եսքինէս 76. 77. 79. 81. 83. 84.
Երա 164.
Երեքթեւս 79.
Երմէս. տե. Հերմէս.
Եւիլոքոս 39.
Եւկղիդէս 84.
Եւմենէս 174.
Եւրոպա կամ Եւրոպէ 28. 48. 75. 168.
Եւրոպպէոս 174.
Եւքսինոս 62.
Եփրատ 59. 89. 115. 123.
Եփրատեան 175.
Էքտուր 60.
Զակինթացիք 77. 83.
Զեթոս 64. 67.
Զեւքսիս 19-21.
Զեփիւրոս 37.
Զրուանեան 45.
Էանդէս 60.
Էրոփա 39.
Ըռա 189.
Թայիշ 110.
Թամուզ 191.
Թեբայեցի կամ Թեբացի 65. 67. 72. 181.
Թեբայեցիք կամ Թեբացիք 64-67. 69.

72. 75. 78. 80. 178. 181.
Թեբայիս, որ և Թեբաս, Թեբք 64-66. 69-73. 178. 181.
Թեսաղոնիկեցի 31. 176.
Թեսաղոնիկէ 180.
Թեսաղացիք 33.
Թերմոդոն 167.
Թերսիտես 61.
Թէհովգացիք 179.
Թէոդեկտան 146.
Թրակացիք 31. 33. 34.
Թրակէ 14. 35. 182.
Թրասիլէոնոս 146.
Թրէկիկացիք 67.
Իալւան 160.
Իգիպտոս 67. 68.
Իլամացիք 87.
Իլիոն 60.
Իսթմիականք 72.
Իսիական 122.
Իսիս 123.
Իսմենիաս 65. 66. 69-71. 181.
Իսմենոս 68.
Իտալիական 35.
Լաբդակ 67. 71։
Լակեդեմոնացիք 33. 77. 84. 85.
Լակոնացի 15. 87.
Լակոնիկէ 15.
Լաոմեդոն 16.
Լամփսակենացի 15.
Լապիթեայք 28.
Լեգապացիք 2.
Լեմնացի 15.
Լեւոնիդէս 15.
Լէարքոս 68.
Լէոնտասոս 174.
Լերէացի 39.
Լերէացիք 6. 10. 12. 36. 87. 160.
Լերիս 35. 48.
Լիկաս 68. 71.
Լիկաւոնիա 35.
Լիւդեւկաս 73.
Լիւսիաս 28-30. 81.
Լիւսիմաքոս 174. 176. 182.
Լիւբիա 180.
Լոկրացիք 63.
Լուքասղացիք 2.
Ծուր. տ. Տիւրոս.
Ծուրաստան 49.
Ծուրացիք. տ. Տիւրացիք.
Կադմեացիք 70. 71.
Կադմոս 67.
Կալիդոնացի 69.
Կալիսթենէս 128.
Կանդակէ 149-152. 155-159.
Կանդաւղէս 100. 151-160.
Կանոպական 37.
Կանոպ 38.
Կապպանեւս 69.
Կասանդրոս 173-175.
Կասբիական 109. 110. 140.
Կաստեղեան 18.
Կարտարովն 158.
Կարադով 159.
Կարդերովկեանէս 100.
Կարթագինէ 39.
Կարքեդոնացիք 35.
Կաւանացիք 2.
Կաւոս 84. 108. 115. 116. 168.
Կաւպոնիա 37.
Կեղտացի 15.
Կերաստն 59.
Կեւանէ 179.
Կիթերոն 68. 71.
Կիմոն լակոնացի 26.
Կիմոն կորնթացի 26.
Կիւլիկեցիք 94.
Կիւլիկիա 87.
Կիւնիգերոս 78. 79.
Կիւպրոս 67.
Կլէոմիս 150.
Կլիտոմաքոս 26. 72. 73.
Կղէոմենէս 38. 39.
Կղէոպատրաս 179.
Կղէոպատրէ 27. 28.
Կղէոքարոս 78. 79.
Կոմբափէ 175.
Կոմբափոն 176.
Կով 95.
Կոմնացիք 2.
Կովսարէս 94.
Կորնթացիք 72. 77. 83.
Կորնթոս 72. 74.
Կուղենիկէս 69.
Կումեացիք 2.
Կռոնոս 5. 14.
Կրատերոն 39. 146. 172. 179.
Կրաւնոս 189.
Կրետացի 174.
Կրետէս 68.
Կրիւսոս 63.
Հայք 2. 89. 123.
Հելլենական 116. 127. 128. 189.
Հելլենացի 151.

Հելլենացիք 16. 30. 33. 52. 53. 56. 60. 76. 81-83. 87. 103. 129. 131. 132. 154. 178. 186. 192.
Հերակլեայ՝ Հերակլէովպոլականի բե-րան 38.
Հերակլէս 18. 63. 66-68. 73. 167. 172. 178. 180-182.
Հերակլիդէս 174.
Հերակլիա 68.
Հերմոպաւլիս 38.
Հերմէս 5. 38. 72. 73. 97.
Հերմոգինէս 176.
Հեփեստիոն 24. 138.
Հեփեստոս 46. 162. 192.
Հիպոնեմոս 39.
Հիպոնոսք 39.
Հիպոսթէն 69.
Հիպպոթոս 78.
Հիւդասպ 180.
Հիւպոմեդոնէ 69.
Հնդիկք 2. 87. 95. 108. 128-134. 138. 144. 146. 151. 161. 192.
Հնդկական Հնդկայքն 138. 190.
Հնդկացիք 133.
Հնդկերէն 146.
Հոմերական 45.
Հոմերոս 45. 60. 61.
Հռակովտացի 37.
Հռակոտիս 37. 160.
Հռափիովնացի 68.
Հռոդացի 38.
Հռոդոգունէ 95. 113. 119-122. 193.
Հռովմացիք 178. 182.
Հռովմոս 179.
Հռովմայեցիք 2. 35.
Հռոքսանէ կամ Հռոքսանէս 113. 119-122. 147. 175. 176. 179-181. 183.
Ղեոովլ 69.
Ղեւկիպպոս 15.
Ղոկրացի 26.
Ղուկիոս 176. 182. 183.
Ղուսաւլ 160.
Մաղկա 123.
Մակեդոնական 65. 91. 95. 97. 104. 122. 129.
Մակեդոնականք 177.
Մակեդոնացի 18. 25. 58. 71. 75. 77. 80. 85. 86. 100. 102. 110. 117. 130. 131. 133. 158 166. 177.
Մակեդոնացիք 3. 4. 29. 33. 34. 48. 51. 54-56. 58. 59. 63. 67. 70. 75. 83. 87. 88. 91. 92. 96. 101. 103-105. 110-113. 129. 132. 134. 177-180. 182. 184.
Մակեդոնէ կամ Մակեդոնիա 4. 10. 14. 18. 27. 32-35. 61. 80. 83. 90. 121. 122. 130. 147. 172. 175. 177. 180. 192. 194.
Մակեդոնք. տ. Մակեդոնացիք.
Մանդրոն 173.
Մարական 116. 117.
Մարկոս Էմմելիոս 35.
Մարդեադա 158.
Մարք 89. 107. 109. 117. 123. 157.
Մարքիոս 146.
Մեգարա 68.
Մեգարացիք 77.
Մեգիոս 173.
Մելանթիոս 38. 39.
Մելանոս 15.
Մելանպոս 60.
Մելէագրոս 174.
Մելիկերտէ 68.
Մելիտէս 15.
Մեղդէոս 97. 98. 103.
Մեմնացիք 135.
Մեմնէս 37.
Մեմփիս 46. 184. 185.
Մենանդրէս 174.
Մենդիդէս 38.
Մենեքմոս 15.
Մերոյէ կամ Մերով 149. 150.
Մեփինքս 68.
Մէտոփս 62.
Միհր 49. 52. 184.
Միհրդատ 94. 100.
Մինաս 107.
Միջագետք 87. 90.
Մոթոնէ 30.
Մոքսիւղոս 115. 116.
Յարկ 40.
Յեփթայի 191.
Յուղղոս 173-175. 181.
Նաւկրատացի 38. 39.
Նեկտանեբոս կամ Նեկտանիբէ 1-14. 17. 18. 46.
Նեղոս 82. 90.
Նեստովր 166.
Նեփելէոք 37.
Նեփրովս 37.
Նեփրուտաս 37.
Նէարքոս 174.
Նիսա 184.
Նիկողայոս 24-27. 189.

Նիկոմաքոս 26.
Նիոկլէ 146.
Նիփատէս 67.
Նոտարէս 94.
Շամիրամ 87. 149.
Շամիրամեան 149.
Շոշ. Շուշա 100. 107. 109. 169.
Շուշանաստան 180.
Ոդիսեւս 28. 166.
Ոլոմպիա, որ և Ոլոմպիադա, Ոլոմպիաս 4-21. 27. 29. 31. 36. 50. 52. 54. 61. 83. 114. 117. 118. 121. 122. 148. 155. 166. 169. 172. 176. 178. 179. 181. 189.
Ոլոմպիական 189.
Ոլոմպիեան 180.
Ոլոմպոս. տ. Ողիմպոս.
Ոկէանոս 87.
Ողիմպոս 45. 96.
Ողինթացի 26. 39.
Ողինթոս 62.
Ոզկիաս 174. 177. 180-183.
Ողոմպեան 27.
Ոսիրիս 37.
Ովկիանոս 165. 184.
Ովքոս 100.
Որփէոս 60.
Ուգիգեան 69.
Ուկղէս 69.
Ուղղոն 146.
Ուքսիդարկաս 135.
Ուքսիդարկէս 86. 100. 113. 180.
Ուքսիւդարկացիք 2.
Պագիտոս. տ. Պեգասիոս.
Պանդիաս 38.
Պանթեւ 68.
Պարապլենէսադք 180.
Պարասանդաս 167.
Պարասանդացիք 165.
Պարասանդէս 101.
Պարատոնիոն 37.
Պարթենեպոս 69.
Պարթեւք 87. 157. 180.
Պարմենիոն 45. 46. 88. 89. 107. 146. 147.
Պարմուփիր 186.
Պարսիկ 116.
Պարսիկք 4. 58. 77. 86. 92. 96. 100. 102-106. 112. 116-118. 121. 129. 132. 133. 168. 184.
Պարսկական 112. 113. 117. 123.
Պարսկաստան 101. 102. 105.
Պարսք 30. 33. 46. 50. 51. 53. 58. 62. 77. 78. 81. 82. 86. 87. 91. 92. 96. 98. 103. 105. 107. 111. 113-117. 120. 121. 123. 129. 139. 149. 184. 192.
Պաւլիադրէս 100.
Պաւղինիկոս 15.
Պաւսանիաս 31. 32.
Պաւլոս 167.
Պաւրիական 132.
Պաւրոս 95. 108. 128-135. 144. 158. 190. 192.
Պափլոգոնոս 15.
Պաքտուղոս 156.
Պեգասիոս 16. 191.
Պելասոս 37.
Պելլացի 67.
Պելլացիք 33.
Պելլէ կամ Պելլէս, Պելլուս 3. 14. 101. 185.
Պելլուսիոն 3. 47.
Պեղոպոնեսացի 15.
Պեղոպոնեսացիք կամ Պեղոպոննացիք 78. 80.
Պենելոպէ 28.
Պենթեւս 68.
Պերդիկկաս 174. 176. 177. 180. 182. 183.
Պերիթոս 28.
Պեւկողաւոս 177.
Պիերիդեան 60.
Պիերիս 60.
Պիերոս 26.
Պիթոն, Պիթոնն 174. 180.
Պինդարա 71.
Պինդարոս դետ 56.
Պիսաս 23. 24.
Պիւրէս 78.
Պղատեա 74. 83.
Պղատէացիք 74. 77.
Պղատոն 81.
Պղինթացիք 34.
Պղուտոնիոս 36. 41.
Պողիկէս 69.
Պողիտեւկէս 72. 73.
Պոսիդոն 62. 162. 165. 168.
Պովկեստէս 174.
Պտղոմէոս 22. 151-153. 174. 176. 179. 181-185.
Պրասիական 138. 139. 143. 144. 148.
Պրոդիադա 36. 41.
Պրոտեայ 76.
Պրոտէս 39.

Սատիրոս 49.
Սարապեան 41. 42. 46.
Սարապիս 37. 43. 45. 160. 185.
Սարքայոնիա 146.
Սեմելէ 66. 68.
Սեսոնքուսաս. տ. Սեսոնքուսիս.
Սեսոնքուսիս 42. 46. 141. 160. 161. 185.
Սիկիլիա 35.
Սինոպ 4.
Սկամանդր 59.
Սկամանդրոս 60.
Սկամբեայք 37.
Սկիւթացիք 34. 166.
Սկիւլլա 169.
Սոկրատէս 84.
Սուսադոյա 160.
Սպանդիատար 55. 92.
Սպետրիադա 125.
Ստագիրացի 15. 19. 191.
Ստասագորաս 74. 75. 80. 84.
Ստատիրա 119. 120. 122.
Ստեբանիֆիա 37.
Ստրանկա 97. 98. 102-105. 111.
Սքանդար, Սքանդարիոս. տ. Աղեքսանդր.
Սքանդարիա. տ. Աղեքսանդրիա.
Վշտասպ 55. 92.
Վրացիք 123.
Տանայիս 168.
Տապոսիրական 38.
Տապոսիրիս 37.
Տաւրոս 54. 59. 122.
Տաքսիադէս 180.
Տետրակոմախիա 37.
Տիապք 37.
Տիրեսիաս 68.
Տիւրացիք 47-51. 80.
Տիւրոս 47-49. 78.
Տուդեւս 69.
Տրդատ 100.
Տրիպօլիս 46. 49.
Տրիտոնեա 68.
Փարիսիս 36.
Փարոս 39.
Փարսադիոս 174.
Փաւսարնէս 100.
Փիդոն 138. 139.
Փիլիպպեան 101.
Փիլիպպէ մեքենագործ 174.
Փիլիպպոս, կամ Փիլիպպէ Մակեդոնացի 4-6. 9. 11-35. 48. 50. 52. 54. 76. 83. 84. 87. 101. 113. 176. 177. 179-181.
Փիլիպպոս բժիշկ 88. 89. 147. 174.
Փիլիպպոս այլ 174. 180.
Փիլոլաոս 174.
Փիլոքտետէս 68.
Փոկայեցի 26.
Փռիւգիա 60.
Փրոնեանէայք 37.
Քաղդէացիք 62. 170.
Քուղերսաս 37.
Քանթիաս 26.
Քսերքսէս 78-81. 102. 106. 108. 131. 168. 169.
Քսենեկրա 191.


ՀԱՅԿ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Биб-ка
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникян-
Ա. Մյասնիկյանի անվան

# Ցուցակ նիւթոց

Յառաջաբան — — — — — — էջ 1
[illegible] — — „ 13
[illegible] — „ 30
[illegible] — — — „ 73
[illegible] — — — — — „ 97
[illegible] — — — — — „ 98
[illegible] — — — — — „ 113
[illegible] „ 118
[illegible] — — „ 189
[illegible] — — — — — „ 189
[illegible] — — — — — „ 191

[illegible]


[illegible] — էջ 192
[illegible]
[illegible] — " 193
[illegible]
[illegible] — " 196


---

[illegible]


1. – [illegible] (3).
– [illegible] (5).
– [illegible] (21).
[illegible]
– [illegible] (32 [illegible]).
5. – [illegible] (41).
– [illegible] (49).
– [illegible] (57).
– [illegible] (61 [illegible]).
– [illegible] (66).
10. – [illegible] (113).
– [illegible] (114 [illegible]).
– [illegible] (116).
– [illegible] (117).
– [illegible] (122) (129)
15. – [illegible] (122).
– [illegible] (122).
– [illegible] (123–124).
– [illegible] (109, 110, 140).
– [illegible] } 142
20. – [illegible] " " [illegible]
– [illegible] (155)
– [illegible] (162)

# Բովանդակութիւն


— [illegible], 5.
— [illegible], 5.
— [illegible], 19.
— [illegible], 23.
— [illegible], 26.
~~[illegible]~~
— [illegible], 37.
— [illegible], 40, 145.
— [illegible], 41.
— [illegible], 64.
— [illegible], 80.
— [illegible], 82.
— [illegible], 114.
— [illegible], 129.
— [illegible], 140.
— [illegible], 144.
— [illegible], 154.
— [illegible], 157.
— [illegible], 177.
— [illegible], 192.
— [illegible], 193.
— [illegible], 196.
— [illegible], 196.

[illegible]

- [illegible] (168)։
- [illegible] (172)։

25. - [illegible] (173)։
- [illegible] (175)։
- [illegible] (177)։
- [illegible] (177)
- [illegible]

30. - [illegible] (179)։
- [illegible] (180)։
- [illegible] (186)։
- [illegible] (190)։
- [illegible] (195 [illegible])։

35. - [illegible] ([illegible])։
- [illegible] ([illegible])։
- [illegible] (198)։

---